

9(566)

μ-22

Ի. ԿԱՆՆՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՄԱՌՈՏ ՊԵՏԱՐՈՒԹԻՒՆ

ՍԿՋԻՑԻ ՄԵՆԶԵՆԻ ՄԵՐ ՈՐԵՐԸ



ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1926 թ.

ԱՍՏԻԳԱԿԱՆ

Մ. Բախաբախյան
Ռ. ԿԱՆ - ԱԶՈՏ

92566
10-22

20/VIII, 926.

Բախյ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍԿԶԲԻՑ ՄԻՆԶԵՒԻ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Դասագիրք ծխական դպրոցների և ժողովրդական
ընթերցանության համար

34844/16/162

Դրոշմ
9341



Մատիստրան «Փարոս»

1926 թ.

با اجازه اداره جلیله معارف آذربایجان

در تحت نمرة ۴۹ طبع شد

XXV XXX XXX XXX



ԵՐԿԻՐՆ ՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԻԸ

Հին հայաստանը գտնուում էր փոքր Ասիայի տրևելեան մասում, Կովկասից հարաւ: Նա տարածուում էր Եփրատ, Տիգրիս և Երասխ գետերի ափունքներից մինչև Ուրմիայի լիճը:

Հնումն այդ երկիրը Հայաստան չէր կոչուում, որովհետև այնտեղ գեռ ճայեռ չը կայիճ, ալլ ապ-

բում էին գանազան ուրիշ ժողովուրդներ, որ յայտնի էին հաս, Լըթիս, միսամացի, խալզ և այլ անուններով: Թէ մարդկային գլխաւոր ցեղերից մը մէկին էին պատկանում Հայաստանի հին բնակիչները, դեռ յայտնի չէ, ստոյգ է միայն, որ նրանք սեմիտներ չէին:

Հայաստանի այդ հին բնակիչները մի ժամանակ Սիրիայում մի շատ ցորաւոր ու ընդարձակ տէրութիւն էին կազմում, որի սահմանները երբեմն հասնում էին արևմուտքում մինչև Ասորեստան: Գիտնականներին մինչև օրս յայտնի դարձած հնագոյն կուլտուրաներից ամենահինը հասակացն է համարւում: Հատերն իրանց առանձին գիրն ունէին և գրում էին հիերոգլիֆներով, բայց որովհետև նրանց լեզուն մինչև օրս դեռ անծանօթ է մնացել, ուստի նրանց թողած արձանագրութիւնները դեռ չեն կարգացւած:



Հատական հիերոգլիֆ

Սիրիայում հատական գլխաւոր քաղաքներն էին.

— Կարգեմիշ՝ Եփրատի վրայ, Կազեշ՝ Օրոնտ գետի վրայ և Դամասկոս՝ նոյն գետի ակունքների մօտ, որ մինչև օրս էլ գոյութիւն ունի:

Իրանց հարեան երկու հզօր տէրութիւնների՝ Եգիպտոսի ու Ասորեստանի՝ դէմ անվերջ պատերազմելով, հատերը հետզհետէ թուլացան ու նրանց տէրութիւնն էլ Միւրիայում ընկաւ: Ժողովուրդը ցրեց հեռու երկիրներ. մի մասը Միջերկրական ծովի մօտ մի քանի տէրութիւններ հիմնեց, մի մասն էլ դէպի հիւսիս-արեւելք դնաց և ամբացաւ Հայաստանի լեռներում, տարածւելով մինչև Վանայ և Ուրմիայի լեճերը:

Այդ կողմերում հաստատուած հատերը իրանց զլխաւոր աստծու անունով Խալդ էին կոչուում: Նրանց կոչում էին նոյնպէս Ալարոզեացիներ:

Խալդերի շատ հեռաւոր անցեալի մասին տեղեկութիւններ չկան: Ստոյգ է միայն, որ նրանք հետները Հայաստան բերելով իրանց ինքնուրոյն կուլտուրան, շատ լաւ մշակել ու ծաղկեցրել էին այդ երկիրը: Նրանք քաղաքացիներից ու ասորեստանցիներից սովորել էին սեպածև տառերով գրել, փոխանակ նախկին հիերօգլիֆների. և քանի գեո սևապակ տառերը չէին յարմարեցում իրանց լեզուին, խալդերը գրելու ժամանակ տօտրական լիգուրն էին գործ ածում:

Աւելի ուշ նրանք այդ անյարմարութիւնը վերացրին, սեպածև տառերն իրանց լեզուին յարմարեցնելով:

ԺՈՂՈՎՐԴԻ ԶԲԱՂՄՈՒՆՔԸ

Խալդերի զլխաւոր գրադմունքն երկրագործու-

թիւնն ու խաշնարածութիւնն էին: Զափազանց հմուտ լինելով ջրարաշխական աշխատանքներ կատարելու արեստին, նրանք, չը նայելով Հայաստանի խիստ լեւնտութեանը, բազմաթիւ ջրացքներ էին անցկացրել այդ երկրում: Զրանցքներից ամենանշանաւորը Մենուաշ կամ Մենուաս թագաւորի շինածն էր, Վան քաղաքի մօտ, որ մինչև օրս էլ գոյութիւն ունի:

Հայաստանում եղած ամեն տեսակ հացահատիկների հարուստ շտեմարանների, ինչպէս և զանազան տեսակ ընտանի անասունների բազմաթիւ հօտերի մասին շատ յաճախ են յիշատակուում ասորական արձանագրութիւնների մէջ: Շատ նշանաւոր էին մանաւանդ Հայաստանի ձիերն ու ջորիները, որ խիստ գնահատուում էին Բաբելոնի շուկայում և որ, իբրև տուրք, խալդական թագաւորները վճարում էին Ասորիստանին, երբ սրա գերիշխանութեան տակ էին ընկնում: Նոյն արձանագրութիւնների մէջ, իբրև տուրքի աւարկայ, յիշատակուում է նաև գինին:



Հաթ գինւորներ

☞ Մալղերի մէջ արհեստներն ու վաճառականութիւնն էլ բաւական զարգացած էին: Նրանք հմուտ էին

մետաղներ հալելու և նրանցից զանազան զէնքեր, ամաններ ու զարդարանքի առարկաներ շինելու մէջ: Մանաւանդ նշանաւոր էր Հայաստանում պատրաստող լեւապիս-լազուր անունով թանկագին քարը: Օրը շափաղանց դնահատում էր եգիպտացիներից:

Մասնաւոր ուշադրութեան արժանի էր նոյնպէս խալդերի որմնադրական արհեստը. նրանք զարմանալի հմտութեամբ կարողանում էին հսկայական ժայռերի մէջ ամբողջ թագաւորական պալատներ ու դամբարաններ փորել, ինչպէս և անագին քարերից շինութիւններ կառուցանել:



Մրկու հրթիռ իշխանսոր հաշիլիս

Պատերազմական գործն էլ շատ լուր էր դրւած այն ժամանակւայ Հայաստանում: Ունէին թէ հետեակ և թէ ձիաւոր զօրք. իսկ թագաւորներն ու

ազնւականները կուի էին դուրս գալիս պատերազմական կառքերի վրայ: Հայաստանում պատրաստւած երկանիւ պատերազմական կառքերն էլ շատ էին գրնահատուում օտար երկրներում, նամանաւանդ Սզխատոսում: Խալդերի գործածած զէնքերն էին՝ սուր, նիզակ, նետ ու աղեղ և վահան:

Շատ բնորոշ էր և խալդերի հագուստը, նամանաւանդ նրանց՝ սրածայր ու դէպի յետ ծալւած քիթ ունեցող՝ կօշիկները, մեծ-մեծ ձեռնոցներն ու կոնաձև գլխարկը, որը մեր այսօրւայ բաշիկն է յիշեցնում: Շատ բնորոշ է և այն, որ խալդերը իրանց պատմութեան հնագոյն շրջանում բեխ և մորուք չէին պահում:

Կ Ր Օ Ն Ը

Յալգերը բնապաշտներ էին և հաւատում էին բազմաթիւ աստուածների ու ոգիների գոյութեանը, որոնց թիւը մօտ 2000 էին հաշուում: Բնութեան խլաքանչիւր մի տարր, նրանց կարծիքով, իր առանձին աստուածն ունէր. այսպէս՝ լեռները, անտառները, դետերը և այլն միմի առանձին աստուած ունէին:



Ամպրոպի աստուած

Բայց այդ աստուածները բոլորն էլ միատեսակ զօրութիւն չունէին. կային նրանց մէջ գրեթէ արմիր և երկրորդականներ:

Բացի դրանից՝ ամեն մի գաւառ կամ քաղաք, իր առանձին հոգնաւորող ու ամենից աւելի սիրւած աստուածն ունէր: Այսպէս օրինակ՝ Ուրարտու անունով նահանգի կամ փոքրիկ թագաւորութեան ամենագլխաւոր —

աստուածը կոչուում էր *Խալդի*: Նոյնպէս շատ յարգւած էին՝ ամպրոպի աստուածը *Տարկու* կամ *Տեշուդ* անունով, արեգակի աստուածը՝ *Արդիս* և ուրիշները:

Ամեն մի գլխաւոր աստուած իր յատուկ տաճարն ունէր, որի մէջ բազմաթիւ քուրմեր և բրմուհիներ էին ծառայում: Հայաստանի այդ նախկին բնակիչները, իրանց հարևան ազգերի նման, սաստիկ սնոտիապաշտ էին, և նրանց սնոտիապաշտութիւններից շատերը մինչև այսօր էլ դեռ պահպանւած են հայ ժողովրդի մէջ:

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿ. ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Հայաստանը հնումը մի ամբողջական պետութիւն էր ներկայացնում իրանից. լեռնաշղթաներով միմեանցից բաժանւած նրա դանազան մասերը մի-մի առանձին մեծ կամ փոքր անկախ տէրութիւն էին կազմում: Այդ տէրութիւնների թիւը, տարրական արձանագրութիւնների համաձայն, հասնում էր 20 — 50 և աւելի: Դրանցից շատերի անուններն անգամ յայտնի չեն, իսկ շատերի էլ սահմանները դժւար է որոշել:

Յայտնիներից ամենանշանաւորներն էին.

1. Նայիրի, որը տարածւում էր Տիգրիս և Էփրատ գետերի վերին հոսանքների միջև:
2. Միլիդ, որ գտնւում էր Նայիրիի արևմտեան կողմում:
3. Ուրարտու, (Արարատ), որ տարածւում էր

Մասիս լեռան հարաւային ստորոտից մինչև Վանայ լիճը, Վան մայրաքաղաքով:

4. Բիւննա, որ ընկած էր Վանայ լճի հարաւարեւելեան կողմում:

5. Մաննա՝ Բիւննայի և Ուրմիայի լճի միջև ընկած երկիրն էր:

6. Մուսասիր (Մուշ), որ գտնուում էր Վանայ լճի հիւսիս արեւմտեան կողմում:

7. Միլլիս, որ ընկնում էր Մուսասիրի հիւսիսային կողմում:

Այդ բազմաթիւ փոքր տէրութիւնները, անկարող լինելով մի ընդհանուր ու մեծ պետութիւն կազմել, այնուամենայնիւ արտաքին թշնամու յարձակումների ժամանակ, յաճախ դաշնակցում էին միմեանց հետ և իրարու օգնութեան հասնում: Այդ հանգամանքի, և նամանաւանդ իրանց երկրի խիստ անմատչելի լեռների շնորհով, Հայաստանի նախկին բնակիչները մինչև վերջ անընկճելի և սպառնական թշնամիներ Պաղիս հզօր Ասորեստանի համար:

Այդ լեռնաբնակները մի կատարեալ պատուհաս էին Ասորեստանի գլխին. նրանք ամենահին ժամանակից սկսած շարունակ արշաւանքներ էին գործում Ասորեստանի արդաւանդ դաշտերի վրայ ու մեծ աւերմունքներ առաջացնելով, գնում իրանց անմատչելի լեռներն էին քաշում: Այդ պատճառով էլ Ասորեստանի Թագաւորները, հէնց որ սկսեցին զօրեղանալ, իրանց առաջին հոգսերից մէկն էլ այդ լեռնականներին մի լաւ պատժեյն ու զսպելը դարձրին: Այդ նպատակով նրանք այնուհետև համարեա թէ ամեն տարի արշաւանքներ էին կատարում Հայաստա-

նի վրայ և, իրանց սովորութեան համաձայն, ամենասոսկալի սարսափներ տարածում ամեն կողմ:

Սկզբում Ասորեստանի թագաւորներն իրանց արշաւանքները միշտ ուղղում էին Հայաստանի հարաւարեւմտեան երկիրներէ վրայ, ուր Նայիրի անունով տէրութիւնն էր գտնուում: Մինչև IX դարի (Ք. ժ. ա) սկիզբները այդ տէրութեան թագաւորների զբաղւածութիւնը զբաղւած էր իրաւոր ղեկավարութեան տակ էին պատերազմում Հայաստանի միւս փոքր տէրութիւնները: Այդ պատճառով էլ մինչև այդ ժամանակ թողւած ասորական սեպագիր արձանագրութիւնների մէջ Հայաստանը «Նայիրիի երկիրներ» անունով է յիշատակւած: Իսկ աւելի ուշ ժամանակներին վերաբերող արձանագրութիւններում արդէն Ուրարտուի մասին է խօսքը, որովհետև IX-րդ դարից սկսած Ուրարտուի թագաւորներն են գերակշիռ ու զեկավարող գեր կատարել Հայաստանում:



Հաթական թագաւոր

Հայաստանի վրայ ասորական թագաւորներից առաջին արշաւանք գործողը Սալմանասար I է եղել XIV դարում (Ք. ա.), որը Տիգրիսի ամենավերին ալունքի մօտ թողած արձանագրութեան մէջ պարծենալով յայտնում է, թէ ինքը յաղթել է Նայիրի իշխաններին Յետոյ (XI դարում) Տիգլաթ Պալասարն է երեք

անգամ արշաւել այդ երկրի վրայ և երեք անգամին էլ նրան վերջնականապէս նւաճած է համարել:

Բայց Տիրդատ-Պալասարի, ինչպէս և իր յաջորդների կատարած սարսափները անզօր էին Հայաստանի լեռնականներին զսպել: Նրանք ժամանակաւորապէս բնկճւում էին, խոտանալով Ասորեստանի գերիշխանութիւնը ճանաչել և պահանջւած հարկը վճարել, բայց հէնց որ ասորեստանցիք հեռանում էին կամ մի այլ տեղ պատերազմի բռնւում, նրանք նորից գլուխ էին բարձրացնում:

Հայերը յարձակւում էին Ասորեստանի վրայ և յաճախ նոյնիսկ նրանից երկիրներ գրաւում: Այդպիսով Ասորեստանի թագաւորներից համարեա թէ ամեն մէկը ստիպւած էր նոր պատերազմ սկսել Հայաստանի դէմ և նորից նւաճել այն երկիրները, ինչ որ շատ անգամ նւաճել էին իր նախորդները:

IX-րդ դարի սկիզբներում Նայիրիի տէրութիւնը թուլացաւ և Հայաստանի մանր տէրութիւնների գերիշխանութիւնն ու ղեկավարութիւնը Ուրարտուի թագաւորութեանն անցաւ:

Ենթոյն այն հանգամանքի, որ Ուրարտուի թագաւորներն էլ սիրում էին իրանց բաշագործութիւնների մասին պարծենկոտ արձանագրութիւններ թողնել, ուստի և Հայաստանի պատմութեան այդ շրջանի մասին աւելի շատ ստոյգ տեղեկութիւններ կան: Այդ արձանագրութիւնները Վանում և այլ տեղերում գտնւած սեպագէտ տառերով գրւած ժայռէ կոթողներն են, որոնցից շատերը դեռ ևս կարդացւած չեն:

Ո Ի Ր Ա Ր Տ Ո Ի

Հայաստանում գտնւած սեպագիր արձանագրութիւնների համաձայն, Ուրարտուի ամենահին թագաւորներից մէկը կոչւել է Շարղուր-Սարղուր I, Լուտիբրիսի որդի:

Այդ Սարղուրն իր թողած երկու արձանագրութիւնների մէջ իրան անւանում է թագաւորների թագաւոր, որին բոլոր թագաւորները հարկ են վճարում:

Նա է հիմնել Վան քաղաքը, որ այն ժամանակ կոչւում էր Տուսպան կամ Տոսպ:

Սարղուրի յաջորդներից մէկը կոչւում էր Արամէ, որը ժամանակակից էր ասորական Սալմանասար II թագաւորին (860 - 824), Այս Սալմանասարը երեք անգամ արշաւանք գործեց Ուրարտուի վրայ: Վերջին անգամին Արամէն, յանկարծակիի գալով, թողեց իր Արգաշկոն քաղաքն ու փախաւ լեռները: Իսկ Սալմանասարը, ահագին աւերմունք ու կողոպուտ անելուց յետոյ, վերադարձաւ Նինւէ:

Արամէի յաջորդներն էին Շարղուր II, որ ժամանակակից էր նոյն Սալմանասար II-ին, և Իշպուլինիը:

Այս վերջինից հինգ արձանագրութիւններ են մնացել, որոնցից մէկը կանգնեցւած է Մեծ Ջար լեռան մօտ, որ ապացոյց է, թէ նա իր արշաւանքները Ասորեստանի վրայ հասցրել է մինչև ասորական մայրաքաղաքի մօտերը:

Իշպուլինիի որդին՝ Մենուաշը կամ Մենուասը, ժառանգելով հօր գահը, մի շարք յաջող պատերազմ-

ներ մղեց և իր երկրի սահմաններն ընդարձակեց թէ արևմտեան, թէ հարաւի և թէ արևելեան կողմերից: Հարաւում նա գրաւեց խալդական Մաննա թագաւորութիւնը, որ այդ ժամանակ Ասորեստանի գերիշխանութեան տակ էր գտնուում և որը մի կատարեալ կուսինձոր էր Ուրարտուի և Ասորեստանի միջև: Վանում գտնուած սեպագիր արձանագրութիւններէ մեծ մասը Մենուասին են պատկանում: Այդ արձանագրութիւններին նայելով Մենուասը եղել է թէ մեծ աշխարհակալ և թէ իր երկրի բարեկարգիչը:

Ի միջի այլ բազմաթիւ շինարարական գործերի վանի հռչակաւոր ջրանցքն ու նշանաւոր Այգեստանն էլ Մենուասն է շինել տւել:

Ուրարտուն իր ամենամեծ գորութեան ու փառքին հասել է Մենուասի որդու՝ Արգիշտի թագաւորի օրով (VIII-րդ դարում): Մրանից մի քանի արձանագրութիւններ են մնացել, որոնցից մէկը մի շատ հսկայական կոթող է՝ 400 տողից բաղկացած:

Այս արձանագրութեան մէջ նկարագրուած են Արգիշտիի 14 արշաւանքները Ասորեստանի և այլ հարևան թագաւորութիւնների վրայ:

Արգիշտին բոլոր հարևան մանր տէրութիւնները նու-



Մենուասի մէկ կոթողը

ճել ու իր տէրութեանն էր միացրել: Այդպիսով Ռուրարաուի սահմանները նրա օրով հասնում էին արևմուտքում մինչև Կիլիկիա, հիւսիսում մինչև Սեանայ լիճը, իսկ հարաւում մինչև Մեծ Ջաբը: Նրա օրով Ասորեստանը թուլացել էր, ուստի պարտաւորել էր Արգիշտիին հարկ վճարել:

Արգիշտիին յաջորդեց նրա սրդին՝ Շարգուր կամ Սարգուր III-ը, որն իր թողած արձանագրութիւններում իրան բարձրացրած արքայք և բախտերի պարայք տիրոջն են է տալիս:

Շարգուր III-ը տեսնելով, թէ ինչպէս Ասորեստանը, Տիգլատ-Պալասար III-ի (745—725) ջանքե-



Ռուրանայի կնիքը

րով սկսել էր նորից զօրեղանալ. մի ընդարձակ դաշնակցութիւն ստեղծեց նրա դէմ: Իսլամականութեան մէջ մտան Փոր-Ասիայի ու Սիրիայի այն բոլոր թագաւորութիւնները, որոնք վաղուց արդէն ասում էին ասորական քանակալներին: Այդ եղանակով Շարգուր III-ը իր ազդեցութիւնը մինչև Փիւնիկիա էր հասցրել: Այնուամենայնիւ Ասորեստանի հետ ունեցած հէնց առաջին ընդհարումին Շարգուրը մի խիստ

պարտութիւն կրեց և իր կազմած դաշնակցութիւնն էլ քայքայեց:

Շարդուրն իր կեանքը փրկեց մատակ ձիւս վըրայ փախչելով միայն, իսկ Ուրարտուին պատկանող շատ երկիրներ նորից Ասորեստանին անցան:

Շարդուրին յաջորդեց Ուրսան կամ Ռուսաս, որի օրով Ասորեստանում նորից ներքին խռովութիւններ ծագեցին և քայքայւած դաշնակցութիւնը դարձեալ նորագեց, Պայմանաւորւած նշանով դաշնակիցները ամեն կողմից ապստամբեցին Ասորեստանի դէմ: Ամբողջ տասը տարի տեկեց, մինչև որ ասորական հաշակաւոր Սարգան²⁾ թագաւորը, որ կարճատև ներքին խռովութիւններից յետոյ զան էր բարձրացել, կարողացաւ դաշնակիցներին զսպել:

Դաւաղրութիւնը Ուրսայի ջանքերով այնպէս լաւ էր կազմւած, որ երբ Սարգանին յաջողւում էր մի տեղ զսպել ապստամբութիւնը, սա մի այլ տեղ էր բռնկում: Ամենից ուշ պարտուեցին դաշնակից Մաննայի Ուլունուն և Մուսասիրի Ուրսանա թագաւորները: Դրանից յետոյ պարտուեց և ինքը՝ Ուրսան, որ դաւաղրութեան ներշնչողն ու ոգին էր հանդիսանում: Նա փախաւ և իր հայրենիքի անմատչելի լեռներում ապաւինեց, երկար ժամանակ յուսալով, թէ զուցէ կարելի կլինի վերանորոգել դաշնակցութիւնը: Իսկ երբ համոզուեց, որ ամեն ինչ այլևս կորած է, նա յուսահատութիւնից անձնասպան եղաւ (714 թ.Ք.ա.):

Ուրսայից յետոյ Ուրարտուն այլևս կորցրեց իր վաղեմի փառքն ու զօրութիւնը և Ասորեստանի հարկատուն դարձաւ: Այդ ժամանակներում է (XII դար)

Գրք ԿԻՅԵ


Դմ

²⁾ Զը չփոթել սրան քաղէական Սարգան I-ի հետ:



րում), որ հիւսի-արևմուտքից, ու արևելքից սկսեցին դէպի առաջաւոր Ասիա արշաւել սկիւթացիներն ու այլ արիական ցեղերը: Անձանօթ ու վայրենի ցեղերի արշաւանքները հարկադրեցին երկու դարաւոր թշնամի տէսութիւններին՝ Ասորեստանին և Ուրարտուին՝ բարեկամական դաշինք կապել իրարու հետ, որպէսզի կարողանան միահամուռ ոյժերով դիմադրել ընդհանուր թշնամուն:

Այդ դիմադրութիւնն ու կռիւը շարունակեց, մինչև որ երկու դաշնակիցներն էլ թուլացան և նորեկ թափառական բարբարոսների տիրապետութեան տակ ընկան: Հաթական կամ խալդական երկիրները դրաւեցին հայերը, որ նոյնպէս արիական բարբարոսներից էին, իսկ Ասորեստանը Մեդացից նւաճեցին:





ԱՐԻԱԿԱՆ ՑԵՂԸ

ԱՐԻԱԿԱՆ ՑԵՂՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԳԱՂԹԸ

Արիական ցեղի նախնական հայրենիքը գիտնականներէից սմանց կարծիքով Միջին Ասիայի ընդարձակ սարահարթն է համարուում, իսկ սմանց կարծիքով էլ՝ միջին Եւրոպան: Մարդկութեան այդ բազմադամ ցեղն էլ սկզբում խաշնարածութեամբ էր պարտւում ու թափառական կեանք վարում: Ենորհիւ այն հանգամանքի, որ երկրի արօտատեղերը միշտ չէին բաւականանում աճող անասուններին կերակրելու, ուստի խաշնարած ժողովուրդը ստիպւում էր շարունակ մեծ խմբերով դուրս գալ իր բնիկ հայրենիքից և նոր ու նոր արօտատեղեր որոնել:

Այդպէս տեղից տեղ թափառելով, արիացիները

շատ ու շատ հեռաւոր երկիրներ էին գնում, մինչև որ կամ օտարներից սովորելով և կամ արգաւանդ ու պտղատու վայրերի հանդիպելով, սկսում էին երկրագործութեամբ պարապել ու նստակեաց կեանք վարել:

Արիական ցեղի զանազան մեծ խմբեր անյիշելի ժամանակներում գաղթել էին իրանց հոյրենիքից և զանազան ճանապարհներով գնացել հաստատուել էին Արուսայի ու Ասիայի զանազան մասերում: Արիացիների մի մեծ բաղմութիւն XIII-XII-րդ դարերում (ք.ա.) եկել հաստատուել էին Թրակիայում (այժմեան Բուլղարիան և Բուլմեյիան): Դրանցից անւանի էին փրիզները, որոնք յայտնի էին իրանց քաջութեամբ ու պատերազմասիրութեամբ:

Արիական ցեղերի նոր արշաւանքներից մղւելով, փրիզները IX- րդ դարում (ք.ա.) այժմեան Կոստանդնուպոլսի նեղուցով Փոքր Ասիա անցան: Այստեղ նրանք մեծ ընդհարումներ ունեցան այդ տեղի հատական ժողովուրդների հետ, որոնց վերջ ի վերջոյ մասամբ դուրս վանեցին, իսկ մասամբ էլ իրանց հպատակեցրին ու մի նոր տէրութիւն հիմնեցին:

Փրիզների հիմնած տէրութիւնը կոչւեց Փրիզիա: Փրիզների հետ Թրակիայից եկած մի ուրիշ արիական ժողովուրդ էլ, փրիզներից բաժանւելով, շատ աւելի հեռուն գնաց դէպի արևելք և զէնքի ոյժով շարունակ ճանապարհ բանալով, գնաց հաստատուեց Սայրիի երկիրների արևմտեան մասում:

Այդ ժողովուրդը վերջում կոչւեց հայ, իսկ նրա հիմնած այդ առաջին տէրութիւնը՝ Փոքր Հայք:

Մօտ հարիւր տարի-յետոյ VIII-VII-րդ դարում (ք.ա.) հայերի մի մասը, կամաց-կամաց առաջ խա-

դալով, անցաւ Եփրատը և հետզհետէ զբաւեց Նայիրի արևելան կամ Ուրարտուի երկիրները: Այդտեղ մի երկրորդ հայկական թագաւորութիւն հաստատեցին հայերը, որը կոչուեց Մեծ Հայք:

Այդ երկրի բնիկները՝ հաթեր կամ խալդեր՝ մասամբ չւեցին դէպի հիւսիս, իսկ մասամբ էլ հըպատակուեցին հայերին և ժամանակի ընթացքում ձուլուեցին նրանց հետ:

Աւելի ուշ հայկական մի երրորդ թագաւորութիւն էլ հիմնուեց Մեծ Հայքից դէպի հարաւ, որ կոչուեց Ծոփաց Աշխարհ:

Մեծ Հայքը տարածուում էր Արաքս կամ Երասխ գետի հովտում, Մասիս լեռան շուրջը և իր սահմանների մէջ էր առնում հարաւային Կովկասի մի մասը, Վանայ լճի աւազանը և Եփրատ գետի վերին մասերը:

ԱՐԻԱՑԻՆԵՐԻ ՀԻՆ ԿՐՕՆԸ

Արիացիները միւս բոլոր հին ժողովուրդների նման, բնապաշտներ էին: Բնութեան խիստ հակադրական տարրերի ու կլիմայական փոփոխութիւնների ազդեցութեան տակ, նրանք էլ իրանց աստուածներին երկու կարգի էին բաժանում—օգտակար կամ բարի և վնասակար ու չար աստուածներ:

Բարի աստուածներ էին համարուում պայծառ երկինքը, ամեն տեղ թափանցող լոյսը, արեգակը, կըրակը, մայր-երկիրը, ջուրը, քամին և այլն: Իսկ չար աստուածներ էին խաւարն ու երաշտը:

Չար աստուածներին արիացիները սաստիկ ատում և անիծում էին. նրանք երբէք չէին աշխա-

ասում գոհարբութիւններով ու աղօթքներով այդ աստուածների սիրտը շահել և նրանց ողորմութիւնը խնդրել: Ընդհակառակը՝ արիացիների հասկացողութեամբ, մարդիկ պէտք է մարանչեն շար աստուածների՝ դէմ: Բարի աստուածների նպատակն ու ամբողջ աշխատանքն էլ հէնց շար աստուածների դէմ մարտընչելն է: Այսպէս՝ լոյսը աշխատում է յաղթել խաւարին, քամին ու սրտը, հաւաքելով երաշտի ցրած ամպերը, կայծակներ են արձակում և անձրև շաղ տալիս: Բարի աստուածներին էլ արիացիք չէին խընդրում ու աղերսում այլ միմիայն փառաբանում էին:

Արիացիների ամենահին և ամենաբարձր աստուածը համարում էր երկինքը, որ կոչւում էր Վարունա: Արեգակը Վարունայի աչքն էր, կրակը՝ երկնային կայծակի ձևով՝ նրա սրդին, իսկ տեսանելի աստղալից երկինքը, նրա արքայական շղարշը:

Յաճախ Վարունայի անւան հետ կցւում էր և Միտրա (Միհր) անունը, որ ցերեկւայ լոյս է նշանակում, և այդ երկու անունները՝ Վարունա-Միտրա կամ Միտրա-Վարունա գործ էին անում իրրև մի աստուածութիւն: Ասում էին, թէ այդ երկուսը միևնոյն բանն են մտածում: Նրանք միասին տիեզերքի կարգ ու կանոնն ու Արդարութեան օրէնքն են պահպանում: Իրրև ամեն բան տեսնող ու ամենագէտ աստուածներ, նրանք միասին հսկում են մարդկանց թէ գործերի և թէ սրտերի վրայ: Արդարութեան օրէնքից շեղելիք մեծ մեղք և ամեն մի աստութեան ու անբարշտութեան սկիզբն էր համարւում, և դրա համար Վարունա-Միտրան խիստ պատժում էր մարդկանց: Իսկ պատժից ազատւելու համար մարդիկ պէտք է աղօթէին և ներումն խնդրէին: Վարունա-

Միտարան ամենից աւելի ստախօսութիւնն էր ասում:

Արիացիները մի առանձին յարգանք էին տա-
ծում զէսլի կրակ-ասուածք, որը զիշերները մարդ-
կանց օջախում նստած, արեգակին էր փոխարինում,
թէ լոյս և թէ ցերմութիւն արձակելով շուրջը: Կայ-
ծակը կրակ-աստծու մի այլ տեսակն էր համարւում,
որը միշտ պատերազմ էր մղում խաւարի ու երաշտի
դէմ: Գիշերային խաւարի դէմ մարտնչող ու նրան
հալածող ասուած էր համարւում և արշալոյսը:

Չար և բարի ասուածների միջև տեղի ունեցող
կռիւների մասին արիացիները բազմաթիւ զիցարա-
նական ասասպելներ էին յօրինել: Այսպէս օրինակ,
երկնակամարի վրայ լողացող սպիտակ ամպերը հա-
մարւում էին ընդարձակ արօտասեղում զբոսնող կո-
վեր, որոնք առատութեամբ կաթ՝ այսինքն անձրև են
ցօղացնում երկրի ու նրա վրա սպրոզ բոյոր էակ-
ների համար:

Սակայն երաշտի դեերը, գողերի ու աւազակների
նման, գալիս յափշտակում են այդ կովերին և տա-
նում փակում են լեռների բարձունքներում եղած
բարայրների կամ բերդերի մէջ: Այդ ժամանակ
սրտախ ասուածը՝ *Մնդրան*, հազնում է իր փայլուն
ոսկէ զգեստները, կանգնում է՝ արագտվազ մոխրա-
գոյն ձիեր (որօտնային ամպեր) լծած կառքի մէջ ու
սլանում է իր անբաժան՝ ընկերոջ՝ Վա-ի (քամու)
հետ: Նրանց յետևից սլանում է մի ուրիշ՝ տւելի
խիստ քամիների խումբ և պատերազմը սկսում է
երաշտի մեծ դևի՝ Օձի դէմ, որը խրոխտաբար նըս-
տած է լեռան գագաթին:

Ինդրայի բուռն յարձակմանը երկար չեն կարողանում դիմանալ չար ոգիները. որոտի հարւածներից ու արձակւած շանթերից քարուքանդ են լինում լեռան վրայի բերդերն ու պատնէշները, և կովերը, ազատւելով, իրանց կաթն են ցօղում երաշտից պապակւած երկրի վրայ:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՐՄԻՅ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻԱՆ ՏԱԿ

Ուրարտուի երկրներում հիմնած հայկական տէրութիւնները միանգամայն անկախ չէին. նրանց թագաւորները նախ Միդիայի և ապա Պարսկաստանի գերիշխանութեան տակ էին գտնւում և հարկատու էին նրանց:

Հայերը դեռևս գիր չունենալով, իրանց սկզբնական թագաւորութեան մասին ոչ մի արձանագրութիւն չեն թողել: Եղած տեղեկութիւնները հայերի մասին, պատմաբանները քաղում են պարսից թագաւորների թողած արձանագրութիւններից և յոյն ու հռոմայեցի պատմագիրների աւածներէց: Այսպէս՝ պարսկական մի արձանագրութիւնից իմանում ենք որ պարսից Դարէհ Վշտասպի (կամ Հիստասպ) թագաւորութեան օրով Հայաստանն իր կիսանկախ դրութիւնից էլ զրկւել և պարսից ընդարձակ պետութեան մի (13-րդ) նահանգն էր դարձել և կուռավարւում էր սատրապների միջոցով:

Սատրապները իրանց նահանգների համարեա թէ լիակատար տէրերն էին, և որչափ Պարսկաստանի կենտրոնից հեռու էր գտնւում նահանգը, այնչափ էլ սատրապի իշխանութեան իրաւունքներն աւելի ընդարձակ էին: Դրա համար էլ հեռաւոր նահանգների

սատրապութիւնը արբոււմ էր շատ մեծ վստահութիւն վայելող անձանց:

Սատրապների պարտականութիւններն էին, հրակել իրանց նահանգի ու ժողովրդի բարօրութեան վրայ, թոյլ չը տալ, որ դաշտերն անմշակ և ջրանցքներն ու ճանապարհները չը վերանորոգւած մնան ու փչանան: Նրանք ոչ մի առիթ չը պիտի տային հպատակ ժողովուրդների դժգոհութեան: Նրանց խստիւ պատիրոււմ էր, որ թէ իրանք և թէ իրանց ստորադրեալ պաշտոնեաները ոչ մի կերպ չը դիպչեն և յարգանքով վերաբերւեն դէպի հպատակ ազգերի կրօնը, ազգային լեզուն, սովորութիւններն ու գանազան կաստատութիւնները:



Դարեհ Վիշտասպ

Հպատակ ժողովուրդների բարօրութիւնը Դարեհին հարկաւոր էր նոյնպէս, որ կարելի լինի, հնարաւոր եղածին շափշատ հարկ ստանալ: Իր պետութեան մէջ բոլոր մշակուող հողերը նա դնահատել և ըստ գնահատութեան, իւրաքանչիւր կտոր հողի վրայ հարկ էր նշանակել: Բացի այդ հողային հարկից, որ վճարոււմ էր ոսկէ կամ արծաթէ զրամով, հպատակները տուրք էին վճարոււմ նաև իրանց բերքերից — հացահատիկներ, ընտանի անասուններ, ստրուկներ և այլն:

Մակայն, այդ բոլորը պահանջոււմ էր այնպիսի չափով ու քանակով, որ ժողովուրդը չը քայքայուի ու թշուառութեան չը մատնուի:

Իսկ պարսիկ ժողովրդից ոչ մի հնարկ կամ տուրք չէր պահանջոււմ. նրանք պարտատու էին միայն զինուորական ու քաղաքացիական ծառայութիւններ կատարել:

Դարէհից յետոյ էլ հայերն առհասարակ շատ հաւատարիմ էին պարսից թագաւորներին և միշտ էլ մասնակցոււմ էին նրանց կատարած զանազան արշաւանքներին: Այսպէս օրինակ՝ յոյն - պարսկական պատերազմների ժամանակ, պարսից Քսերքսէս թագաւորի բանակոււմ հայերից մի առանձին զորամասկար, փոխւզացիների ձևով զինուած:

ՊԱՐՄԻՑ ՏԷՐՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Պարսից ընդարձակ տիրապէտութեանը վերջ դրեց մեծ աշխարհակալ Ալեքսանդր Մակեդոնացին: Դեռ 20 տարեկան հասակոււմ Ալեքսանդրը, Մակեդոնիայի զահր ժառանգելով (336 թ. Ք. մ.), այնպիսի մեծ ընդունակութիւններ ու սահանգ ցոյց տւեց երկիրներ նւաճելու և կառավարելու մէջ, որ ժամանակակիցները նրան «մեծ» մականունը տւեցին:

Ալեքսանդրը յունական լաւ կրթութիւն ստացած լինելով, ամեն կերպ աշխատոււմ էր՝ այդ կրթութիւնը իր հայրենիքոււմ էլ տարածել:

Ալեքսանդրը շատ պատերազմասէր մարդ էր և սիրում էր մանաւանդ յանդուկն նւաճուձներ կատարել: Ամբողջ Յունաստանը նւաճելուց յետոյ, նա սկսեց պատրաստութիւններ տեսնել Պարսկաստան արշաւելու: Պարսից տէրութիւնն այդ ժամանակ, չը նայելով իր ընդարձակ տարածութեանը, արդէն կորցրել էր իր վաղեմի զօրութիւնը: Երկար տարիների անյաջող պատերազմները — նիւթազէս քայքայել էին ժողովրդին, և հպատակ սպգերը այլևս դժւարութեամբ էին տանում պարսից տիրապէտութիւնը:



Ալեքսանդր Մեծ

Այդ ժամանակ Պարսկաստանի թագաւորը Դարէհ 3-րդ կոչումանն էր, որը չը նայելով իր քաջութեանը, անկարող էր փրկել իր քայքայւող տէրութիւնը անխուսափելի անկումից:

Մակեդոնիայի երիտասարդ թագաւորը ընդամենը 35 թէ 36 հազար զօրքով, Հելեսպոնտն անցնելով, Փոքր Ասիա մտաւ:

Առաջին հանդիպումը պարսից զօրքերի հետ տեղի ունեցաւ Գրանիկ գետի մօտ: Պարսիկները խիստ պարտութիւն կրեցին և Ալեքսանդրը միմեանց յետևից

նւանեց Փոքր - Ասիական բոլոր երկրները ու արշաւեց պարսից տէրութեան խորքերը: Դարէնը նորից մի մեծ բանակ կազմեց և գնաց Ալեքսանդրի առաջը կտրելու: Թշնամիները հանդիպեցին Արբելայում: Պատերազմը կատաղի էր, և յաղթութիւնը գարձեալ մակեդոնացիների կողմը մնաց:

Դարէնը փախաւ, և փախչելու ժամանակ ըսպանւեց իր սատրապներից մէկի ձեռքով:

Իրանից յետոյ Ալեքսանդրը ամբողջ Պարսկաստանի տէրը դարձաւ: Բայց գրանով էլ չը բուսկանացաւ Ալեքսանդրը. նա իր արշաւանքը շարունակեց դէպի Հնդկաստան, նպատակ ունենալով ասիական բոլոր այդ երկրներում յունական բարձր քաղաքակրթութիւնը տարածել: Բայց Ալեքսանդրին վիճակւած չէր իր ծրագիրների իրագործումը տեսնել. վաղահաս մահը նրան գերեզման տարաւ (323 թ. Ք. ծ. ա.) դեռևս ընդամենը 32 տարեկան հասակում:



Սելևկ

Մեծն Ալեքսանդրի մահից յետոյ, նրա ընդարձակ կայսրութիւնը երեք մասի բաժանւեց:

Ասիական մասին՝ Միջերկրական ծովից մինչև Հնդկաստանի սահմանը՝ տէր դարձաւ Սելևկեան տոհմը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԱՆԿՈՒՄԻՑ ՅԵՏՈՅ

Պարսից թագաւորութեան անկումից յետոյ, Հայերը յաջողել էին իրանց ազգային անկախութիւնը վերականգնել թէ Փոքր Հայքում, թէ Մէծ Հայքում և թէ Մոփաց Աշխարհում, որը Մեծ Հայքի հարաւումն էր գտնուում: Մակեդոնացիք թէև այդ երկիրներից ամեն մէկի վրայ մի առանձին փոխարքայ էին նշանակել, բայց սրանց իշխանութիւնը մեծ մասամբ անւանական էր: Երկիրն իրապէս կառավարում էր հայ թագաւորների ձեռքով, որոնք սատրապ, իշխան կամ այլ ժիտոս էին կրում և յաճախ նոյնիսկ բոլորովին մերժում էին Մակեդոնիայի գերիշխանութիւնը ճանաչել:

Մեծն Ալեքսանդրը Հայաստանի կառավարութիւր Լիդիայի սատրապ Միհրանին էր յանձնել, որը յօժաբակամ էր անձնատուր եղել մեծ աշխարհակալին:

Միհրանի մահից յետոյ (323 թ.), մակեդոնական Պերդիկա զօրավարը Նէօպտոլէմին Փոքր Հայքի վրայ փոխարքայ նշանակեց: Սա մի շատ հպարտ ու դաժան մարդ էր, ուստի զժգոհ հայերը իրանց Արտաւազդ թագաւորի առաջնորդութեամբ դուրս արեցին նրան իրանց երկրից: Կատաղած Պերդիկը Կապադովկիայի փոխարքայ Յւմէնին յանձնեց անհնազանդ հայերին խաղաղեցնելու գործը: Բայց նա, նեւսնելով սր բռնի ոյժով անհնարին է հայերին հնազանդութեան բերել, աշխատում էր բարեկամութեամբ Արտաւազդին համոզել՝ Նէօպտոլէմի գերիշխանութիւնը ճանաչել: Սակայն շուտով հէնց Յւմէնի ու Նէօպտո-

լէմիի միջև պատերազմ սկսեց և այս վերջինը ըս-
պանւեց, 30 տարուց յետոյ Պոնտոսն ու կապադով-
կիան ապստամբեցին Սելևկեանների դէմ
և Արտաւազդը նրանց հետ միանալով, չափազանց
նպաստեց ապստամբութեան յաջողութեանը:

Այնուհետև Փոքր Լայքը մի բոլորովին անկախ
տէրութիւն դարձաւ և իր անկախութիւնը պահպանեց
մինչև որ երկրորդ դարի վերջերում (115 թ. Ք. ծ. ա.)
Պոնտոսի նշանաւոր Միրհրդատ Եւպատոր թագաւորը
նրան իր տէրութեանը միացրեց:

Նէօպտոլէմիից ոչ պակաս վատ ընդունելութիւն
գտաւ Ալեքսանդրի զօրավար Մենոնը Մեծ Հայքում:
Մեծ մակեդոնացին Մենոնին ուղարկել էր զօրքով
ճորոխ գետի ափում գտնւած ոսկու հանքերը, այդ
թանկագին մետաղից բերելու, բայց հայերը այնպիսի
ընդիմադրութիւն ցոյց տւեցին, որ Մենոնը ստիպւած
էր դատարկաձեռն վերադառնալ: Իսկ աւելի ուշ, երբ
Սելևկեան Անտիօք III թագաւորը Մեծ Հայքի դէմ
արշաւեց (203), նրան բոլորովին նւաճելու նպատակով,
հայոց Ատրաքազան թագաւորը, անձնական տեսալ-
ցութեան ժամանակ, իր վայելուչ տեսքով ու խելօք
խօսակցութեամբ այնպիսի խորը տպաւորութիւն թո-
ղեց Անտիօքի վրայ, որ հակառակորդները, առանց
պատերազմելու, խաղաղութիւն կնքեցին, երկու կող-
մի համար էլ շահաւէտ պայմաններով:

Մոտաւորապէս նոյնպիսի վախճան ունեցաւ նոյն
Սելևկեան Անտիօք երրորդի արշաւանքը հայկական
Մոփաց Աշխարհի դէմ (215 թ.): Այս վերջինի Քոնքքս
թագաւորը հրաժարել էր սովորական տուրքը վճա-
րել Սելևկեաններին, և Անտիօքը եկել պաշարել էր

նրա Արսամօստ քաղաքը, Քսերքսը ցանկութիւն
 յայտնեց անձամբ բանակցութեան մէջ մտնել Անտի-
 ոքի հետ: Եւ նա այնպէս ազդեց այս վերջինի վրայ,
 որ բանակցութիւնը բոլորովին անսպասելի հետեանք
 ունեցաւ: Հայոց թագաւորի հաւատարմութիւնը պահ-
 պանած լինելու նպատակով, Անտիոքը հրաժարեց
 այն բոլոր ապառիկ տուրքերից, որ Մնացել էին դեռ
 Քսերքսի հօր ժամանակից: Բացի դրանից՝ Անտիոքը
 իր ջրոջը կնութեան տւեց Քսերքսին: Իսկ սա էլ իր
 կողմից Սելևկեան թագաւորին 300 տաղանդ (մօտ
 $\frac{1}{2}$ միլիոն բուրլի) փող և հազար ձի, նոյնչափ էլ ջորի
 տւեց իրանց գրաստներով:

Սելևկեան, Անտիոք թագաւորը 189 թ. (Ք. ա.)
 մի մեծ պարտութիւն կրեց հռոմայեցիներէից, և այդ
 պարտութիւնը մի տեսակ ազդանշան եղաւ Առաջաւոր
 և Փոքր Ասիայի ազգերի համար ոտքի կանգնելու և
 թօթափելու Սելևկեանների լուծը: Այդ ժամանակ
 Հայաստանի կառավարիչներն էին՝ Մեծ Հայքում
 Արտաքսիասը (Արտաշէս), իսկ Մոփաց Աշխարհում
 Ջարիազը (Ջարէհ): Մրանք երկուսն էլ ազատամբե-
 ցին, իւրաքանչիւրն իր երկրում, և իրանց միանդա-
 մայն անկախ թագաւորներ հրատարակեցին:

Արտաշէսը Մեծ Հայքի թագաւոր դառնալով, իր
 համար մի նոր Մայրաքաղաք շինեց Արաքսի ափին,
 անւանելով նրան Արտաշատ: Յոյն պատմագիրների ա-
 սելով, Արտաշատը մի շատ անառիկ ու զեղեցիկ քա-
 ղաք էր և շինւել էր կարթագենացի նշանաւոր զօրա-
 վար Հաննիբալի ցուցմունքներով, որ փախել էր հր-
 ոտմայեցիներից և հիւրընկալութիւն գտել հայոց թա-
 գաւորի մօտ: Այնուհետև Արտաշէսը մի շարք նը-

ւաճուձեք կատարելով, իր երկրի սահմաններն ընդարձակում և հասցնում է Սև և կասպից ծովերի ափերին: Երբ Մոփսց Աշխարհի թագաւոր Զարէհը մեռնում է, Արտաշէսը փորձում է Հայաստանի այդ մասն էլ նւաճել 163 թ., սակայն չի յաջողում, որովհետև կապադովկիայի թագաւորը օգնում է Զարէհի որդուն, նորից իր հօրենական գահի վրայ հաստատուելու:

Արտաշէսի մահից յետոյ (161 թ.) այլևս ստոյգ տեղեկութիւններ պակասում են Հայաստանի մասին մինչև Մեծն Տիգրանի թագաւոր դառնալը: (95 թ. Ք. ա.)

Մ Ե Մ Ն Տ Ի Ք Ր Ա Ն

Ընդհանուր դրութիւնը Փոքր Ասիայում Մեծն Տիգրանից առաջ

Հայ ազգի պատմութեան ամենափայլուն շրջանը Մեծն Տիգրանի թագաւորութեան տարիներն են համարւում:

Այդ այն ժամանակն էր, երբ հռոմայեցիք գրուել էին Փոքր Ասիայի մի քանի երկիրները և օշխատում էին ամբողջ արևելքի տէրը դառնալ:

Հռոմայեցիք այն ժամանակէլ ամենազարգացած ու լուսաւորւած ազգն էին: Նրանց զօրքերը զինւած էին ամենալաւ զէնքերով: Նրանք յայտնի էին իրանց քաջութեամբ, կարգապահութեամբ, յանդրգնութեամբ ու տոկունութեամբ: Նրանց զօրավար-

ներն էլ շափազանց հմուտ էին պատերազմական ար-
ւեստի մէջ:

Հոռոմայեցիք տէր էին դառել Միջերկրական ծո-
վին ու նրա վրայ բազմաթիւ առևտրական ու պա-
տերազմական նաւեր էին պահում: Նրանք այդ պա-
տերազմական նաւերով սարսափ էին ազդում իրանց
տէրութեան սահմանակից երկիրների և ազգերի վրայ,
որոնց հետ շատ էլ լաւ չէին վարում:

Ուզելով հարստանալ, ճոխ ու փարթամ կեանք
վարել, հոռոմայեցիք իրանց հպատակ ազգերին սաս-
տիկ հարստահարում, կեղեքում և թշւառութեան էին
մատնում:

Այդ ժամանակ արևելքում ոչ մի հզօր տէրու-



Միհրդատ

թիւն չկար, որ արդելք լինէր հոռոմայեցիների ազդե-
ցութեան տարածւելուն և սահման դնէր նրանց ան-
խիղճ կեղեքումներին:

Ամենամեծ տէրութիւնը Փոքր Ասիայում Պար-

թեների թագաւորութիւնն էր, որ գտնոււմ էր Հայաստանի արեւելեան կողմում: Պարթևները, սակայն, ներքին խռովութիւններից թուլացած, անկարող էին հռոմայեցոց հետ մրցել:

Հռոմէական սահմաններին շատ աւելի մօտ էր Պոնտոսի թագաւորութիւնը, որ այդ միջոցին նոր էր սկսել զարգանալ ու զօրեղանալ:

Այդ թագաւորութիւնը տարածոււմ էր Սև ծովի հարաւային ու արեւելեան ափերում, իր սահմանների մէջ առնելով նաև Կողքիսը, Կովկասի մի մասն ու Փոքր Հայքը:

Այդ երկրի թագաւորն էր Միհրդատ Եւպատորը, որ մի շատ խելօք, հպարտ ու պատերազմասէր մարդ էր:

Միհրդատը շատ տարիներ գործ ունենալով արևմբեան ազգերի հետ, ուսումնասիրել էր նրանց թէ լաւ և թէ վատ կողմերը: Նա ծանօթ էր մի քանի լեզուների, ինչպէս և շատ հմուտ էր պատերազմական գործերում՝ թէ ցամաքի և թէ ծովի վրայ: Նրա պատերազմական նաւերը լողում էին Սև ծովի վրայ:

Հպարտ ու յանդուգն Միհրդատն էր, որ դուրս էր եկել հզօր Հռոմի դէմ, կամենալով ինքը դառնալ Փոքր Ասիայի տէրն ու իշխողը:

Պոնտական թագաւորի ու հռոմայեցիների միջև սկսւած հէնց այդ կռիւների ժամանակ Մեծն Տիգրանը Հայաստանի թագաւոր է դառնում:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԻԳՐԱՆԻՑ ԱՌԱՋ

Տիգրանից առաջ գոյութիւն ունեցող Հայաստա-

նի երեք թագաւորութիւններն էլ բոլորովին անկախ
չէին: Փոքր Հայքն իր առանձին թագաւորը չունէր և
միացւած էր հարևան Գոնատոսի թագաւորութեանը:
Մեծ Հայքը՝ պարթևական թագաւորի, իսկ Մոփաց
Աշխարհը՝ Կապադովկիայի գերիշխանութեան տակ էին
ու նրանց հարկատու:

Միհրդատի ժամանակակից Տիգրան II-րդը Մեծ
Հայքի Արտաշէս (Արտաքսիաս) թագաւորի ժառանգ-
ներից էր: Նա դեռ մանուկ էր, երբ հայրը մեռաւ,
ուստի թագաւորական գահի վրայ նրա հօրեղբայր
Արտաւազդը բարձրացաւ (125-95 թ. Ք. ա.):

Հէնց այդ Արտաւազդի օրով է, որ պարթևները
մեծ զօրութեան հասան և հայերից յետ խլեցին Ար-
տաշէսի նւաճած՝ դաւառներից մի քանիսը և մանկա-
հասակ Տիգրանին էլ պատանդ վերցրին: Իսկ երբ
Տիգրանը առնական հասակին էր հասել, պարթևաց
թագաւորը նրան զօրք տւեց և ուղարկեց իր հօր գա-
հը Արտաւազդից յետ խլելու (95 թ. Ք. ա.): Այդ
պիտի օգնութեան փոխարէն Տիգրանը պարտաւորւել
էր իր երկրից 70 հովիտ զիջելու պարթևներին:

Մեծն Տիգրանը մի խելօք, բայց և շատ հպարտ,
փառասէր ու պատերազմասէր մարդ էր:

Իր հօրից Մեծ Հայքի գահը ժառանգելուն
պէս, նրա առաջին միտքն է լինում Մոփաց Աշ-
խարհը միացնել իր թագաւորութեանը և այդպիսով
ստեղծել մի զօրաւոր հայկական տէրութիւն:

Այդ ժամանակ Կապադովկիան, Միհրդատի մղած
պատերազմների պատճառով, շատ թուլացած էր. նա
անկարող էր պաշտպանութիւն ցոյց տալ իր հովա-
նաւորութեան տակ գտնւող Մոփաց Աշխարհին:

Տիգրանը շատ հեշտութեամբ նւաճում է նրան

և իր երկրին միացնում (94 թՖ 93 թ. Բ. ծ. առ.):

ՏԻԳՐԱՆԻ ԵՒ ՄԻՀՐԴԱՏԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ:

Հայոց Տիգրանի զորեղանալու հէնց այդ միջոցին է, որ պոնտացի Միհրդատն իր ուշադրութիւնը Տիգրանի վրայ դարձրեց: Նրան մի լաւ աջակից էր հարկաւոր Հոռմի զօրութիւնը խորտակելու համար, և Տիգրանը շատ համապատասխան էր նրա ձգտումներին: Գորդիոս զօրավարին դեսպան ուղարկելով հայոց թագաւորի մօտ, Միհրդատը աւաջարկեց դաշնակցութիւն կնքել իր հետ Հոռմի դէմ: Միևնոյն ժամանակ նա իր կլէօպատրա աղջկանը կնութեան տւեց հայոց Տիգրանին, որն արդէն 45 տարեկան էր:

Միհրդատի հետ դաշնակցելով, հայոց թագաւորն էլ իր նպատակներն ունէր. նա մտածում էր, որ Պոնտոսի զօրեղ թագաւորին աջակից ունենալով, ինքը կարող է աւելի ևս ընդարձակել իր տէրութեան սահմանները և շատ աւելի մեծ երկրի թագաւոր դառնալ:

Միհրդատն ուրախութեամբ խոստանում էր Տիգրանին աջակցել իր այդ ցանկութիւններն իրագործելու, միայն թէ նա էլ իրան օգնէր հոռմայացիների զօրութիւնը ջախջախելու:

Տիգրանն ու Միհրդատը համաձայնութեան գալով պայմանաւորուում են, որ Հոռմի դէմ իրանց մղելիք պատերազմներում նւաճած բոլոր երկիրները Միհրդատին պիտի պատկանեն, իսկ ձեռք բերւած

աւարը, գերիններն ու հարստութիւնները պիտի բա-
ժին հասնեն Տիգրանին:

Այսպիսի պայմանով Մեծն Տիգրանը միայն իր
զանձարանը հարստացնելու մասին չէր մտածում,
նրա ցանկութիւնն էր արևմտեան երկրների աւելի
լուսաւոր ժողովուրդներին — յոյներին, հրէաներին,
ասորիներին և ուրիշներին, գաղթեցնել Հայաստան,
որպէս զի խտացնի նրա բնակչութիւնը և զարկ տալ
երկրի և ժողովուրդի առաջադիմութեանը:

Տիգրանի եւ Մինդասի առաջին ընդհարումները հռոմայեցիների հետ

Պայմանագիրը կնքելուն պէս, դաշնակիցները
յարձակոււմ են կապաղովկիայի ու Պաֆլագոնիայի
վրայ և տիրում այդ երկրներին: Երկու երկիր-
ներն էլ այդ ժամանակ Հռոմի գերիշխանութեան տակ
էին: Դրանց զահաժառանգները սարսափած դիմում
են հռոմայեցիներին և նրանցից պաշտպանութիւն
խնդրում:

Հռոմի Ծերակոյտը*) հրամայում է Կիլիկիայի
հիւպատոս Սիլլային՝ մաքրել երկու երկիրներն էլ
«բարբարոս» (կիսավայրենի) թշնամիներից և զահա-
ժառանգ Արիոբարզանին հաստատել կապաղովկիայի
թագաւոր:

Սիլլան իր փոքրաթիւ զօրքով յարձակոււմ է

*) Հռոմում այդ ժամանակ թագաւորներ չկային. եր-
կիրը կառավարում էր ժողովրդից ընտրւած ներկայացուցիչ-
ների ժողովը, որ կոչոււմ էր Ծերակոյտ:

գաշնակից գործերի վրայ, մեծ ջարդ է տալիս նը-
րանց և Արիոքարգանին հաստատում իր հայրենական
գահի վրայ (92 թ է 91 թ. Ք. ծ. ա.):

Դրանից յետոյ Միլլան շտապով վեռագառնում
է Հոմի, ուր այդ ժամանակ ներքին խիստ երկպառա-
կութիւններ կային:



Միլլա

Միհրդատն ու Տիգրանը
կրած պարտութիւնից չեն
յուսահատուում: Միլլայի հե-
ռանալուց յետոյ, նրանք
շտապով պատրաստութիւններ
են տեսնում պատերազմական
նոր գործողութիւններ ըսկ-
սելու համար:

Այս անգամ Տիգրանը, սակայն, հաւատարիմ
չէ մնում իր աներոջ հետ կապած դաշինքին: Պատե-
րազմների ամբողջ ծանրութիւնը Միհրդատի վրայ է
ընկնում, որովհետև Տիգրանին շատ աւելի զբաղեց
նում էր իր սահմանակից փոքր երկիրները գրաւելու
միտքը, քան հզօր Հոմի դէմ պատերազմելը:

Մեծն Տիգրանի նւաճումները Պարթեւաց երկրում

Ճիշտ այդ ժամանակ պարթևաց արքունիքում
խիստ մեծ ներքին պառակտումներ էին սկսել, և
Տիգրանն օգտւելով այդ հանգամանքից, ամենից ա-
ռաջ այդ երկրի վրայ է յարձակուում: Նա այնպիսի
մեծ հարւած է հասցնում պարթևներին, որ նրանք
ստիպոււմ են, ոչ միայն հայերից խլած 70 հովիտ-
ները վերագարձել, այլ և իրանց գերիշխանութեան

տակ գտնւած բոլոր երկիրներն էլ Տիգրանին զիջել՝
Այդ երկիրներն էին՝ Կորդաց. աշխարհը (Քիւրդիստան),
Ադիեարանը (Նախկին Հիւսիսային Ասորեստանը),



Մեծն Տիգրան

Միջագետքը, Մեծ Միդիան, Ատրպատականը, Վրաստանը
և Ադանից աշխարհը:

Այդ երկրների բոլոր թագաւորները ընդունում են հայոց թագաւորի գերիշխանութիւնը և նրա հարկատուներն են դառնում: Նրանք պարտաւորոււմ են խաղաղ ժամանակ Տիգրանին հարկ վճարել, իսկ պատերազմի դէպքում զօրք և բանւորներ տալ:

Պարթևաց թագաւորը պարտաւորոււմ է «Արքայից Արքայ» տիտղոսն էլ հայոց Տիգրանին զիջել:

Տիգրանի նւաճումները հռոմէական երկիրներում

Հայաստանի սահմանները հիւսիսի և արևելքի կողմերից կատարելապէս ապահովելուց յետոյ, «Արքայից Արքան» մտածում է Եփրատ գետի արևմտեան կողմի երկիրներն էլ նւաճել:

Եդեսիայի ու նրա հարեան երկրների՝ Օսրոէնի, Նիգերի և Կոմմագէնի գրաւումով՝ Տիգրանն արդէն տէր էր դառել այն մեծ ճանապարհին, որ տանում էր Ասորիք (Սիրիա):

Նա բազմաթիւ զօրքով մտնում է այդ երկիրը և համարեա թէ առանց պատերազմի տիրում նրան (63 թ. Ք. ծ. ա.), որովհետև Սելևկեանների անվերջ պառակտումներից ձանձրացած Սիրիայի բնակիչները հէնց իրանք էին հրաւիրում հայոց թագաւորին իբրանց երկիրը գրաւելու: Նոյնպէս համարեա թէ առանց պատերազմի Տիգրանը Փիւնիկիան ու Կիլիկիան նւաճեց: Այս վերջինի ծաղկած քաղաքներից շատերի բնակիչներին նա տեղափոխում է Հայաստան բնակելու:

Կելիկիան ու Սիրիան հայկական առանձին նահանգներ գարձան, որոնց կառավարելու համար

Տիգրանը մի յատուկ փոխարքայ էր նշանակելու Բակ Սելեկեան նշանաւոր Անտիոք քաղաքը հայոց թագաւորի մայրաքաղաքներէց մէկը դարձաւ,

Այդ ընդարձակ նւաճումներէց յետոյ, Տիգրանը Միւրդատի դրդմամբ, հայկական ու պոնտական միացեալ զօրքի զլուխն անցած, Կապադովկիայի վրայ է յարձակուում: Այդ երկիրը Հռոմի հովանաւորութեան տակ էր գտնուում: Միւրդատը երկու անգամ նւաճել էր նրան, ըայց ստիպւած էր եղիլ նորից վերադարձնելու: Այս երկրորդ անգամին Տիգրանը Կապադովկիայի Արիոքարդան թագաւորին գերի է բռնում ու նրա Մաժակ մայրաքաղաքն էլ գրաւում է: Այս քաղաքի 300 հազար բնակիչներին, ինչպէս և Կապադովկիայի ուրիշ 11 ծաղկած քաղաքների բնակիչներին շարքայից արքանս իր Տիգրանակերտ մայրաքաղաքը փոխադրեց բնակուելու, որը նա նոր էր հիմնել (77 թ. Ք. ա.) Տիգրիս գետի ափին:

Այդպիսով Տիգրան II-ըդէ օրով հայոց թագաւորութեան սահմանները Միդիայի լեռներից մինչև Կիլիկիայի Տաւրոսը և Քուռ գետից մինչև Յորդանանն էին հասնում: Հէնց այդ պատճառով էլ հայոց այդ աշխարհակալ թագաւորը պատմութեան մէջ յայտնի է Մեծն Տիգրան անունով:

Վերջին անգամ Տիգրանը արշաւում է Պալեստինի վրայ: Բայց դեռ բոլորովին չէ վերջացրած այդ երկրի նւաճումը, յանկարծ լուր է ստանում, թէ հռոմէական զօրքը մտել է Հայաստան, ուստի շտապում է վերադառնալ իր երկիրը:

Տիգրանի առաջին պատերազմի հռոմայեցիների դէմ

Երբ Տիգրանն իր երկրի սահմաններն էր ընդարձակում, Միհրդատն էլ Հռոմայեցիների դէմ էր պատերազմում: Վերջինս մի քանի փառաւոր յաղթութիւններ տանելուց յետոյ, թէև կրկին չարաչար յաղթւել էր, բայց չէր յուսահատուել: Նա կարճ ժամանակից յետոյ նորից գլուխ էր բարձրացրել ու սպառնական դարձել հռոմայեցիների համար: Մեծն Տիգրանը այս անգամ զգուշութեամբ հրաժարւել էր նր-



Լուկուլլոս

բա հետ դաշնակցելուց և չեղարութիւն էր յայտարարել: Այս անգամ հռոմայեցիք իրանց Լուկուլլոս գործարքին էին ուղարկել անհանգիստ Միհրդատի դէմ:

Լուկուլլոսը թէ ցամաքի և թէ ծովի վրայ, Միհր-
դատի բանակը կատարելապէս շարզելով և ցիր ու
ցան անելով գրաւել էր Պոնտոսի բոլոր քաղաքները,
և քիչ էր մնացել, որ իրան էլ գերի բռնի: Բայց
Միհրդատը փախաւ իր փեսայի մօտ, նախօրօք սպա-
նելով իր կանանցն ու երկու քոյրերին, որպէսզի գե-
րի չբնկնեն: Հպարտ Տիգրանն այդ խայտառակ պար-
տութեան համար խիստ բարկացած լինելով, չէր ցան-
կացել մինչև անգամ Միհրդատի երեսը տեսնել, այլ
հրամայել էր նրան՝ գնալ Լայաստանի մի հեռաւոր
տեղում ապրել:

Այդ ժամանակ Լուկուլլոսը, առիթ որոնելով Տիգ-
րանին էլ պատերազմի մէջ քաշելու, իր Ապպիոս զօ-
րավարին ուղարկում է Տիգրանի մօտ և պահանջում
յանձնել Միհրդատին:

Ամբողջ 25 տարի շարունակ խոնարհութիւն տե-
սած դուռոց Տիգրանը սաստիկ զայրանում է հռոմա-
յեցու այդ յանդուգն պահանջից և համարձակ խօ-
սակցութիւնից: Նա ոչ միայն մերժում է Միհրդա-
տին յանձնել, այլ և պատրաստականութիւն է յայտ-
նում հռոմայեցիներին դէմ պատերազմելու:

Բայց հէնց որ Լուկուլլոսի դեսպանը հեռանում
է, հայոց թագաւորը մտատանջութեան մէջ է ընկ-
նում: Նա իր մօտ է հրաւիրում Միհրդատին, մեծ
պատւով ընդունում է նրան և խորհուրդ անում, թէ
ինչ կերպ պատերազմել հռոմայեցիներին հետ:

Մեծն Տիգրանը 10,000 հեծելազօրք է յանձնում
Միհրդատին, որ նա գնայ իր երկիրը յետ նւաճի:
Իսկ ինքն իր թագաւորութեան մէջ գտնւած բազ-
յացեղ ժողովուրդներին մի տհազին բանակ հաւա-

քելով պատրաստուամ է մի սոսկալի հարւած հասցնել հոռմայեցիներին։

Այդ իմանալով Լուկուլլոսը՝ առանց ժամանակ կորցնելու, արշաւում է ուղղակի Տիգրանակերտի վրայ։

Մեծն Տիգրանի համար Լուկուլլոսի այդ արշաւանքը բոլորովին անսպասելի էր։ Երբ նրան լուր են բերում, թէ հռոմէական զօրքը Հայաստան է մտել, նա բարկութիւնից լրարեբին գլխատել է սալիս։

Յետոյ նա իր ամենասիրելի զօրապետ Միտրոբարդանին 3000 ձիաւոր և բազմաթիւ հեակակ զօրք է յանձնում ու հրամայում, որ գնայ Լուկուլլոսին կենդանի կամ մեռած բերի։ Բայց Միտրոբարդանը յաղթւում և սպանւում է կուլի դաշտում, իսկ Լուկուլլոսը գնում, պաշարում է Տիգրանակերտը։

Տիգրանը լուր է ուղարկում Միհրդատին, որ օգնութեան հասնի, սակայն նա ուշանում է։

Միհրդատը, երկար ժամանակ հռոմայեցիներին հետ պատերազմած լինելով, փորձով դիտէր, որ նրանց հետ բացարձակ ճակատամարտի դուրս գալը վտանգաւոր է. այդ պատճառով էլ նա դիտմամբ ուշանում է Տիգրանին օգնութեան գալու, որպէս զի սա սիրտ առած ճակատամարտի դուրս չըզայ Լուկուլլոսի դէմ։ Նա լուր է ուղարկում Տիգրանին, թէ պէտք է աշխատել հռոմէական բանակի պաշարը կտրել ու նրան սովի մատնել, սակայն Տիգրանը չէ լսում փորձւած Միհրդատի խորհրդին։ Նա իր 280 հազար խառնիճադանչ զօրքին վստահացած՝ դուրս է գալիս հռոմայեցիներին դէմ (69 թ. Ք. ծ. ա. ամառը)։

Ամենից առաջ Տիգրանը մտածում է իր կանանոցն ու գանձերը փրկել։ 6000 ձիաւորներ ճեղքում

են հոռմայեցիներէ բանակը, մտնում են պաշարւած Տիգրանակերտը և ազատում թագաւորի կանանցն ու գանձերի մի մասը:

Լուկուլլոսը վճռում է թոյլ շտալ Տիգրանի մեծ բանակին մօտենալու քաղաքին: Նա իր զօրքի մի մասը թողնում է Տիգրանակերտի պաշարումը շարունակելու, իսկ միւս մասը հետն առած գնում է Տիգրանի առաջը կտրելու:

Մեծն Տիգրանը Լուկուլլոսի փոքրաթիւ բանակը նկատելով, արհամարհանքով բացականչում է. «Այս օտարականները եթէ դեպանութեամբ են իմ մօտ դալիս, չափազանց շատ են, իսկ եթէ պատերազմելու՝ շատ փոքրաթիւ են»:

Լուկուլլոսի թէև փոքրաթիւ, բայց լաւ վարժւած բանակը մէկ օրւայ մէջ, սակայն, ստակալի ջարդ է տալիս հայոց թագաւորի բանակին, որը թէև բազմաթիւ, բայց ծանրաշարժ էր և բացի այդ՝ կանոնաւոր պատերազմների էլ անվարժ էր: Այդ ահաւոր բանակի մի մասը ջարդւում, իսկ մնացածն էլ շփոթւած փախուստի է դիմում: Փախչում է նոյնպէս Տիգրանը, իսկ Լուկուլլոսը վերադառնում է և պաշարում Տիգրանակերտը:

Տիգրանակերտի բնակիչներին, որոնց հայոց թագաւորը բռնութեամբ էր տեղափոխել, Լուկուլլոսը խստատանում է թոյլ տալ իրանց հայրենիքը վերադառնալ: Նրանք էլ ուրախութեամբ քաղաքի դռները բաց են անում և անձնատուր լինում:

Լուկուլլոսի յաղթական զօրքը զբաւում է և կողոպտում քաղաքը, ինչպէս և թագաւորական գանձերը (69 թ. Ք. ձ. ա.):

Տիգրանի՝ երկրորդ պատերազմը

Տիգրանակերտի մօտ շարաշար յաղթւելուց յետոյ, հայոց թագաւորը գնում է իր միւս մայրաքաղաքը՝ Արտաշատ: Նա սկսում է այնտեղ նոր բանակ կազմել: Առաջին պատերազմից խրատւած, նա աշխատում է այս անգամ իր զօրքն աւելի լաւ կրթել ու կանոնաւորել:

Լուկուլլոսն իր զօրքով հեռոււմ է նրան:

Մեծն Տիգրանը առանց սպասելու, որ հռոմայեցիք գան և պաշարեն իր անառիկ մայրաքաղաքը, զօրքն առած գնում է Լուկուլլոսի առաջը կտրելու: Չորս օրւայ ճանապարհի վրայ թշնամի բանակները միմեանց են հանդիպում և սկսում է երկրորդ արիւնահեղ ճակատամարտը:

Կռի սկզբում յաղթութիւնը հայերի կողմն էր երեւում: Լուկուլլոսը կարծում է, թէ ինքն ալիս կորած է: Բայց նա, առանց շփոթւելու, հրամայում է իր հեծելազօրքին դրո՞ւ, տալ հայերի վրայ: Կռիւը տաքանում է և վերջում հայերը դարձեալ յաղթում են ու փախուստի դիմում: Տիգրանն էլ փախչում ու փակւում է Արտաշատում (68 թ. սեպ. Բ. ծ. ա):

Այս երկրորդ պատերազմում շատ հայ ազնւականներ գերի են ընկնում հռոմայեցիների ձեռքը:

Այնուհետև Լուկուլլոսը գնում պաշարում է Արտաշատը, բայց Հայաստանի վտղահաս ցրտերը սաստիկ նեղում են նրա զօրքերին, որոնք սկսում են արանջալ և Լուկուլլոսից պահանջել, որ յետ դառնան:

Լուկուլլոսը ճարը կտրած յետ է նահանջում: Նա

անցնում է Տաւրոսի լեռները և մտնում Միջագետք
ու պաշարում Մծբին քաղաքը, որի կառավարիչն էր
Տիգրանի եղբայր Գոռը:

Այդ քաղաքը մի յոյն ճարտարապետի ձեռքով
շատ լաւ ամրացւած էր, այնպէս որ հռոմայեցիք եր-
կար են շարշարւում, մինչև կարողանում են գրաւել
(68 թ. Ք. ծ. ա. աշնանը):

Մինչ Լուկուլլոսը Մծբինումն էր գտնւում,
Տիգրանն ու Մինրգատը, նոր ոյժեր հաւաքած, ըս-
կրտում են յարձակողական դիրք բռնել, նրանք եր-
բեմն առանձին-առանձին, երբեմն էլ միացած ոյժե-
րով յարձակւում են Լուկուլլոսի գանազան երկրնե-
րում թողած հռոմոյեցի զօրամասերի վրայ: Ամեն տեղ
մեծ ջարդ են տալիս նրանց և նորից ախրում ըստ
այն երկրներին, որոնց ախրել էին հռոմայեցիները
(67 թ. գարնանը Ք. ծ. ա.):

Այդ միջոցին Լուկուլլոսը կատարեալ անգործու-
թեան էր մասնւած: Նրա զօրքը ապստամբւել էր և
այլևս չէր հնազանդւում, ասելով, թէ զինւորական
ծառայութեան 20 տարին արդէն լրացած է և կամե-
նում են իրանց աները վեռագարնալ:

«Բարբարոս» թագաւորների անսպասելի յաջո-
ղութիւնները մեծ շփոթութիւն էին գցել Հռոմի Մերա-
կոյտում: Այնտեղ որոշում են յետ կանչել Լուկուլ-
լոսին և նրա փոխարէն ուղարկել երիտասարդ Գոմ-
պէոս զօրավարին:

Միհրդատի վերջնական պարտութիւնը եւ մահը

Գոմպէոսի Փոքր Ասիա եկած ժամանակ, Լուկուլ-
լոսի գրաւած երկրներից համարեա թէ ոչ մի թիզ

հող այլևս չէր մնացել հոռմայեցիների ձեռքում: Միհր դատն ու Տիգրանը այդ բոլորը յեա էին նւաճել և Պոմպէտոն ստիպւած էր ամեն բան սկսել նորից: Իր բանակը կարգի բերելուն պէս, նա յարձակուամ է Միհրդատի վրայ, ժամանակ չը տալով, որ նա ու Տիգրանը միանան իրար հետ:

Միհրդատը նորից յաղթւում և հռոմէական զօրքերից հալածւած, նորից կամենում է Տիգրանի մօտ ապաստանել, բայց իմանում է, որ Տիգրանը սաստիկ զայրացած է իր դէմ և մեծ գուժար է խոստացել, ով կը սպանի Միհրդատին: Այդ բարկութեան պատճառն այն էր, որ Մեծն Տիգրանի որդին, նոյնպէս Տիգրան անունով, դաւադրութիւն էր սարքել հօր դէմ, Հայաստանի գահին օր առաջ տիրանալու նպատակով, և Տիգրանը կասկածուած էր, թէ Միհրդատն է իր որդուն դաւադրութեան դրոշմը: Միևնոյն ժամանակ, զգալով հոռմայեցիների մեծ ոյժը, նա կամենում էր Միհրդատի սպանութեան գնով նրանց բարեկամութիւնը ձեռք բերել:

Ծերացած ու վիրաւօր Միհրդատը, Պոմպէտոսից հալածւելով, իր գանձերի մի մասը հեան առած՝ փախչում է և գնում Սև Սովի հիւսիս-արևմտեան կողմերը ու մի անառիկ բերդաքաղաքում պատսպարուում: Այդտեղ նա սկսում է նոր զօրք հաւաքել, որ ցամաքի կողմից յարձակւի բուն հռոմէական երկրի վրայ և հէնց այնտեղ շարունակի պատերազմը:

Այդ ժամանակ Միհրդատի Փառնակ որդին ապրստամբում է հօր դէմ, պաշարում է նրա բնակարանը և կամենում է սպանել նրան:

Միհրդատը տեսնելով, որ այլևս փրկութիւն չը կայ, անձնասպանութեամբ վերջ է տալիս իր փոթոր-

կալից կեանքին (63 թ. Բ. ծ. ա.):

Մեծն Տիգրանի վերջնական պարտութիւնը

Մինչ Պոմպէոսը Միհրդատին հալածելով էր ըզրադւած, հայոց թագաւորը ստիպւած էր իր դաւաճան որդու հետ գործ ունենալ:

Մեծն Տիգրանի հապադովկիրայում եղած ժամանակ, նրա որդին մի քանի իշխաններէ հետ միացած՝ ապստամբել էր իր հօր դէմ:

Ապստամբութեան լուրն ստանալուն պէս, Մեծն Տիգրանը վերադարձոււմ է Հայաստան և մի լաւ ջարդ տալիս ապստամբներին:

Երիտասարդ Տիգրանը փախչում է իր աներոջ՝ պարթևաց թագաւորի մօտ: Նա պարթևներից զօրք է վերցնում, մտնում Հայաստան և գնում պաշարում է Արտաշատ քաղաքը: Թանկարժուէիի եկած Մեծն Տիգրանը ստիպւում է փախչել լեռները և յետոյ մեծ զօրք հաւաքելով՝ յարձակոււմ է իր որդու վրայ: Ապստամբ որդին նորից մի լաւ ջարդ է կրում ու փախչում:


Այս անգամ նա ուզում է գնալ իր պապի՝ Միհրդատի մօտ՝ նրանից օգնութիւն խնդրելու, բայց ճանապարհին լսում է, որ Միհրդատը յաղթել է հրուստայեցիներից, ուստի գնում է ուղղակի Պոմպէոսի մօտ: Դուռճան թագաժառանգը հռոմէական զօրապետին պարտատակամութիւն է յայտնում, Հայաստանի անմատչելի ճանապարհները ցոյց տալ, եթէ միայն հօր գահը իրան կը տրուի:

Պոմպէոսը երիտասարդ Տիգրանի առաջնորդու-

թեամբ մտնում է Հայաստան և սկսում միմեանց
յեանից նւանել բոլոր բերդերն ու ամրոցները:

Այդպէս առաջ խաղալով. Պոմպէոսն իր զօրքով
հասնում է Արտաշատ քաղաքը և պաշարում ծերունի
Տիգրանին:

Հարազատ որդու դաւաճանութիւնից յուսահատ-
ւած, Մեծն Տիգրանը որոշում է անձնատուր լինել,
ուստի անձամբ գնում է Պոմպէոսի մօտ ու նրա



Պոմպէոս

ոտների տակ դնում իր արքայական թագը:

Քաղցրաբարոյ Պոմպէոսը, ալեզարդ թագաւորի
այդպիսի խոնարհութիւնից սաստիկ զգացւած, իսկոյն
թագը վերցնում, նրա գլխին է դնում, և նստեցնե-

լով իր կողքին՝ սկսում է մխիթարել նրան: «Դու ոչ միայն թագաւորութիւնդ չես կորցրել, — ասում է Պոմպէտոր Մեծն Տիգրանին, — այլ և այսուհետև հզօր Հռոմի բարեկամը պիտի համարուես»:

Տիգրանի դաւաճան որդին, որ այդ ժամանակ Պոմպէտորի մօտ էր, մինչև իսկ ոտքի չէ կանգնում ձերբունի հօր առաջ: Նա հրաժարուում է նոյնիսկ մասնակցել այն հացկերոյթին, որ Պոմպէտոր տալիս է ի պատիւ հայոց թագաւորի:

Պոմպէտոր սաստիկ զզւանք է զգում դաւաճան որդու այդպիսի վարմունքից:

Նա Հայաստանի թագաւորութիւնը նորից Մեծն Տիգրանին է յանձնում, յետ առնելով միայն այն երկրները, որ Տիգրանը զբաւել էր իր թագաւորութեան օրով: Այդպիսով հայոց թագաւորին մնում էր Մեծ Հայքն ու Հայկական Միջագետքը:

Բացի դրանից, Մեծն Տիգրանը պարտաւորուում է հռոմայեցիներին վճարել պատերազմական ծախքերը՝ մօտ 6000 տաղանաւ (մօտ 5 միլիօն թիւման):


Պոմպէտոր երիտասարդ Տիգրանին էլ տալիս է Մոփաց Աշխարհը՝ իրրև վարձատրութիւն իր մատուցած դաւաճան ծառայութիւնների: Նա պայման է դնում, սակայն, որ այդ երկրում եղած գանձերը Մեծն Տիգրանին յանձնուեն, որպէսզի նա հնարաւորութիւն ունենայ 6000 տաղանախ խոշոր գումարը հռոմայեցիներին վճարել:

Դաւաճան որդին խիստ դժգոհ մնալով իր ստացածից, մինչև իսկ խրոխտանում է Պոմպէտորի դէմ, սրբ զայրացած շղթայում է նրան և պահում իր մօտ:

Սրբ պարթևաց թագաւորը լսում է այդ, միջամտում է իր փեսի համար ու մեծ փրկանք է խոս-

տանում, սակայն հոսմայեցի զօրավարը նրան պատասխանում է, - թէ՛ շորդու վրայ հայրը աւելի մեծ իրաւունքներ ունի, քան աները»:

Այս փառաւոր յաղթութիւններից յետոյ, Պամպէտը վերադառնում է Հոմ, իր հետ տանելով շրդ-թայակապ թագաւորացն Տիգրանին և նրա կնոջն ու աղջիկներին (64 թ. Ք. ծ. ա.):



Արտաւազդի գրամբ

Նրանից յետոյ Մեծն Տիգրանն ապրում է դեռ էլի 8 տարի: Նա մեռնում է 56 թ.ականին Քրիստոսի ծնունդից առաջ, թողնելով Հայաստանի գահը իր գրագէտ ու բանաստեղծ Արտաւազդ որդուն:

ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ

ԶԳՏՈՒՄՆԵՐԸ

Մեծն Տիգրանը շարունակ պատերազմներ մղելով հանդերձ, միաժամանակ շատ մեծ հող էր տանում Հայաստանի բարեկարգութեան մասին:

Հայաստանը թէև բնական շատ հարստութիւններ ունէր, բայց հայ ժողովուրդը դեռ շատ յետ էր մնացել հարևան ազգերից և Հայաստանում շատ քիչ էին զարգացած արհեստները, վաճառականութիւնն ու ճարտարապետութիւնը:

Հայաստանի ամենալու քաղաքներն ու նրանց մէջ եղած տաճարները, ինչպէս նաև թագաւորական հոյակապ պալատները շինուած էին օտարազգի ճարտարապետների ու վարպետների ձեռքով: Այսպէս ամենամեծիկ ու գեղեցիկ Արտաշատ մայրաքաղաքը շինել էր Արաքսի ափին, օտարազգի յայտնի դորավար Հաննիրալի ծրագրով և յոյն ճարտարապետների ղեկավարութեամբ:

Մեծն Տիգրանը, հէնց այդ յետամնաց դրութիւնից իր երկիրը դուրս բերելու նպատակով էլ, քաղմաթիւ ժողովուրդներ էր գաղթեցնում Հայաստան:

Այդ գաղթականներին նա առատ հող էր նւիրում և շատ արտօնութիւններ տալիս, որպէսզի նրանց միջոցով Հայաստանը մշակւի, շէնանայ և լուսաւորւի:

Հայոց թագաւորը մեծ նշանակութիւն էր տալիս մանաւանդ յոյն, ասորի և հրէայ գաղթականներին, որոնք այն ժամանակւայ ամենալուսաւոր և զարգացած ազգերն էին:

Նա, անապատներում թափառող վրանաբնակ շատ արարներ էլ բնակեցնելով Հայկական Միջագետքում, ստիպել էր նստակեաց կեանք վարել: Արաքները մեծ մասամբ վաճառականութեամբ էին պարապում:

Մեծն Տիգրանը մեծ արժէք տալով յունական կրթութեանը, յոյն ուսուցիչներ էր բերել աւել իր դուստրներին կրթելու համար: Նա նոյնը պահանջում էր անել և ազնւականներից:

Այդ կրթութեան շնորհով Տիգրանի Արտաւազդ որդին լու գրագէտ և բանաստեղծ էր դառել: Պատմում են, որ նա յունարէն լեզւով թատերգութիւններ և ուրիշ շարադրութիւններ է գրել:

Հայոց թագաւորը մինչև իսկ յոյն դերասաններ էր հրաւիրել, որոնք արքունական պալատում ներկայացումներ էին տալիս:

Տիգրանակերտ քաղաքը

Մեծն Տիգրանի փայլուն գործերից մէկը պիտի համարել Տիգրանակերտի շինութիւնը: Այդ քաղաքն էլ յոյն ճարտարագետների և օտարազգի վարպետների ձեռքով էր շինւել:

Երբ Տիգրանը սկսում է Հայաստանի հարաւարեւմտեան երկրները նւաճել, ուզում է, որ իր մայրաքաղաքը այդ երկրներին աւելի մօտ և իր ընդարձակ թագաւորութեան կենտրոնում լինի: Այդ նպատակով էլ նա Տիգրիս գետի վրայ մի նոր քաղաք է հիմնում, որ իր անունով Տիգրանակերտ է կոչւում:

Տիգրանակերտն իր ահելի մեծութեամբ յիշեցնում էր Բաբելոնի և Ասորեստանի նախկին վիթխարի քաղաքները: Նա շրջապատւած էր 50 կանգուն բարձրութեան աղիւսէ պարիսպներով, որոնք այնչափ հաստ էին, որ նրանց մէջ կարելի էր լինում ձիերի համար ախոռներ տեղաւորել:

Քաղաքը շատ զեղեցիկ էր ու հարուստ. նա զարգարւած էր ամեն տեսակ շքեղ շինութիւններով ու քանդակներով: Քաղաքի մէջտեղում շինւած էր բերդը, իսկ պարիսպներից դուրս՝ թագաւորական պալատը: Այս վերջինը շրջապատւած էր շքեղ պարտէզներով, արհեստական անտառներով և ընդարձակ աւազաններով:

Տիգրանը առաջնակարգ հայ ազնւականներին

ստիպել էր իրանց ընտանիքով անդափոխուել նոր մայրաքաղաքը, սպառնալով՝ հակառակ դէպքում՝ զրաւել նրանց բոլոր կալւածները:

Տիգրանակերտի բնակիչներին մեծ մասը օտարազգի գաղթականներն էին կազմում, որոնք մեծ արտօնութիւններ էին վայելում:

Ընդամենը 25 տարւայ բնթացքում Հայաստանի նոր մայրաքաղաքի բնակիչներին թիւը հասել էր 300,000-ի:

Տիգրանակերտի բնակիչները, մանաւանդ ազնւականն և հարուստ դասը, շափազանց փարթամ կեանք էին վարում: Այդ բանում նրանք կարծես թէ մրցում էին իրար հետ:

Ուզելով միմեանց գերազանցել, բնակիչները աւելի ու աւելի էին զարդարում Տիգրանակերտը իրանց գեղեցիկ ու շքեղ ապարանքներով, պալատներով և այլ հոյակապ շէնքերով:

Այդ վիթխարի և փառաւոր քաղաքից այժմ ոչ մի հետք չէ մնացել: Նա դեռ Մեծն Տիգրանի կենդանութեան ժամանակ կիսաւեր էր եղել հռոմայեցիների ձեռքով:

Մեծն Տիգրանի անձնական կեանքը

Տիգրանակերտում ամենից շքեղ ու ամենից փարթամ կեանք էր վարում հէնց ինքը՝ Արքայից-Արքան:

Մեծն Տիգրանն իր վարք ու բարքով շափազանց նման էր իրանից առաջ եղած՝ ցոփ ու շռայլ կեանք

վարող բռնակալ արևելեան թագաւորներին: Նրա շառլութեանն ու փառասիրութեանը շափ ու սահման չը կար:

Տիգրանն իր տարած լաղթութիւններով այն աստիճան էր գոռոզացել, որ ստիպել էր գահընկեց արած թագաւորներին և իշխաններին իր մօտ պալատական ծառաների պաշտօն վարել: Իրանցից շորս հոգի պարտաւոր էին միշտ «Արքայից Արքայի» մօտ մնալ, իբրև թիկնապահներ:

Երբ նա ձեռով ճանապարհ էր գնում, այդ թագաւորազն թիկնապահները պէտք է ոտքով վազէին նրա առջևից: Իսկ երբ Տիգրանը գահի վրայ էր նըստած լինում, նրանք ձեռները կրծքերին խաչածն դրած՝ կանգնում էին նրա առաջ:

Նա պահանջում էր ժողովրդից, որ իրան աստիճու տեղ ընդունեն և աստծուն վայել փառաբանութիւններ անեն:

Իր խիստ ու գոռոզ բնաւորութեամբ, Տիգրանը ոչ միայն հակաճառութիւն չէր սիրում, այլ և բարկանում էր, երբ նրան մի որ և է անախորժ լուր էին հաղորդում: Շատ անգամ այդպիսի լուր հաղորդողներին նա զլխատել էր տալիս:

Այդպիսի բնաւորութեան պատճառով, հայոց թագաւորը համարեա թէ ոչ մի անկեղծ և մտերիմ բարեկամ չունէր: Պալատականներն ու իշխանները նրան չէին սիրում, այլ աշխատում էին ամեն կերպ շողոքորթել՝ հաճելի լինելու համար: Նրան չէին սիրում նոյնիսկ իր հարազատ զաւակները, որոնցից մէկը, ինչպէս տեսնք, դաւաճանեց և պտտճառ եղաւ իր վերջնական դժբախտութեան:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԻԳՐԱՆԻՑ ՅԵՏՈՑ

Հայաստանը Մեծն Տիգրանից յետոյ, այլևս չէ կարողանում այնպիսի զօրութեան ու մեծութեան հասնել, ինչպիսին ունեցել էր նրա օրով:

Նա մնում է մի թոյլ ու տկար տէրութիւն՝ երկու զօրաւոր հարեանների միջև: Այդ հօր հարեաններն էին՝ մի կողմից հռոմէական կայսրութիւնը, իսկ միւս կողմից՝ պարթևական տէրութիւնը:

Իրանցից ամեն մէկը ձգտում է իր գերիշխանութեան տակ պահել Հայաստանը և իր ուզած թագաւորին հաստատել նրա գահի վրայ: Հայաստանը մի կատարեալ կուսիննձոր է դառնում այդ երկու տէրութիւնների ձեռքում և նա միշտ հարկատու է մնում կամ մէկին և կամ միւսին:

Հայ թագաւորները, անկարող լինելով իրանց հօր հարեանների գերիշխանութիւնից ազատել, ամեն հնար գործ են դնում, որ գոնէ օտար լուծը թեթևացնեն: Այսպէս՝ երբ պարթևներն են սկսում շափից դուրս նեղել հայերին, նրանք դիմում են հռոմայեցիների օգնութեան և նրանց միջոցով աշխատում թեթևացնել իրանց վիճակը, իսկ երբ հռոմայեցիների լուծն է շափից դուրս ծանրանում, հայ թագաւորները պարթևների օգնութեանն են դիմում:

Պէտք է ասած, որ հայերը մինչև քրիստոնէութիւն ընդունելը շատ աւելի բարեկամ էին պարթևներին, քան հռոմայեցիներին: Շատ հին ժամանակից ի վեր հարեաններ լինելով, հայերն իրանց սովորութիւններով, նրստ ու կայով համարեա չէին տար-

բերում պարթևներից. նրանք միևնոյն կրօնն էին դաւանում և շատ սղգակցական ու խնամէական կապերով կապւած էին միմեանց հետ:

Բացի դրանից՝ մօտ ներկու հարիւր տարի, Հայաստանում միևնոյն պարթևական Արշակունեաց տոհմն էր թագաւորում, և այդ հանգամանքը աւելի էր նպաստում երկու հարևան ազգերի մօտիկութեանը: Մեծն Տիգրանի տոհմը վերջանալուց յետոյ (14 թ. Ք. ձ. յետոյ) հարևան երկրների այս կամ այն թագաւորական տոհմի մարդիկ էին թագաւորում Հայաստանում: Եւ այդ երեքուն ու խառնակ գրութիւնը շարունակւեց, մինչև որ պարթևաց Արշակունիների թագաւորական տոհմն այնտեղ հաստատուեց. (63 թ. Ք. յ.)

ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԼԱՍՏԱՏԻԵԼԸ

ԼԱՅԱՍՏԱՆՈՒՄ

51 թ. Ք. յետոյ Արշակունի Վոյագաս-Վաղարշ I քաջ թագաւորը բարձրացաւ պարթևական գահի վրայ: Կամենալով երեք հարևան երկրները միևնոյն թագաւորական ասան իշխանութեան տակ միացնել, նա իր Պակոր եղբօրը Միդիական Ատրպատականի գահի վրայ հաստատեց, իսկ Տիբրիդ (Տրգաս) եղբօրն էլ զօրքով ուղարկեց Հայաստանի գահը գրաւելու: Այդ ժամանակ Հայաստանում Իքերիայի (Վրաստանի) Փարսման թագաւորի որդի Ռադամիսան էր թագաւորում, որը մի շատ դաժան մարդ էր: Հայ ժողովուրդը կամենալով օր առաջ ազատուել իր դաժան թա-

գաւարից, մեծ սիրով ընդունեց Տիրիդին, և նրա գօթերի հետ միանալով, զւրս վճնդեցին Ռադամիստին:

Բայց որովհետև իրերիական տոճը, Հայաստանում թագաւորելով, Հոսմի գերիշխանութիւնն էր ճանաչում, ուստի Հայաստանում տեղի ունեցած փոփոխութիւնը մեծ իրարանցում առաջացրեց Հոսմում: Այդ ժամանակ Հոսմի կայսրը ներսնն էր: Սրա կարգադրութեամբ Հոսմի կառավարութիւնն իր ամենալաւ գօրավար Կորբուլնին Արեելք ուղարկեց, յանձնարարելով նրան՝ վճնդել Տիրիդին Հայաստանից և վերականգնել Հոսմի պատիւը: Փոքր-Ասիայում եղած հոսմէական լամբողջ բանակը Կորբուլնի արամադրութեան տակ էր գրւած: Բայց զբանից՝ Հոսմի գերիշխանութեան տակ եղած ասիական բոլոր թագաւորներին հրամայւած էր ամեն տեսակ աջակցութիւն ցոյց տալ Կորբուլնին: Այդ թագաւորների թրւումն էին Նոյնպէս Փոքր-Հայքի ու Մովսաց Աշխարհի թագաւորները:

Չը նայելով այդ բոլորին, հոսմայեցիք շատ չարչարեցին, մինչև որ կարողացան Հայաստանը գրաւել: Պատերազմական գործերի մէջ Կորբուլնից ոչ պակաս հմուտ Տիրիդը, ի նկատի առնելով իր զինւորական ոյժերի անհամեմատ սակաւութիւնը, քացարձակ ճակատամարտի երբեք դուրս չէր գալիս: Նա աշխատում էր միայն յանկարծական յարձակումներով անհանդիստ անել հոսմայեցիներին և նրանց պաշարը բռնել: Եւ այդ եղանակով Տիրիդն այնպիսի վախի մէջ էր գցել Կորբուլնին, որ սա մեծ զգուշութեամբ էր առաջ գնում. ահագին ժամանակ տեւեց մինչև որ նա կարողացաւ, հայկական բերդերը նւաճելով, Ար-

տաշատ մայրաքաղաքին հասնել, Տիրիդի բացակայութեան պատճառով, Արտաշատն անպաշտպան էր, ուստի քաղաքացիք առանց դիմադրութեան անձնատուր եղան, խնդրելով միայն, որ հռոմայեցիք ոչ մի փաս չը հասցնեն քաղաքին: Կորբուլոնը խոստացաւ և ինքն էլ մնաց այնտեղ ձմեռելու (59 թ. Ք. յ.): Սակայն դարձանը, երբ արդէն ինքը պիտի թողնէր հայոց մայրաքաղաքը, նա հրամայեց հրդեհել և հողի հետ հաւասարեցնել նրան: Արտաշատից հռոմայեցիք Տիգրանակերտի վրայ գնացին, որ նոյպէս գրաւեցին նրանք (60 թ.): Բայց այս քաղաքը նրանք անփաս թողեցին:

Տիգրանակերտի գրաւելուց յետոյ, Ներոնը Հայաստանի դահը տւեց Տիգրան V-րդին, որը Կապադովկիայի թագաւորի թոռն էր, բայց այդ Տիգրանի թագաւորութիւնը Հայաստանում շատ կարճ տևեց. Վօլազասը մեծ զօրք տալով Տիրիդին, նրա դէմ ուզարկեց և ինքն էլ սկսեց պատրաստել Հռոմի դէմ կռւելու:

Այդ իմանալով, հռոմայեցիք կրկին զօրք ուղարկեցին Հայաստան Պետ զօրավարի գլխաւորութեամբ, բայց Պետը, անդդուչութեան պատճառով խիստ մեծ պարտութիւն կրեց և շուտով յետ նահանջեց, Տիրիդը նորից գրաւեց Հայաստանը:

Հռոմայեցիք ստիպւած էին կրկին անգամ Կորբուլոնին ուղարկել Տիրիդի ու Վօլազասի միացած ոյժերի դէմ (60 թ.): Սա, տեսնելով, որ այնքան էլ հեշտ չէ այդ ոյժերը խորտակել, պահանջ դրեց միայն, որ Տրդատը կամ Տիրիդը Հռոմ գնայ և հանդիսաւորապէս Ներոնի ձեռքից ընդունի Հայաստանի թագը, բացատրելով, որ հռոմայեցիք ոչ այնքան Հայաստանի

վրայ գերիշխելու, որչափ իրանց անւան պատիւը վերականգնելու մասին են մտածում: Տրդատը համաձայնեց, պայման դնելով միայն, որ 1) ճանապարհորդութիւնը, զբաղաշտեան կրօնի համաձայն, տեղի ունենայ ոչ թէ ծովով, այլ ցամաքով, որպէսզի զանազան անմաքրութիւններ թափելով ծովի մէջ, ինքը պղծած չը լինի ջուրը: 2) Ճանապարհորդութիւնը մեծ հանդիսաւորութեամբ պիտի կատարւէր, և 3) բոլոր ծախսերը պէտքէ Հոռոմի հաշւին լինէին:

Առաջարկւած բոլոր պայմաններն ընդունուեցին և Տիրիզն սկսեց ճանապարհորդութեան պատրաստութիւններ տեսնել, որ ամբողջ երեք տարի տևեցին:

Չափազանց հանդիսաւոր բնաւորութիւն էր կըրում Տիրիզի ճանապարհորդութիւնը. նա գնում էր իր կնոջ, որդիների ու բազմաթիւ հայ և պարթև իշխանագուների ուղեկցութեամբ, երեք հարիւր թիկնապահ զինւորներով շրջապատւած: Ճանապարհորդութիւնը մի քանի ամիս տևեց, որոնց ընթացքում Հոռոմ օրական մօտ 2 միլիոն դրամ (կէս միլիոն բուրլուց աւելի) փող էր ծախսում: Անցած բոլոր երկիրներում Տիրիզին արքայապայել ընդունելութիւն էին ցոյց տալիս:

Արքայազուն ճանապարհորդները, երբ Իտալիա հասան, Ներոնը Նէպոլումն էր: Հանդիսաւոր թափօրն էլ ստիպւած էր Նէպոլ գնալ, որտեղ Ներոնը շափազանց մեծ շուքով ու պատուով ընդունեց Տիրիզին: Ի պատիւ հայոց թագաւորի նա մի շարք շատ փառաւոր հանդէսներ սարքել տւեց Նէպոլում, իսկ երբ այդ հանդէսները վերջացան, Տիրիզին հետը Հրոռոմ տարաւ, թագադրութեան հանդէսն էլ այնտեղ

կատարելու համար:

Վերին աստիճանի շքեղ էր և թագադրութեան հանդէսը: Քաղաքի ամբողջ բնակչութիւնը, տօնական հագուստներ հագած, վաղ առաւօտից խոնկել էր այն հրապարակը, որտեղ թագադրութիւնը պիտի կատարուէր: Ժողովրդի շուրջը զօրքն էր կանգնել ամբողջապէս զինւած: Ներոնը ձերակոյտի անդամներով ու թիկնապահներով շրջապատուած, եկաւ բազմեց իր համար պատրաստուած բարձր գահի վրայ: Յետոյ Տիրիզը եկաւ իր թիկնապահներով: Նա իր պարթև հասակով ու գեղեցկութեամբ կատարեալ հիացմունք էր պատճառուում բոլորին էլ: Մօտենալով Ներոնին, արևելեան եղանակով նա խորը գլուխ աւելց և ապա ողջունեց նրան պարթևական լեզուով, որը իսկոյն թագմանեց բարձրաձայն: Տիրիզի ասածն այն էր, թէ ինքը թէև Արշակունեաց ցեղից և Վօլուգասի, Վաղարշի ու Պակորի եղբայրն է, բայց եկել է Ներոնին խոնարհութիւն ցոյց տալու: Ներոնը նրան նոյնպէս մի կարճ ճառով պատասխանելուց յետոյ, բռնեց նրա ձեռքից, համբուրեց և, մի աստիճանով աւելի ցածր պատրաստուած գահի վրայ նստեցնելով, բազմութեան ցնծագին աղաղակների մէջ, նրա գլխին դրեց հայկական թագը:

Հանդէսները վերջանալուց յետոյ, Տիրիզն իր շքախմբով Հայաստան վերադարձաւ, հետն անթիւ ու անհամար թանկագին նւէրներ բերելով, որ Ներոնն էր ընծայել: Բացի ընծաներից Ներոնն ահագին գումարներ և բազմաթիւ իտալական հմուտ վարպետներ ու բանւորներ էր աւել Տիրիզին, Կորբուլոնի կործանած Արտաշատը վերանորոգելու համար: Հայոց թագաւորի հէնց առաջին գործն էլ այդ եղաւ,

երբ նա Հայաստան վերադարձաւ:

Հոռմէական կայսրից թագաւորական թագն ընդունելով, Հայաստանը թէև Հոռմի գերիշխանութեանն էր ենթարկուում, բայց այդ գերիշխանութիւնը շատ աւելի անւանական էր. հոռմայիցիք չէին խառնուում հայոց գործերին և Հայաստանի թագաւորը բոլորովին անկախ էր իրան զգում: Իսկ պարթևական արշակունիներին և Հոռմի միջև բարեկամական յարաբերութիւն հաստատելով, վերջապէս խաղաղութիւն տիրեց ամբողջ Առաջավոր Ասիայում, որ տևեց մօտ 50 տարի (63—113 թ.): Այդ երկարատև խաղաղութեան հետևանքն այն եղաւ, որ արդիւնաբերութիւնը, արհեստներն, ու վաճառականութիւնը խիստ ծաղկեցին Հայաստանում:

ՍԱՍԱՆԵԱՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏԻԵԼԸ ՊԱՐԹԵՒԱՑ ԳՕՆԻ ՎՐՈՑ

Հայաստանի Արշակունի թագաւորները, Տրդատից յետոյ էլ, թէև մեծ մասամբ Հոռմի թագաւորներից թագ ընդունելով, պաշտօնապէս սրանց գերիշխանութեանն էին ենթարկուում, բայց և այնպէս, շնորհիւ իրանց ազգակացական կապերի, սրտով ու հոգով շատ աւելի պարթևաց գահակայներին էին իրանց մօտ զգում: Նոյն մօտիկութիւնն էր նաև հարևան երկու ժողովուրդների՝ - հայերի ու պարթևների միջև: Սակայն, զրութիւնը միանգամայն փոխուում է, երբ պարթևական գահի վրայ պարսից Սասանեան տոհմն է հաստատուում և երբ մանաւանդ հայերը

քրիստոնէութիւն են ընդունում:

Պարթևաց ընդարձակ թագաւորութեան նեռաւոր արևելեան՝ Փարսիստան նահանգում ապրող պարսիկ իշխաններից մէկը, Արդեշիր կամ Արտաշիր անունով, օգուտ քաղելով պարթևական արքունիքում տեղի ունեցող ներքին պառակտումներից, ապստամբութեան դրօշակ է բարձրացնում (224 թ. Ք. յ.): Ապստամբութիւնը, զնալով ընդարձակում է, որի հետևանքով



Արդեշիր

պարթևական Արշակունի Արտաքան V-րդ թագաւորը սպանւում է, իսկ յաղթական Արդեշիրն իրան ամբողջ պարթևաց երկրի տէր և Արքայից Արքան է յատարարում: Այդպիսով Արդեշիրը մի նոր թագաւորական սերնդի հիմնադիրն է դառնում, որ նրա պապի անունով Սասանեան կամ Սասանիդեան սերունդ է կոչւում: Պարթևաց տէրութիւնն էլ այդ ժամանակից անւանւում է Պարսկաստան:

Թագաւորական այս նոր սերունդը Արշակունիներից նրանով էր տարբերւում, որ դարեր շարունակ հեռաւոր արևելքում ապրելով, աւելի մեծ անարա-

տութեամբ էր պահպանել զուտ պարսկական ազգային ու կրօնական ասանդութիւնները: Արշակունիները, ընդհակառակը, երկար ժամանակ հռոմայեցիներին ու մանաւանդ յոյներին հետ շփուելով, ասելի բազաքտերթւած էին: Սասանեանները, թագաւորական դահի վրայ հաստատուելով, ուզեցին իսպառ ոչնչացնել այն բոլորը, ինչ որ յունական կամ հռոմէական էր, և վերականգնել թէ Զրադաշտի մաքուր կրակապաշ-



Ասորւշան

տական կրօնը և թէ Պարսկաստանի նախկին՝ Դարէն Վիշտասպի ժամանակէն ընդարձակ թագաւորութիւնը:

Արդեշիրի յաղթութիւնից յետոյ, պարթեական բոլոր Արշակունիները Հայաստան փախան և հայկական Մոսրով Արշակունիի մօտ ապաստան գտան, որը Արտարան V-ըդի եղբայրն էր: Այդ պատճառով էլ Արդեշիրը, պարթեական դահի վրայ հաստատուելուց յետոյ, ամենից առաջ Հայաստանի վրայ յարձակուեց: Սակայն հայ և պարթե Արշակունիների միացած ոյժերի առաջ նա ստիպուած եղաւ տեղի տալ և իր եր-

կիրը վերադառնալ:

Հայոց այդ թոստով Արշակունիի մասանդներին մէկի՝ Տրդատ III-րդի օրով է, որ հայերը քրիստոնէութիւն ընդունեցին, որից յետոյ հայ և պարսիկ ժողովուրդներէ միջև խորթութիւնն աւելի խորացաւ:

ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի բնակիչները մի քանի դասակարգերէ էին բաժանուած:

Բոլոր մեծ ու փոքր կալւածատէրերը Հայաստանի ազնւական դասն էին կազմում: Նրանք կոչուած էին ազատներ:

Ամենամեծ կալւածատէրը հէնց թագաւորն էր: Նրանից յետոյ գալիս էին նախարարները:

Ժողովրդի թացած մասը—գիւղացիք, արհեստաւորներն ու վաճառականները կալւածներ չունէին և կոչուած էին ոչ-ազատներ կամ հպատակներ:

Ազատները երկրի մշակութեամբ կամ ուրիշ աշխատանքներով չէին զբաղուած, որովհետեւ անպտուարեք ու անվայել էին համարում: Ազատների սովորական զբաղմունքներն էին զինուորական վարժութիւնները, որտորութիւնն ու զանազան ուրիշ զբաղումներ: Նրանք միայն իրաւունք ունէին միշտ գէնք կրել: Ոչ-ազատները այդ իրաւունքից զրկուած էին:

Ազատների դասակարգին էին պատկանում նաև քուրմերը—քահանայական դասը, որոնք նոյնպէս ունէին իրանց սեփական կալւածները: Բացի սեփական

կալւածներից, քուրմերը վայելում էին նաև տաճարներին յատկացւած կալւածների եկամուտները: Քէ քուրմերին և թէ տաճարներին պատկանող կալւածներից ոչ մի տուրք չէր վերցւում:

Քուրմերի գլխաւոր պաշտօնն էր՝ տաճարներում սասաւածներին զո՛ւ մատուցանել և ժողովրդի մէջ նաստատ պահել կուսպաշտական կրօնը:

Նրանք շատ անգամ ուրիշ պաշտօններ էլ էին



Քուրմեր

վարում. օրինակ՝ լինում էին դասաւորներ, թագաւորական կամ նախարարական դիւանապետներ, զբոսգիրներ և այլն:

Քուրմերը նաև բժշկութիւններ էին անում:

Քուրմերից սահասարակ վախենում էին բոլորը:

Նրանք մեծ ազդեցութիւն ունէին ամբողջ ժողովրդի վրայ:

Թէ ազնւականութեան և թէ քրմապետական բոլոր հողերը մշակում էր գիւղական ժողովուրդը: Գիւղացիք պարտաւոր էին իրանց ստացած անդիւնքի մեծ մասը տալ ազատներին իրրև տուրք:

Նրանք բացի իրանց սովորական զբաղմունքներից, իրրև հպատակներ, իրանց տէրերի համար ուրիշ շատ ծառայութիւններ էին կատարում: Նրանք իրանց տէրերի կատարեալ ճորտերն էին:

Վաճառականներն ու արհեստաւորները քիչ աւելի բարձր դիրք էին վայելում և մեծ մասամբ ապրում էին քաղաքներում: Թէև սրանք էլ գիւղացիների նման զուրկ էին զէնք կրելու իրաւունքից, բայց աւելի մեծ պատիւ ու յարգանք ունէին: Գիւղական ժողովրդից պահանջւում էր նոյնպիսի յարգանք ցոյց տալ վաճառականներին ու արհեստաւորներին: Ինչպիսին ցոյց էր տրւում ազատներին: Միևնոյն ժամանակ վաճառականներին ու արհեստաւորներին թոյլ չէր տրւում, որ հպարտանան և այնպիսի իրաւունքներ բանեցնեն գիւղական ժողովրդի վրայ, ինչպիսի իրաւունք բանեցնում էին ազատները: Վերջինները պարտաւոր էին «եղբայրաբար» վերաբերել իրանցից աւելի ստոր աստիճանի վրայ կանգնած ժողովրդին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՍՌՍՎՍՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Թագաւոր

Հայաստանը կառավարւում էր միահեծան բռն-

նապետական իշխանութեամբ: Թագաւորը ամբողջ
Հայաստանում ինքնիշխան և ինքնակալ էր:

Թագւորի ամեն մի հրամանը օրէնք էր, ոչ ոք
չէր կարող այդ օրէնքը փոխել: Ամենքն էլ պարտաւոր
էին թագաւորին հնազանդել, թէկուզ նրա հրա-
մանը մի ոճիւր թելադրէր: Թագաւորը երբեմն լի-
նում էր նոյնպէս երկրի ամենազլխաւոր քրմապետը:

Թագաւորի անձը սուրբ էր համարոււմ. նախա-
բարներն ու ժողովուրդը որչափ էլ չը սիրէին իրանց
թագաւորին, դարձեալ ոչ ոք չէր մտածի նրա կեան-
քին վերջ դնել:

Արքունիքը կառավարոււմ էր երեք կարգի եկա-
մուտներով: Առաջինը՝ թագաւորական կալւածքնե-
րից ստացւած եկամուտն էր, երկրորդը՝ նախարար-
ներից ստացւած տուրքը, իսկ երրորդը՝ վաճառա-
կաններից վերցւած մաքսը, որ կոչոււմ էր հաս կամ
մուտ:

Թագաւորական կալւածները Հափազանց ընդար-
ձակ էին: Երբեմն ամբողջ նահանգներ թագաւորին
էին պատկանում: Այսպէս թագաւորինն էր Այրա-
րատեան ընդարձակ դաշտավայրը, ուր ոչ մի նախա-
րար չըկար: Թագաւորն ուրիշ շատ կալւածներ էլ
ուներ, որոնք գտնոււմ էին դանազան նախարարու-
թիւնների սահմաններում:


Թագաւորները շատ շքեղ ու փարթամ կեանք
էին վարում: Նրանց բոլոր ամանեղէնները ոսկուց
ու արծաթից էին. հագուստն ու զէնքերը դարդար-
ւած էին թանկագին ակնեղէններով ու մարգարիտ-
ներով և կարւած ոսկեթել բանւածքով: Նրանք եր-
կար մագեր էին պահում և կրում էին թանկագին

քարերով զարդարւած վարակալ: Թագաւորի թոյլատուութեամբ նախարարներն էլ կարող էին վարսակալ կրել:

Սովորական օրերին թագաւորները իրանց զլխին դնում էին խոյլ: Իսկ հանդիսաւոր օրերում՝ թագ:

Թագաւորները հագնում էին ճուրք շապկի վրայից մի երկար կտալա (ինչպէս քահանաներն են հագնում Փարաշայի տակից), որ կոչւում էր պատմունան, իսկ վերևից գցում էին կարմիր գոյնի մի երկար ծածկոց, որ ասւում էր ծիրանի: Ծիրանու հղերքը զարդարւած էր լինում սամուր մօրթով: Պատմունանի վրայ կապում էին ակներով ու սսկով զարդարւած գօտի, որից կախում էին մի շատ շքեղ փոքրիկ սուր:

Թագաւորական կօշիկները կարծիր էին լինում, ուրիշ ոչ ոք իրաւունք չունէր նայն գոյնի կօշիկներ հագնել: Եթէ թագաւորը ցանկանում էր իր նախարարներից մէկին մի աւանձին շնորհ անել, թոյլ էր



Մեծն Տիգրանի դրամը:

տալիս նրան մէկ ստքին միայն կարծիր կօշիկ հագնել: Նրա թոյլատուութեամբ նախարարները կարող էին նոյն իսկ սսկէ բաժակ կամ այլ անօթ գործ անել:

Թագաւորական վրանը կարծիր էր լինում, վը-

բանի վերևում ժայլում էր սսկուց կամ արծաթից շինած արծիւր, որը հայոց թագաւորների զինանշանն էր:

Հայոց թագաւորները սսկուց ու արծաթից դրամներ էին կտրել տալիս, որոնց մի կողմում իրանց պատկերն էր լինում, իսկ միւս կողմում թագաւորական զինանշանը:

Ն ա խ ա ր ա ր Յ Ե ր

Ինչպէս թագաւորը ամբողջ Հայաստանում, այնպէս էլ նախարարներից ամեն մէկն իր երկրի սահմաններում կատարելագէտ ինքնիշխան էր:

Նախարարները իրանց ունեցած հարստութեան և Վայելած. զիրքի համաձայն՝ երկու կարգի էին բաժանուում, աւագներ ու կրտսերներ: Նրանք բոլորն էլ թագաւորի ծառաներն էին համարուում և պարտաւոր էին խաղաղ ժամանակ նրան մի որոշ սուրբ վճարել, իսկ պատերազմի դէպքում՝ զօրքով օգնել:

Նախարարները գանազան աստիճանների էին բաժանուած և թագաւորի պալատում նրանցից ամեն մէկն իր յատուկ տեղը կամ բարձն ունէր: Աւելի բարձր աստիճանաւորները նստում էին սրահի վերին կողմում, իսկ ստորինները աւելի ցած:

Այդ բարձերի թիւը երբեմն հասնում էր 900-ի: Եթէ բարձերից մէկն իր տեղից բոլորովին վերցուած, կամ աւելի ցած էր տեղափոխուած, այդ նշանակուում էր, որ թագաւորը բարձի տիրոջ աչքից զցել է:

ՎԱՐՉԱԿԱՆ ՈՒ ՊԱԼԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐ

Նախարարներից շատերը թագաւորների մօտ վարչական կամ պալատական գանազան պաշտօններ էին վարում:

Այսպէս՝ չորս հոգի փոխարքայի պաշտօններ ունէին և կոչւում էին սահմանապահներ: Նրանք պարտաւոր էին երկրի սահմանների վրայ հսկել: Նախարարներից մէկը պաշտօն ունէր հսկելու երկրի ճանապարհների, կամուրջների և ջրանցքների շինութեան, ինչպէս նաև քաղաքների ու գիւղերի բարեկարգութեան վրայ: Նա կոչւում էր Աշխարհաշէն:

Մի այլ պաշտօնեայ կոչւում էր Սպարապետ, որ զօրքի գլխաւոր հրամանատարն էր և նրան պատեւ բազմի էր առաջնորդում:

Չափազանց մեծ թիւ էին կազմում թագաւորի պալատական պաշտօնեաները: Նրանցից առաջին տեղը բռնում էր թագադիր ստպետը, որի պաշտօնն էր թագաւորի գլխին թագ դնել: Պալատական միւս բարձր պաշտօնեան Հայր Մարդպետն էր. որ արքունական կալաւածների ընդհանուր կառավարիչն ու թագաւորի գանձերի և կանանոցի հսկողն էր:

Մրան էին հպատակւում Մարդպետները, որոնք հսկում էին արքունական կալաւածներին և հաւաքում թագաւորական տուրքերը:

Յետոյ կար Մարքսագր, որ միշտ ուղեկցում էր թագաւորի ուղարկած դեսպանութիւններին:

Բացի այս առաջնակարգ պաշտօններից, կային և ուրիշ շատ երկրորդականները. օրինակ՝ մի նախա-

բար պարտաւոր էր թագաւորի հագուստը պահել ու հագցնել, մի ուրիշը՝ արքունիքի կահկարասիքը կարգի բերել, մի երրորդը՝ թագաւորի առջևից արծիւ տանել և այլն:

Դասաւորներ ու պատիժներ

Թագաւորները թէ իրանց արքունիքում, թէ քաղաքներում և թէ մեծ գիւղերում յատուկ դատաւորներ էին նշանակում, որոնց պարտաւորութիւնն էր անհամաձայնութիւններն ու վէճերը քննել ու վճիռներ կայացնել:

Հայաստանի պանագան կողմերում, թագաւորանիստ քաղաքների կամ անառիկ բերդերի մօտ կային բաւ անբ, որոնցից մի քանիսը կոչւում էին վիրապներ: Եանցաւորներին պահասարակ շատ խիստ պատիժներ էին տալիս. նրանց տանջանքների էին ենթարկում ու զլխատում:

Պատիժներ գործադրողները կոչւում էին դահիճներ, իսկ նրանց զլխաւորը՝ դահճապետ:

Զ օ Ր Բ Ը

Հայաստանում այժմեան նման մշտական զօրք չէին պահում: Թագաւորը միայն մի փոքրիկ զօրաբանակ ունէր, որ նրա թիկնապահ զօրքն էր համարւում և ամեն տեղ հետևում էր նրան:

Պատերազմի ժամանակ թէ թագաւորը և թէ ամեն մի նախարար իրանց հպատակ ժողովրդիցն էին

գօրք հաւարում և կուի սոախորդում: Զօրքը ոտնիկ չէր ստանում. նրա ծախքերը հագացում էին մասամբ թագաւորական դանձարանից, իսկ մեծ մասամբ էլ պատերազմներում ձեռք բերած աւարից ու կողպուտից:



Մանր հեծելագօրք:

Շատ անգամ օտարներից էլ էին վարձով գօրք հրաւիրում:

Հայկական գօրարանակը բաժանւում էր երեք

կարգի ծանր ու թեթեւ հեծելագործը և նետիտան գործը:

Ծանր հեծելագործի թէ ձիերը և թէ զինւորնե-
րը երկաթէ զրաններով էին ծածկւած: Զինւորները
պիսիներին գնում էին ստղուարտ: Նրանց զէնքերն էին
տէգ, սուր ու վահան:

Թեթեւ հեծելագործը ծանր զրան չէր հագնում: Դը-
րանց զէնքերն էին երկար նիզակ, սուր ու վահան:
Իսկ նետիտան գործը կուում էր նետ ու աղեղով:

Քապաւորն ու նախարարները ձիու վրայ էին
կուում:

Հայերը սովորութիւն ունէին իրանց զէնքերը
թունաւորելու, զրա համար էլ նրանց հարւածները
մահացու էին լինում: Հայ զինւորները, մանաւանդ
աղեղնաւորները, յայտնի էին իրրն նշանաւոր կաւոզ-
ներ: Փամանակակից պատմիչների առելով, հայ աղեղ-
նաւորների նետերը շատ հեռու էին թռչում և շատ
քիչ էին վրիպում նպատակից:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԶԲԱՂՄՈՒՆՔԸ

Հայ ժողովրդի գլխաւոր զբաղմունքներն էին եր-
կրագործութիւնն ու խաշնարածութիւնը: Հայաստանի
կլիման շատ բարեխառն լինելով, այնտեղ մշակոււմ
էին ամեն տեսակ հացահատիկներ, պտղատու ծառեր
ու խաղող: Քաշնարածութեան մէջ, բացի կղզիւրա-
ւոր անասուններից, շատ նշանաւոր էին ձիերն ու
ջորիները: Հետո՛ւր հայերը յայտնի էին իրրն լատ ձիա-
բուծներ և Հայաստանի ձիերն ու ջորիները շատ գը-
նահատւած էին հարեան բոլոր երկրներում:

Բացի դրանցից՝ հայերը զբաղւում էին նաև որ-

սորդութեամբ և ձկնորսութեամբ:

Հայաստանում ծաղկած արհեստներից յայտնի էր զինագործութիւնը: Հայերի պատրաստած զէնքերը, մանաւանդ աղեղն ու նետը, շափազանց զնահատուած էին նոյնիսկ հռոմայեցիների կողմից:

Հայերը շատ հին ժամանակից են սկսել վաճառականութեամբ պարապել: Հայաստանը ծովերից հեռու գտնւելով, հայ վաճառականները իրանց առևտուրը կատարում էին ցամաքային ճանապարհներով ու գետերի վրայով: Նրանք մեծ կարուաններով իրանց բերքերը տանում էին հեռաւոր երկրներ և այնտեղերից էլ ուրիշ ապրանքներ էին բերում:

Հայաստանից արտահանած ապրանքներն էին՝ հացահատիկներ, ձէթ, գինի, աղ, պղինձ, զէնքեր, ձիեր, ջորիներ և այլն: Իսկ օտար երկրներից բերում էին՝ համեմներ, թանկագին կտորներ, ակնեղէններ, անագ և ուրիշ ապրանքներ:

Հայ վաճառականները միևնոյն ժամանակ միջնորդի դեր էին կատարում արևելեան հարուստ Հընդկաստանի և արևմտեան հարեան ազգերի միջև:

ՀԱՅՈՑ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔՆ ՈՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ը Ն Տ Ա Ն Ի Բ

Ինչպէս բոլոր հին ժամանակայ ազգերի մէջ, այնպէս էլ հեթանոս Հայաստանում բազմակնութիւն էր ընդունւած: Սակայն այդ իրաւունքից աւելի շատ օգտուում էին սուլտանները, որովհետև նրանք հարուստ էին և բազմաթիւ կանայք ու զաւկներ պահելու մի-

Նոյններ ունէին: Կանանցից միայն մէկն էր գլխաւորը,
միւսները կոչոււմ էին հարճեր:

Այսպէս թագաւորի կամ նախարարի բազմաթիւ
կանանցից միայն մէկն էր համարոււմ թագուհի կամ
իշխանուհի:

Թագաւորական կամ նախարարական գահը ժա-
ռանգոււմ էին, սովորաբար, գլխաւոր կնոջից ծնւած
անդրանիկ զաւակները: Եւ հէնց դրա համար էլ թա-



Լայ իշխանուհի

գաւորի կանանց ու նրանց զաւակների միջև շարու-
նակ վէճեր ու կռիւներ էին տեղի ունեննում թագա-
ժառանգութեան պատճառով:

Այդ կռիւներից ու վէճերից խուսափելու համար,
թագաւորները առհասարակ իրանց մօտ պահում ու
մեծացնում էին թագաժառանգին միայն, իսկ մնա-
ցած բոլոր զաւակներին մանուկ հասակից արքունի-
քից հեռացնում էին:

Բերդեր եւ ամրոցներ

Թագաւորներն ու նախարարները բացի քաղաքներում ունեցած իրանց հոյակապ պալատներից ու աններից, երկրի զանազան կողմերում շատ բերդեր ու ամրոցներ էլ ունէին, որոնք շրջապատւած էին գեղեցիկ պարտէզներով և անտառներով: Այդ բերդերն ու ամրոցները, թէև ծառայում էին երկրի պաշտպանութեանը, բայց տարւայ որոշ ժամանակներում թագաւորները գնում ապրում էին այդ տեղերում:

Այդ բերդերում ու ամրոցներումն էին պահուում թագաւորական ու նախարարական գանձերը: Այնտեղ էին թաղուում նաև նրանց տոհմի անիւնները:

Հարսանիք եւ քաղում

Մեծամեծների տներում կատարւած հարսանիքները շատ չքեղ էին լինում: Սովորութիւն կար հարսի գլխին մարգարիտներ, իսկ փեսայի գլխին ոսկէ դրամներ շաղ տալ: Հարսանիքը տեւում էր մի քանի օր:

Մեռածների համար ընդունւած էր շատ մեծ սուգ կատարել: Թաղման հանդէսի ժամանակ դադարի առջեից գնում էր երաժշտական խումբը, որ փողեր էր հնչեցնում ու քնար անում: Յետեից գնում էին վարձովի լալկան կանայք, որոնք սև զգեստներ հագած, երգերով գովաբանում էին մեռնողին, իրանց երեսները ճանկոտտում, լալիս էին և ուրիշներին էլ

լացացնում:

Մեռելի տէրերը սովորութիւն ունէին սե շոր հագնել և երկար ժամանակ սուգ պահել:

Լ Ա Ղ Ո Ւ Ս

Ժողովրդի հագուստը մտաւորապէս նոյն մասերիցն էր բաղկացած, ինչ թագաւորինը: Նրանք շապկի վրայից հագնում էին կարճ պարեգօս - կապա, որի փեշերը գրում էին լայն վարաիկի մէջ: Վարաիկը կապում էր խոնջանով, որ միևնոյն ժամանակ զօտու զեր էր կառարում: Ուսներին հագնում էին հողաթափներ կամ երեխներ:

Ազնւահանները պարեգօսի վրայից հագնում էին կարճ թիկնոց, իսկ խոնջանից կախում էին կարճ սուր: Իրբև զարդարանք, նրանք ակոնջներից կախում էին բակ կամ արծաթէ օղի, թիկերին էլ հագնում էին ապարանջաններ:

Նրանք շատ շքեղ կերպով զարդարում էին նաև իրանց ձիերը:

Ժողովրդի ստորին խուկերը գուրկ էին ազնւահանների վայելած բոլոր շքեղութիւններից: Նրանք ապրում էին գեանափար տներում, իրանց անասունների և հաւերի հետ:

Հ Ա Յ ՈՒ Ի Հ Ե Թ Ա Ն Ո Ս Ա Կ Ա Ն Կ Ր Օ Ն Ը

Հայերը հնումը կռապաշտական կրօն էին դաւանում: Նրանք ոչ թէ մէկ, այլ շատ աստուածներ էին

ընդունում ու պաշտում:

Այդ ասուածներն էլ մի քանի աստիճանների էին բաժանուում. նրանց մէջ կային գլխաւորներն ու երկրորդականները: Բացի դրանից՝ կային արական և իգական սեռի ասուածներ:

Հայերի գլխաւոր ասուածը կոչւում էր Արամազդ, որը երկնքի ու երկրի ստեղծողն էր համարուում: Արամազդը ամենակարող էր. նա էր մարդ-



Անահիտ

կանց պարգևում աշխարհի բոլոր բարիքները:

Միւս բոլոր ասուածները Արամազդի որդիկն էին համարուում:

Արական սեռի ասուածներից նշանաւոր էին

նոյնպէս Միհրը, որ արևի ու կրակի ասուածն էր, և Վահագնը՝ որ քաջութեան և ուժի ասուածն էր:

Իգական սեռի ասուածներից նշանաւոր էին Անահիտը, որ կանացի բոլոր առաքինութիւնների պրիւրն ու հայ ազգի փառքն էր կազմում, Աստղիկը, որ դեղեցկութեան ասուածուհին էր:

Անահիտը ամենից շատ սիրւած ու պաշտւած ասուածուհին էր Հայաստանում: Նրա մասին այն կարծիքը կար, թէ նա ոսկէ մարմնով է ծնւել: Այդ պատճառով էլ նրա արձանները մեծ մասամբ ոսկուց էին շինւում. նա կոչւում էր Ոսկեմայր:

Շատ մեծ յարգանք էր վայելում նաև Վահագնը: Նրա մասին աշուղները բազմաթիւ երգեր էին յօրինել, որոնց մէջ գրվում ու փառաբանում էին Վահագնի ծնունդը ծովից ու արևից, ինչպէս և նրա կատարած բազմաթիւ տաասուելական քաջագործութիւնները:

Բոլոր ասուածների անունով Հայաստանի գանազան տեղերում մեծաններ—տաճարներ էին շինւած, որոնց մէջ դրւած էին նրանց արձանները: Այդ տեղերում տարւայ որոշ օրերին ժողովուրդը ուխտագնացութեան էր դնում և քուրմերի միջոցով զոհ մատուցանում:

Ո Ւ Ք Տ Ա Տ Ե Ղ Ի Ձ Ե Ր

Ուխտագնացութեան կողմից շատ նշանաւոր էր Վանատուրի Դիք անունով տաճարը, որ նշանակում է Վանատուրի ասուածներ: Այդ տաճարը գտնւում էր Բագրևանդի (այժմ Ալաշկերտի) գաւառում, Բագաւան անունով գիւղում (Բագաւան նշանակում է ասուածների գիւղ): Այդ տաճարի տօնը տեղի էր ունենում օգոստոսի 10-ին, որ հայկական տոմարի նոր

տարին էր: Այդ տօնը կոչուում էր նաև ծաղիկների տօն կամ Վարդավառ, որ կայ մինչև այսօր էլ:

Ներկայումս Վանատուրի Դիք անունով տաճարի տեղ՝ գտնուում է Սուրբ Յովհաննէս անունով մի եկեղեցի, որ շինել է տւել Ս. Գրիգոր Լուսաւորիչը:

Այժմեան հայկական վանքերի և ուխտատեղիների նման, կապաշտական մեհեաններին կից շինւած էին ընդարձակ բնակարաններ ուխտաւորներին ընդունելու համար:

Ուխտատեղիները հին ժամանակներում, ինչպէս այսօր էլ, Հայաստանի շատ տեղերում վաճառանոցների դեր էլ էին կատարում: Մարդիկ զանազան կողմերից այգտեղ էին բերում իրանց ունեցած մթերքները կամ ապրանքները և առևտուր էին անում:

Ուխտատեղիները միևնոյն ժամանակ ընդհանուր գլարճութեան ու զրօսանքի վայրեր էին: Ուխտաւորները այն տեղերում երգում, նւագում, պարում էին. ժողովրդական երգիչներն ու աշուղները մրցութիւններ էին սարքում:

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ՏՐԴԱՏ ԵՒ Ս. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Հայերը կապաշտական կրօնը թողել և քրիստոնէութիւն են ընդունել սրանից մօտ 1600 տարի առաջ՝ Արշակունի Տրդատ III թագաւորի օրով:

Հայ պատմիչները հետևեալն են պատմում այդ նշանաւոր դէպքի մասին:

Ծրք Պարսից Սասանեան տոհմը հաստատուում է

պարթևական գահի վրայ, բնաջինջ է անում այդ երկրում թագաւորոց Արշակունիներէ ցեղը:

Սասանեանները մտածում են Հայաստանում թագաւորոց Արշակունիներին էլ ոչնչացնել, որպէսզի այնտեղ էլ թագաւորացնեն իրանց մարդկանց:

Այդ նպատակին հասնելու համար, Սասանեան Շապուհ I թագաւորը կաշառում է Անակ անունով մի Պարթև իշխանի և նրա ձեռքով սպանել է տալիս հայոց Արշակունի Սոսրով թագաւորին, իսկ նրա ամբողջ ընտանիքն էլ կոտորել է տալիս:

Այդ կոտորածից ազատում են միայն Սոսրովի մանուկ որդին՝ Տրդատը և Սոսրովի դուխտ աղջիկը: Տրդատին Արաւաւաղ Մանդակունի նախարարը Հոռմ է փախցնում, իսկ Սոսրովի դուխտին՝ Օտա Ամատունի նախարարը թագաւորական գանձերի հետ, տանում, պահում է Անի ամբոցում:

Սոսրովին սպանող Անակին ու նրա ամբողջ ընտանիքին էլ հայ նախարարներն են կոտորում: Այդ ընտանիքից կենդանի է մնում միայն Գրիգոր անունով մի երեխայ: Նրան ազատում է իր դայեակը, որ փախցնում ու տանում է Կեսարիա:

Կեսարիայում այդ ժամանակ քրիստոնէութիւնը բաւական տարածւած էր: Գրիգորն այնտեղ մեծանում և դաստիարակւում է քրիստոնէական ոգով: Նա ամուսնանում և ունենում է երկու դուստկ: Վրթթանէս և Արիստակէս անուններով, որոնք ոյնպէս քրիստոնէական կրթութիւն են ստանում, այն ինչ՝ Հոռմ փախցրած թագաժառանգ Տրդատը մեծանում ու կրթւում է կապաշտական ոգով, միևնոյն ժամանակ վարժելով զինւորական արւեստի մէջ: Նա հոռմա-

յեցոց մղած մի քանի պատերազմներին մասնակցում
և մեծ անուշ է հանում:

Հռոմէական Գիողիտիանոս կայսրը, կամենալով
Հայաստանը պարսից տիրապետութիւնից ազատել ու
իր ազդեցութեանը ենթարկել, հայոց երիտասարդ
թագաժառանգին մեծ զօրք է տալիս և ուզարկում
Հայաստան:

Երբ Տրդատը Հայաստանի սահմաններին է հաս-
նում, Շապուհի հալածանքներից Փսքր-Ասիա փա-
խած հայ նախարարները գալիս հաւաքում են
իրանց թագաւորի շուրջը:

Օտա Ամատունին դիմաւորում է. Տրդատին և
յանձնում նրան թագաւորական գանձերն ու Խոսրո-
վիդուխտ քրոջը:

Այդ միջոցին Տրդատի պալատական ծառայողնե-
րի մէջն էր գանւում նաև Անակի որդին՝ Գրիգորը:

Նա կեսարիա եղած ժամանակ արդէն բաժանւել
էր իր կնոջից, որն իր Վրթանէս որդու հետ կուսանոց
էր քաշւել, իսկ ինքը Տրդատի մօտ ծառայութեան էր
մտել: Լսած լինելով, որ իր հայրն էր սպանել Տրդա-
տի հօրը, նա կամեցել էր այդպիսով իր հօր մեղքը
քաւել:

Տրդատը Հայաստանի հողի վրայ ոտք դնելով,
զոհուակութեան աղօթք է կատարում Երիզա քաղա-
քում և զոհ մատուցանում Անահիտ դիցուհու ար-
ձանին:

Հէնց այդ ժամանակ Տրդատն իմանում է, որ
Գրիգորը քրիստոնեայ է: Միաժամանակ նրան իմաց
են տալիս, որ նա իր հօրն սպանող Անակի որդին
է: Տրդատը սաստիկ զայրանում է և հրամայում
Գրիգորին ամենախիստ պատիժների ենթարկել ու

տանել, զցել Արտաշատի Խորվիրապ բանար:

Հոռմէական գորքի օգնութեամբ Տրդատը Հայաստանի թագաւոր դառնալուց յետոյ, իր հովանաւորող Դիսկլիթիանոս կայսրի օրինակով, ամենակատարող հալածանք է սկսում քրիստոնեաների դէմ:

Քրիստոնէութիւնը Հայաստանում

Քրիստոնէութիւնը Տրդատից դեռ շատ առաջ էր մուտք գործել Հայաստան և բաւական մեծ թւով հետևողներ գտել՝ հայ ժողովրդի մէջ:

Հայ պատմիչների ասելով, քրիստոնէութեան առաջին քարոզիչները Հայաստանում եղել են Թադէոս և Բարթուղիմէոս առաքեալները: Սրանք շատ հալածանքների են ենթարկւել հայ իշխանաւորների կողմից և նահատակւել իրանց հետևողներից շատերի հետ միասին:

Հալածանքները, սակայն, չըկարողացան քրիստոնեաների թիւը գնալով աւելի ու աւելի շատանում էր Հայաստանում: Ժողովրդի ստորին խւերը, որ դարեր շարունակ տանջւել ու ճնշւել էին իշխանաւորներից՝ մեծ սիրով էին հետևում նոր կրօնի քարոզիչներին:

Այդ թշուառները արդէն հիասթափւել էին կապաշատական ասուածներից: Նրանք դարերից ի վեր շատ էին աղօթել այդ ասուածներին, որ իրանց ազատեն իշխանաւորների ծանր լուծից, բայց նրանց

բոլոր ազօթքներն ու մասուցած զոհերը անհետեանք էին Քաղցելու Ընդհակառակը՝ քանի գնում իշխանաւորներին ոյժն աւելի մեծանում և հասարակ ժողովրդին լուծն էլ աւելի էր ծանրանում:

Տանջւող ժողովուրդը, քրիստոնէական քարոզիչներից լսելով, թէ կայ մի ուրիշ՝ աւելի զօրաւոր Աստուած, որը պիտի հանդերձեալ կեանքում վարձատրէ զրկածներին ու պատժէ զրկողներին, երես էր դարձնում պաշտած նախկին աստուածներից և քրիստոնէութեան մէջ փնտրում մխիթարութիւն ու փրկութիւն:

Թէև նոր կրօնը ընդունելով մարդիկ աւելի խիստ տառապանքների էին ենթարկւում, բայց համբերութեամբ տանում էին այդ տանջանքները: Նրանք հաւատում էին, որ այդ բոլորը ժամանակաւոր են միայն և որ իրանք պիտի վարձատրւեն մշտնջենական երջանկութեամբ:

Առաջին քրիստոնեաները Հայաստանում, թագաւորների ու նախարարների հալածանքներից ստիպւած՝ գաղտնի էին տղանում իրանց նոր կրօնը: Ազօթելու համար նրանք հաւաքուում էին անտառներում, քարայրներում և ուրիշ ծածուկ տեղեր:

Քրիստոնեաների դէմ Տրդատի սկսած հալածանքների ժամանակ, Հռոմից մի խումբ քրիստոնեայ կոյսեր են գալիս Հայաստան: Նրանք Դիոկլիտիանոսի հալածանքներից փախչելով, յոյս ունէին Հայաստանում հանգիստ գտնել: Խումբը՝ Գայիանէ, Լաբիսիմէ և Շողակաթ կոյսերի առաջնորդութեամբ՝ գալիս թագւաւում է Հաղաբշտպատի հնձաններում: Սակայն Տրդատը բոլորին էլ բռնել է տալիս և հրամայում է սպանել:

Այսպէս շատ ու շատ քրիստոնեաներ նահատակելուց և շատ անմեղ արիւն թափելուց յետոյ, Տրդատը յանկարծ խղճահարութեան մէջ է ընկնում և երկար ժամանակ տանջւելով խելագարւում է:

Տրդատի հիւանդութիւնը մեծ ցաւ է պատճառում նրա Խոսրովիդուխա քրոջը, որ շարունակ իր սիրելի եղբոր բժշկութեան մասին էր մտածում:

Այդ ծանր մտածմունքների ազդեցութեան տակ, Խոսրովիդուխաը մի քանի անգամ երազ է տեսնում: Արագում մի ծերունի ասում է նրան, որ Տրդատին կարող է բժշկել միմիայն Խորվիրապում բանտարկւած Գրիգորը:

Այդ երազներից սիրտ առած՝ Խոսրովիդուխաը հրամայում է Գրիգորին բանտից ազատել: 14 տարւայ բանտարկութիւնից յետոյ, Գրիգորին հանում են Խորվիրապից և բերում Վաղարշապատ:

Պատմում են, որ Գրիգորը մի քանի անգամ աղօթում է հիւանդ Տրդատի գլխին և նա բժշկւում է:

Այդ անսպասելի բժշկութիւնից յետոյ, Խոսրովիդուխաը, Տրդատը, իր Աշխէն կինը և բոլոր պայատականները Գրիգորի ձեռքով մկրտւում են ու քրիստոնէութիւն ընդունում:

Այդ ժամանակից բոլոր քրիստոնեաներին իրաւունք է արւում նոր կրօնը ադատութեամբ դաւանելու և նա դառնում է Հայաստանի պաշտօնական կրօնը (ՅՕ1 թ. Ք. ձ. յ.):

Այսպիսի առասպելական ձևով են պատմում մեր հայ պատմաբանները, քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն դառնալու մասին:

Սակայն, իրողութիւնն ու հաւանականն այն է, որ Տրդատը ոչ մի հրաշքի կամ հիւանդութեան աղ-

դեցութեամբ շէ, որ քրիստոնէութիւն է ընդունել և կամ, իր վերաբերմունքը փոխել դէպի նոր կրօնը: Այլ, որպէս իրան հովանաւորող հոռմէական կայսրնե-րի քաղաքականութեանը հաւատարմութեամբ հետևող, նա խստութեամբ հալածում էր քրիստոնեաներին, քանի դեռ քրիստոնէութեան թշնամի Գիովիտիանոսն էր կայսր Հոռմում, իսկ երբ սրա յաջորդ Կոստազին կայսրը սկսեց հովանաւորել քրիստոնեաներին ու պե-տական կրօն յայտարարեց քրիստոնէութիւնը, նոյնը արեց և Տրդատը:

Ս. Գրիգորի եւ Տրդատի զարմուծութիւնն ու մահը

Քրիստոնէութիւնը Հայաստանում պաշտօնական կրօն հրատարակելուց յետոյ, Գրիգորը բազմաթիւ ասորի և յոյն քահանաներ ու քարոզիչներ է բերել տալիս. հայերի մէջ նոր կրօնը տարածելու համար: Ինքն էլ անձամբ ման է գալիս Հայաստանի դանա-զան կողմերը, քանզի է տալիս կոապաշտական մեհ-եանները, շարդում հին ասուածների արձանները և նրանց տեղ եկեղեցիներ շինում:

Առաջին եկեղեցին Հայաստանում շինել է այն տեղում, ուր իբր թէ Գրիգորի աղօթքով բժշկւել էր Տրդատ թաղաւորը: Այդ եկեղեցին, որ Գրիգորն ան-ւանել է Ս. Էջմիածին, մինչև այսօր էլ կայ Վաղար-շապատում:

Նահատակւած կոյսերի աճիւններն էլ հաւաքե-լով Գրիգորն ու Տրդատը երեք գերեզմանների մէջ են ամփոփում ու նրանց վրայ մի-մի մատուռ կա-

ոււցանում: Այդ մատուռները կոչւում են Հոփսի-
մէ, Գայիանէ և Շողպկաթ:

Դրանից յետոյ, Գրիգորը մեծ շուքով գնում է
Կեսարիա և այնտեղ, 12 յոյն եպիսկոպոսներից կա-
թողիկոս ձեռնադրելով, վերագանւում է Հայաստան:

Այդպիսով Գրիգորը Հայաստանի առաջին Հայ-
րապետն է դառնում:

Այնուհետև հայոց Հայրապետն ու թագաւորը



Տգդատը վրաց և արխազաց թագաւորների հետ

սկսում են իրանց երկիրը արտաքին թշնամիներից
ապահով դարձնելու մասին հոգ տանել:

Նրանք այլևս բոլորովին երես դարձնելով հե-
թանոս պարսիկներից, աշխատում են մօտիկ բարե-
կամութիւն հաստատել իրանց կրօնակից բիւզանդա-
կան կայսրութեան հետ:

Տրդատի ժամանակակից հոռմայեցոց կոտորանդին

կայսրը, դեռ հայոց թագաւորից առաջ էր բնդունել քրիստոնէութիւնը և թոյլ տւել իր կայսրութեան մէջ նոր կրօնը ազատ դաւանել: Միևնոյն ժամանակ Կոստանդինը իր մայրաքաղաքը Հռոմից փոխադրել էր Բոսֆորի ափին գտնւող Բիզանդիոն՝ քաղաքը, որ վերջը նրա անունով կոչւեց Կոստանդնուպօլիս:

Դրա օրով հռոմէական ընդարձակ կայսրութիւնը երկու մասի է բաժանւում: Արևմտեան մասը Ֆուլմ է իր նախկին Հռոմ մայրաքաղաքով, իսկ արևելեանը կոչւում է Բիզանդական կայսրութիւն:

Ահա հէնց այդ Կոստանդին կայսեր հետ է, որ հայոց կաթողիկոսն ու թագաւորը մտածում են սերտ բարեկամութիւն հաստատել:

Նրանք մեծ հանդիսաւորութեամբ գնում են Կոստանդնուպօլիս, ուր շատ փառաւոր և սիրալիր ընդունելութիւն են գտնում բիզանդական կայսրի և յոյն հոգևորականութեան կողմից: Այնտեղ նրանք Կոստանդինի հետ բարեկամական դաշն կապելով, վերադառնում են Հայաստան:

Մերութեան հասակում Գրիգորն իր Արիստակէս սրդուն է յանձնում Հայաստանի կաթողիկոսութիւնը, իսկ ինքը քաշւում է մի այրի մէջ ճգնելու: Նա վախճանւում է 332 թ.: Քրիստոնէական եկեղեցին նրան սուրբերի դասն է դասել, և նա կոչւեց Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ:

Պատմում են, որ ծերութեան հասակում Տրդատըն էլ է քաշւել այրի մէջ ճգնելու և նրան թունաւորել են հայ նախարարները:

Հայաստանի քրիստոնէութիւնից յետոյ

Լսեցաւս Լուսաւորչի ու Տրդատի շանքերի, քրիստոնէութիւնը Հայաստանում ընդարձակ չափով չէր տարածուում: Դարերով դաւանած կրօնից ու սովորութիւններից հրաժարելը շատ էլ հեշտ բան չէ: Այդ պատճառով էլ շատ տեղերում ժողովուրդը ապստամբում և կռիւ էր մղում քրիստոնէութիւն տարածողների դէմ:

Հին կրօնից հրաժարելը շատ դժւար էր մասնաւոր քուրմերի համար, որոնք զրկուում էին ահագին եկամուտներից և ունեցած բարձր դիրքից: Չէնց զրա համար էլ նրանք զրգուում էին ժողովրդին և զօրք հաւաքելով, երկար ժամանակ կռիւ էին մղում թագաւորի դէմ: Քրիստոնեաները քուրմերին ու նրանց զօրքերին անւանում էին դեմք:

Նախարարներից շատերը նոյնպէս շուտով չեն ընտելանում նոր կրօնին: Նրանք երկար ժամանակ չէին կարողանում հրաժարել իրանց հին սովորութիւններից, ինչպէս օրինակ՝ բազմակնութիւնից:

Այդ պատճառով էլ Հայաստանի թագաւորների և նախարարների միջև անվերջ գժտութիւններ են ծագում: Նոր ու հին կրօնի կողմնակիցները խիստ թշնամարար են վերաբերում միմեանց ու շարունակ կռիւներ մղում իրար դէմ:

Հայ նախարարներն այլևս իրանց թագաւորներին առաջւան պէս չեն հնազանդում: Նրանք շատ անգամ ամբանում էին իրանց անառիկ բերդերում և կռուում թագաւորի դէմ:

Հեթանոսական կրօնի կողմնակից նախարարները թագաւորից պահանջում էին, որ նրանք անպայման պարսիկ տէրութեան հետ բարեկամութիւն պահպանեն: Քրիստոնեայ նախարարներն էլ, ընդհանակառակը՝ բիւզանդական կայսրութեան կողմնակիցներ էին:

Բիւզանդական կայսրութեան հետ բարեկամ լինելու ամենամեծ կողմնակիցները հայ կաթողիկոսներն էին: Նրանք հետզհետէ անազին հարստութիւն և իշխանութիւն ձեռք բերելով, սլսել էին շատ մեծ դեր խաղալ երկրի գործերի մէջ: Կաթողիկոսները այլևս չէին բուսականանում սոսկ կրօնական պետ լինելով, այլ աշխատում էին իրանց ազդեցութեանն ենթարկել թէ թագաւորներին և թէ երկրի ամբողջ իշխանութեանը:

Այդպիսի պայմաններում շատ դժւար դրութեան մէջ էին ընկնում հայ թագաւորները: Նրանք շատ անգամ չէին իմանում ինչպիսի դիրք բռնել, որպէսզի նախարարներից մի կամ միւս մասը, կաթողիկոսի հետ միացած, չը թշնամանային իրանց դէմ:

Այդ պատճառով էլ երկիրը ներքին խռովութիւններից ազատ պահելու համար, թագաւորները ամեն կերպ աշխատում էին պարսիկների և յոյների միջև եղած կռիւներին չը խառնել:

Մական այդ նրանց շէր յաջողում, որովհետև կռիւները գլխաւորաբար հէնց Հայաստանին տիրանալու պատճառով էին, ուստի հայ թագաւորները, իրանց երկրից բոլորովին չը զրկելու համար, ստիպւած էին կռուողներից մէկի կամ միւսի կողմը բռնել:

Այդ անտանելի վիճակից դուրս գալու համար,

Տրգատի յաջորդները մեծ ջանք են գործ դնում թագաւորի իշխանութիւնն այնպէս զօրեղացնելու, որ հնարաւորութիւն ունենան իրանց ուզած ձևով վարել երկրի գործերը:

Նրանք մի կողմից խիստ մաքառում են կաթողիկոսներին, իսկ միւս կողմից անհնազանդ և ըմբոստ նախարարներին դէմ:

Այդ ներքին կռիւները շատ խիստ կերպարանք են ստանում մանաւանդ Արշակ II թագաւորի և Մեծն Ներսէս կաթողիկոսի օրով:

ԱՐՇԱԿ II ԵՒ ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ

Արցախի ներքին քաղաքականութիւնը

Արշակ II-րդը Արշակունի Տիրան թագաւորի որդին էր:

Պարսից Շապուհ թագաւորը Տիրանին աչքերի լոյսից զրկելով, բնակեցրել էր Կուաշ աւանում: Յետոյ կամենալով հայերի սիրտը շահել, նա թագաւորեցրել էր Տիրանի Արշակ որդուն:

Արշակը թէև շատ փասասէր, բայց և կամքի տէր մարդ էր: Տեսնելով, որ Հայաստանը ներքին պառակտումներից սաստիկ թուլացել է և խաղալիք դարձել հարևան մեծ անէրութիւնների ձեռքում, նա մտածում է մի հնարք դնել իր երկիրը այդ կացութիւնից փրկելու:

Արշակը խորհում է բոլորովին չխառնուել յոյն-պարսկական կռիւններին և միանգամայն անկախ դիրք պահպանել:

Երբ Բիւզանդիայի կայսրը իմանում է Արշակի թագաւոր դառնալը, և կամենալով նրա բարեկամութիւնը գրաւել, մեծ պատիւներով Հայաստան է ուղարկում Արշակի եղբօր որդիներին՝ Գնելին ու Տիրիթին, որոնց Տիրանը իր թագաւորութեան ժամանակ պատանդ էր ուղարկել կ. Գօլիս: Բացի դրանից՝ կայսրը Արշակին կնութեան է ուղարկում իր ազգական պալատական օրիորդներից Ուլիպիադային, ու այդպիսով խնամիական կապերով կապւում հայ արքունիքի հետ:

Պարսից Շապուհը, լսելով Բիւզանդական կայսրի այդ ծածուկ դիտաւորութեան մասին, մտածում է ինքն էլ իր կողմից սիրաշահել Արշակին. նա հայոց թագաւորին Տիգրոն է հրաւիրում, մեծ պատիւներ է տալիս նրան և բազմաթիւ խոստումներ անելով, խօսք է վերցնում Արշակից, թէ նա հաւատարիմ կը մնայ պարսից տէրութեանը:

Երկու հզօր հարեանների այս բարեկամութիւնը իր համար բուականին մեծ երաշխիք համարելով, Արշակը ժամանակը շատ յարմար է համարում թագաւորական իր իշխանութիւնը այն աստիճանի զօրացնել, որ կարողանայ ինքնիշխան կերպով կառավարել երկիրը: Դրա համար անհրաժեշտ էր՝ կենտրոնական իշխանութեանը ենթարկել թէ նախարարներին և թէ կաթողիկոսին, որոնցից ամեն մէկն իրան մի բոլորովին ինքնազուլի իշխան էր երեւակայում ու յաճախ բոլորովին հակառակ գնում թագաւորի կարգադրութիւններին:

Արշակի օրով և աշակցութեամբ հայրապետական գահի վրայ բարձրացել էր Ներսէսը, որ Ս. Գրքիցոր Լուսաւորչի տոհմիցն էր: Նա 15 ընդարձակ

ու հարուստ գաւառների տէր էր դասել և ինքն իրան մի առանձին մեծ իշխանութիւն նկատելով, ցանկանում էր, որ թագաւորը ամեն բանի մէջ իրան ենթարկէի ու իր խորհուրդներով կառավարի երկիրը:

Որպէս բարեպաշտ քրիստոնեայ, ներսէսը բարեգործական հաստատութիւններ էր հիմնել Հայաստանում և ժողովրդի սէրն ու յարգանքն էր վայելում: Նա պատմութեան մէջ յայտնի է Մեծն Ներսէս անուշով:

Նախարարների ու կաթողիկոսի ղէմ մաքառելու լաւ հենարան ունենալու նպատակով, Արշակը Մասիսի ստորոտում մի նոր քաղաք է հիմնում, Արշակաւան անուշով, նրան շուտով բազմամարդ դարձնելու և նրա բնակիչներից վստահելի ու հաւատարիմ զօրագունդ կազմելու նպատակով, Արշակը յայտարարում է, թէ բոլոր յանցաւոր ճանաչած մարդիկ, եթէ զան Արշակաւանում բնակեն, անպատիժ կը մնան:

Կարճ ժամանակում Արշակաւանը լցում է՝ նախարարներից ղժգոհ մնացած՝ ամեն տեսակ փախտական մարդկանցով, և քանի Արշակաւանը բազմամարդ է դառնում, այնքան էլ նախարարների կատաղութիւնն աւելանում է Արշակի ղէմ:

Նախարարները, որ առաջ կամենալով Արշակի դիտաւորութիւնը խափանած լինել, պատրաստուում են մի լաւ վրէժ առնել թագաւորից:

Եւ այդ խուլ մաքառումի ժամանակ, Արշակին լուր են բերում, թէ նախարարները դաւադրութիւն են սարքել և ուզում են դահլնկեց անել իրան ու տեղը Գնելին թագաւորացնել:

Գնելը Բիւզանդական կայսրի արձակած պա-

տանդներից էր: Հայրենիք վերադառնալով, նա գընացել բնակոււմ էր իր կուրացած պապի՝ Տիրանի մօտ, և այնտեղ էլ ամուսնացել էր Փառանձեմ անունով մի գեղեցկուհու հետ:

Դաւազրութեան լուրն իմանալով, Արշակը սաստիկ զայրանում է և խարէութեամբ իր եղբոր որդի Գնելին որսի հրաւիրելով, սպանել է տալիս:

Ռոյց տալու համար, թէ Գնելը իր դրդումով չէ սպանել, այլ պատահամբ, Արշակը մեծ սուգ է անում: Ռսկ սովորական սուգի օրերն անցնելուց յետոյ, Փառանձեմի գեղեցկութիւնից հափշտակւած, ամուսնանում է նրա վրայ:

ԱՐՇԱԿԻ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՀԵՏ

Թէ Գնելի սպանութիւնը և թէ քրիստոնէական օրէնքի հակառակ երկրորդ ամուսնութեամբ Փառանձեմին անելը ասիթ է ծառայում նախարարներին ու կաթողիկոսին թաղաւորի դէմ ծառանալու:

Հայրապետը իրստ յանդիմանում և անիծում է Արշակին: Սա էլ իր կողմից հրաժարեցնում է ներսէսին կաթողիկոսական գահից և հրամայում՝ նրա փոխարէն նոր կաթողիկոս ձեռնադրել Զունակ անունով անձին:

Պատմում են, որ հայ եպիսկոպոսները շնն համաձայնել Զունակին կաթողիկոս ձեռնադրել, և Արշակը օտար եպիսկոպոսներէ միջոցով է իր ցանկութիւնն իրագործել աւել:

Մեծն Ներսէսը հեռանում է Վաղարշապատից և քաշւում վանք:

Նախարարները այդ ժամանակ միացած ոյժերով յարձակւում են Արշակաւանի վրայ, բոլոր բնակիչներին կոտորում և քաղաքն էլ հիմնայատակ են անում:

Արշակն այս անգամ աւելի մեծ դայրոյթով լըցւած, սկսում է կամաց կամաց վրէժ լուծել բոլոր անհնազանդ ու հակառակորդ նախարարներից: Զանազան միջոցներով նա հետզհետէ սպանել է տալիս և ոչնչացնում նրանցից շատ-շատերին ու նրանց բոլոր կալւածները զբաւում:

Արշակը նամանաւանդ շատ խիստ վրէժ է աւնում Ներսէս կաթարականից, որը հակառակորդ նախարարների ղեկավարն էր: Նրա ամբողջ ցեղը սրի են անցկացնում: Այդ ցեղից կենդանի է մնում միայն Ներսէսի ժանուկ եղբոր որդին՝ Սպանդարաւոր, որին փախցնում են յունաց երկիրը:

Թագաւորից հալածւած նախարարներից ոմանք Պարսկաստան են փախչում և Շապուհի մօտ ծառայութեան մանում: Գրանցից երկուսը - Մեհրուժան Արծրունի և Վահան Մամիկոնեան մինչևիսկ, քրիստոնէութիւնն ուրանալով, պարսից կրակապաշտական կրօնն էին ընդունել:

ԱՐՇԱԿԻ ԵՒ ՓԱՒԱՆՁԵՄԻ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ

ՄԱԿԸ

Հայաստանի այս ներքին երկպառակութիւններէ

ընթացքում, պարսիկները զբաղւած էին արևելքից արշաւող հոների դէմ պատերազմելով: Այդ հանգամանքներից օգտւելով, Բիւզանդական կայսրը նւաճել էր թէ Միջագետքը և թէ Հայաստանը: Իսկ երբ Շապուհն աւարտեց իր պատերազմը արևելքում, Բիւզանդիայից յետ պահանջեց նւաճած այդ երկու երկիրները: Նորից պատերազմ բորբոքեց Հայաստանի երկու հզօր հարևանների միջև:

Արշակը, որ միշտ կողմնակից էր եղել քրիստոնեայ Բիւզանդիային, այս անգամ զզւած կայսերական զօրքերի հասցրած աւերմունքներից Հայաստանում, Շապուհի կողմն է անցնում: Բիւզանդացիք պարտուում են և հաշտութիւն են խնդրում Շապուհից: Հայաստանին անվերադարձ կերպով տիրանալու ձգտող Շապուհը հաշտութեան պայմաններից մէկը դնում է այն, որ կայսրներն ընդմիշտ ձեռք վերցնեն Հայաստանից ու այլևս իրաւունք չունենան հայերին զինւորական օգնութիւն հասցնելու:

Հաշտութեան այդ պայմանը կնքւելուց յետոյ, Շապուհն այս անգամ միանգամայն համարձակ իր նպատակին է դիմում: Բայց Արշակը հեշտութեամբ անձնատուր չի լինում: շնորհիւ սպարապետ Վասակի զինւորական ընդունակութիւնների, մի քանի տարի է տևում հայ-պարսկական պատերազմը: Վերջում Շապուհը Արշակին ու Վասակին իր մօտ է հրաւիրում, իբր թէ պտուաւոր հաշտութիւն կնքելու համար: Ուժասպառ թաղաւորն ու սպարապետը դնում են Տիզրոն: Շապուհը արքայավայել պատիւներ է տալիս նրանց, և ապա Արշակին շղթայել է տալիս ու Անյուշ բերդում բանդարկում, իսկ Վասակին մորթագերծ է անել տալիս:

Դրանից յետոյ Շապուհը Մեհրուժան Արծրու-
նու և Վահան Մամիկոնեանի առաջնորդութեամբ
մեծ զօրք է ուղարկում Հայաստան, ուր նրանք ա-
մենուրեք կոտորած տարծելով, հետզհետէ տիրում
են երկրին:

Նախարարներից մի քանիսը ի զուր փորձում են
դիմադրութիւն ցոյց տալ պարսիկներին, ոմանք էլ
իրանց ընտանիքներով փախչում են յունաց սահման-
ները և այնտեղ ապաստանում:

Քազուհի Փառանձեմն էլ է փախչում. մի խումբ
հաւատարիմ մարդկանց հետ, Քազաւորական զան-
ձերն առած, նա ապաստանում է անառիկ Արտազերս
ամրոցը: Բաւական երկար պաշարումից յետոյ, առ-
նւում է Արտազերսը և հայոց Քազուհին էլ զերի
բունում: Փառանձեմին Մեհրուժանը խայտառակու-
թեամբ սպանել է տալիս:

Արշակն Անյուշ բերդում լսելով Հայաստանում
տեղի ունեցած անցքերն ու Փառանձեմի մահը, յու-
սահատութիւնից անձնասպան է լինում:

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ ԵՒ ՊԱՊ ԹԱԳԱՒՈՐԸ

Շապուհ մտածելով անվերադարձ կերպով Հա-
յաստանին տիրապետել, որոշում է հայերին բռնի
կրօնափոխ անել ասլու: Նա շատ լաւ հասկանում էր,
որ հայերին Բիւզանդիայի հետ կապողը քրիստոնէու-
թիւնն էր: Այդ իսկ պատճառով էլ նա Մեհրուժան
Արծրունուն ու Վահան Մամիկոնեանին ոչ միայն զօրք,
այլ և բազմաթիւ մողեր էր տւել, Հայաստանում

կրակապաշտութիւն տարածելու համար: Իսլամական նախարարները կրօնափոխ չեղող հայերին կոտորում էին, իսկ եկեղեցիներն ու բոլոր քրիստոնէական սրբազայրերը քանդում, կործանում էին: Բաղամթիւ հայեր էլ Պարսկաստանի խորքերը թշնեցին:

Փրկութեան միակ յոյսը դարձեալ Բիւզանդիայից էր սպասւում: Պարսկական սարսափներից յունական երկիրը փախած հայ նախարարները, Ներսէս կաթողիկոսի գլխաւորութեամբ պատգամաւորութիւն են ուղարկում Կ. Պոլիս, որոնք Հայաստանի դրութիւնն ու քրիստոնէութեան ոչնչացումը ներկայացնելով կայսրին, նրանից օգնութիւն են խնդրում:

Կայսրը, հակառակ յոյն-պարսկական պայմանագրի, զօրք է տալիս հայոց զահաժառանգ Պապին, որ նոյնպէս փախստական էր, որ գնայ իր զահին տիրանալու:

Պապն ու Ներսէս, յոյն և հայ զօրքի գլուխն անցած Հայաստան են գալիս: Ծանապարհին հետզհետէ գալիս, Պապին են միանում նաև բոլոր փախստական նախարարները:

Պարսից ու յունաց զօրքերը իրար հանդիպում են Նպատ լեռան մօտ, Զիրաւ դաշտի վրայ: Պատերազմը շատ կատաղի է լինում, բայց վերջը յաղթութիւնը Պապին օգնող զօրքերի կողմն է մնում:

Պատմում են, որ այդ կռիւ ժամանակ մի խիստ քամի է բարձրացել դէպի պարսից բանակը, որի շնորհով պարօժիկների նետերը կէս ճանապարհին վայր էին թափւում և հայոց բանակին չէին հասնում:

Պատմում են նաև, որ ամբողջ պատերազմի ընթացքում Մեծն Ներսէսը թագաւորի հետ, Նպատ լեռան գագաթին կանգնած աղօթում էր:

Պարսիկները փախչում են: Փախչում է նոյնպէս նրանց հրամանատար Մեհրուժանը, որը ձիու վիրաւորւած լինելու պատճառով յետ է մնում:

Մտքատ Բագրատունին ընկնելով Մեհրուժանի յետևից, հասնում ու բռնում է նրան և ապա, շիկացրած շամփուրը նրա գլխին դնելով, ծաղրով ասում է. «Մեհրուժան դու ցանկանում էիր հայոց թագաւոր դառնալ, ես ահա, իբրև թագադիր ասպետ՝ պսակում եմ քեզ»:

Մեհրուժանի գործակից Վահան Մամիկոնեանը իր դաւաճան ընկերից աւելի լաւ վախճան չէր ունեցել: Նրան էլ, դեռ աւելի առաջ, սպանել էր իր հարազատ որդին՝ Սամւէլը:

Այսպէս Բիւզանդական զօրքի օգնութեամբ Հայաստանը պարսիկներից մաքրելով, Պապը հաստատուում է իր հայրենական գահի վրայ:

Պապի աշակիցն էր Վահան Մամիկոնեան ըսպարապետի որդին՝ Մուշեղը, որ նոյնպէս շատ քաջ էր և հմուտ պատերազմական գործերին:

Մուշեղը մաքրեց Հայաստանը պարսիկներից, հորձանեց ատրուշանները և նորոգել աւեց եկեղեցիները: Պապը Ներսէսին նորից կաթողիկոսութեան մէջ հաստատեց, որն իր նորոգութիւններն սկսեց:

Բայց շատ ժամանակ շանցած, նորից հայոց թագաւորի ու կաթողիկոսի միջև անհամաձայնութիւններ ու պայքար սկսեց: Պապը միջոցներ էր որոնում վերջին արշաւանքներից ու գողթներից աւերւած, տնտեսապէս քայքայւած երկիրը շէնացնել ու բարգաւաճ դարձնել, իսկ Ներսէսը, քրիստոնէական ոգով զեկավարւելով, զանազան այնպիսի բարեգործական ու կրօնական հաստատութիւններ էր վերա-

կանգնում, որ բոլորովին համապատասխան չէին ժամանակի պայմաններին: Այսպէս օրինակ՝ Ներսէսի հաստատած կուսանոցները, վանքերն ու ապաստարանները ծոյլերի, ձրիակերների ու դասալիքների մի-մի որն էին դառնում: Պայը հրամայեց այդ բոլոր հաստատութիւնները քանդել ու այնտեղ բոյն դրած ձրիակերներին պետական ծառայութեան կամ աշխատանքի ուղարկել: Ներսէսն արգելել էր ամուսնալուծութիւնը, իսկ Պապն, ընդհակառակը, թոյլ տւեց, որ տղամարդիկ, իրանց ցանկութեան համաձայն, թողնեն իրանց կանանց և նորերն առնեն, որպէսզի այդպիսով ժողովուրդը շուտ բազմանար:

Կողոպուտած ու սպառւած պետական գանձարանը նորից հարստացնելու նպատակով, Պայը եկեղեցական կալւածների մեծ մասը գրաւեց ու կրօնաւորների թիւը կրճատեց, թողնելով իւքանչիւր եկեղեցու համար մի-մի քահանայ ու սարկաւազ և այնքան հողաբաժին, որը բաւական էր դրանց ապրեցնելու: Պայը վերացրեց նոյնիսկ ժողովրդի կողմից եկեղեցիներին վճարւող տուրքը:

Պայի այդ բոլոր կարգադրութիւններն, անշուշտ, մեծ դժգոհութիւն են պատճառում հոգևորականութեան ու նրա պետին՝ Մեծն Ներսէսին, և սա հանդիմանութիւններ է անում թագաւորին ու սկսում է նրա գործերին խառնել:

Թագաւորի ու կաթողիկոսի յարաբերութիւնները այն աստիճանի են լարւում, որ Պայը վերջ ի վերջոյ գաղտնի կերպով թունաւորել է տալիս Հայրապետին:

Սակայն Պայ թագաւորն էլ լաւ վերջ չէ ունենում. գրգռւած հայ և յոյն հոգևորականութիւնը դա-

ւաղբութիւն են կազմուած, և սրանց թելաղբութեամբ,
 Հայաստանում գտնուած յունական զօրամասի բարձր
 հրամանատարները հայոց թագաւորին հիւր են հրա-
 ւիրում և ճաշի ժամանակ, դաւաճանութեամբ սպա-
 նում են նրան (373 թ.)

Ս. ՍԱՀԱԿ ԵՒ Ս. ՄԵՍՐՈՊ

Տառերի գիւտը

Հայաստանում երկար ժամանակ քրիստոնէու-
 թեան շտարածելու գլխաւոր պատճառն այն էր,
 որ եկեղեցական արարողութիւններն ու ժամերգու-
 թիւնը կատարում էին ոչ թէ հայերէն, այլ օտար
 լեզուներով:

Հայերը գեռ սեփական տառեր չունէին, ուստի
 և անկարող էին սուրբ գիրքն ու ժամերգութիւնը
 հայերէն թարգմանել: Բոլոր հայ վարդապետները, ե-
 պիսկոսոսներն ու կաթողիկոսները իրանց ուսումը
 ստանում էին ասորերէն կամ յունարէն լեզուներով:

Հայ ժողովուրդը այդ լեզուներին անծանօթ լի-
 նելով, ոչինչ չէր հասկանում քրիստոնէական եկեղե-
 ցու արարողութիւններից, ուստի և շատ էլ տաք չէր
 վերաբերում թէ եկեղեցուն և թէ կրօնին:

Այդ բանը շատ մեծ ցաւ էր պատճառում հայ
 հոգևորականութեանը: Նրանք երկար ժամանակ մտա-
 ծում էին մի հնար գտնել, որպէսզի կարելի լինի այդ
 խոչընդոտը վերացնել:

Այդ հնարը, վերջապէս, գտնում է Մեսրոպ Մաշ-

աոց անունով մի վարդապետ:

Մեսրոպն իր ժամանակի ամենաուսուցողական վարդապետներից մէկն էր: Նա շատ հմուտ էր թէ ասորոց, թէ յունաց և թէ պարսից լեզուներին: Ինու երիտասարդ հասակում նա հայոց արքունիքում դիւանադպրի պաշտօն էր վարել, իսկ յետոյ, այդ պաշտօնից հրաժարելով, կրօնաւոր էր դառել, Իբրև քարոզիչ, նա երկար ժամանակ շրջել էր Հայաստանի զանազան կողմերը և փորձով տեսել, թէ հայերէն տառեր շունենալը որպիսի մեծ արգելք է քրիստոնէութեան տարածելուն:

Մեսրոպի մէջ միտք է ծագում հայերէն լեզւի համար յատուկ տառեր յօրինել, որպէսզի կարելի լինի մայրենի լեզուով թարգմանել Աստուածաշունչն ու կրօնական այլ գրածքները: Բայց մի լեզւի համար նոր տառեր հնարելը զատ էլ հեշտ բան չէ. դրա համար անհրաժեշտ է երկար աշխատանք և գիտութիւն:

Մեսրոպն իր գիտաւորութեան մասին յայտնում է հայոց կաթողիկոսին և նրանից օգնութիւն խնդրում:

Այդ ժամանակ Հայաստանի կաթողիկոսն էր Մեծն Ներսէսի թոռը՝ Սահակը, որ մի շատ լուսամիտ և հայրենասէր մարդ էր: Սա մեծ համակրանքով է վերաբերւում Մեսրոպի գիտաւորութեանը: Իր կողմից դիմում է Վասնշապուհ թագաւորին և նրա հրամանով յայտնի նախարարներից ու հոգևորականներից Վաղարշապատում մի մեծ ժողով է գումարում:

Այդ ժողովի որոշմամբ, Մեսրոպին օժանդակութիւն է տրւում, որպէսզի նա աշխատի իրագործել իր նպատակը:

Մեսրոպը գնում է Ասորիք (Սիրիա), իսկ յետոյ

Յունաստան և այնտեղի մատենադարաններում երկու տարի շարունակ աշխատելուց յետոյ, վերադառնում է Հաստատան, հետը բերելով հայկական այն տառերը, որ մենք մինչև այսօր էլ գործ ենք անում:

Հայկական տառերի գիւտը մի այնպիսի սքանչելի գործ էր, որ հայ ժողովուրդը նրան մի ասուածային պարգև է համարում:

Ո ս կ է դ ա ր

Մերոպ Մաշտոցը, հայկական տառերը գտնելուց յետոյ, իր ամօտ մի քանի հայ հոգևորականներ է հուշարում ու նրանց հայերէն կարգալ-գրել է սովորեցնում: Յետոյ՝ Մերոպն ու աշակերտները, Սահակ կաթողիկոսի աջակցութեամբ, Ասուածաշունչը թարգմանում են հայերէն: Հետզհետէ նրանք թարգմանում են նաև մի շարք եկեղեցական գրքեր և այնուհետև սկսում են ժամերգութիւնը կատարել հայերէն լեզուով:

Մայրենի լեզուով եկեղեցական արարողութիւններ կատարելը շատ մեծ դարկ է տալիս քրիստոնէութեան տարածւելուն Հայաստանում: Ժողովուրդը իր հարազատ լեզուով յսելով եկեղեցական արարողութիւնները, այլևս չէ խրտչում եկեղեցուց, այլ ընդհակառակը՝ աւելի ու աւելի է կապւում նրա հետ: Այդպիսով քրիստոնէութիւնը սկսում է խոր արմատներ բռնել ժողովրդի մէջ և նրա համար մի շատ սիրելի կրօն է դառնում:

Եկեղեցական գրքերը թարգմանելու հետ միաժամանակ, Սահակ կաթողիկոսն ու Մերոպը, Վասմշա-

պուհ թագաւորի աջակցութեամբ, Հայաստանի գանազան կողմերում, վանքերին ու եկեղեցիներին կից՝ բազմաթիւ դպրոցներ են բացուած, որոնց մէջ ժողովրդի գանազան խաւերից հաւաքուած աշակերտներին կարդալ, գրել և ժամերգութիւն են սովորեցնում:

Այդ դպրոցներից առաջին տեղը բռնում էր Վաղարշապատի դպրոցը, որը մի տեսակ ուսուցչանոց էր և ուր ուսուցիչներ էին պատրաստուած միւս դրոցների համար:

Սահակ կաթողիկոսն ու Մեսրոպը ընտրուած են 40-ի շափ ընդունակ աշակերտներ և ուղարկուած արտասահման՝ Ալեքսանդրիա, Աթէնք և Կոստանդնուպօլիս՝ իրանց ուսումը կատարելագործելու:

Իրանից առաջ էլ հայ երիտասարդները դնում էին արտասահման ուսում ստանալու, բայց այդ ժամանակ հայերէն գիր չըլինելու պատճառով, նրանք իրանց մայրենի լեզուով ոչ մի գրական աշխատանք չէին կարող կատարել:

Ալեքսանդրիայի, Աթէնքի և Կոստանդնուպօլսի բարձրագոյն դպրոցներում հայ ուսանողները սովորում էին Աստուածաբանութիւն, ճարտասանութիւն, պատմութիւն ու փիլիսոփայութիւն: Սահակի և Մեսրոպի ուղարկած և նրանցից յետոյ արտասահման գրնացող հայ ուսանողները թէ ուսում էին ստանում և թէ միևնոյն ժամանակ յունարէնից գրքեր էին թարգմանում: Հայաստան վերադառնալով, նրանք ամեն կերպ աշխատում էին իրանց հայրենիքում և տարածել յունական ուսման և գիտութեան լոյսը:

Այդ ուսումնական հայ վարդապետները միմիայն թարգմանութիւններ կատարելով չէին բաւականանում, նրանց ինքնուրոյն շատ շարադրութիւններ էլ

էին գրում, մեծ մասամբ կրօնական և պատմական բովանդակութեամբ:

Տառերի գիւտով և յունական կրթութեան ազդեցութեամբ, հայերը հետզհետէ զուրս են գալիս իրանց նախկին բարբարոսական դրութիւնից և մտնում լուսաւորութեան ու քաղաքակրթութեան շաւղի մէջ: Իրա համար էլ Ծ-րդ դարը մեր պատմութեան մէջ կոչւում է Ոսկէ դար:

Սահակ կաթողիկոսին ու Մեսրոպ Մաշտոցին հայկական եկեղեցին սուրբերի դասն է դասել, և նրբանք կոչւում են սուրբ Սահակ և սուրբ Մեսրոպ:

ԿՐԾՆԱԿԱՆ ՊՈՏԵՐԱԶՄՆԵՐ

Պարսիկների ձգտումները

Մեսրոպեան տառերի գիւտի միջոցին, Հայաստանի թագաւորական իշխանութիւնը շափազանց խախուա վիճակի մէջ էր գտնւում:

Իւրզանդական կայսրներն ու պարսից թագաւորները իրանց անվերջ պատերազմներով ու յաճախակի արշաւանքներով բոլորովին ուժասպառ էին արել Հայաստանը:

Այդ բանին պակաս չէին նպաստում և նախաըարների ներքին կռիւներն ու ըմբոստացումները, որ երբէք չէին դադարում:

Հայ թագաւորները, իրանց յենակէտը կորցրած՝ ջրի մէջ ընկած տաշեղի նման, շարունակ երբելում էին երբեմն պարսիկների, երբեմն յոյների կողմը:

Այդ գրութիւնը վերջանում է նրանով, որ հայկական տառերի գիւտից 26 տարի յետոյ, Հայաստանը բաժանուում է Պարսկաստանի և Բիւզանդիայի միջև ու այդպիսով վերջ տրւում Արշակունեաց թագաւորութեանն ու Հայաստանի անկախութեանը (432թ.):

Այնուհետև Հայաստանի մեծ մասը պարսից տէրութեան մի հահանգն է դառնում և կառավարւում է պարսից թագաւորների նշանակած յատուկ պաշտօնեաների ձեռքով, որոնք կոչւում էին մարզպաններ:

Մարզպանները լինում էին յաճախ պարսիկներ, երբեմն էլ հայ նախարարներից նրանք, որոնք աւելի հոււատարիմ էին պարսիկներին:

Այդպիսի նախարարների թիւը, սակայն, գնալով աւելի ու աւելի պակասում էր Հայաստանում: Հայկական տառերի գիւտից յետոյ, որքան աւելի էր տարածւում յունական կրթութիւնը և քրիստոնէութիւնն էլ խոր արմատներ ձգում, այնքան էլ հայերը աւելի էին հեռանում պարսիկների ազդեցութիւնից:

Պարսիկների հովանաւորութիւնն ու բարեկամութիւնը գերազասող էին այն հայերը միայն, որոնք սահմանակից էին նրանց և կամ երկար ժամանակ նրանց հետ խառն էին ապրել: Այդ հայերը շափազանց շատ ընտելացած լինելով պարսկական սովորութիւններին ու նիսա ու կացին, չէին կարողանում շուտով երես դարձնել իրանց դարաւոր հարեաններից:

Պարսիկները շատ լաւ էին նկատում, թէ ինչպէս հայերի համակրութիւնը աւելի ու աւելի է թեքւում յոյների կողմը: Այդ բանին մի անգամից վերջ դրնելու և Հայաստանը ընդմիջա Պարսկաստանի ազդե-

ցու թեան տակ պահելու համար, պարսից Յազկերտ II-րդ թագաւորը մտածում է հայերին կրօնափոխ անել և պարսկական կրօնն ընդունել տալ:

Պարսիկներն այն ժամանակ Զրազաշտի կրօնն էին դաւանում: Նրանց գերագոյն Աստուածը համարում էր արեգակը: Եւ որովհետեւ կրակն էլ արեգակի նման իր շուրջը լոյս և ջերմութիւն էր տարածում, ուստի կրակն էլ էին պաշտում:

Պարսիկները սկզբում փորձում են մեղմ միջոցներով առաջ տանել իրանց նպատակը: Նրանք իրանց համակրող հայ նախարարներին մեծ պատիւների են արժանացնում և բարձր պաշտօններ տալիս. մինչդեռ յայնքերի կողմնակիցներին աշխատում են հեռու պահել մամեն տեսակ պաշտօններից: Բացի դրանից, նրանք հետզհետէ աւելացնում են հայ ժողովրդից ստացւող հարկերը և սկսում հաւաքել նոյնպէս եկեղեցապատական կալւածներից, որ մինչև այն ժամանակ մի շտեմնւած բան էր:

Այդպիսի միջոցներով պարսիկները աշխատում էին նիւթապէս այնչափ ճնշել հայերին, որ նրանք իրանց թշուառութեան պատճառը քրիստոնէութեան մէջ տեսնելով՝ հետզհետէ կրօնափոխ լինէին:

Յազկերտի գրութիւնը եւ ճայերի պատասխանը

Յազկերտն ու իր գլխաւոր խորհրդական Միհրըններսէր, տեսնելով, որ ձեռք առնւած մեղմ միջոցները շատ էլ չեն ազդում հայերի վրայ, որոշում են աւելի կտրուկ միջոցների գիմել:

Նրանք իրանց մոզպետի ձեռքով մի ընդարձակ թուղթ են գրում հայոց Յովսէփ կաթողիկոսին ու նախարարներին և առաջարկում կրակապաշտութիւն ընդունել:

Այդ գրութեան մէջ նրանք խիստ կերպով տնարգում էին քրիստոնէութիւնը և աշխատում ապացուցել, թէ պարսկական կրօնը շատ մեծ առաւելութիւններ ունի:

Այդ գրութիւնը ստանալով, Յովսէփ կաթողիկոսը խկոյն ժողով է հրաւիրում հայ նախարարներից ու եկեղեցականներից: Ժողովը իր կողմից նոյնպէս մի ընդարձակ պատասխան է գրում: Նրա մէջ մի առ մի ցոյց տալով քրիստոնէութեան ճշմարտութիւնը, հայերը յայտնում են, թէ իրանք ոչ մի կերպ չեն փոխի իրանց կրօնը և պատրաստ են մեռնել քրիստոնէութեան համար:

Հայերի յանդուկն պատասխանը սաստիկ զայրացնում է պարսից թագաւորին: Նա հրաման է ուղարկում, որ հայոց նախարարները խկոյն իր մօտ գնան: Սրանք չը համարձակելով դէմ կենալ թագաւորի կամքին՝ գնում են: Գնալուց առաջ նախարարները խօսք են տալիս կաթողիկոսին, որ հաստատ պիտի ֆեան իրանց հաւատի վրայ:

Յազկերտի մօտ գնացող նախարարներից, ամենազխաւուններն էին՝ Սիւնեաց Վասակ իշխանը, որ այդ ժամանակ Հայաստանի մարզպանն էր, սպարապետ Վարդան Մամիկոնեանը և ուրիշները:

Վասակն ու Վարդանը

Վասակը մի խելօք, լուսամիտ և փառասէր մարդ

էր: Դեռ երիտասարդ հասակում, նա Մեսրոպ Մաշ-տոցին ամեն կերպ օգնել էր, որ Միւնեաց երկրում դպրոցներ բանայ ու կրթութիւն տարածի: Միևնոյն ժամանակ Վասակը շատ ընդունակ վարչական մարդ լինելով՝ ժողովրդից խիստ սիրւած էր:

Միւնեաց երկիրը Պարսկաստանին սահմանակից լինելով, Վասակը շատ աւելի մեծ համակրութիւն էր տածում դէպի պարսիկները, քան դէպի յոյները:

Նա այնպիսի կարծիքի էր, թէ հայերին աւելի ձեռնտու է պարսիկների գերիշխանութեան տակ մընալ, քան յոյների: Վասակը յոյս ունէր, թէ պարսիկների հաւանութեամբ կարելի կը լինի նոյնիսկ վերականգնել Հայաստանի թագաւորութիւնը:

Նա մինչև անգամ երազում էր, թէ հէնց ինքը կը դառնայ Հայաստանի թագաւորը, քանի որ Միւնեաց երկրի շատ մօտիկ բարեկամը լինելով, նա մեծ պատիւների էր արժանացել պարսից արքունիքի կողմից և այժմ էլ արդէն Հայաստանի մարզպանն էր:

Մամիկոնեան Վարդանն իր համոզումներով ու հայեացքներով Վասակի ճիշտ հակառակն էր: Իբրև շատ ջերմհոանդ քրիստոնեայ, նա պարսիկներին չէր սիրում և իր ամբողջ համակրանքը Բիւզանդիայի կողմն էր: Բացի դրանից՝ նա հաւատի ու կրօնի խընդիրը բոլոր քաղաքական նկատումներից բարձր էր դասում:

Իբրև շատ քաջ և պատերազմական գործերին հմուտ մարդ, Վարդանը հայոց զօրքերի սպարապետ էր կարգւած:

Հէնց իրանց հայեացքների տարբերութեան պատճառով՝ Վարդանն ու Վասակը խիստ հակառակորդներ էին միմեանց:

Նախարարների կրօնափոխութիւնն ու վերադարձը

Հայ նախարարներին պարսից արքունիքում ոչ միայն սովորական պատուով չեն ընդունում, այլ և Յազկերտը սպառնում է, որ եթէ իր կամքը չը կատարեն, ամենախիստ տանջանքների կենթարկւեն և Հայաստանն էլ քարուքանդ անել կը տայ:

Նախարարները երկար տատանութիւններից յետոյ, որոշում են, իրանց անձն ու հայրենիքը անխուսափելի պատուհասից փրկելու համար, երեսանց կրօնափոխ լինել:

Այդ իմանալով, պարսիկները սաստիկ ուրախանում են և առատ պարգևներ են տալիս նրանց:

Նախարարները Յազկերտին խոստանում են իրանց հայրենիքը վերապահնալով, հայ ժողովրդին էլ կրօնափոխ անել տալ: Պարսից թագաւորը նրանց մեծ թւով զօրք ու մոզեր տալով, վերադարձնում է Հայաստան: Մոզերը պէտք է պարսկական կրօնը սովորեցնէին հայ ժողովրդին և եկեղեցիները քանդելով, նրանց տեղ կրակապաշտական մեհեաններ շինէին: Կասկածելով, սակայն, թէ մի գուցէ նախարարները զրժեն իրանց խոստումը, Յազկերտը Վասակի երկու որդիներին իր մօտ պատանդ է պահում:

Նախարարների կրօնափոխ լինելու լուրը Հայաստան էր հասել դեռ նրանց վերադարձից առաջ: Ամբողջ ժողովուրդն ու հոգևորականները սաստիկ յուզւել էին: Երկիրը մի ալեկոծւած ծովի էր նմանում, երբ նախարարները մոզերի հետ Հայաստան են մըտնում:

էնց առաջին հայկական դիւղում, ուր նրանք
 ոտք են դնում, կատաղի դիմադրութեան են հանդի-
 պում: ժողովուրդը, Ղևոնդ անունով մի այնպիսի
 քահանայի առաջնորդութեամբ, փայտերով ու բահ
 ու բրիչով յարձակում է պարսիկներէ վրայ (450 թ.):

Նախարարները ժողովրդի զայրոյթից թէ վա-
 խեցած և թէ ոգևորած, շուտով անցնում են ապրու-
 տամբների կողմը և Վարդան Մամիկանեանի առաջնոր-
 դութեամբ դուրս քշում պարսիկներին Հայաստանից:

Պարսիկները այդ միջոցին ուրիշ պատերազմով
 զբաղւած լինելով, անկարող են լինում հայերից իս-
 կոյն վրէժ առնել: Հայերն էլ օգտւելով այդ հանգա-
 մանքից, առանց ժամանակ կորցնելու, պատգամաւոր-
 ներ են ուղարկում բիւզանդական կայսրին, խնդրե-
 լով, որ շուտով օգնութեան հասնի:

Կայսրը թէև խոստանում է զօրք ուղարկել,
 բայց ինքն էլ ուրիշ պատերազմների բռնւած՝ ոչինչ
 չէ կարողանում անել:

Միևնոյն ժամանակ հայերը դիմում են նաև Հա-
 յաստանի բիւզանդական մասում գտնւող հայ իշ-
 խաններին և նրանց էլ օգնութեան են կանչում,
 սակայն սրանք էլ չեն գալիս:

Վասակի ընթացքը

Հայերին դուրսից օգնութիւն չը գալու պատճա-
 րը՝ մասամբ էլ Վասակն էր: Նա էլ իր կողմից էր նա-
 մակներ գրել բիւզանդական կայսրին և այն կողմում
 ապրող հայ իշխաններին, հաւատացնելով, թէ պար-
 սիկները բոլորովին չեն էլ մտածում հայերին կրօ-

նափոխ անել, այլ թէ հայերն են կամենում պարսիկներին ապստամբել:

Միևնոյն ժամանակ, իբրև երկրի մարզպան, Վասակը սկսում է խիստ հալածանքի ենթարկել բոլոր հոգևորականներին և այն նախարարներին, որոնք աշխատում էին ժողովրդին պարսիկներէ դէմ գրգռել:

Նա ամեն կերպ աշխատում է մանաւանդ Վարդան Մամիկոնեանին փնտսել. որն այդ ամբողջ շարժման ղեկավարն և ոգի ներշնչողն էր:

Այսպէս՝ օգուտ քաղելով այն բանից, որ Վարդանը մի փոքրաթիւ գործով Աղւանից երկրի սահմաններումն էր գտնուում, Վասակը լուր է ուղարկում պարսիկներին, որ շտապեն նրա վրայ յարձակուելու:

Պարսիկները յարձակում են, բայց մեծ պարտութիւն կրելով՝ յետ են քաշուում:

Վարդանն էլ շտապում է Հայաստան, Վասակի հալածանքների առաջն առնելու:

Իրանց կրած ամօթայի պարտութիւնից յետոյ, պարսիկները աւելի են կատաղում: Նրանք մի ամբողջ ձմեռ պատրաստութիւններ են տեսնում հայերին մի լու պատժելու:

Աւարայրի նախասամարք

Հայերը լսելով պարսիկներէ մեծ պատրաստութիւնը, իրանք էլ են պատրաստուում պատերազմի: Նրանք ոչ մի տեղից օգնութիւն չը ստանալով, որոշում են իրանց սեփական ոյժերով դէմ դնել պարսից ահաւոր բանակին:

Հատկի օրերը նոր էին անցել, երբ հայերն իմանում են, թէ պարսից զօրքն արդէն Հայաստանի սահմանն է մտել ու սուպուտակում է երկիրը: Սպարապետ Վարդանը խելոյն հրաւեր է ուղարկում նախարարներին, որ շտապեն իրանց զօրքերով հաւաքւել Արտաշատ քաղաքը: Եուտով հաւաքւում են 66,000 իոգի:

Վարդանն Արտաշատում զօրահանդէս է կատարում և զօրքի բոլոր պակասութիւնները լրացնելուց յետոյ, շտապում է պարսիկներին ընդառաջ գնալ: Պարսից զօրքն արդէն հասել էր Արտաղ գաւառը: Հայկական զօրքն էլ բանակ է դնում նրանց հանդէպ՝ Աւարայր գաշտում, Տղմուտ գետի ափին:

Հայոց բանակումն էին գտնւում Յովսէփ կաթողիկոսը, Ղևոնդ քահանան և ուրիշ շատ եկեղեցականներ: Պատերազմից առաջ Ղևոնդ երէցն ու Վարդանը կրակոտ և սգևորիչ ճառեր են արտասանում, բացատրելով զօրքին այդ պատերազմի նշանակութիւնը: Լուսադէմին պատարագ է մատուցւում. ամենքն էլ հաղորդւում են և խոստանում մինչև վերջին շունչը կուել իրանց հաւատի համար:

Պարսիկները այդ պատերազմում փղեր էլ էին բերել: Նրանք դուրս են բերում դրանց ու կանգնեցնում դաշտի երկայնութեամբ, ամեն մի փղի աջ ու ձախ կողմը 3000 զինւոր դնելով:

Վարդանն իր զօրքը շորս մասի է բաժանում և ամեն մի մասը մի նախարարի հրամանատարութեան յանձնում: Չորրորդ մասն էլ Վարդանն իր հրամանատարութեան տակ է աւնում և կանգնում պարսից բանակի աջ թևի դիմաց:

Պատերազմը սկսում է նեղամզութեամբ՝ գետի

երկու կողմից: Հայերը Վարդանի խրախուսանքով անցնում են գետը և ջարդում պարսից բանակի աջ թևը: Պարսիկների մէջ շփոթութիւն է ընկնում, սակայն շուտով վրայ է հասնում նրանց պահեստի դօրքը և պատերազմը նորոգւում է:

Վարդանն իր ընկերներով շրջապատւում է պարսիկներից և քաջարար երկար կուելուց յետոյ, բուրն էլ ընկնում են պատերազմի դատուում:

Դրանով էլ վերջանում է պատերազմը, որ տեւել էր ամբողջ օրը (451 թ. յունիսի 2.):

Այս պատերազմում հայերի կողմից ընկածների ամբողջ թիւը 1036 հոգի էր: Դրանց մէջ, բացի Վարդան Մամիկոնեանից, կային և ուրիշ շատ նշանաւոր նախարարներ:

Այդ պատերազմի և նրա մէջ ընկած հերոսների յիշատակը մինչև այսօր էլ տօնւում է բարեկենդանի վերջին հինգշաբթի օրը:

Պատերազմի անմիջական հետեւեմները

Աւարայրի ճակատամարտում յաղթելուց յետոյ, հայերը զինաթափ չեն լինում: Նրանք քաշւում են իրանց անառիկ բերդերն ու ամրոցները և այնտեղից յարձակումներ գործելով՝ ահագին վնասներ են հասցնում պարսիկներին:

Այս պատերազմից յետոյ, պարսից արքունիքում համոզւում են, որ անհնարին է հայերին բռնութեամբ կրօնափոխ անել: Յազկերտը յետ է կանչում իր դօրքը Հայաստանից և Վասակի տեղ նոր մարզպան նշանակում: Նա կարգադրում է, որ հայերին թոյլ տան

ազատ կերպով դաւանել իրանց կրօնը: Միևնոյն ժամանակ նա վերացնում է այն բոլոր ծանր հարկերը, որ սոխորականից դուրս՝ զրել էին հայ ժողովրդի վրայ:

Յետոյ Յազկերտն իր մօտ է բերել տալիս Յովսէփ կաթողիկոսին, Ղևոնդ երէցին, Սիւնեաց Վասակին և ուրիշ շատ նախարարների ու եկեղեցականներին: որոնց դէմ զատ է սկսում պարսից արքունիքում:

Կոտավարութեան ժամանակ շատ ամբաստանութիւններ ու շարախօսութիւններ են լինում նաև Վասակի դէմ. զայրացած Յազկերտը զրկում է նրան բոլոր պատիւներից և բանտարկում: Նոյնպէս բանտարկում և խիստ տանջանքների են ենթարկում Յովսէփ կաթողիկոսին, Ղևոնդ քահանային և միւս բոլոր հայ եկեղեցականներին ու նախարարներին: Դրանցից շատերը, որոնց թւում կաթողիկոսն ու Ղևոնդ քահանան, չըկարողանալով տանջանքներին դիմանալ, մեռնում են բանտում, իսկ մնացածներն էլ, տառնեղիու տարւայ բանտարկութիւնից յետոյ միայն, ազատ են արձակւում և հայրենիք վերադառնում (463 թ.): Վասակն էլ երկար հիւանդութիւնից յետոյ բանտի մէջ մեռնում է:

ՆԵԿՐՈՂ ԿՐՈՆԱԿԱՆ ԱԿՏԵՐԱԳԱՐ

Առաջին կրօնական պատերազմից յետոյ, պարսիկները ընդմիշտ չեն հրաժարւում հայերին կրօնափոխ անելու մտքից: Շատ ժամանակ շանցած, նրանք նորից մտածում են մեզմ միջոցներով առաջ տանել իրանց նպատակը: Մի կողմից նրանք թոյլ են տա-

լիս հայերին ազատ կերպոր դաւանել իրանց կրօնը, բայց միւս կողմից բոլոր արժանաւոր, ազնիւ ու բարեպաշտ մարդկանց հեռացնում են ամեն կարգի պաշտօններէից, զրկում են պատիւներից և անարգանքների ենթարկում: Բարձր պաշտօնների ու պատիւների արժանանում են այն հայերը միայն, որոնք համակերպւում ու դոժից են դառնում պարսից արքունիքին:

Այդ եղանակով պարսիկները այս անգամ բաւականին յաջողութիւն են ունենում, մօտ 30 տարւայ ընթացքում, շատ հայեր՝ թէ նախարարներից և թէ ժողովրդից՝ թողնում են քրիստոնէութիւնը և պարսից կրօնն ընդունում: Հայերը սակայն քիչ յետոյ նորից են գլուխ բարձրացնում պարսիկների դէմ և սկսում մի շարք պատերազմներ, որ տևում են մի քանի տարի:

Այս երկրորդ կրօնական պատերազմների ժամանակ, հայկական զօրքերի գլխաւոր հրամանատարն ս. նրանց ոգի ներշնչոյն էր Վահան Մամիկոնեանը, որը Վարդան Մամիկոնեանի եղբօրորդին էր:

Վահանն էլ Վարդանի պէս շատ քաջ և անվախ մարդ էր: Նա շատ ծառայութիւններ էր մատուցել պարսիկներին և նրանց սիրելին դառել: Արքունիքի կատարեալ վստահութիւնը գրաւելու համար, նա մինչև իսկ զնացել էր պարսից մայրաքաղաք՝ Տիզբոն և այնտեղ հաւատափոխ էր եղել, բայց շուտով զղջացել էր և առիթ էր փնտրում իր յանցանքը քաւելու:

Ըս այդ առիթը շատ շուտով է ներկայանում: Վրաստանում, որը նոյնպէս պարսիկների գերիշխանութեան տակ էր, ապստամբութիւն է ծագում: Հանգամանքից օգտւելով, հայ նախարարներն էլ խորհուրդ

են կազմում և քաջ Վահանին իրանց սպարապետ ընտրելով, ապստամբում են (481 թ.) և պատերազմ յայտարարում պարսիկներին:

Այս պատերազմների մէջ Վահանն իր փոքրաթիւ զօրքով շատ քաջագործութիւններ է կատարում և ահապին միասնեք հասցնում թշնամուն: Պարսիկները վերջապէս ստիպւում են հաշտութիւն կնքել Վահանի հետ: Վահանը հետևեալ երեք պայմաններն է առաջարկում. 1. Քրնստոնէութիւնը պէտք է օրինաւոր և ազատ կրօն ճանաչւի Հայաստանում և ոչ մի հայի չըպիտի ստիպեն կրօնափոխ լինել: 2. Արժանաւոր ու անարժան մարդկանց մէջ տարբերութիւն պիտի դրւի. անարժան ու անպիտան մարդկանց չըպիտի պաշտօններ ու պատիւներ տրւեն, իսկ արժանաւորները հալածւեն: 3. Թագաւորը չըպէտք է հաւաստի ընծայի ամեն կարգի շարամիտ մարդկանց ամբաստանութիւններին, այլ ամեն ամբաստանութիւն պէտք է ինքն անձամբ քննի և այնպէս դատաստան անի:

Պարսիկներն ուրախութեամբ ընդունում են այս բոլոր պայմանները: Նրանք այլևս հրաժարւում են հայերին կրօնափոխ անելու մտքից և բաւականանում են նրանցից վերցւած սովորական հարկով (484 թ.):

Այնուհետև Վահան Մամիկոնեանը մի քանի խոշոր ծառայութիւններ է մատուցանում պարսից արքունիքին, որոնց համար թագաւորի սիրելին է դառնում և նշանակւում Հայաստանի մարզպան:

Կրօնական պատերազմներից յետոյ, Հայաստանը պարսից իշխանութեան տակ է մնում դեռ էլլի մօտ մէկ ու կէս դար:

Բայց ահա, եօթերորդ դարում, հեղեղի նման, իրանց բնիկ հայրենիքից դուրս են թափւում արաբները և արշաւում օտար երկիրներ դրակելու: Նրանք

նւածում են ամբողջ Պարսկաստանն ու նրա տիրապետութեան տակ եղած բոլոր երկիրները, որոնց թւում նաև Հայաստանը:

ԱՐԱԲՆԵՐԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ

Արաբները մահմեդականութիւնից առաջ

Մինչև եօթերորդ դարի սկիզբները արաբները ապրում էին Արաբիայում: Նրանք դատ-դատ ցեղերի բաժանւած, բոլորովին նահապետական կեանք էին վարում: Ամեն մի ցեղ ունէր իր ցեղապետը. որը ցեղին թէ պատերազմների էր առաջնորդում, թէ նրա դատաւորն էր և թէ կրօնապետը:

Այդ ցեղերից մի քանիսը գեո շատ հին ժամանակներից նստակեաց կեանք էին վարում և ունէին շատ հարուստ ու գեղեցիկ քաղաքներ, իսկ շատ ցեղեր էլ թափառական կեանք էին վարում:

Նստակեաց կեանք վարողները նշանաւոր էին իրանց վաճառականութեամբ, իսկ թափառաշրջիկները պարապում էին մեծ մասամբ աւազակութեամբ:

Իրանց երկրի դիրքի շնորհով, արաբները վաճառականութեան միջնորդ էին հանդիսանում հարուստ Հնդկաստանի, Փոքր Ասիայի և Եգիպտոսի միջև: Նրանց ուղտերի կարաւաններն էին տեղափոխում այդ երկիրների բոլոր ապրանքները, որոնք յաճախ ճանապարհին կողորպաւում էին հոյն արաբների աւազակային խմբերի կողմից:

Արաբների այդ անշատ ցեղերը ոչ մի ընդհանուր կապ չունէին միմեանց մէջ: Նրանցից ամեն

մէկն իր առանձին բարբառովն էր խօսում և իր յ-տ
 առկ կրօնը դաւանում: Թէև բոլոր արարներն էլ
 բնասպաշտներ էին, այսինքն՝ նրանք ասուածներ էին
 համարում արեգակը, լուսինը, աստղերը և բնութեան
 մէջ եղած զանազան երևոյթները, բայց և այնպէս
 ամեն մի ցեղ իր առանձին կրօնական հասկացողու-
 թիւնները, սովորութիւններն ու իր յատուկ ասուած-
 ներն ունէր:



Աբաբ

Միակ բանը, որ այդ ցեղերին միմեանց հետ
 կապում էր, դա Մեքքէի մօտ գտնուած ուխտատե-
 դին էր, ուր Աբաբխայի բոլոր կողմերից, տարին մի-
 անգամ բազմաթիւ արարներ ուխտի էին գնում և

հանդիսաւոր զո՛ն մատուցանում: Այդ ուխտասեղում մի սև քարի կտոր կար, որի մասին արարները սուում էին, թէ երկնքից է վայր ընկել, ուստի նրա սուրբ լինելը ամենքն էլ ընդունում էին: Այդ քարը մինչև օրս էլ կայ Մեքքէում, ուր ուխտ են գնում մահմեդականները աշխարհի բոլոր ծայրերից:

Այդպէս իրարու հետ ոչ մի ընդհանուր կապ չունենալով, արաբական ցեղերը միմեանց խիստ թշնամաբար էին վերաբերւում և շարունակ ու անվերջ պատերազմներ էին մղում:

Այդ արիւնահեղ պատերազմները տարւայ մէջ միայն մէկ ամիս էին դադար աւնում: Դա այն ամիսն էր (Րամազան), երբ արարները պէտք է ուխտ գնային Մեքքէ: Այդ ամսի ընթացքում ոչ միայն պատերազմներ չէին լինում, այլ և աւազակութիւններն անգամ դադարում էին, որպէսզի ուխտաւորները անհանգիստ չըլինէին:

Մ ա լ հ ա մ մ ե զ

Եօթերորդ դարի սկիզբներում, Մերքէ քաղաքից Մուհամմեդ անունով մի արաբ, տեսնելով իր ցեղակիցների աւազակաբարոյ բնավորութիւնը, շարունակ միմեանց կոտորելը, արբեցող ու անառակ կեանքը, մտածում է մի հնար գտնել նրանց ուղղելու և լուկեանքի վարժեցնելու:

Մուհամմեդը խելօք և զգայուն մարդ էր: Իբրև ուղտապան և վաճառական, նա շատ երկիրներ էր ման եկել և այն համոզման հասել, թէ արարները կարող են ուղիղ ճանապարհի գալ, եթէ մէկ և ընդ-

հանուր կրօն ունենան:

Այդպիսի համոզման դալով, Մուհամմեզը սկսում է մօտիկից ուսուցանել զբնասողական, մովսիսական և այլ կրօնները: Անգրագէտ լինելով, նա բերանացի է տեղեկութիւններ հաւաքում այդ կրօնների մասին այն բոլոր երկրներում, ուր ինքը իրրև ուղտապան այցելում էր:

Իր ցեղակիցների համար մի նոր կրօն յօրինելու մասին Մուհամմեզը այնչափ շատ և խորն է մտածում, որ սկսում է կասկածել, թէ զուցէ ինքն էլ Մովսէսի ու Յիսուսի նման, Աստուծու ուղարկած մարգարէն է:

Այդ կասկածը հետզհետէ հիւանդոտ Մուհամմեզի մէջ կատարեալ հաւատ է դառնում, որից յետոյ նա հրապարակ է գալիս և սկսում ժողովրդին իր նոր կրօնը քարոզել:

Սկզբում արարնելը նրան ծաղրում և խելագար են անւանում, բայց յետոյ նրա հետևողների թիւը հետզհետէ բազմանում է և Մուհամմեզին ճանաչում են Աստուծու Մարգարէ:

Մուհամմեզի քարոզած կրօնը կոչւում է Մահմեդականութիւն կամ Իսլամ:

Իսլամը եւ նրա տարածելը

Իսլամը քարոզում է միաստուածութեան գաղափարը: Նա թէ Մովսէսին և թէ Յիսուսին Աստծու մարգարէներ է ընդունում, բայց դրանցից աւելի բարձր մարգարէ՝ համարում է Մուհամմեզին:

Բացի կրօնական դաւանանքից, Իսլամը սովորեց-

նում է և շատ ուրիշ կանոններ և օրէնքներ, որոնց համաձայն Մուհամմեդի հետևողները պիտի կարգաւորեն իրանց առօրեայ ընտանեկան ու հասարակական կեանքը:

Իսլամի բոլոր ուսմունքները, որ Մուհամմեդի քարոզներն են համարուում, հաւաքելի ու տպագրելի են մի գրքի մէջ, որ կոչւում է *Ղուրան*:

Մուհամմեդը տեսնելով, որ իր քարոզած կրօնը արագութեամբ չի տարածուում, պատուիրում է իր հետևողներին՝ սրի ուժով տարածել Իսլամը: Դրա շնորհով, Մուհամմեդի մահից շատ ժամանակ շանցած, Իսլամը արաբական ցեղերի միակ կրօնն է դառնում, Ղուրանի լեզուն՝ բոլոր ցեղերի միակ տղգային լեզուն, իսկ Մուհամմեդի յաջորդներն էլ նրանց թէ կրօնական և թէ քաղաքական պետերն են դառնում: Այս վերջինները կոչւում էին *Խալիֆներ*:

Այդպէս Իսլամի և մի ընդհանուր լեզուի միջոցով արաբական անջատ ցեղերը միանում և մի ընդհանուր տէրութիւն են կազմում: Յետոյ նրանք խալիֆների առաջնորդութեամբ, դուրս են գալիս իրանց տնայատ երկրի սահմաններից և գնում աւելի բարգաւաճ երկիրներ գրաւելու և օտար ազգերի մէջ Իսլամը սրի ուժով տարածելու:

Արաբական Խալիֆարը

Արաբները կարճ ժամանակի ընթացքում, նուճում են Փորք Ասիայի այն բոլոր երկրները, որ մինչև այդ ժամանակ պարսից և բիզանդական կայսրութեան տիրապետութեան տակ էին գտնուում:

636 Թւակոսնին նրանք մտնում են Պարսկաստան: Մի քանի կատաղի կռիւներից լետոյ, պարսիկները յողթւում, անձնատուր են լինում և ընդունում Իսլամը:

Պարսից Սասանեան ցեղի վերջին Յազկերտ եւրորդ թագաւորը փախչում, գնում է Ասիայի խորքերը: Այդպիսով էլ վերջ է գտնում պարսից վաղեմի հզօր թագաւորութիւնը և Պարսկաստանը արաբական ընդարձակ և հզօր Սալիֆատի մի նահանգն է դառնում:

Արաբները Պարսկաստանի սահմաններից էլ աւելի հեռուն են գնում՝ թէ դէպի արեւելք և թէ դէպի արեւմուտք և մի շատ ընդարձակ տէրութիւն հիմնում: Արաբական տէրութիւնը կոչւում էր Սալիֆատ:

Իրանց նւաճումները չափազանց ընդարձակելով, արաբական խալիֆները իրանց մայրաքաղաքը Մեքքէից անդափսիում են նախ Դամասկոս և ապա Բաղդատ քաղաքները: Այդպիսով նրանք աւելի մօտենում են իրանց նւաճած երկիրներին և աւելի հեշտ կերպով նրանց կառավարում:

Տիրապետած երկիրներից ձեռք բերւած ահագին հարստութիւնների շնորհով, այդ երկու քաղաքներն էլ կարճ ժամանակի մէջ, վաճառականութեան ու լուսաւորութեան մի-մի ծաղկած կենտրոններ են դառնում:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՐԱԲՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ

640 Թւակոսնին արաբները մտնում են Հայաստան: Հայերն էլ են փորձում զիմադրութիւն ցոյց

տալ, բայց մեծ պարտութիւն են կրում: Արարները շատ անգթութիւններ կատարելով, 35 հազար մարդ դերի են տանում ու տիրում Հայաստանին:

Նրանք էլ պարսիկների նման անկարող են լինում հայերի մէջ իրանց կրօնը տարածել: Արարները բաւականանում են նրանով միայն, որ հայերը հնազանդ մեան Յալիֆի իշխանութեանը և կանոնաւորապէս հարկ վճարեն:

Այդ ժամանակից էլ Հայաստանը սկսում է կառավարել խալիֆների նշանակած յատուկ պաշտօնեաների միջոցով, որոնք կոչւում էին Ոստիկան կամ Ամիրա:

Հայաստանը Արաբական տիրապետութեան տակ ընկնելուց յետոյ, դարձեալ կուսխնձոր է մնում երկու հզօր տէրութիւնների միջև:

Ինչպէս որ առաջ յոյներն ու պարսիկներն էին շարունակ միմեանց դէմ պատերազմում, Հայաստանին տիրապետելու համար, այժմ էլ նոյն յոյներն ու արաբներն են կռիւներ մղում այդ նպատակով: Հայերը, կամենալով իրանց վրայ ծանրացող լուծք թեթեացնել, այս անգամ էլ մերթ յոյների և մերթ արաբների օգնութեանն են դիմում:

Հայաստանը մօտ 200 տարի սոսկալի արհաւիրքների ասպարէզ է դառնում:

Արաբական սոսկալի արշաւանքներից, Հայաստանի տարեգրութեան մէջ ամենանշանաւորն է կաշմ սասիկանի առաջնորդութեամբ տեղի ունեցածը (703 թէ 704 թ.):

Այդ կատաղի արարը, ուզելով հայերին մի լաւ դաս տալ, որպէսզի նրանք այլ ևս յոյների կողմը չանցնեն, հայ իշխաններին խարէութեամբ կանչում է

Նախիջևան և այնտեղ եկեղեցու մէջ բոլորին էլ այրում է: Յետոյ ասպատակներ է սփռում Հայաստանի զանազան կողմերը և ամեն տեղ կոտորած ու հրդեհ տարածում:

Այդ թուականը մեր պատմութեան մէջ յայտնի է Հրդեհի տարի անունով:

Հայկական սուր իօխսնութիւնների երեսն գալը

Արարական տէրութիւնը շափազանց ընդարձակելով, IX-րդ դարում սկսում է հետզհետէ թուլանալ և դէպի անկում գնալ: Թալիֆների նւաճած ընդարձակ երկրներն ու բազմադան ազգերը սկսում են միմեանց յետից բաժան-բաժան լինել և գատաւ տէրութիւններ կազմել:

Արարների թուլութիւնից ուզում են օգտուել նաև հայերը: Հայ իշխանները, Սևադա անունով պարսիկ իշխանի հետ խօսք մէկ անելով, ապստամբում են արարների դէմ: Ստեփան ապստամբութիւնը չէ աջողւում. արարները յաղթող են հանդիսանում և նոր թշւառութիւններ առաջացնում Հայաստանում:

Հայ իշխանները տեսնելով, որ անկարող են ապստամբութեամբ ազատել արարներից, փոխում են իրանց ընթացքը: Նրանք այս անգամ աշխատում են հնազանդութեամբ և թանկագին պարզեմերով սիրելի գառնալ խալիֆներին ու հէնց նրանց հաւանութեամբ զօրեղացնել իրանց իշխանութիւնը:

Եւ այդ բանը նրանց յաջողւում է: IX և X-րդ դարերում Հայաստանի զանազան մասերում մի քանի հայկական անկախ իշխանութիւններ ու նոյն իսկ թագաւորութիւններ են ստեղծւում, որոնք երկար ժամանակ խալիֆների հովանաւորութիւնն էին վայելում:

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՔ

Արարական տիրապետութեան օրով ստեղծւած հայկական իշխանութիւններից ամենագորտաւորը Բագրատունեաց թագաւորութիւնն էր:

Բագրատունի նախարարների տոհմը շատ հին ծագումն ունէր: Նրանք Արշակունեաց թագաւորութեան օրով էլ շատ բարձր դիրք էին վայելում և որդոց որդի թագադիր ասպետի պաշտօն ունէին:

Բագրատունիք բոլոր հայ նախարարներից ամենահարուստն էին թէ իրանց կալւածներով և թէ դրամով: Արարական տիրապետութեան ժամանակ նրանց կալւածները այնչափ ընդարձակուել էին, որ համարձակ կարող էին մի ընդարձակ տէրութիւն կազմել: Նրանք կարողանում էին իրանց հպատակ ժողովրդից մօտ 40,000 զօրք հաւաքել:

Արարների դէմ ապստամբութեան անյաջող փորձերի ժամանակ, Բագրատունի Սմբատ իշխանը, որ սպարապետի պաշտօն ունէր, արարների կողմն էր անցել և շատ մատնութիւններ կատարել: Սակայն արարները Սմբատին էլ չըխնայելով, ուրիշ շատ հայ իշխանների նեւ բռնել ու Բագդատ էին տարել:

Յայիֆը նրանց բուրբին էլ բանտարկել էր, խոստանալով ազատ թողնել այն դէպքում միայն, երբ մահմեդականութիւն կընդունեն: Ազգին դաւաճանող Սմբատը սակայն չէր դաւաճանել իր կրօնին և մեռել էր բանտում՝ տանջանքների տակ: Մահից յետոյ նա կոչւել է Սմբատ Խոստովանող:

ԱՅՈՑ I ԲԱԳՐԱՏՈՒԻ ՔԱԳԱՈՐ

Սմբատ Խոստովանողի Աշոտ որդին չէ յուսահատոււմ իր հօր եղեւնական մահից: Նա շարունակոււմ է մեծ հաւատարմութիւն ցոյց տալ Յայիֆին և առատ պարգևներով նրա սիրելին է դառնոււմ:

Աշոտի միջամտութեամբ Բագրատի բանտում կենդանի մնացած հայ իշխաններն ազատ են արձակոււմ ու հայրենիք վերադառնոււմ: Այդպիսով Աշոտը հայ իշխաններին ու ազնւականներին էլ սիրելի է դառնոււմ:

Աշոտը ժողովրդի ու երկրի բարեկարգութեան մասին մեծ հոգատարութիւն է ցոյց տալիս: Արարական արշաւանքներից բարուքանդ եղած գիւղերն ու քաղաքները նորոգելով, նա ամեն կերպ աշակցոււմ է ժողովրդի բայրայլած վիճակը բարելաւելու:

Իր քաղցր վարմունքով ու հաւատարմութիւնով Աշոտը հետզհետէ այն աստիճան սիրելի է դառնոււմ Բագրատի Յայիֆին, որ սա Վիշխանաց Իշխան պատաւաւոր տիրոջսն է ուղարկոււմ նրան (859 թ.):

Աշոտն իր դիրքը էլ աւելի ամրացնելու նպատակով, խնամիրական կապեր է հաստատոււմ երկու զըլխաւոր հայ նախարարների նետ և իր երկու ազնիւներից մէկը՝ տալիս է կնութեան Սիւնեաց իշխանին,

իսկ միւսը՝ Արծրունեաց իշխանին:

Աշոտի գլխաւոր իշխանն զառնալուց շատ ժամանակ չանցած, պարսիկները ապստամբում են արարների դէմ: Որպէսզի հայերին թոյլ չըտան Սալիֆին օգնելու, նրանք բազմաթիւ զօրքով մտնում են Հայաստան: Հայկական զօրքերը Սրասխի ափին մի սոսկալի ջարդ են տալիս պարսիկներին և փախցնում:

Այս փառաւոր առիթից օգտւելով, հայ իշխաններն ու կաթողիկոսը Դւինի Ոստիկանի միջոցով, խնդրում են Սալիֆին, որ Աշոտին թագաւորեցնէ Հայաստանի վրայ:

Սալիֆը մտածելով, որ եթէ հայերի ցանկութիւնը չըկատարի, նրանք կարող են միանալ ապստամբ պարսիկներին հետ, համաձայնւում է: Նա չէ մերժում հայերի խնդիրը մանաւանդ նրա համար, որ նրանք խոստանում էին շարունակել հաւատարիմ և հարկատու մնալ Բագդատին:

Շատ ժամանակ չանցած, Սալիֆը թողաւորական թուր և զգեստներ է ուղարկում Աշոտին, իսկ Գէորգ կաթողիկոսն էլ խուռն բազմութեան ներկայութեամբ նրան թագաւոր է օծում (885 թ.):

Երբ Բիւզանդիայում իմանում են Աշոտի թագաւոր դառնալը, կայսրը շտապում է իր կողմից էլ թագ և արքայազայիլ ընծաներ ուղարկել հայոց նոր թագաւորին: Դրանով յոյները մտածում են նոյնպէս հայերի սիրտը շահած լինել, որպէսզի նրանք մշտապէս արաբների կողմնակից չըմնան:

Թագաւոր դառնալուց յետոյ, Աշոտն իրան մայրաքաղաք է ընտրում Ախուրեան գետի ափին գտնւող Բագարան քաղաքը և վերականգնում Արշակունեաց թագաւորութեան ժամանակ եղած բոլոր պա-

լատական ու վարչական կարգերը: Նա անձամբ շքր-
ջում է իր երկրի զանազան կողմերը և ամեն տեղ
կատարեալ խաղաղութիւն հաստատելուց յետոյ, գը-
նում է Կոստանդնուպօլիս՝ յունաց կայսրին տեսու-
թեան:

Կայսեր հետ քաղաքական և առևտրական դաշն
կապելով, Աշոտը վերադառնում է Հայաստան, սա-
կայն ճանապարհին հիւանդանում ու մեռնում է Շի-
րակ գաւառում (890 թ.):

Հայաստանը Աոս I-ի յաջորդների օրով

Աշոտի մահից յետոյ Հայաստանը երկար ժամա-
նակ նորից կորցնում է ներքին խաղաղութիւնը: Գա-
հակալութեան համար առաջ եկած կռիւները, նախա-
բարների բմբոստացումները և արտաքին թշնամիների
յարձակումները՝ քայքայում և ուժասպառ են անում
հայ ժողովրդին:

Արշակունեաց թագաւորութեան օրով, Հայաս-
տանում գահակալութիւնը ժառանգական էր, այսինքն՝
հօր մահից յետոյ թագաւորում էր որդին: Այդպէս
էին և բոլոր հարևան երկիրները: Արաքական խալի-
ֆայութիւնը սակայն այդ ձևով չէր: Այնտեղ մեռնող
Խալիֆի գահը ժառանգում էր ոչ թէ որդին, այլ
տոհմի աւագ անդամը:

Բագրատունիներն էլ ժառանգականութեան այդ
նոր ձևն են ընդունում և այդ պատճառով անազին
պառակտումներ են սկսում Բագրատունեաց թագա-
ւորական տոհմի մէջ:

Այդ բոլոր պառակտումներից օգուտ են քաղում

ոչ միայն Հայաստանի արտաքին թշնամիները, այլ նաև հայ նախարարները: Նրանք ըմբոստանալով իրանց թագաւորի դէմ, ձգտում են առանձին և անկախ թագաւորութիւններ հաստատել:

Այսպէս Արծրունիք, Աշոտի յաջորդները դէմ ապստամբելով, Վասպուրականում մի անկախ թագաւորութիւն են հիմնում (908 թ.): Աւելի ուշ նայնպէս անկախ հայ փոքրիկ թագաւորութիւններ են հիմնում Վանանդ գաւառում (968 թ.), Սիւնեաց աշխարհում (970 թ.) և Լօռում (988 թ.):

Արաբները ոչ միայն շին արգելում հայ նախարարներին այդպիսի առանձին տէրութիւններ հաստատելու, այլ և ամեն կերպ նպաստում են դրանց: Այդպիսով նրանք խանգարում էին Բագրատունեաց թագաւորութեան զօրեղանալուն և հայոց ոյժերը բաժան-բաժան անելով, անզօր դարձնում լուրջ դիմադրութիւն ցոյց տալու համար:

Բագրատունիների զօրեղանալը ցանկալի չէր արաբներին նաև նրա համար, որ այս հայ թագաւորներն էլ արշակունիների նման, միշտ հակած էին դէպի յոյները, ուստի կարող էին Բիւզանդիայի հետ դաշնակցելով, մեծ պատուհաս լինել թալիֆաթի դըլխին:

Չրա համար էլ արաբները ամեն անգամ, հէնց որ նկատում էին Բագրատունի թագաւորների մերձեցումը յոյների հետ, իսկոյն ասպատակում էին Հայաստանը և ահադին աւերումն առաջացնում:

Աւոս III Ողորմած

Աշոտի յաջորդներն երկար ջանքերից յետոյ, երբ

վերջապէս համողում են, որ անկարող են հայ նախարարների ըմբոստութիւնները զսպել ու մի զօրեղ հայկական աէրութիւն ստեղծել, հրաժարուում են այդ մարից: Նրանք բուականանում են իրանց տոճմական երկիրներով և ամբողջապէս նւիրում նրանց ծագկեցնելու և բարեկարգելու գործին:

Ազրայրասպան պատերազմներից քայքայւած հայ ժողովուրդը այդ ժամանակից շունչ է աւնում և սկսում խաղաղ աշխատանքներով զբաղւել:

Այդ խաղաղ աշխատանքի շնորհով, Բագրատունեաց աէրութիւնը խիստ բարգաւաճում է, երկրագործութիւնը ծաղկում և առկատւոյն ու վաճառականութիւնը զարգանում են:

Այդ շրջանի թագաւորներից մեծ ուշադրութեան արժանի է մանաւանդ Աշոտ III-րդ թագաւորը, որն իր հեղ ընտւորութեան և կատարած բազմաթիւ բարեգործութիւնների պատճառով, մեր պատմութեան մէջ յայտնի է Աշոտ Ողորմած անունով:

Աշոտ III-րդի հայրը՝ Աբաս թագաւորը, որ նոյնպէս շատ խաղաղասէր ու շինարար մարդ էր, մեռնելուց յետոյ երկու որդի էր թողել Աշոտ և Մուշեղ անունով:

Աբասին յաջորդել էր մեծ որդին Աշոտը, բայց Մուշեղն ապստամբում է իր հղբօր դէմ՝ ուղեւով ժառանգել հօր գլխը: Երբ Մուշեղին այդ բանը չէ յաջողւում, նա իր կուսակիցների օգնութեամբ մի առանձին թագաւորութիւն է հիմնում Վանանդ գաւառում, մայրաքաղաք ընտրելով Կարսը (968 թ.):

Ազգակործան կռիւները երկար չը բորբոքելու համար, Աշոտը ճանաչում է իր հղբօր հիմնած նոր թագաւորութիւնը և լաւ յարաբերութիւններ հաստա-

տում նրա հետ:

Աշտոն իրան մայրաքաղաք է ընտրում Անի քաղաքը և իր ամբողջ ուշադրութիւնը դարձնում է իր փոքրիկ տէրութիւնը շէնացնելու ու սլայծառացնելու:



Ղօշավանք

վրայ:

Նա իր հօր՝ Աբաս Թագաւորի օրինակին հետե-

ւելով, շատ կործանւած քաղաքներ ու գիւղեր վերանորոգել է տալիս, բազմաթիւ վանքեր ու եկեղիցիներ է կառուցանում և բարեգործական հաստատութիւններ հիմնում, ինչպէս օրինակ՝ որբանոցներ, աղքատանոցներ, հիւանդանոցներ, անկեղանոցներ: Ու այդ բոլոր բարեգործական հաստատութիւնները Աշոտն ազահովեցնում է յատուկ նշանակւած եկամուտներով:

Պատմում են, որ Աշոտ Ողորմածը երբեք սեղան չէր նստում առանց մի քանի աղքատ ու խեղճ հիւրերի:

Շինարարական և բարեգործական գործերով զբաղւելիս, Աշոտ Ողորմածը միննոյն ժամանակ մեծ հող է տանում իր երկրի պաշտպանութեան մասին: Այսպէս՝ իր ակրպթեան մէջ եղած բերդերի ու ամրոցների թիւր նա աւելացնում է և մի պատկառելի մշտական բանակ կազմում՝ հետևակ ու ձիաւոր զօրքերից:

Աշոտ Ողորմածի թագաւորութեան օրով, Համաուն անունով արար զգրտալեար ապստամբում է Քալիֆի դէմ և Միջագեաքն ու Ասրպատականը տակն ու վրայ անելուց յետոյ, յարձակւում է Հայաստանի վրայ:

Աշոտն իր զօրքով մի լաւ ջարդ է տալիս Համաունին: Սա բռնւում է և Աշոտի հրամանով զլիաաւուում:

Այս դէպքը Քալիֆին մեծ գոհունակութիւն է պատճառում: Նա Աշոտին շատ թանկագին ընծաներ է ուղարկում և Շահի-Արմէն արտոգոտի հետ՝ թոյլատրում նրան՝ զլիսին արաբական ձեռով շալմա փաթթել:

Աշոտ Ողորմածը մեռնում է 26 տարի թագաւորելուց յետոյ (977 թ.):

Անի քաղաքի շինությունը

Բագրատունեաց խաղաղասէր ու շինարար թագաւորների ամենափայլուն գործերից մէկն էլ եղել է Անի քաղաքի շինութիւնը:

Այդ քաղաքը այժմ բոլորովին աւերակ ու անմարդաբնակ է, բայց նրա աւերակների փառասօր



Բագրատունիների Բարձրագոյն Պարհրպարանը

Մնացորդները հիացմունք են պատճառում բոլոր այցելուներին: Այդ մնացորդներից դժուար չէ հասկանալ թէ որպիսի մեծ, հարուստ, զեղեցիկ ու անասիկ քաղաք է եղել Անին և թէ ինչպիսի շքեղ ու փարթամ կեանք են վարել այնտեղ մի ժամանակ Բագրատունեաց

Թագաւորներն ու հայ իշխանները:

Ութերորդ դարում Անին մի փոքրիկ աւան է եղել, Շիրակ գաւառում, Ախուրեան գետի ափին:

Բագրատունեաց Թագաւորութեան հիմնադրի պայը, զնելով այդ գաւառը համարականներէից, ընտանիքով զնում բնակւում է Անիում: Դրանից յետոյ Անին հետզհետէ շէնանում և ընդարձակւում է:

Առաջին անգամ Անին մայրաքաղաք է գտնում Աշոտ Ողորմածի օրով, որից յետոյ նա սկսում է արագութեամբ մեծանալ, բազմամարդ գտննալ և զար-



Անիի պարիսպները

զարւել շատ փառաւոր շէնքերով, գեղեցիկ պալատներով և մանաւանդ հոյակապ տաճարներով:

Բագրատունիների այդ փառահեղ մայրաքաղաքը շատ անտոյիկ դիրք է ունեցել, Արևելեան և հարաւային կողմերից նա պաշտպանւում էր Ախուրեան գետով, որը հոսում է միշտ խոր ձորի միջով, Արևմտեան կողմից ընկած է Մաղկաձորը, որը նոյնպէս շատ անմատչելի էր դարձնում քաղաքը: Բնական պաշտպանութիւնից Անին գուրկ էր միջկայն հիւսիսային կող-

մից, իսկ այդ կողմն էլ Բագրատունիները շինել էին
ուսել կրկնակի հսկայական պարիսպներ:

Պարիսպների մեծ մասը մինչև օրս էլ զեռ կան-
գուն են Ֆաղսել, իսկ քաղաքում եղած բազմաթիւ
հոյակապ շինութիւններից Ֆաղսել են միայն մի քանի
կիսաւեր եկեղեցիներ:

Ենթադրութիւն կայ, թէ այդ եկեղեցիների մեծ
մասը շինւել է Աշոտ Ոգորմածի երկու որդիների՝




Գագիկ I-ի արձանը

Սմբատ II-ի և Գագիկ I-ի օրով, սրօնք միմեանց յա-
շորդելով թագաւորել են, Աշոտից յետոյ, ամբողջ 43

տարի Սմբատը 13, իսկ Գագիկը 30 տարի:

Յայտնի գիտնական պրոֆեսոր Ն. Մառի Անիում կատարած պեղումների շնորհով, հողի տակից հանւել է Գագիկ I-ի շինել տւած Լուսաւորիչ եկեղեցու մնացորդները, որոնցից կարելի է լինում հասկանալ, թէ ո՞րպիսի փառաւոր շինութիւն է եղել այդ եկեղեցին: Նոյն եկեղեցում գտնւել է նաև Գագիկի արձանը իր ամբողջ մեծութեամբ:

Գագիկի շինել տւած եկեղեցին գտնւելուց յետոյ,



Անիի մատենադարանի ճակատն ու պատերը

պրոֆեսոր Մառը ձեռնարկել էր Բագրատունիների արքունական պալատի տեղը պիղել, որ գտնւում է Մաղկաձորի վրայ, քաղաքի արևմտեան մասում: Պեղումներով բացւած յատակագծից պարզ տեսնւում

էր, թէ ո՞րպիսի շքեղ ու մեծ շինութիւն է եղել այդ պալատը:

Շատ նշանաւոր ու գեղեցիկ շինութիւն է եղել նաև Անիի մատենադարանը:

Անիի ամենանշանաւոր շէնքերի, ինչպէս և հրաշալի մայր եկեղեցու շինողը համարուում է Տրդատ ճարտարապետը, որ շատ հռչակաւոր էր իր ժամանակին:

Շինութիւնների մեծ մասը իրանց վրայ կրում են հայկական, արաբական և բիւզանդական ոճերի խառնուրդ: Պեղումներից գտնւած բոլոր արժեքաւոր արքայապահուում և ին Անիում, արաբական տիրապետութեան ժամանակ շինւած մզկիթում, որը թանգարանի էր վերածւած:

Այդ ժամանակաշրջանում քանդակագործութիւնն էլ մեծ զարկ է ստացել հայերի մէջ և նա արտայայտւել է մեծ մասամբ տապանաքարեր ու խաչքարեր քանդակելու մէջ, որոնց մնացորդները մինչև այսօր էլ հիացմունք են պատճառում շատ գեղարւեստագէտներին:

ՍԵԼՁՈՒԿՆԵՐԻ ԱՐՇՈՒՍԼՔԸ

Աւժու մեաց. քաղաւորութեան վախճանը

Բազրատունեաց տէրութեան անդորր ու խաղաղ վիճակը վերջ է ստանում Աշոտ Ողորմածի սրբու՛ Գագիկ I մահով (1020 թ.):

Գագիկը երկու որդի ունէր Յովհաննէս-Սմբատ և Աշոտ: Հօր մահից յետոյ, սրանց մէջ նորից երկաբառն վէճեր ու կռիւններ են ծագում գահակալու-

թեան համար:

Այդ կոթիւները այն աստիճան սուր կերպարանք են ստանում, որ հայ նախարարները դիմում են Պետ-



Քանդակագործ խաչքար

րոս Գետադարձ կաթողիկոսին և վրաց Գեօրգի Թագա-
ւորի միջնորդութեանը, որպէսզի հաշտեցնեն երկու

եղբայրներին:

Միջնորդները որոշում են, որ Յովհաննէս-Սըմբատը թագաւորէ Անիի և նրա շրջակաների, իսկ Աշոտը Վրաստանի ու Պարսկաստանի սահմանակից երկրների վրայ:

Վէճը սակայն դրանով չէ վերջանում և Աշոտը մի քանի անգամ փորձում է գահից զրկել եղբորն ու ինքը միայնակ թագաւորել:

Ընդ այդ եղբայրահաւ կռիւների ժամանակ, Հայաստանի գլխին պայթում է մի նոր փոթորիկ: Տեղի է ունենում մի անեղ արշաւանք, նման VII րդ դարում տեղի ունեցած արաբական արշաւանքի:

Դա Սելջուկ թուրքերի արշաւանքն էր:

Սելջուկները մի կիսավայրենի ցեղ էին, որ շատ հին ժամանակից ի վեր ապրում էին Ասիայի խորքերում: VI րդ դարի սկիզբներում, նրանք նեղւելով իրանցից աւելի զօրեղ ցեղերի կողմից, մորեխի նման դուրս են թափւում իրանց բնիկ երկրից և գրնում նոր հայրենիք որոնելու:

Հասան անունով մի թուրքի առաջնորդութեամբ, սելջուկները անցնում են Տիգրիս գետը և տակն ու վրայ անում Միջագետքը:

Սայիֆաթը այդ ժամանակ ներքին խռովութիւններից այնքան թուլացած էր, որ անկարող էր այդ կատաղի բարբարոսներին լուրջ դիմադրութիւն ցոյց տալ:

Հասանին յաջորդում է Տուղրիլ-բէգը: Սրա առաջնորդութեամբ սելջուկները յարձակում են Հայաստանի վրայ և ամեն ինչ իրանց ճանապարհին քանդում, այրում և աւերում են:

Ամենից առաջ նրանք յարձակում են Վասպու-

բականի Արծրունեաց թագաւորութեան վրայ: Ջուր է աշխատում Սենեքերիմ թագաւորը դիմադրութիւն ցոյց տալ բարբարոսներին: Նրանք յաղթում են հայերին և ստակալի աւերմունքներ գործելով, անցնում, մտնում են Յովհաննէս-Մմբատի երկիրը:

Այստեղ էլ հայերը մեծ ջանք են գործ դնում ուժեղ դիմադրութեամբ փրկել իրանց երկիրը աւերմունքից, բայց դարձեալ չէ յաջողում:

Սելջուկները սակայն, շին մնում Հայաստանում: Նրանք ահազին փնասներ հասցնելուց յետոյ, յետ են քաշում դէպի Պարսկաստան և արաբներից նւաճելով այդ ամբողջ երկիրը, վերականգնում են Պարսից թագաւորութիւնը: Տուրքիլը նոր թագաւորութեան սուլթան է հռչակւում:

Սելջուկների այս առաջին արշաւանքից սարսափած և նախատեսելով, որ այդ բարբարոսները զբրանից յետոյ մի փորձանք են դառնալու Հայաստանի համար, Վասպուրականի Սենեքերիմ թագաւորը որոշում է օր առաջ իր զլխի ճարը տեսնել: Նա դիմում է յունաց կայսրին. տուձարկում է վերցնել Վասպուրականը և նրա փոխարէն տուլ իրան Սերաստիա քաղաքը՝ իր շրջականերով:

Կայսրն ընդունում է այդ առաջարկը և Սենեքերիմի իր ընամանիքով, բոլոր իշխաններով ու զօրքով տեղափոխում է Սերաստիա (1021 թ.):

ԱՅԻՒ ՎԱՃԱՌՈՒՄԸ

Հազիւ էին հայերը սելջուկների սարսափներից յետոյ շունչ առել, երբ իմանում են, որ յունաց կայս-

ըր մեծ զօրքով մօտենում է Քաղաքատունեաց թագա-
ւորութեան սահմաններին:

Յովհաննէս-Սմբատ թագաւորը բոլորովին չի էլ
մտածում դիմադրութիւն ցոյց տալ: Ընդհակառակը
նա և Պետրոս Գետադարձ կաթողիկոսը՝ սելջուկների
գալիք արշաւանքներից սարսափած, և գիտենալով,
որ անկարող պիտի լինեն պաշտպանել, լաւ են հա-
մարում իրանց երկիրը յունաց քրիստոնեայ պետու-
թեանը տալ. քան թողնել, որ մահմեդական բարբա-
րոսները սիրեն նրան:

Յովհաննէս-Սմբատը ցանկանում է, սակայն, որ
իր տէրութիւնը յայնքին յանձ. ի միայն իր մահից
յետոյ: Ոչ մի զաւակ չունենալով և իր եղբօր հետ էլ
միշտ թշնամական յարաբերութեան մէջ լինելով, նա
ժառանգների մասին հոգալու ոչ մի պատճառ չունէր:

Թագաւորն ու կաթողիկոսը միմեանց հետ այդ-
պէս խորհրդակցելով, կայսրին մի թուղթ են գրում,
որով հայոց թագաւորը խոստանաւ. մ է իր մահից յետոյ
Անին իր շրջակայքով նրան տալ (1023 թ.):

Կայսրն ուրախացած յետ է քաշուում՝ Հայաստա-
նի սահմանը դեռ չըմտած:

Շատ ժամանակ շանցած կայսրը մեռնում է: Նը-
րա յաջորդն էլ երկար չի ապրում: Վերջինս մահւան
անկողնու մէջ կանչել է տալիս հիրակոս անուանով մի
հայ քահանայի, որ հայոց կաթողիկոսական գործերին
ծանօթ մարդ էր ու նրան յանձնում Յովհաննէս-Սըմ-
բատի թուղթը. կայսրը պատւիրում է նրան, թէ
«Տար այս թուղթը, տուր քո թագաւորին և աստ
նրան իմ կողմից, որ ես էլ, ինչպէս ամեն մի մահ-
կանացու, յաւիտենականութեան շէմքի վրայ եմ
կանգնած ու չեմ ուզում ուրիշի սեփականութիւնը

գրաւել, Յող ուրեմն յեա վերցնի իր թագաւորութիւնը և իր ժառանգին տայ» (1029 թ.):

Այդ հայ քահանան, սակայն, չէ կատարում մեռնող կայսրի կամքը: Թուղթն իր մօտ է պահում և հինգ տարուց յետոյ, տանում ու թանգ զնով ծախում է կայսեր յաջորդ՝ Միքայել V-ը (1034 թ.):

Նախարարական երկու կուսակցութիւններ

Երբ Յովհաննէս-Սմբատ թագաւորը մեռնում է, Միքայել V կայսրը դեսպաններ է ուղարկում և Անին իր շրջակայքով հայերից պահանջում:

Այդ ժամանակ Բագրատունեաց Բագաւորական գաւր թափուր էր մնացել և տէրութեան գործերը վարում էին նախարարները: Գրանցից գլխաւորներն էին Վեստ Սարգիս Սիւնին և Վահրամ Պանդուռնին:

Վեստ Սարգիսը տէրութեան խնամակալ էր կարգւած և թագաւորական բուր գանձերը նրա ձեռքում էին գտնուում, իսկ Պանդուռնին՝ զօրքի սպարապետն էր:

Ինչպէս առաջին կրօնական պատերազմի ժամանակ Վատակ Սիւնին և Վարդան Մամիկոնեանը՝ այնպէս էլ այժմ Վեստ Սարգիսն ու Վահրամ Պանդուռնին էին երկու հակառակ ուղղութեան բաժանւած:

Վեստ Սարգիսը վստահութիւն չուներ, թէ շափազանց թույլացած շայստանը պիտի կարողատայ երկար պահպանել իր անկախութիւնը: Նա էլ Յովհաննէս-Սմբատ թագաւորի և Կաթողիկոսի նման այն կարծիքին էր, թէ աւելի շու է շայստանը քրիստոնեայ յոյներին յանձնել, քան թողնել, որ սելջուկները նրան տէր դառնան:

Պահաւառութիւնն, ընդհակառակը, խիստ դէմ էր այդ կարծիքին և չէր ցանկանում, որ երկիրը յօժարութեամբ օտար տէրութեան յանձնի:

Բացի դրանից՝ Պահաւառութիւնն և իր կողմակիցները չէին կամենում, որ տէրութեան խնամակալութիւնը Վեստ Սարգսի ձեռքում երկար մնայ, որը կարող էր մի օր էլ թագաւոր դառնալ: Նրանք ուզում էին Բագրատունեաց բոլոր երկրների իշխանութիւնը յանձնել Յովհաննէս-Սմբատի եղբօր որդուն՝ Գագիկին, որը 14 տարեկան պատանի էր և միակ օրինաւոր գահաժառանգը:

Վահրամի կուսակցութիւնը աւելի զօրեղ լինելով, հայերը մերժում են յունաց կայսրի պահանջը՝ Անին յանձնել:

Հայերի բացասական պատասխանից զայրացած, Միքայէլ կայսրը որոշում է զէնքի ոյժով գրաւել Անին:

Նա մի քանի անգամ զօրք է ուղարկում Հայաստան, բայց հայերի զօրեղ դիմադրութեան շնորհով, նրանք շարժւում և յետ են քաշվում:

Այդ փառաւոր յաղթութիւններից յետոյ, Վահրամեանները պատանի Գագիկին բերում են Անի և թագաւոր օժել տալիս, Գագիկ II տնունով (1024 թ.):

Վրէժխնդրութիւնից վախեցած՝ Վեստ Սարգսը փախչում, ամրանում է Սուրմառի բերդաքաղաքում, իր հետ տանելով և թագաւորական զանձեբը: Երիտասարդ թագաւորը զօրքով յարձակւում է նրա վրայ, զանձեբը յետ խլում և նրան էլ բռնում և բանտարկում Անիում: Սակայն Վեստ Սարգսին յաջողւում է շուտով ներուձն ստանալ թագաւորից և նրա սիմիլին դառնալով մեծ պատիւների տրժանանալ:

ԱՆԻԻ յԱՏՃՈՒՄԸ ԵՅՆԵՐԻՆ

Յոյները Անիին տիրանալու մտքից չեն հրաժարուում: Միքայէլ V-ըղի յաջորդը՝ Կոստանդին Մոնոմախ կայսրը նորից բանակցութիւններ է սկսում հայերի հետ և պահանջում Անին: Մերժումն ստանալով, կայսրը նորից մի բանի անգամ գործ է ուղարկում, սակայն հայերը, իրանց երկրի ազատութեան դադափարով ոգևորւած, այնպիսի կատաղութեամբ են կռւում, որ ամեն անգամ էլ յոյները մեծ ջարդ կրելով յետ են քաշուում:

Մոնոմախ կայսրը, տեսնելով, որ զէնքի ոյժով անհնարին է անառիկ Անին գրաւելը, խորամանկութեան է դիմում: Նա Գագիկին բարեկամական թուղթ է գրում և հրաւիրում նրան Կոստանդնուպօլիս, որպէսզի խաղաղութեան և բարեկամութեան դաշն կապեն:

Երիտասարդ թագաւորը չի ուզում գնալ, բայց Վեստ-Սարգիսն ու Պետրոս Գետադարձ կաթողիկոսը նրան ամեն կերպ համոզում են ընդունել կայսեր հրաւերը, խոստանալով, որ իրանք հաւասարութեամբ կը պահպանեն նրա գահը:

Կոստանդնուպօլիսում հայոց թագաւորին արքայավայել կերպով ընդունելուց յետոյ, կայսրը նորից պահանջում է, որ Անին իրան յանձնւի: Բայց երբ կրկին մերժումն է ստանում, նա ձերբակալել է տալիս Գագիկին և աքսորում Մարմարա ծովի կղզիներէրից մէկը:

Երբ այդ դժբախտ լուրն իմանում են նախարարները, խիստ իրարանցումի մէջ են ընկնում: Նրանցից ոմանք ուզում էին, որ Անին արւի վրայ թագաւորին, իսկ ոմանք էլ առաջարկում էին տալ մի

ուրիշ քրիստոնեայ թագաւորի:

Մինչև նախարարները այդ վէճի մէջ էին, Պետրոս կաթողիկոսը, յունաց կայսրից մի լաւ վարձատրութիւն ստանալով, Անիի բանալիները ուղարկում է հոստանդնուպօլիս:

Գագիկը լսելով կաթողիկոսի և Վեստ-Սարգըսեանների խոստմնագանցութիւնը, յուսահատուած է և հրաժարուած իր թագաւորութիւնից: Գայսրը Անիի փոխարէն նրան տալիս է Կապադոկիայի Բիզու քաղաքը, ուր Գագիկն ամուսնանում է Սեբաստիայի Գաւիթ թագաւորի աղջկայ հետ:

Անիի բանալիները ստանալով, կայսրը իսկոյն զօրք է ուղարկում Հայաստան իր նոր ժառանգութիւնը վերցնելու: Հայերն այս անգամ էլ անձնատուր չեն յանուած: Վահրամեանները զօրքի և ժողովրդի մեծ մասի հետ միացած, սրոշում են մինչև վերջին շունչը պաշտպանել իրանց անառիկ մայրաքաղաքը:

Անին պաշարուած է: Հայերն իրանց վերջին ճիգն թափելով յարձակուած են յոյների վրայ և թէև մի լաւ ջարդ են տալիս, բայց վերջ է վերջոյ յաղթուած են և յանձնուած Անին:

ՍԵԼՁՈՒԿՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Հայաստանին տիրելուց յետոյ, յոյները մեծ անզթութիւններ են գործում: Կասկածելով, թէ մի գուցէ հայերը նորից համախմբուեն և ապստամբուեն իրանց դէմ, նրանք ցիր ու ցան են անում հայոց զօրքը, ամեն տեսակ հալածանքների են ենթարկում նախարարներին և նշանաւոր քաղաքներում ու բեր-

զերուժ պահապան զօրքեր են դնում:

Յոյները մինչև իսկ Պետրոս Գեառգարձ կաթողիկոսին էլ բռնում և կոստանդնուպոլիս են ուղարկում:

Երկար չէ տևում սակայն յոյների տիրապետութիւնը Հայաստանում: Սելջուկները նորից սկսում են իրանց վայրենի ասպատակութիւնները և յոյներին ամեն անգից դուրս քշելով, մի կատարեալ սպանդանոց են դարձնում հայոց աշխարհը:

Սելջուկների ասպատակութիւնները Հայաստանում տևում են եօթը տարի: Այդ բարբարոսները ամեն տեղ սոսկալի կոտորած անելով, թալանում, քանդում և կրակի են մատնում: Բազմաթիւ հարուստ ու բազմամարդ քաղաքներ կատարելապէս հիմնայատակ են լինում և հողի հետ հաւասարում:

Այդ վայրագութիւնների հանդէպ՝ յոյները երկար ժամանակ անարբեր էին, սակայն երբ տեսնում են, որ սելջուկները շատ են մօտենում իրանց մայր երկրի սահմաններին, 60,000 զօրք են ուղարկում նրանց դէմ:

Յոյներին միանում են և վրաց թագաւորն ու մի քանի հայ իշխաններ՝ իրանց զօրքերով, բայց դժբանք բոլորն էլ մեծ պարտութիւն են կրում և վրաց թագաւորն էլ զերի է բռնւում:

Իրանից յետոյ Տուղրիլ սուլթանն ինքն անձամբ է գալիս Հայաստան և աւելի մեծ կատաղութեամբ ասպատակում այն բոլոր տեղերը, որոնք դեռ ազատ էին մնացել: Շատ քաղաքներ ու գիւղեր աւերելուց և անհամար կոտորածներ անելուց յետոյ, սուլթանը վերագառնում է Պարսկաստան, տանելով իր հետ բազմաթիւ հայ գերիներ:

Տուղրիլի մահից յետոյ, նրա եղբայր Ալփասլանն

է դալիս Հայաստան: Նա իր ամբողջ զօրութեամբ գնում է ուղղակի Անիի վրայ, որ դեռ անփրսս էր Քաջել:


Երկար պաշարումից յետոյ, վերջապէս անառիկ Անին առնում է: Կատաղած սելջուկները այստեղ էլ շատ սոսկալի անգթութիւններ են գործում: Փառաւոր քաղաքի հոյակապ շէնքերը կրակի ճարակ են դառնում, իրանց փլատակներէ տակ անթիւ դիակներ ծածկելով (1064 թ.):

Ամբողջ Մեծ Հայքն այս կերպ սելջուկներից ունատակ ու քարուքանդ լինելով, անփրսս է մնում միայն Կարսի փոկրիկ հայկական թագաւորութիւնը:

Այդտեղի Գազիկ թագաւորն էլ հասկանալով, որ երկար չը պրտի կարողանայ հանգստութիւն վայելել, իր երկիրը յանձնում է ըիւզանդական կայսրին, և նրա փոխարէն ստանալով Փոքր Հայքում Մմնդաւ ըերդը, տեղափոխւում է այնտեղ (1065 թ.):

Այս եղանակով էլ վերջ են ստանում հայկական բոլոր անկախ թագաւորութիւնները:

Հայաստանին տէր դառնալուց յետոյ, սելջուկները մտնում են Փոքր Ասիայի յունական երկրները, տիրում նրանց մեծ մասին և հաստատւում Իկոնիայում, որ Կոստանդնուպոլսից մի քանի օրւայ ճանապարհ էր:



ՌՌԻԲԻՆԵԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՏԵՐԻ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սելջուկներրի արշաւանքները խիստ աղետաբեր են լինում Հայաստանի համար: Բացի անխնայ կոտորածից ու աւերմունքից, այդ արշաւանքները մի անասելի գաղթականութիւն են առաջացնում: Կենդանի մնացած հայերից շատ շատերը թողնում են իրանց բնիկ հայրենիքն ու գաղթում օտար երկրներ:

Հայերը շատ հին ժամանակներում, հալածւելով պարսիկներից, յոյներից, և արաբներից, նոյնպէս ըստիպած են եղել գաղթել օտար երկրներ:

Այդ գաղթականները մեծ մասամբ հաստատուում էին Փոքր Ասիայի բիւզանդական երկրներում, ուր նրանք շատ աւելի ապանով էին զգում իրանց:

Բացի այդ, գաղթականները իրանց բնակութեան համար ընտրում էին ծովեզերեայ տեղեր, որպէսզի հնարաւորութիւն ունենան ընդարձակ առևտրական գործով պարապել:

Այդպիսի տեղեր էին Կոստանդնուպօլիսը, Փոքր Ասիայի արևմտեան ծովեզերեայ քաղաքները և մանաւանդ Կիլիկիան՝ իր վաճառաշահ նաւահանգիստներով:

Կիլիկիան իբր մեղմ ու բարեխառն կլիմայի շնորհով, երկրագործութեան համար էլ մեծ յարմարութիւններ ունէր: Դեռ Մեծն Տիգրանի ժամանակ այդ երկիրը շատ ծաղկած վիճակի մէջ էր գտնուում:

XI-րդ դարի վերջերում հայ գաղթականների թիւը այնչափ էր մեծացել Կիլիկիայում, որ իրանց բազմութեամբ կարող էին մրցել տեղացի յոյն և օտար բնակիչներին հետ:

Կիլիկիայում հաստատուելով, հայերը նրա զանազան կողմերում բազմաթիւ վանքեր էին կառուցել, որոնց մէջ կրօնաւունները կրթութիւն և ուսում էին սալիս հայ երեխաներին:

Գաղթական հայ իշխաններն էլ, ժամանակի ընթացքում, Տաւրոսի լեռնաշղթայի վրայ, մի բանի ամուր տեղեր գրաւելով, ամրոցներ ու բերդեր էին շինել և փոքրիկ իշխանութիւններ հաստատել:

Բիւզաղական կայսրները ոչ միայն դէմ չէին հայկական այդ փոքրիկ իշխանութիւններին, այլ և մինչև իսկ հովանաւորում էին նրանց, որովհետև դրանք մի տեսակ պատւարի դեր էին կատարում կայսրութեան համար, մահմեդական ցեղերի յարձակումների ժամանակ:

ՌՈՒԲԻՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՄԱԳՈՒՄԸ

Տաւրոսի լեռնաշղթայի վրայ հիմնւած հայկական փոքր իշխանութիւններից, XI-րդ դարի վերջերում նշանաւոր է դառնում Ռուբինեան իշխանութիւնը:

Այդ իշխանութեան հիմնադիր Ռուբէնը, որ Բագրատունի Գագիկ II թագաւորի ազգականներից էր, իր համար բնակութեան տեղ է ընտրում Տաւրոսի բարձունքները՝ Բարձր բերդի շրջակայքում:

Այդ տեղը թէ շատ անառիկ դիրք ունէր և թէ խիստ բազմամարդ էր հայ բնակիչներով:

Ռուբէնը օգտուելով այդ երկու հանգամանքից, շտտ կարճ ժամանակում դուրս է քշում յոյն իշխաններին և իր երկիրն անկախ յայտարարում (1080 թ.):

Շուտով մօտակայ հայ իշխանները ստիպւում են Ռուբէնի իշխանութիւնը ճանաչել: Նրանց օգնութեամբ նորահաստատ հայկական անկախ իշխանութիւնը հետզհետէ աճում ու զօրեղանում է:

Ռուբէնին յաջորդում է նրա որդին՝ Կոնստանդինը (1095 թ.), որը յոյներից մի քանի ամուր բերդեր գրաւելով, հօր թողած ժառանգութիւնը աւելի է ընդարձակում:

Կոնստանդինի օրով եւրոպական ազգերը մի ահագին արշաւանք են կազմակերպում դէպի երուսաղէմ, Քրիստոսի կերեզմանն ու սուրբ վայրերը մահմեդականների տիրապետութիւնից ազատելու նպատակով: Եւրոպացիների այդ արշաւանքը կոչւում է Խաչակիրների արշաւանք:

Կոստանդինը յարաբերութեան մէջ է մտնում Խաչակիրների հետ. առատ պաշար է ուղարկում նրանց և առաջնորդի դեր կատարում անձանօթ երկրում:

Խաչակիրները, մի քանի պատերազմներից յետոյ, մահմեդականներին քշում են սուրբ վայրերից և երկիրն տիրանալով, մի քանի առանձին-առանձին իշխանութիւններ են հաստատում:

Այդ կողմերում հաստատւած եւրոպացի զանազան ազգի իշխանները, ընդհանուր աւամբ կոչւում էին Լատին իշխաններ:

Կոստանդինին իր մատուցած ծառայութիւնների համար, Խաչակիր իշխանները մարկիզի տիտղոս

են տալիս, որով էլ աւելի է բարձրանում նրա դիրքը, Կոստանդինի յաջորդները, շարունակելով իրանց հօր և պապի յանդուգն գործունէութիւնը, հարիւր տարւայ ընթացքում ամբողջ Կիլիկիայի լիակատար տէրն են դառնում և ստիպում յունաց կայսրին՝ բուլղոսովին հրաժարուել այդ երկրից:



Ռուբինեան ձիաւոր զինուոր

Այդպէս հետզհետէ զօրեղանալով, Ռուբինեան իշխաններն այն աստիճան մեծ ոյժի տէր են դառնում, որ սկսում են համարձակ պատերազմներ մղել թէ յունական՝ արդէն թուլացած կայսրների, և

թէ մամեղական՝ զօրաւոր սուլթանների դէմ:

Հայկական այդ իշխանութիւնը մեծ զօրութեան է հասնում, մանաւանդ Լևոն II-րդ Ռուբինեան իշխանի օրով, որը Կիլիկիայի առաջինն հայ թագաւորն է դառնում:

ԼԵՒՈՆ ՄԵՄԱԳՈՐՄ


Լևոնը նոր էր երկրի իշխանութիւնն ստանձնել (1185 թ.), երբ միմեանց յետեից Կիլիկիայի վրայ են արշաւում Իկոնիայի, Հալէպի և Դամասկոսի սուլթանները:



Լևոնի թագաւորեացի

Լևոնն այդ բոլոր յարձակումները մեծ քաջութեամբ յետ է մղում:

Նոյն ժամանակներում Եգիպտոսի սուլթանն (Սալահդդին) օգուտ քաղելով խաչակիր իշխանների ներքին պառակտումներից, յակձակոււմ է Պաղեստինի վրայ, դուրս է բշում լատիններին և նորից նւաճում Երուսաղէմն ու սուրբ երկիրը (1187 թ.), Եւրոպացիք՝ Գերմանիայի Ֆրիդրիխ Բարբարոսա թագաւորի առաջնորդութեամբ, Խաչակիրների մի



Սիւս

Նոր արշաւանք են կազմակերպում և նորից զնում ս. երկիրը մահմեդականներից մաքրելու հիլիկիայի սահմաններին մօտենալով, Ֆրիդրիխը Լեոնին դեսպաններ է ուղարկում և նրանից ոգնութիւն խընդրում, խոստանալով՝ փոխարէնը Լեոնին թագաւորական թագ ուղարկել, Լեոնն ուրախութեամբ ընդունում է Ֆրիդրիխի առաջարկը և առատ պաշար է

հասցնում Խաչակիրներին: Քիչ յետոյ ինքն էլ իր շքախմբով դնում է Պրիդրիխին տեսութեան: Սակայն Լեոնին չէ յաջողում Գերմանիայի թագաւորին տեսնել, որովհետեւ այդ միջոցին թագաւորը գետում լողանալիս՝ խեղուել էր:

Այդ անակնկալ մահը թէև մի քանի տարով ուշացնում է, բայց բոլորովին չի խանգարում Լեոնի թագաւորութիւնը: Պրիդրիխի յաջորդը, Հոսթի պապի հետ համաձայնութեան դալով, շուտով արքայական թագ և առիւծանշան դրօշ է ուղարկում Լեոնին, իսկ հայոց կաթողիկոսն էլ մեծ հանդէսով նրան օծում է Կիլիկիայի թագաւոր (1198 թ.):

Շուտով Իւզանդիայի կայսրն էլ Լեոնին թագ է ուղարկում և այդպիսով վաւերացնում հայկական նոր թագաւորութիւնը:

Թագաւոր դառնալուց յետոյ, Լեոնն իրան մայրաքաղաք է բնտրում Սիսը և սկսում իր երկրի վարչական գործերով զբաղւել: Լատին իշխանների օրինակին հետևելով, նա թէ իր արքունիքում, թէ գօրքի և թէ այլ կառավարչական գործերի մէջ, նոր պաշտօններ, եւրոպական սովորութիւններ և նիստ ու կաց է մտցնում:

Լեոնն ամեն կերպ աշխատում է, որ իր երկիրն էլ եւրոպական թագաւորութիւնների ձևով լինի:

Նա իր մօտ է հրաւիրում շատ եւրոպացիներ — ֆրանսիացի, իտալացի, գերմանացի ու անգլիացի — և նրանց պալատական ու զինւորական բարձր պաշտօններ է յանձնում:

Կիլիկիայի Լեոնն առաջին հայ թագաւորը, իբրև բարեպաշտ քրիստոնեայ, բազմաթիւ վանքեր է շինել տալիս ու դրանց կից բացւած դպրոցների հա-

մար եւրոպացի ուսուցիչներ է հրաւիրում, որպէսզի հայերի մէջ էլ ուսում ու գիտութիւն տարածւի:

Լեոնը մեծ հոգատարութիւն է ցոյց տալիս նաև դէպի խեղճերը, թշւառներն ու օտարականները և այդ նպատակով էլ հիմնում է շատ հիւանդանոցներ, որբանոցներ ու հիւրանոցներ:

Այս բոլորի հետ միասին, Լեոնը մասնաւոր ուշադրութիւն է դարձնում երկրագործութեան, արհեստների և առևտրի զարգացման վրայ:

Նրա օրով Կիլիկիայում խիստ զարգանում է մանաւանդ վաճառականութիւնը: Հայոց թագաւորը մօտիկ յարաբերութիւններ է հաստատում՝ առևտրով աւելի զարգացած ազգերի հետ և նրանց զանազան արտօնութիւններ տալով, ամեն կերպ նպաստում է իր երկրի առևտրի ընդարձակելուն:

Այսպէս եւրոպական տէրութիւնների հետ կապւելով, Կիլիկիայի հայկական թագաւորութիւնը հետըզհետէ աւելի զօրանում ու հարստանում է:



Լեոնի զբանք

Իր 34 տարւայ թագաւորութեան ընթացքում, Լեոնը մեծ հոշակ է ստանում նաև մի շարք յաջողակ պատերազմներով: Նա առիթներ է ունենում կը-

որև մղելու, ինչպէս Ասորիքի (Սիրիայ) Լատին իշխաններին, այնպէս էլ Իկոնիայի և այլ մահմեդական սուլթանների դէմ, որոնց բոլորին էլ յաղթելով՝ Կիլիկիան ազատ է պահում օտար յարձակումներից:

Իր քաջագործութիւնների և երկրի լուսաւորութեան ու բարգաւաճման համար կատարած գործերի պատճառով, Ռուբինեան Լեոն I թագաւորը, մեր պատմութեան մէջ յայտնի է Լեոն Մեծագործ անունով: Նա մեռել է 1219 թ.:

Կիլիկիայի թագաւորութիւնը Լեոն Մեծագործի յաջորդների օրով

Պարսից, արաբացոց և յունաց զօրաւոր ու բռնակալ զբացիութիւնից ազատւելով, հայերը Կիլիկիայում ոչ պակաս զօրաւոր ու բռնակալ եգիպտական մամլուկների հարեան են դառնում:

Մամլուկները առաջ Սգիպտոսի արաբական խալիֆների թիկնապահ զօրքն էին, որ կազմւած էին բացառապէս ստրուկներից: Յետոյ, օգտւելով Ռալիֆաթի թուլութիւնից, նրանք ապստամբել և երկրի իշխանութիւնը իրանց ձեռքն էին դրել:

Կիլիկիայի հայ թագաւորները, մօտ երկու դար, խիստ ընդհարումներ են ունենում մամլուկ սուլթանների հետ:

Սերոպացի քրիստոնեայ ազգերը, որոնց վրայ Ռուբինեան թագաւորները այնքան մեծ յոյսեր էին դրել, շատ քիչ են օգնում հայերին՝ մամլուկների դէմ կռւելու:

Քրիստոնէութիւն ընդունած ազգերի մէջ, դեռ V-դ

դարում կրօնական մեծ վէճեր էին սկսել: Այդ վէճերի հետևանքն այն էր եղել, որ քրիստոնեաները բաժանուել էին երեք զլխաւոր դաւանութիւնների— յունադաւաններ (յոյներ), կաթողիկներ կամ լատինները եւրոպական ազգերը) և լուսաւորչականներ (հայերը):

Իսլանական այդ բաժանումից յետոյ, յոյները շատ էին աշխատել հայերին իրանց դաւանանքին



Ատմ V Լուսինեան

դարձնելու, սակայն նրանց բոլոր ջանքերը, սլարտիկների և արաբների նման, ի զուր էին անցել: Հայերը միշտ հաւատարիմ էին մնացել իրանց պապէնական եկեղեցու դաւանանքներին:

Կիլիկիայու մե էլ նոյն ուղղութեամբ լատիններն էին աշխատում, և նկնց այդ ժամանակից է, որ հայերի մէջ մտաք է գործում կաթոլիկութիւնը: Քէն շատ հայ իշխաններ, թողաւորներ ու նոյն իսկ ըարձըրաստիճան հոգևորականներ կաթոլիկութիւն են ընդու-



Լեոն V Լուսինեանի դամբարանը

նում, բայց այդ դաւանանքը հայ ժողովրդի մէջ նոյն պէս մեծ ծաւալ չէ ստանում:


Կրօնական ատելութեամբ համակւած եւրոպացիք Կիլիկիայի հայերին շնն օգնում մինչև իսկ այն ժա-

մանակ, երբ Ռուբինեան հայկական տոհմը վերջացել
և թագաւորական գահը եւրոպացի Լուսինեան տոհ-
մին կը անցել:

Մօտ երկու դար մահմեդական թշնամիների դէմ
մաքառելուց յետոյ, Կիլիկեան թագաւորութիւնը վեր-
ջապէս ուժասպառ ընկնում է Սգիպտոսի մամլուկ
սուլթանների իշխանութեան տակ (1375 թ.):

Կիլիկիայի հայոց վերջին Լուսինեան Լեոն V-րդ
թագաւորը գերի է տարւում Սգիպտոս, ուր 7 տարի
բանտարկութեան մէջ Մալուց յետոյ, ազատւում և
գնում է Սերպաւ Երա բոյոր շանքերը՝ եւրոպական
գօրեղ թագաւորների աջակցութեամբ իր կորցրած
թ. գը ձեռք բերելու, բոլորովին իզուր են անցնում:

Նա յուսախափ մեռնում է Փարիզում 1303 թ.)
և թաղւում Սէն-Պընիի թագաւորական գերեզմանա-
տանը:



ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԱՆԿՈՒՄԻՑ ԵՆՏՈՅ

ՎՐԱՑ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Ամբողջ Հայաստանին ու Փոքր Ասիայի մի մասին տիրելուց յետոյ, սելջուկները մի ընդարձակ տէրութիւն են կազմում:

Այդ մեծ տէրութիւնը, սակայն, շատ կարճ կեանք է ունենում: Ալփասլանի որդու մահից յետոյ, սելջուկների իշխանութիւնը հետզհետէ թուլանում է: Արար, պարսիկ, հայ և ուրիշ զանազան ազգի իշխաններ նորից գլուխ են բարձրացնում ու զատ-զատ իշխանութիւններ և մեծ ու փոքր թագաւորութիւններ են հիմնում:

Սելջուկները իրանց իշխանութիւնը պահպանում են միմիայն Կիլիկիայի սահմանակից Իկոնիայում, որի սուլթանները միշտ ընդհարուձեցեր էին ունենում Ռուբինեան թագաւորի հետ:

Սելջուկեան իշխանութեան անկումով, Հայաստանը դարձեալ մեծ մասամբ օտարների տիրապետութեան տակ է ընկնում: Նրա արեւելեան մասը միացած էր Պարսկաստանին, ուր թագաւորական իշխանութիւնը վերստին պարսիկների ձեռքն էր անցել: Արեւմտեան մասին տէր էին դառել մասամբ Իկո-

նիայի սուլթանները և մասամբ էլ յոյները: Հիւսիսից դէպի հարաւ Հայաստանը բաժանւած էր միջանի մահմեդական և հայ՝ մեծ ու փոքր իշխանութիւնների միջև: Հայերից յայտնի էին Սիւնեաց, Աղւանից, Վասպուրականի, Տարօնի ու Սասունի փոքր թագաւորութիւններն ու իշխանութիւնները, որ սակայն միմեանցից հեռու բնկած և մանաւանդ մահմեդականներով շրջապատւած՝ անկարող էին միանալ և մի զօրաւոր դիրք ստեղծել:

Այդ գրութիւնը շարունակուած է մինչև XII-րդ դարը, երբ Հայաստանի հիւսիսային կողմում զօրեղանում է վրաց թագաւորութիւնը:

Վրացիք Գէօրգի թագաւորի օրով, երկար պատերազմներ են մղում Դւինի, Անիի և Կարսի մահմեդական իշխանութիւնների դէմ: Նրանք Հայաստանի այդ մասը մահմեդականներից մաքրում են ու տիրում:

Դրանից յետոյ վրացիք իրանց ղէնքը դարձնում են պարսից իշխանութեան դէմ: Մի քանի տարի պատերազմելուց յետոյ, նրանք զրաւում են նաև Հայաստանի արևելեան մասը:

Վրաց ազդեցութիւնը Հայաստանի վրայ զօրեղանում է մանաւանդ Գէօրգի դստեր՝ Թամար թագուհու ժամանակ: Այդ թագուհին շատ լուսամիտ անձն լինելով, մեծ հոգ է տանում իր բոլոր հպատակների լուսաւորութեան ու բարեկեցութեան մասին:

Թամար թագուհու օրով Վրաստանում կառավարչական բարձր պաշտօններ էին վարում երկու հայազգի իշխաններ — Զարբրիտ սոյսաւար և Իւանէ Վթաբէկ: Դրանք մեծ աջակցութիւն են ցոյց տալիս

Թամար թագուհուն՝ Հայաստանը մահմեդականներից
մաքրելու և երկիրը կառավարելու գործում:

ԹԱԹԱՐՆԵՐԻ ԱՐՇԱԻԱՆՔԸ

Ջինգիզ խան

Հայերի հանդիստ ու խաղաղ կեանքը վրաց իշխանութեան ներքոյ տեսւմ է ընդամենը՝ մօտ 50 տարի:

XIII-րդ դարի սկզբներում, Հայաստանը դարձեալ նոր և շատ աւելի սոսկալի արիւնհեղութիւնների ասպարէզ է դառնում:

Ամեն ինչ աւերող ու կործանող հեղեղի նման, իրար յետեից Հայաստան են թափւում մի քանի՝ միմեանցից աւելի բարբարոս և կիսավայրենի՝ ասիական ցեղեր: Այդ թափառական ցեղերը յայանի էին՝ թաթար, թիւրք, թիւրքմէն և այլ անուններով:

Իրանցից թաթարները թէ ամենից զօրաւորն էին և թէ աւելի հեռւից էին գալիս:

Նրանց բնիկ հայրենիքը Սիրիերիայի և Չինաստանի միջև ընկած լեռնադաշտն էր: Թաթարները բազմաթիւ մանր ցեղերի բաժանւած, նահապետական կեանք էին վարում և կառավարւում էին իրանց ցեղապետներով: Իրանց ցեղապետներին թաթարները կոչում էին թան:

XIII-րդ դարի սկիզբներում Մոնղոլ թաթարների ցեղապետ Ջինգիզ խանը, որ մի շատ քաջ, փառասէր ու պատերազմասէր մարդ էր, բոլոր անջատ թաթարական ցեղերին միացնում և իր իշխանութեան տակ է առնում:

Ջինգիզ խանը տեսնելով, որ թաթարները սաստիկ բազմացել և այլևս անկարող են իրանց աղքատ հայրենիքում բարեկեցիկ կեանք վարել, բազմաթիւ ցեղակիցների գլխին անցած, գնում է նոր, հարուստ ու ընդարձակ երկիրներ գրաւելու

Կարճ ժամանակի մէջ Ջինգիզ խանը, ամեն տեղ սոսկալի կոտորած ու հրդեհ տարածելով, նըւաճում է համարեա արողջ Ասիան: Ասիայի բոլոր մեծ ու փոքր թագաւորներն ու իշխանները զահընկեց է անում և իրան հպատակեցնում:

Շատ ցեղեր, ինչպէս օրինակ՝ թուրք, թուրքմէն և ուրիշներ, Ջինգիզ խանի սարսափներից զարհուրած, թողնում փախչում են իրանց միջին ասիական հայրենիքից: Սրանք բոլորն էլ թաթարներից ոչ պակաս սարսափներ տարածելով, Հայաստանի վրայով անցնում և տարածւում են Փոքր Ասիայի ու Միջագետքի զանազան կողմերը:

Ջինգիզ խանը նւաճում է նոյնպէս ընդարձակ Պարսկաստանը և զրանից յետոյ, երբ պատրաստուում էր արշաւել Եւրոպա՝ մեռնում է:

Քարաւոները Հայաստանում

Ջինգիզ խանի մահով թաթարական սոսկալի հեղեղը կանգ չէ առնում:

Նրա յաջորդ խանը հրաման է արձակում իր խառնիճադանչ բանակին՝ շարունակել Ջինգիզ խանի կիսատ թողած աշխարհակալութիւնը:

Քաթարները Չարմադան անունով կատաղի դորապետի առաջնորդութեամբ մտնում են Հայաստան

(1236 թ.) և անասելի արհաւիրքներ տարածում ամեն կողմ։

Հեռահալ ձևով է նկարագրում ժամանակակից հայ պատմագիրը թաթարների այդ արշաւանքը. —

«Սարսափելի անոտարան էր ներկայացնում այդ մեծազուլիս, անմորուս, նեղ աչքերով, տափակաքիթ, կարճ սաներով ու զիւ ձայնով բարբարոսների բողմոթիւնը։ Տղամարդիկ ձիերի վրայ նստած սրարշաւ գնում էին առջևից և սրով ճանապարհ բաց անում իրանց յետևից սայլերով եկող կանաչնց և երեխաների համար։ Այդ բարբարոսները մորիսի նման ծածկեցին ամբողջ երկիրը, անխնայ կոտորելով ամեն հասակի ու սեռի մարդկանց։ Կաթնակեր մանուկներին նրանք բարերին էին խփում, մատաղահաս աղջիկներին յափշտակում էին, իսկ հասակուորներին սրի անցկացնում։ Ոչ մայրերի արտասունքներին էին ողորմում և ոչ ձերերի սպիտակ մազերին խղճում։ Հայոց աշխարհը դիակներով ծածկուեց և ոչ ոք չը կար որ նրանց թողէր, որովհետև կենդանի քնացողները փախչում, թաքնւում էին բարբարոսներից»։

Այսպէս ամեն տեղ կոտորած ու կրակ սփռելով, թաթարները նւաճում են մէկը միւսի յետևից Հայաստանի բոլոր քաղաքներն ու բերդերը։ Չարմաղանը այն քաղաքների բնակիչներին էր միայն խրնայում, որոնք յօժարութեամբ հպատակութիւն էին ցոյց տալիս, խոստանալով տարեկան որոշ հարկ վճարել և թաթարների թշնամիների դէմ պատերազմի գնալ։

Անիի հայ և օտար բնակիչները փորձում են դիմադրութիւն ցոյց տալ։ Չայրացած Չարմաղանը պաշարում է Անին, վերցնում է նրան և սոսկալի

անգթութիւններ կատարում: Անիի բոլոր տներն ու եկեղեցիները կողոպտուում են, իսկ բնակիչներին, թաթարները միտեանց մէջ բաժանելով, կամ կոտորում և կամ գերի են տանում:

Կարսեցիք, Անիում կատարած սարսափներից խրատած, շտապում են քաղաքի բնակիչները Չարմաղանին ուղարկել և հպատակութիւն ցոյց տալ: Չնայելով դրան, արիւնարբու թաթարները կարսեցիներին հետ նոյն ձեով են վարում, ինչպէս և անեցիների հետ (1239 թ.):

Չարմաղանի մահից յետոյ, նրա յաջորդ Բաշու զօրավարի առաջնորդութեամբ թաթարները շարունակում են իրանց արշաւանքը: Նրանք մտնում են Կարնոյ գաւառը, որ այդ ժամանակ Իկոնիայի սուլթանի տիրապետութեան տակ էր գտնուում: Սուլթանը փորձում է դիմադրութիւն ցոյց տալ նրանց, բայց չարաչար յաղթւում ու փախչում է: Թաթարներն անցնում են Մսիսաց աշխարհը, ասպատակում և աւերում են ամբողջ Վասպուրականն ու Տուրուբերանը և մտնում Միջագէտք, ուր հարուստ ու բազմամարդ քաղաքները թալանի և կոտորածի են մատնում (1242 թ.):

ՀԱՅՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ ԹԱԹԱՐՆԵՐԻ ՕՐՈՎ

Համարեա թէ բովանդակ Ասիան քար ու քանդանելուց և իրանց իշխանութեան տակ առնելուց յետոյ, թաթարական խաները սկսում են իրանց լայնածաւալ տէրութեան վարչական գործերով զբաղուել: Նրանք ամբողջ երկիրը բազմաթիւ մասերի են բա-

ժանուժ և ամեն մի մասում մի յատուկ պաշտօնեայ կարգում: Այդ պաշտօնեաների պարտաւորութիւնն էր՝ իրանց յանձնած երկիրը կառավարել, ժողովրդից հարկ հաւաքել և խանին ուղարկել:

Հայաստանի վրայ կառավարիչ է նշանակուում խանի եղբայրը՝ Հուլաղու անունով: Սա Հայաստանի բոլոր բնակիչներին ցուցակագրել է տալիս և տասը տարեկանից վեր բոլոր մարդկանց, բացի կանանցից ու հոգևորականներից, հարկի տակ դնում (1254 թ.):

Թաթարական իշխանութեան ժամանակ, Հայաստանում եղած հարկահանութեան մասին հետևեալ կերպով են պատմում ժամանակակից պատմիչները:—

«Ով հարկերի ծանրութիւնից փախչում էր, բռնուում և սպանւում էր: Իսկ ով անկարող էր լինում նշանակած հարկը վճարել, պարտքի տեղ նրա որդոցն էին տանում: Հարկը առնւում էր փողով և մանաւանդ բերքերով. ամեն մի բնակիչ պարտաւոր էր տալ մէկ սպիտակ դրամ, 100 լիտր ցորեն, 50 լիտր գինի, 2 լիտր բրինձ, 3 հատ տոպրակ, 2 պարան, մի նետ, մի պայտ: Բացի դրանից՝ անասուններ ունեցողը պարտաւոր էր 20 սպիտակ դրամ վրձարել և 20 անասունից մէկը խանին տալ: Երկբի ծովակները, լճերը և բոլոր հանքերը իշխողների սեփականութիւնն էին կազմում. նրանցից օգուել ցանկացողները պարտաւոր էին նոյնպէս մի որոշ տուրք վճարել:»

Թաթարական այդ ընդարձակ ու լայնատարած տէրութիւնն իր միահեծան իշխանութիւնը պահպանում է ընդամենը՝ մօտ 100 տարի:

Այդ ժամանակի ընթացքում կիսավայրենի Թաթարները, իրանցից աւելի զարգացած պարսիկներից

և արարենքրից ազգւելոմ մահմեդականութիւն են ընդունում: XIII-րդ դարի կիսուսն էլ նրանց ընդարձակ տէրութիւնը, արարականի նման, սկսում է քայքայւել և բազմաթիւ ինքնազուխ խանութիւնների բաժանուել (1340 թ.):

Հայաստանի արեւմտեան կողմում իշխանութիւնը թիւրքէն ցեղի ձեռքն է անցնում, արեւելեան կողմում՝ պարսիկների տիրապետութիւնն է վերահաստատուում, իսկ հարաւում՝ ջիւրղ բէկերն են զօրեղանում:

Հայաստանի ներսուսն էլ մի քանի մեծ ու փոքր իշխանութիւններ են կազմւում, որոնցից ոմանք Բաղդատում նստող Հուլաղսի յաջորդներին հարկատու, իսկ ոմանք էլ բոլորովին անկախ են մնում:

ԻԿՈՆՏԱՅԻ ՍՈՒԼՔԱՆՈՒԹԵԱՆ ՔԱՅՔԱՅԻՆԵԼԸ ԵՒ ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԻԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Քաթարական տէրութեան անկումից մօտ կէս դար առաջ, քայքայւել ու մաս-մաս էր եղել նաև Իկոնիայի սելջուկեան տէրութիւնը:

Այնտեղ XIII-րդ դարի սկիզբներում, սկսում է զօրեղանալ մի այլ ասիական ցեղ՝ թիւրքերը. որոնք իրանց պետութեան հիմնադիր Օսմանի անունով կոչւում են Օսմանցիներ:

Մինչև թաթարների արշաւանքը թիւրքերը ապրում էին Միջին Ասիայում (Քիւրքեստանում), Ջինզիղ խանի արշաւանքի ժամանակ նրանց ցեղապետ Սուլէյմանն իր ընտանիքով ու բազմաթիւ մարդկանցով փախչում է և գալիս հաստատուում Բարձր-

Հայրում:

Նրա մանից յետոյ, իր էրթօղրուլ որդին գնում
բնակում է Իկսնիայի սելջուկ սուլթանի երկրում և
նրա մօտ ծառայութեան մտնում: Իր հաւատարմու-
թեան և քաջութեան համար, նա Ալայէղդին սուլթա-
նի սիրելին է դառնում և շատ բարձր դիրքի է հաս-
նում: Միևնոյն ժամանակ էրթօղրուլը շատ հարստա-



Օսման

նում և աճողին կալւածների տէր է դառնում: Իր
որդին Օսմանն էլ աւելի է ընդարձակում իր հայրե-
նական կալւածները և աւելի ևս զօրեղանում:

Այդ ժամանակ բիզանդական կայսրութիւնը բա-
ւականին թուլացած լինելով, Օսմանը սլափեցրագնում

է յոյների դէմ և մի քանի ամուր քաղաքներ զբա-
ւում: Ալայէզդին սուլթանի մահից յետոյ, երբ սել-
ջուկեան տէրութիւնը բաժան-բաժան է լինում, Օսմանն
իրան ինքնազուխ թագաւոր է հռչակում և այդպի-
սով սելջուկեան տէրութեան փլատակների վրայ հիմ-
նում Օսմանեան տէրութիւնը (1300 թ.) որը մինչև
այսօր էլ գոյութիւն ունի:

ԼԱՆԿԹԱՄՈՒՐԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ

Ջինզիզ խանի հիմնած լայնասարած տէրութեան
քայքայումից մօտ կէս դար յետոյ, Հայաստանը մի
նոր աղետալի թաթարական արշաւանքի է ենթարկ-
ւում:

Ջինզիզ խանի շտաբիղներից մէկը, Լանկթամուր
կամ Թեմուրլէնկ (կազ Թեմուր) անունով, մտածում
է նորից վերականգնել թաթարական տէրութիւնը:
Նա Միջին Ասիայի թափառական թաթարներից մի
նոր ու ահռելի արշաւանք է կազմակերպում: Մձըր-
դանդ մայրաքաղաքից Լանկթամուրը դուրս գալով,
գնում, նւաճում է այն բոլոր ազգերն ու երկրնե-
րը, որ մի ժամանակ թաթարական տիրապետութեան
տակ էին:

Այս թաթարական արշաւանքը նոյնպէս խիստ
աղետաբեր է լինում այն բոլոր տեղերի համար, ուր
ոտք է դնում Լանկթամուրը: Պարսկաստանն ու Հընդ-
կաստանը ողողում են արիւնով, մարդիկ անխնայ
կոտորուում և կարւած զլուխներից բուրգեր են կազ-
մւում: Մարդաշատ ու հարուստ քաղաքները նորից
կործանւում ու կրակի են մասնւում:

Լանկթամուրը, այսպէս տակն ու վրայ անելով ամբողջ Պարսկաստանը, Հնդկաստանը, Ռուսաստանն ու Ասորիքը՝ դալիս մտնում է Հայաստան (1387 թ.):

Եստ հայեր առաջուց արդէն լսած լինելով Լանկթամուրի կատարած սոսկուճեքը, նախօրօք թողել, փախել էին լեւնեքն ու անմասաշելի տեղեր: Սակայն այդպիսով նրանք չեն փրկուում թաթարական ազդեանքից: Մօտ հինգ տարի շարունակ Լանկթամուրի խառնիճադանճ զօրքը անպատմելի սարսափներ է տարածում Հայաստանի բոլոր կողմերում: Բազմաթիւ քաղաքներ ու գիւղեր կողոպտում ու կրակի են մատնում, բնակիչներին կոտորում կամ գերի են տանում, իսկ կենդանի մնացածներն էլ փախչում, լեռներն են ապաստանում:

Լանկթամուրի զայրոյթին ու կատաղութեան զոհերն եղան մանաւանդ Վան և Արճէշ քաղաքները:

Այս բոլորի հետեանքն այն է լինում, որ երկիրը մի քանի տարի անմշակ է մնում, մարդիկ վար ու ցանքս չեն անում, ուստի և թաթարական արհաւիրքներին հետեւում է սոսկալի սովը (1393 թ.): Պատմում են, որ այդ սովի ժամանակ, մարդիկ ուտելու ոչինչ չը գտնելով, սկսել են միմեանց միս ուտել: այբը կերել է իր կնոջը, իսկ ծնողները՝ իրանց հարազատ զաւակներին:

Ամբողջ Մեծ Հայքը նւաճելուց յետոյ, Լանկթամուրն անցնում է Փոքր Հայք: Թաթարների այդտեղ կատարած դադանութիւնները գերազանցում են մինչև այդ ժամանակ բոլոր եղածները: Պատմում են, որ Սեբաստիա քաղաքն առնելուց և ամբողջովին հիմնայատակ անելուց յետոյ, Լանկթամուրը մարդկանց ու կանանց կապել է տւել ձիերի պոչերից և բաց թո-

դել դաշտի մէջ. ապա մանուկներին էլ ձիերի ոտքերի տակ կոխուտել տւել և մօտ 4,000 հայ զինուոր էլ կենդանի թաղել: Այն կենդանի թաղւած զինուորների տեղը կոչւել է սել հողեր:

Սերաստիայից Լանկթամուրը մանոււմ է Օսմանեան երկրի սահմանները, որն արդէն մի գօրաւոր տէրութիւն էր:

Դրանից առաջ օսմանցիք ոչ միայն Իկոնիայի սուլթանութեան ամբողջ երկրներին էին տէր դառնել, այլ և նւաճել էին բիւզանդական շատ երկրներ՝ թէ Փոքր Ասիայում և թէ Լեւոստանի սահմաններում:

Լանկթամուրի Օսմանեան երկիրը մտած միջոցին՝ սուլթան Բայազէզը կոստանդնուպօլի պաշարումով էր զրաղւած: Լանկթամուրի գալը լսելուն պէս, Բայազէզը իսկոյն թողնում է բիւզանդական կայսրութեան մայրաքաղաքի պաշարումը և գալիս է Լանկթամուրի առաջը կտրելու: Սակայն Լանկթամուրը յաղթում է, բռնում օսմանեան սուլթանին և փակում երկաթէ վանդակի մէջ:

Այդ փառաւոր յաղթութիւնից յետոյ Լանկթամուրն անագին աւարով ու բազմաթիւ գերիներով վեոադառնում է Սըմրղանգ, ուր և շատ ժամանակ շանցած մեռնում է (1405 թ.):

Լայասաւնը քարտնետից յետոյ

Լանկթամուրի մահից յետոյ, նրա մեծ տէրութիւնը նոյնպիսի արագութեամբ է քայքայուում, ինչպէս որ քայքայւել էր Ջինգիզ խանի տէրութիւնը:

Բոլոր նւաճւած ազգերն ու ցեղերը միմեանց յետևից դուռն են բարձրացնում և նորից անկախութիւն ձեռք բերում:

Այս շրջանում Հայաստանը զարձեայ անվերջ պատերազմների ասպարէզ է դառնում՝ Հանկթամուրի յաջորդների և ասպտամբ քիւրդ, թիւրքմէն և այլ ցեղապետների միջև: Իրանցից ամենից աւելի զօրեղանում է Միջագետքի թիւրքմէն Ուզուն-Հասանը, որը պարսից զահր բարձրանալով, Պարսկաստանի ու Հայաստանի միահեծան տէրն է դառնում (1468 թ.):

Այդ ժամանակից սկսած՝ պատերազմների մի նոր շարք է սկսւում Հայաստանի հողի վրա, նման այն պատերազմների, որ մի ժամանակ տեղի ունէին պարսից տէրութեան և բիւզանդական կայսրութեան միջև:

Այժմ, սակայն, այլևս չըկար բիւզանդական կայսրութիւնը: Օսմանցիք, Մահմեդ II սուլթանի օրով, արդէն զրաւել էին Կոստանդնուպոլիսը (1453 թ.) և իրանց մայրաքաղաքն այնտեղ տեղափոխելով, տէր էին դառել այդ կայսրութեան բոլոր երկրներին: Այժմ օսմանցիք էին, որ բռնել էին Բիւզանդիայի տեղը և շարունակում էին նայն պատերազմները:

Այդ կործանարար պատերազմները փոփոխական բախտով տեսւմ են աւելի քան երկուսուկէս դար: Այդ շրջանում Հայաստանը երբեմն պարսից, երբեմն օսմանցոց սիրապետութեան տակ է ընկնում:

Հայ ժողովուրդը այդ պատերազմների ժամանակ նոյնքան նեղութիւններ ու տառապանքներ է կրում, որքան թաթարական և այլ արշաւանքների ժամանակ: Բացի թալանւելուց, կրակի ու սրի ճարակ դառնալուց, հայերը մեծ բազմութեամբ ստիպւած էին մի

քանի անգամ, կամովին կամ բռնի կերպով, իրանց հայրենիքը թողնել և օտար երկրներ գաղթել: Եւ այդ գաղթականութիւնները աւելի ու աւելի էին նւազեցնում հայ ժողովրդի թիւը, քան բոլոր պատերազմներըն ու կոտորածները:

Շան Արաս

Պարսկա-թիւրքական պատերազմների շրջանում տեղի ունեցած գաղթականութիւններից, ամենից նըշանաւորը պարսից շան Արասի օրով կատարւածն է:

Երբ շան Արասը պարսից գահի վրայ է բարձրանում, ամբողջ Հայաստանն արդէն օսմանցիների իշխանութեան տակ էր ընկել:

Օսմանցիք այնպիսի խիստ հալածանքներ են սկսում հայերի դէմ, որ սրանք անագին բազմութեամբ գաղթում են դանազան օտար երկրներ: Նրանցից շատերը, ինչպէս և Մելիքսեդեկ կաթողիկոսը, անշնում են Պարսկաստան և Արաս շանի հովանաւորութեան տակ մտնում:

Ինչպէս որ Մեծն Տիգրանը չափազանց մեծ նըշանակութիւն էր տալիս յոյն և ուրիշ լուսաւոր ազգերի գաղթականներին, նոյնպիսի նշանակութիւն էլ շան Արասն էր տալիս հայ գաղթականներին: Նա կամենում էր Պարսկաստանի վաճառականութիւնն ու արհեստները հայերի միջոցով զարգացնել:

Այդ պատճառով իր հովանաւորութեան ապաւինող հայերին՝ նա շատ սիրով է ընդունում և բնակութեան տեղեր է տալիս:

Իրանց յօժար կամքով Պարսկաստան գաղթած

հայերի թիւը, սակայն, շատ էլ մեծ չէր, ուստի շահ Աբասը մտածում էր յարմար առիթից օգտուելով աւելի մեծ շահերով իրագործել իր վաղուցւայ նպատակը:

Շատ ժամանակ շանցած, շահ Աբասը, օգուտ քաղելով թէ հայերի և թէ քիւրդ բէկերի դժգոհութիւններից, որոնք նոյնպէս գանդատաւոր էին օսմանցիներից, բազմաթիւ զօրքով յարձակւում է Ատրպատականի վրայ: Նա գրաւում է Քաւրիզը, մտնում է Հայաստան և տիրում Երևանին: Այդտեղից շահ Աբասը ասպատակներ է ցրւում ամեն կողմ, որոնք ուր որ հասնում են, ամեն ինչ թալանում ու քանդում են: Նրանք շահի կարգադրութեամբ բազմաթիւ ժողովուրդ են գերում և Պարսկաստան տեղափոխում:

Իր արշաւանքը շարունակելով, շահ Աբասը հասնում է մինչև Կարս: Այդտեղ նա իմանում է, որ օսմանցիք անազին պատրաստութեամբ գալիս են իր վրայ: Չվստահանալով իր ոյժին, թէ պիտի կարողանայ զօրաւոր թշնամուն դիմադրել, շահ Աբասը որոշում է յետ նահանջել:

Հայերի գաղթը

Նահանջի միջոցին անգամ շահ Աբասը չի մտաւնում իր ծրագիրն իրագործել և բազմաթիւ հայեր է գաղթեցնում Պարսկաստան:

Բացի հայերի միջոցով իր նրկիրը ծաղկեցնելը, շահ Աբասը ծրագրել էր նոյնպէս միանգամայն աւերակ դարձնել Հայաստանը, որպէսզի օսմանցիք այլևս չը ձգտեն այդ երկրին տիրանալու: Նա խստիւ

պատուիրում է իր զորավարներին՝ գաղթող հայերի տուն ու տեղը կրակի տալ և այրել:

Օսմանցիների արագութեամբ մտնելու պատճառով, գաղթը շատ շտապ կերպով է կատարւում: Գաղթողները հազիւ են կարողանում իրանց ունեցածի մի շնչին մասը հետները վերցնել. մնացած բոլոր հարստութիւնը կրակի են մատնում: Օսմանցիների առջևից շտապով յետ նահանջող պար-



Եւէ Աբաս

սիկները հայ գաղթականներին քշում են սջխարների հօտի նման. իսկ յետ մաշոզներին, անխնայ կերպով սպանում ու կոտորում են:

Մանաւանդ սոսկայի է լինում գաղթականների Աբաջս գետից անցնելը: Գետի վրայ կամուրջ չկար,

պիտի անցնէին լաստերով: Օսմանցիք վրայ էին հասնում, ուստի հարկաւոր էր շտապել: Նկատելով այդ, գորապետը հրամայում է լաստերով միայն գորքին փոխադրել, իսկ գաղթականներին ստիպել, որ լողալով անցնեն:

Բազմաթիւ հայեր, մանաւանդ կանայքն ու երեխաները, որոնք լողալ չգիտէին, զոհ են գնում վարարած Արաքսի ալիքներին:

Այդ նոյն ժամանակ շահ Արասը գաղթեցնում է նաև Արաքսի ափին դառնող հարուստ Ջուղա քաղաքի բնակիչներին: Պարսիկները Ջուղան էլ են կրակի մատնում և այրում (1603 թ.):

Պատմում են, որ շահ Արասը, երբ առաջին անգամ Ջուղա էր իկել, ջուղայեցիք հանդիսաւոր թափորով էին նրան դիմաւորել ու մի ոսկէ սկուտեղով իր ոսկիներ էին նւիրել նրան: Ջուղայեցիների փաթեամ կհանքն ու հարստութիւնն էլ աւելի էին զբրդոել շահի ցանկութիւնը՝ հայերին Պարսկաստան գաղթեցնել: Հայերի սիրտը գրաւելու նպատակով, շահ Արասը այցելում է հայոց եկեցեցիին և աղօթում պատկերների առաջ:

Բազմաթիւ նեղութիւններով ու տառապանքներով Պարսկաստան տարւած հայ գաղթականներին շահ Արասը շատ լաւ վերաբերմունք է ցոյց տալիս: Նա նրանց բնակեցնում է իր Սպահան մայրաքաղաքում ու նրա շրջակայքում, իսկ Ջուղայեցիներին՝ յատուկ տեղ է տալիս Սպահանի հարաւային կողմում՝ ուր նրանք մի նոր քաղաք են հիմնում՝ Նոր-Ջուղա անունով:

Բացի դրանից՝ շահ Արասն իր տարած հայ գաղթականներին, ինչպէս և Պարսկաստանում ապրող բո-

լոր հայերին, թէ կրօնի կատարեալ ազատութիւն և թէ
ամեն տեսակ արատնութիւններ է տալիս: Այդ բոլորի
շնորհով հայերը, մանաւանդ Նոր-Ջուղայեցիք, կարճ
ժամանակի մէջ նորից շատ հարստանում և բարեկե-
ցիկ վիճակի տէր են դառնում:

ՂԱՐԱՐԱՂԻ ՄԵՆԻՔՆԵՐԸ

Պարսից տիրապետութեան օրով, Հայաստանը,
ինչպէս և ամբողջ Պարսկաստանը, բազմաթիւ մա-
սերի էր բաժանւած, որոնցից ամեն մէկը, Հայաս-
տանի նախկին նախարարութիւնների նման, մի-մի
առանձին և կիսանկախ իշխանութիւն էր կազմում:
Պարսկական այդ իշխանութիւնները կոչւում էին
խանութիւններ իսկ իշխանները՝ խաներ:

Ամեն մի խան, հայ նախարարների նման, իր
երկրի սահմաններում կատարեալ ինքնիշխան էր:
Նա պարտաւոր էր միայն պարսից թագաւորին մի
որոշ տուրք վճարել և իր զօրքով պատերազմի ժա-
մանակ նրան օգնել:

Այդ կիսանկախ պարսից խանութիւնների սահման-
ներում ապրող բոլոր հայերը, սակայն, մինչոչն վի-
ճակի մէջ չէին գտնուում: Ղարաբաղի (Սիւնեաց և
Արցախի նահանգները) հայերը, պարսից տիրապե-
տութեան տակ ընկնելուց յետոյ, կարողացել էին
իրանց լեռնոտ երկրի շնորհով, դեռ ևս իրանց կի-
սանկախ դրութիւնը պահպանել: Նրանք ունէին ի-
րանց հայ իշխանները, որ կոչւում էին մելիքներ:

Ամեն մի հայ մելիք, իր փոքրիկ երկրի սահ-
մաններում, նոյնպիսի ինքնիշխան տէր էր, ինչպէս

և պարսիկ խանը՝ իր աւելի ընդարձակ երկրում:

Մեյիքն էր կառավարում իր հպատակ ժողովրդին և միջնորդ հանդիսանում սրա և իրանից աւելի մեծ իշխանութիւն ունեցող խանի միջև: Ինչպէս որ խանն էր պարտաւոր շահին տուրք վճարել և օգնել պատերազմի ժամանակ, այնպէս էլ մեյիքը պարտաւոր էր տուրք տալ և օգնել խանին:

Հայ մեյիքների իշխանութիւնը ժառանգական էր. հօր մահից յետոյ մեյիք էր դառնում անդրանիկ որդին, իսկ միւս եղբայրները կոչւում էին ընկեր և երկրի ազնւական դասն էին կազմում:

Ղարաբաղի հայ մեյիքութիւնները թւով հինգ էին, որոնց բնակիչների ամբողջ թիւը 300.000-ի էր հասնում: Նրանցից երկու մասը հայեր էին, իսկ մի մասը՝ թուրքեր կամ պարսիկներ: Իւրաքանչիւր մեյիք իր բերդն ու ամրոցն ունէր, և պէտք եղած ժամանակ նա պաշտպանում էր իր փոքրիկ գորագունդի օգնութեամբ:

Մեյիքների ձգտումները եւ Մեծն Պետրոս

Պարսից խաները, հայ նախարարների նման, համարեա թէ երբեք հաշտ չէին ապրում միմեանց հետ: Նրանք կամ իրարու դէմ կուռւում և կամ մի քանիսը միանալով՝ շահի դէմ էին ապստամբում:

Այդ անվերջ կռիւներն ու արտաքին թշնամիների յարձակումները XVIII-րդ դարի սկզբներում մեծ շփոթութիւններ էին առաջացրել ամբողջ Պարսկաստանում, որոնց պատճառով պարսից շահի իշխանութիւնը սաստիկ թուլացել էր:

Անա հէնց այդ թուլութիւնից ու շփոթութիւն-
ներից կամենում են օգուտ քաղել Ղարաբաղի հայ
մեթոքները: Նրանք մտածում են մի քրիստոնեայ
տէրութեան օգնութեամբ թօթափել պարսից լուծը և
մի անկախ իշխանութիւն ստեղծել:

Այդ նպատակով նրանք մի դաշտնի դեսպանու-



Մեծն Պարսու

թիւն են ուղարկում Սերոպա: Դեսպանութեան գլու-
խըն էին Հնդկաստանցի մի հայ՝ Իսրայէլ Օրի և մի
վարդապետ՝ Մինաս անունով:

Դեսպանութիւնը մի քանի եւրոպական իշխան-
ների ու թագաւորների հետ տեսակցելուց և օժան-
դակութեան խոստումներ ստանալուց յետոյ, անցնում
է Պետերբուրգ, ուսաց Մեծն Պետրոս կայսեր ա-
ջակցութիւնն ևս խնդրելու (1706 թ.):

Ռուսաստանը Մեծն Պետրոսի օրով սկսել էր սաս-
տիկ զօրեղանալ ու ընդարձակել: Այդ լուսամիտ
կայսրն անձամբ ճանապարհորդած լինելով եւրոպա-
կան գանազան հրկրներում, տեսել էր, թէ ինչպէս
իր երկիրն ու ժողովուրդը սաստիկ յետ են մնացել
եւրոպական լուսաւորութիւնից: Ռուսաստան վերա-
դառնալով, նա սկսել էր բռնի միջոցներով իր երկրի
բոլոր հին կարգերն ու սովորութիւնները տապալել և
եւրոպական կարգ ու կանոն մտցնել:

Մեծն Պետրոսի ամենամեծ ձգտումներից մէկն
էլ այն էր, որ Ռուսաստանը նոյնպէս ծովային հա-
ղորդակցութիւններ ու նաւատորմիդ ունենայ: Մինչ
այդ ժամանակ Ռուսաստանի սահմանները ծովերից
դեռ շատ հեռու գտնւելով, ուսները դուրկ էին մնա-
ցել զբոս աշխարհի հետ հաղորդակցելու հեշտ մի-
ջոցներից: Իրա համար էլ Ռուսաստանը, մինչև Մեծն
Պետրոսի թագաւորութիւնը, մի տեսակ փակւած
կեանք էր վարում և անկարող՝ օտարների հետ յա-
ճախ շփւելով, արագութեամբ առաջադիմել:

Իր երկիրը այդ զբոսութիւնից դուրս հանելու մըտ-
քով, Մեծն Պետրոսը մտածում էր Ռուսաստանի սահ-
մանները այն աստիճան ընդարձակել, որ նա թէ հիւ-
սիսից և թէ հարաւից մօտ լինի ծովերին: Հիւսիսում
արդէն ընդարձակ նւաճումներ կատարելով, նա մօ-
տեցել էր Բալտիկ ծովին և նրա մօտ մի նոր քա-
ղաք հիմնել՝ Պետերբուրգ անուանով: Այդտեղ էլ նա

Մօսկւայից տեղափոխել էր իր գահը:

Սակայն զրանով լրացած չէր Մեծն Պետրոսի ընդարձակ ծրագիրը: Նա ցանկանում էր հարաւից էլ Սև ու Կասպից ծովերին մօտենալ, որպէսզի այդ կողմերից նոյնպէս Ռուսաստանը արտօքին աշխարհի հետ հազարդակցութեան միջոցներ ունենայ:

Ահա այդպիսի ծրագիրներով տողորած Մեծն Պետրոսին է ներկայանում Ղարաբաղի մելիքների ուղարկած դեսպանութիւնը:

Մեծն Պետրոսը շատ ուրախութեամբ և ոիրով է ընդունում հայ դեսպաններին, մտածելով, որ ինքը կարող է օգուտ քաղել այդ հանգամանքից և հայերի օգնութեամբ նւաճել պարսիկներից Կասպից ծովի արևելեան ու հարաւային երկիրները:

Նա ամեն տեսակ խոստումներ է տալիս հայ պատգամաւորներին, և Իսրայէլ Օրին՝ դեսպանի պատրւակով ուղարկում է Պարսկաստան, այնտեղի գործերի զրութիւնն իմանալու և հայերի ապստամբութիւնը պատրաստելու:

Օրին Պարսկաստանի գործերին մօտիկից ծանօթանալուց և հայ իշխանաւորների հետ տեսակցելուց յետոյ, վերադառնում է Պետերբուրգ ու յայտնում Մեծն Պետրոսին թէ հայերը պատրաստ են ապստամբութեան և միայն մի նշանի են սպասում:

Դաւիթ քէկ

Այն ժամանակ, երբ դեռ հայ դեսպանները բանակցութեան մէջ էին Մեծն Պետրոսի հետ, Պարսկաստանում մեծ շփոթութիւններ ու խառնակութիւն-

ներ են ընկնում: Մի կողմից աֆղաններն են յարձակուում Պարսկաստանի վրայ, իսկ միև կողմից կովկասեան լեռնականներն են ասպատակում հայկական նահանգները: Այս շփոթութիւնից օգուելով, Մեծն Պետրոսը իր գործով մանում է Պարսից տէրութեան սահմաններն ու գրաւում Դերքենար, Բագուն ու Գիլանը:

Ղարաբաղի մեյիքները, առիթը շատ յարմար համարելով և վստահանալով ռուսաց կայրի տւած խոստումներին, որոշում են ապստամբութեան գրոշակ բարձրացնել: Նրա՞ք դիմում են իրանց հայրենակից Դաւիթ բէկին, որ վստահանում մեծ անուն էր հայնի, իրրն քաջ և փորձառու զօրապետ, և հրաւիրում նրան հայկական շալժման գլխաւ կանգնել:

Դաւիթ բէկը մի խումբ կարիճ հայերի հետ դալիս է և սկսում գործել:

Կարճ ժամանակի մէջ Դաւիթ բէկի շուրջն են հաւաքում, հետզհետէ, տւելի քան մի քանի հազար գինւած հայեր, որոնք իրանց հետև հրամանատարի առաջնորդութեամբ, մի շարք փառաւոր յաղթութիւններ են տանում՝ թէ Ղարաբաղը ասպատակող լեռնական ցեղերի և թէ պարսից խաների դէմ:

Դաւիթ բէկն իրան բնակութեան տեղ է ընտրում Հալիձոր աւանը, ուր մի ամուր բերդ շինելով, այն տեղից է շարունակում իր պատերազմական գործողութիւնները (1724 թ.):

Շրջակայ պարսից խաները, Ղարաբաղի հայերի յաջողութիւնները տեսնելով, միանում են և հայերից շատ աւելի մեծ ոյժով յարձակում Հալիձորի վրայ, սակայն յալթւում են և մեծ կորուստով յետ քաշում:

Այդպէս ամբողջ Սիւնեաց երկիրն ասպատակներից մաքրելով ու խաների զօրութիւնը խորտակելով, Դաւիթ

բէկն իր իշխանութիւնն է հաստատում այդ երկրում:
Այդ միջոցին Պարսկաստանի վրայ են յարձակ-
ւում նաև օսմանցիք:

Սրանք անարգիւ առաջ գնալով, հեազհեաէ գրա-
ւում են Երևանը, Նախիջևանը, Թաւրիզն ու Հ. մա-
դանը: Օսմանցիք մի զօրաբաժին էլ ուղարկում են
Դաւիթ բէկի վրայ:

Հայերը, մասամբ օսմանցիների զօրութիւնից
սարսափած, մասամբ էլ Դաւիթ բէկի իշխանութիւ-
նից դժգոհ, երես են դարձնում նրանից և մինչև իսկ
նրա թշնամիների կողմն են անցնում: Դաւիթ բէկին
հաւատարիմ են մնում ընդհանը մօտ 450 հայեր:

Ջընայելով այդ շնչին սյժին, Դաւիթ բէկն ու
իր կողմակիցները այնպիսի քաջութեամբ ու հմտու-
թեամբ են կռւում օսմանցիների անհամեմատ աւելի
մեծ զօրքի դէմ, որ վերջնական յաղթութիւնը հայե-
րի դողմն է մնում: Օսմանցիք շփոթւած փախուստի
են դիմում:

Երբ պարսից շահը լսում է Դաւիթ բէկի տարած
փառաւոր յաղթութիւնները օսմանցիների դէմ, շատ
թանկագին ընծաների հետ՝ մի հրովարտակ է ուղար-
կում, որով հաստատում է նրան Սիւնեաց իշխանու-
թեան մէջ, տալով նրան իւխանաց իւխան տիտղոսը
և իր անուշնով դրամ կտրելու իրաւունք: Սակայն Դա-
ւիթ բէկն այդ արտօնութիւնները երկար չէ վայելում
և մեռնում է (1728 թ.):

Դաւիթ բէկի մահից յետոյ, Սիւնեաց երկրի անկա-
խութիւնն էլ հազիւ մէկ տարի է տևում: Օսմանցիք
կրկին անգամ և աւելի մեծ զօրքով յարձակւում են
Հայիճորի վրայ, առնում են բերդը և բոլոր բնակիչ-
ներին սրի անցկացնում:

Թէ այդ ժամանակ և թէ դրանից առաջ հայերը մի քանի անգամ դեպքանութիւններ են ուղարկում Պետերբուրգ և սուսայ կայսրից օգնութիւն խնդրում օսմանցիներէրի դէմ: Նրանց բոլոր խնդիրները, սակայն, ապարդիւն են անցնում: Պետրոս Մեծը այդ ժամանակ շատ աւելի կարեւոր գործերով զբաղած, ոչ միայն անկարող էր հայերին օգնել, այլ և իր զբաւած կասպից ծովեզերեայ երկրներէրց յետ էր քաշել իր զօրքը: Այդ երկրներէր գրաւումը նա յետաձգել էր մի ուրիշ աւելի յարմար ժամանակի:

Ռուսակսն նւանումները Հայաստանում

Մեծն Պետրոսից ոչ մի օգնութիւն չստանալը բոլորովին չէ յուսահատեցնում պարսից և օսմանցի լուծերի տակ տառապող հայերին: Նրանք Մեծն Պետրոսի յաջորդների օրով էլ շարունակում են բանակցութիւններ վարել և օգնութիւն խնդրել սուսայ արքունիքից:

Պետրոսի յաջորդները երկար ժամանակ հնարաւորութիւն չունէին Հայաստանի գործերով զբաղելու: Նրանք սուսայժմ, օգուտ քողելով հայերի դէպի ուսներն ունեցած մեծ համակրութիւնից, բողոքով հայեր են գաղթեցնում դէպի Ռուսաստան: Այդ գաղթականներին նրանք ընդարձակ հողեր ու շատ արտօնութիւններ տալով, բնակեցնում են Ռուսաստանի հարաւային մասերում Նոր-Նախիջևան, Դղլար, Մոզդուկ, Աստրախան և այլն:

XVIII-րդ դարի վերջերին միայն ուսները մի շարք պատերազմներ են սկսում նախ պարսիկների

և այս օսմանցիկների դէմ և միմեանց յեանից հետըզ-
հետէ գրաւում Հայաստանի մի քանի նահանգները:
Այդ ժամանակ նրանք, վրաց վերջին Գիորգի XII-րդ
թագաւորի խնդրանք գրաւում են և Վրաստանը:

Այսպէս՝ պարսիկների հետ ունեցած վերջին
պատերազմով, ռուսները գրաւում և աէր են գաւ-
նում Հայաստանի այն մասին, որ գտնւում է Արաքս
և Գուր գետերի միջև, այն է՝ Երևանի և Գանձակի
նահանգներն ու ամբողջ Ղարաբաղը (1827 թ.):

Օսմանցիկներից էլ նրանք առնում են Ախալցխան
և Ախալքալաքը՝ իրանց շրջակայ գիւղերով (1828
թ.) ու Գաւսի ընդարձակ շրջանը (1877 թ.):

Այսպիսով Հայաստանը XIX-րդ դարի մէջ երեք
մասի է բաժանւում, Մեծ Հայքի մեծագոյն մասը և
ամբողջ Փոքր Հայքը Յոււսում են օսմանցիկների տիրա-
պետութեան տակ, Մեծ Հայքի երկրորդ մասը անց-
նում է ռուսների ձեռքը, իսկ նորա երրորդ և ամենա-
փոքր մասը՝ Յոււսում է պարսիկներին:

Թէ պարսիկների և թէ օսմանցոց հետ եղած բո-
լոր պատերազմների ժամանակ, հայերը բազմաթիւ
ծառայութիւններ ու մեծ աջակցութիւն են ցոյց
տալիս ռուսներին: Բացի այն, որ նրանք ամեն տեղ
առւսաց զօրքերի համար ուղեցոյցների դեր էին կա-
տարում, բազմաթիւ կամաւորներ էլ, մտած առւսաց
բանակի մէջ, անձնւիրաբար կռւում էին իրանց վա-
ղեմի Եղնամիկների դէմ: Վերջին ռուս-պարսկական
պատերազմի ժամանակ շատ մեծ դեր է կատարել
ու մեծ ծառայութիւններ մատուցել ռուսներին՝
այն ժամանակւայ Վրաստանի հայոց առաջնորդ
(վերջում կաթողիկոս) Ներսէս արքեպիսկոպոս
Աշաբակեցին: Այդ բարձրաստիճան հոգևորականը,

առևտաց բանակի գլխաւոր հրամանատար Պարսկելիչի հետ միացած, ձիու վրայ նստած և խաչը ձեռքին՝ առաջնորդում էր հայ կամաւորների զօրագունըր։ Նա շարունակ յորդորում էր հայերին՝ իրանց ձեռքից եկած օգնութիւնը չը խնայիլ ուսններին։

Թէ ուսւ-պարսկական և թէ ուսւ-թրքական պատերազմների միջոցին, առևտաց բանակում ծառայութեան մէջ էին գտնուում շատ հայ զօրավարներ։ Դրանք իրանց քաջութեան և պատերազմական տաղանդի շնորհով, առևտաց նշանաւոր զօրավարների շարքն են դասուում։ Բարձրաստիճան այդ հայ զօրավարներն էին՝ իշխաններ Մադաթեան, Լօրիս-Մելիքեան, Շողիով-նիկեան, Լազարեան, Տէր-Ղուկասեան և ուրիշներ։

Հայերի կողմից ուսններին ցոյց տւած օգնութիւնն ու աջակցութիւնը սաստիկ գրգռում ու կատաղեցնում է թէ պարսիկներին և թէ օսմանցիներին։ Նրանք սկսում են թշնամարար վերաբերել հայերին և խիստ հալածանքներ են հանում նրանց դէմ։

Այդ հալածանքներից ազատելու և քրիստոնեայ ու քաղաքակիրթ Ռուսաստանի տիրապետութեան տակ հանգիստ կեանք վարելու համար, բաղամթիւ հայեր գաղթում են Հայաստանի ուսնական բաժինը։ Այդ գաղթականութիւնների շնորհով առևտական Հայաստանի հայ բնակչութիւնը հետզհետէ բաղամանում է։

Այսպէս 1827 թւականի ուսւ-պարսկական պատերազմից յետոյ, Պարսկաստանից առևտաց սահմաններն են գաղթում աւելի քան 40,000 հայեր։ Դրանք բնակութիւն են հաստատում Նախիջևանի և Երևանի գաւառներում։ 1828 թւականի ուսւ թրքական պատերազմից յետոյ, Թուրքիայից նոյնպէս առևտական սահմաններն են գաղթում 90,000 հայեր, որոնք վե-

բարնակում են Ախալցխայի և Ախալքալաքի դաւառ-
ներում. թիւրքիայից մեծ բազմութիւն էլ գաղթել է
1877 թ. պատերազմից յետոյ, որոնք մեծ մասամբ
բնակւել են Կարսի և Երևանի շրջաններում:

ՌՈՒՍԱՀԱՅՔ

Հայերը երեք տարբեր քաղաքակրթութիւն ու-
նեցող ազգերի տիրապետութեան աակ ընկնելուց
յետոյ. իրանց բարեկեցութեան, զարգացման ու քա-
ղաքակրթութեան աստիճանով սկսւած են հետզհետէ
միմեանցից բոլորովին տարբերուել:

Հայ ազգի այդ երեք հատւածներից համեմատա-
բար շատ աւելի բախտաւոր վիճակ էին վայելում
քաղաքակրթ Ռուսաստանի բաժնում ապրող հայերը:
Արանք կեանքի և ստացւածքի ազահովութիւն վայել-
ելով. անձնատուր են լինում խաղաղ աշխատանքի և
կարճ ժամանակի մէջ բարեկեցիկ դրութեան են հաս-
նում: Այդ բանին շափազանց նպաստում է և այն,
որ ուսաները Կովկասին, ինչպէս և Անդրկովկասի
հայկական նահանգներին տիրանալով, հաղորդակցու-
թեան յարմար միջոցներ են հաստատում (հեռագիր,
երկաթուղի և խճուղի): Այդպիսով ազգաբնակչութեա-
նը միջոց է տրոււմ իր արդիւնաբերութիւնն ու վա-
ճառականութիւնը զարգացնելու:

Հաղորդակցութեան այդ յարմար միջոցների
շնորհով, ուստաց տիրապետութեան օրով, Կովկասի
առևտուրն և արդիւնագործութիւնը այնպիսի մեծ
չափերի են հասնում, որպիսին երբէք չէր եղել նա-
խորդ դարերում:

Ենորհիւ այն հանգամանքի, որ Կովկասի քաղաքներից ամենից առաջ վրաց նախկին մայրաքաղաք Քիֆլիսն էր երկաթուղիով կապուել մայր-Ռուսաստանի հետ, հէնց Քիֆլիսն էլ ամենից շուտ է զարգացել ու բազմամարդ դանձել: Հայերը, իրրև առևարական գործերի մէջ խիստ հմուտ ժողովուրդ, շատ վաղ գնահատելով Քիֆլիսի գիրքը. մեծ բազմութեամբ գանազան գուստներից տեղափոխուել ու այնտեղ էին հաստատուել: Քիֆլիսը ամբողջ Կովկասի, ինչպէս և բոլոր ռուսահայերի, թէ՛ առևարական և թէ՛ մանաւանդ մտաւոր կենտրոն էր դարձել:

Այդ հանգամանքը ներսէս աշտարակեցին շատ լուր մտնելով, Քիֆլիսում առաջին անգամ (1824 թ.) հիմնուեւ է մի միջնակարգ դպրոց, որն իր անու-նով կոչուեւ է Ենրսիսեան հոգևոր դպրոց, որը ապա-հովուած էր հարուստ կալւածներով:

Ներսիսեան դպրոցը հիմնուելուց մօտ տաս տարի առաջ, Մօսկուայում բացուել էր մի այլ հայկական ուսումնարան, ուր նոյնպէս բազմաթիւ հայ մանուկներ միջնակարգ կրթութիւն էին ստանում: Այդ ուսում-նարանն էլ իր հիմնադիր Յովակիմ Հազարեանի ա-նունով կոչուեւ էր Հազարեան ճեմարան: Աւելի ուշ (1874 թ.), էջմիածնում, Գէորդ IV կաթողիկոսը հիմնուեւ է մի հոգևոր ճեմարան, որ իր անունով կոչուեց Գէորգեան ճեմարան:

Ռուսահայերի լուսաւորութեանն ու բարգաւաճ-մանը շափազանց նպաստուեւ են մանաւանդ ռուսաց պետական ուսումնարանները, մամուլն ու գրականու-թիւնը: Կովկասն ու Անդրկովկասը նւաճելուց յետոյ, ռուսները այդ երկրի համարեւա թէ՛ բոլոր քաղաքնե-

բում հետզհետէ մի շարք գիտնագիտններ և այլ միջնակարգ երկու նիւթի ուսումնարաններ են հիմնում: Այդ ուսումնարաններում բազմաթիւ հայ աշակերտներ իրանց կրթութիւնը վերջացնելուց յետոյ, գնում են Ռուսաստանի համալսարաններն ու այլ բարձրագոյն դպրոցները՝ իրանց ուսումը շարունակելու: Թէև ուսական ուսումնարաններում սովորած հայ երիտասարդներից շատերը այլասեւուում և խորթանում էին հայ կեանքից, բայց շատերն էլ եւրոպական գիտութիւններով օժտւած հայրենիք էին վերադառնում և շափազանց մեծ զարկ տալիս իրանց ժողովրդի առաջադիմութեանն ու լուսաւորութեան գործին:

Այդ բոլոր ուսումնարաններում աւարտած երիտասարդներն են գլխաւորաբար, որ հիմք են դնում ու զարգացնում ուսուսանայց մամուլն ու գրականութիւնը:

Ռուսահայ շատ գրականագէտներ էլ, որոնք հնարաւորութիւն չեն ունեցել համալսարանական ուսում ստանալու, ինքնակրթութեամբ են զարգանում ուսական մամուլի ու գրականութեան միջոցով, որը շափազանց ճոխ ու հարուստ է թէ ինքնուրոյն և թէ թարգմանական գրածքներով:

« Գ օ յ Ե ժ Ե Ն Ի ա »

Սրեանեան նահանգին ու Վաղարշապատին տիրանալուց յետոյ, ուր գտնւում է հայոց կաթողիկոսական մայր-աթոռը, ուսաց կառավարութիւնը յատուկ կանոններ է մշակում ուսուսանչերի եկեղեցական և այլ գուտ ազգային գործերը վարելու համար (1836 թ.): Այդ կանոնադրութիւնը կոչւում է ու-

սերէն լեզուով Պօլօժենիա:

Պօլօժենիայի գորութեամբ էջմիածնում հաստատուում է բարձրագոյն մի հոգևոր ատեան՝ Սինոդ, որի բոլոր ութ անդամներն էլ հոգևորականներ պէտք է լինէին, նշանակւած կաթողիկոսի կողմից և հաստատւած կայսրից: Սինոդում կար նաև մի յատուկ պաշտօնեայ՝ սրբօրորը, նշանակւած ներքին գործերի մինիստրի կողմից, որը հսկում էր թէ կաթողիկոսի և թէ Սինոդի գործողութիւնների վրայ:

Բացի դուռ կրօնական ու դաւանաբանական խնդիրներից, որոնց վերջնական վճիռը կաթողիկոսին էր վերապահւած, միւս բոլոր եկեղեցական, դպրոցական ու կալւածական գործերը վաւրում էր Սինոդը:

ՌՌՌՍԱՅ ԼԱՅԱՆԱԼԱԾ ՔԱՆԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՈՒ և ՆԻԿՈՂՈՍ ԻԿԱՏՄՐՆԵՐԻ ՕՐՈՎ

Անդրկովկասը նւաճելուց անմիջապէս յետոյ ուսւմ միտպիսութեան դէպի նւաճած ազգերն ունեցած բարեացակամ վերաբերմունքը մինչև Ալեքսանդր ՍՈՒ-ի թագաւորութիւնն է շարունակուում (1881 - 1893 թ.), Բոլոր օտար ազգի հպատակներին, ինչպէս և հայերին ոտուացնելու քաղաքականութիւնը, այդ ժամանակից սկսում է աւելի ուժեղանալ կառավարութեան մէջ: Հայոց լիզուն սկսում է հալածել: Նրա դատարան-գութիւնը կովկասի պետական դպրոցներից համարեա թէ դուրս նետուեց իսպառ: Այդ դպրոցներն աւարտող

հայ երիտասարդները համարեա թէ անզրագէտ էին
 Թուրք մայրենի լեզուի մէջ և միանգամայն անտեղեակ
 հայ գրականութիւնից:

Մայրենի լեզուն սովորում էին միայն հայոց
 ծխական ու թեմական դպրոցներում: Գէորգ Է. բո-
 կաթողիկոսի մահից յետոյ, երբ հայրապետական գա-
 նը դեռ թափուր էր, Ալեքսանդր III-ի կառավարու-
 թիւնը փորձում է իսպառ զրկել ուսանալիքին այդ
 գանձից էլ: 1884 թ. սկիզբներին կայսերական հրա-
 մանով փակոււմ են բոլոր հայոց ծխական դպրոցները:
 Թեմական դպրոցներին ձեռնաձուլա չէին եղել այն
 պարզ հաշուով, որ ծխական դպրոցներ չը լինելով,
 նրանք ինքնաբերական պիտի փակուէին, որովհետև
 այս վերջիններին աշակերտութիւն մատակարարողը
 զլիաւորաբար ծխական դպրոցներն էին:

Փակուած դպրոցները վերաբացեցին Մակար կա-
 թողիկոսի գերագոյն ջանքերով միայն, և այն էլ փո-
 փոխուած ծրագրով: Վերաբացուած դպրոցներում պար-
 տաւորեցուցիչ էին դառնում ուսուցիչ լեզու ու պատ-
 մութեան աւանդումը: Բացի զրանից՝ դպրոցները
 ուսուցիչ կրթական վերատեսչութեան հսկողութեան
 աակ էին առնուում:

Միագեղտութեան հայահալած քաղաքականութիւ-
 նը դրանով չի վերջանում: Ալեքսանդր III-դի գահա-
 կալութեան օրով պետական պաշտօնէութեան բոլոր
 ասպարէզներից հետզհետէ դուրս են հանուում հայե-
 բը ու նրանց անդ ուսաներ, վրացիներ և թուրքեր նը-
 շանակուում:

Ալեքսանդր III-դից յետոյ գալիս է Նիկոլա II-դի
 թագաւորութիւնը: Սրա օրով, թուրքիայում հայ ա-
 պստամբական շարժումներ են սկսուում: Ու երբ այդ

չարժումները հետևանքով, եւրոպական պետութիւն-ները կողմից միջամտութեան նշաններ են սկսում երեւոյ յօդուտ հայկական դատի, ուստաց կառավարութիւնը՝ մինչ այդ ժամանակ չը տեսնուած հայաժանք է սկսում հայ յեղափոխականների դէմ (1895 և 1896 թ.), Բաղձաթիւ ձերբակալութիւններ են տեղի ունենում ամբողջ Կովկասում: Ձերբակալում էին թէ հնչակեաններ և թէ դաշնակցականներ: Ձերբակալածները մի-երկու տարի բանտում պահելուց յետոյ, մասամբ աքսորւեցին գանազան վայեր:

Այս դէպքերից յետոյ, միապետական կառավարութիւնը նորից իր՝ հայկական դպրոցներն իսպառ փակելու՝ նախկին ծրագրին է վերադառնում: Այս անգամ իւրում են հայոց բոլոր դպրոցապետական և այլ ազգային կալւածները (1903 և 1904 թ.): Այդ ժամանակայ Խրիմեան Մկրտիչ կաթողիկոսի բոլոր ջանքերը, ինչպէս և հայ ժողովրդային իւրաւումներն ու ցոյցերը՝ այդ ապօրինի դրամումը թոյլ չը տալու նպատակով ի դերս են տեցնում: Յայտնի չէ, թէ ինչով կը վերջանար այդ հարցը, եթէ ուստիսպոնական պատերազմը չը սկսէր (1904 թ.): Պատերազմը վե շոցաւ Ռուսաստանի խայտառակ պարտութեամբ, որի հետևանքով յեղափոխական ուժեղ շարժումներ սկսեցին Ռուսաստանի զխաւոր քաղաքներում (1905 թ.): Յանկարձակիի եկած Նիկոլա II կոյսրը շտապից զիջումների ճանապարհը բռնելու Ռուսաստանը սահմանադրական երկիր յայտարարեց. ստեղծեց պետական դումա՝ Ռուսաստանի օրէնսդիր ժողովրդ: Նիկոլա II-դի արած զիջումներից մէկն էլ հայերից զբաւած ազգային և դպրոցական կալւած-

ների վերադարձն էր:

Սկսւած յեղափոխական շարժումների ժամանակ, միապետութեան ճարտիկ կառավարիչները կովկասում, խանդարելու համար այս երկրի բնակիչների մասնակցութիւնը սկսւած յեղափոխութեանը, մի դիւալին միացնեն յղանում: Նրանք մեծ վարպետութեամբ հայ—թուրքական հակամարտութիւններն են հրահարում, որի հետեանքով կատաղի ընդհարումներ են սկսւում երկու հարեան ազգերի միջև ամբողջ կովկասում: Այդ ընդհարումները, որ երբեմն իսկական պատերազմի կերպարանք էին ընդունում, տեսցին մօտ մի տարի, որոնց ամբողջ ընթացքում ոուս քաղաքացիական ու զինւորական պաշտօնեաները հանդիսատեսի կամ հաշտարարի դերի մէջ էին աշխատում երևալ միշտ:

Երկար չի տևում Ռուսաստանի ճնշւած ժողովուրդների ցնծութիւնը ձեռք բերած ազատութիւնների առիթով: Միապետութիւնը շուտով ուշքի է դալի անակնկալ յեղափոխութիւնից յետոյ և նորից ամբացնում է իր դիրքերը:

Եւ օրանից հազիւ 3 տարի անցած, նա կրկին անգամ իր հայահալած քաղաքականութեանն է վերադառնում: Այս անգամ հալածւում է բացառապէս Կ. Յ. Բաշնակցութիւնը, որպէս այդ ժամանակւայ ամենագորեղ յեղափոխական ազգային կուսակցութիւնը: Բանտերը լրւում են հազարաւոր ձերբակալածներով հայ հասարակութեան բոլոր խաւերից: Ձերբակալւում են ամենաակամուտը հայ հասարակական ու զրական գործիչներ: Գործի ցնծութիւնն

ու գառավարութիւնը Պեհերբուրգում տնում է 3 տարի, որից յետոյ բազմաթիւ մարդիկ աքսորի ու բանտարկութեան են դառնապարտուում:

ԹԻԻԲԱՀԱՅԲ

Բարեկեցութեան ու լուսաւորութեան կողմից Հայաստանի օսմանեան բաժնոււմ ապրող հայութիւնը բոլորովին այլ կացութեան մէջ էր գտնուել:

Այդ երկրում հայը, տեղական օրէնքի համաձայն, մահմեդականի հաւասար քաղաքացի չէ համարուել, այլ մի սրայաւառ—հպատակ: Բայան ոչ միայն մահմեդականի համահաւասար իրաւունքներ չէր վայելում, այլ և նրա ամբողջ ստացւածքն ու կեանքը մահմեդականի սեփականութիւն են ճանաչուել:

Ասեն մի օսմանցի, եթէ մանաւանդ նա պետական պաշտօնեայ էր, կարող էր անպատիժ կերպով լափշտակել հայի ամբողջ կարողութիւնը և նրան կատարեալ սովի մատնել:

Հայաստանի օսմանեան մասում ոչ միայն նոր և յարմար հաղորդակցութեան ճանապարհներ չէին շինուել, այլ և տիրող կառավարութեան կատարեալ աննոգութեան պատճառով, հին ժամանակներում շինուած ճանապարհներն էլ քայքայուել ու անպէտքացել էին: Քանդուել և ոչնչացել էին նոյնպէս այն բոլոր ջրանցքները, ջրամբարներն ու անտառները, որոնք մի ժամանակ մեծ ծառայութիւն էին մատուցանում երկրի բերրութեանը:

Դրա հետևանքն այն էր եղել, որ այդ երկրում մի ժամանակ ծաղկած արդիւնաբերութիւնը, արհեստ-

ներն ու վաճառականութիւնը սաստիկ ընկել էին. իսկ ժողովուրդն էլ վերջին ծայր աղքատութեան էր մասնուել:

Ծայրայեղ աղքատութիւնից. կառավարչական հալածանքներից ու թափառաշրջիկ քիւրդ ցեղերի բարբարոսութիւններից ազատուելու համար, հայերը յաճախ ստիպւած էին, մեծ բազմութեամբ գաղթել օտար երկիրներ: Գաղթականութիւնների շնորհով Հայաստանի հայ բնակչութեան թիւը հետզհետէ սաստիկ նւազել էր, իսկ գաղթականներն էլ իրանց նոր հայրենիքում, ժամանակի ընթացքում, լուծուել են իրանցից շատ աւելի զարգացած ազգերի մէջ և կորցրել մայրենի լեզուն և ազգութիւնը:

Կրթութեան ու լուսաւորութեան կողմից էլ թիւրքիան չափազանց յետ էր, մնացել:

Օսմանցիք թէև Կոստանդնուպոլսում մի համալսարան և մի քանի հատ էլ միջնակարգ ուսումնարաններ ունէին, բայց դրանք թէ շատ վատ էին դրուած և թէ շատ քիչ էին մատչելի քրիստոնեաների համար:

Կանոնաւոր ուսումնարաններից գուրկ էին նաև թիւրքահայերը: Նրանց մէջ ուսումնարանական գործը, գրականութիւնն ու մամուլը կարողացել էին զարգանալ, հայկական գաւառներից հեռու ընկած՝ Կոստանդնուպոլսում և Ջմիռնիայում միայն:

Ինչ շատ հին ժամանակներից այդ կողմերը գաղթած հայերը բաւականին պատկառելի թիւ էին կազմել: Օսմանեան սուլթանները չը վախենալով այդ՝ իրանց բնիկ հայրենիքից կտրւած՝ հայերի ապստամբական ձգտումներից, միշտ աւելի մեղմ աչքով էին նայում նրանց վրայ և շատ էլ մեծ հալածանքների

չէին ենթարկում, Բացի դրանից՝ ծովային ամենափառաւոր հաղորդակցական միջոցներով կապւած լինելով եւրոպական երկրների ու ազգերի հետ, այդ հայ գաղթականները կարողացել էին համեմատաբար թէ բարւոյք վիճակ ունենալ և թէ աւելի կրթւել ու զարգանալ:

Թիւրքահայերի առաջին միջնակարգ դպրոցը, սճեմարանն ս. Երուսաղիմայք անուանով, հիմնուել էր կոստանդնուպոլսում (1838 թ.):

Աւելի ուշ նրա փոխարէն բացւել էր սկենդրոնական վարժարանը, որը նոյն դերն էր կատարում թիւրքահայերի համար, ինչ գեր կատարում էր ներսիսեան դպրոցը ռուսահայերի համար:

Թիւրքահայերի ամբողջ զբաղանդութիւնն ու մամուլն էլ զլիսաւորաբար այդ քաղաքներում էին կենտրոնացած:

Թիւրքահայ երիտասարդները իրանց բարձրագոյն կրթութիւնն ստանում էին եւրոպական համալսարաններում: Սակայն նրանք չէին կարողանում շատ էլ պիտանի լինել հայկական գաւառների համար: Լաւ ճանապարհների բացակայութիւնն ու երկրի այլ պայմանները հարկադրում էին ուսումնաւարտ շայաստանցի երիտասարդներին անգամ՝ հետաւոր կոստանդնուպոլսում հաստատուել և այդպիսով կտրուած մնալ մայր-հայրենիքից:

Ազգային սահմանադրութիւնը

Թէև օսմանցիք կողմնակի կերպով ամեն միջոց գործ են գրել իրանց հպատակ հայերին Իսլամի կրօ-

նին դարձնել, բայց և այնպէս տէրութեան օրէնքնե-
րով թիւրքիայի քրիստոնեաները յայտնի չափով կրօ-
նի ազատութիւն են վայելիլ: Հայերին էր վերապահ-
ւած իրանց կրօնական բոլոր գործերի վարչութիւնը:

Դեռ XV-րդ դարում, օսմանեան Մեհեմէդ II-րդ սուլթանը մտածում է իր հպատակ հայերին անջա-
տել պարսից իշխանութեան տակ գտնուող կաթողիկո-
սի ազգեցութիւնից: Այդ նպատակով նա Բրուսայի
առաջնուղ Յովակիմ եպիսկոպոսին կոստանդնուպոլսի
հայոց պատրիարք է նշանակում և իր հպատակ հա-
յերի բոլոր հոգևոր և ազգային գործերի անօրինու-
թիւնը նրան յանձնում (1461 թ.):

Այդ ժամանակից ի վեր օսմանեան հայերի ներ-
կայացուցիչն ու հոգևոր պետը պատրիարքներն են
հանդիսանում:

Պատրիարքները ընտրւում էին թիւրքահայերի
կողմից և ապա հաստատւում սուլթանից: Պատրիարք-
ները ամենայն հայոց կաթողիկոսին չին ենթարկւում,
բացի զուտ դաւանաբանական խնդիրներից: Նրանք
էին հստատառւած ամբողջ թիւրքիայի հայկական թե-
մերի համար ընտրւած թեմական առաջնորդներին:

Մինչև XIX-րդ դարի կէսերը պատրիարքները
իրանց անօրինութեան յանձնւած գործերը վարում
էին պոլսարնակ մի քանի հայ ամիրաների մասնակ-
ցութեամբ:

Ամիրաներ կոչւում էին նրանք, որոնք մեծ հա-
բրատութեան տէր էին և մեծ կապեր ունէին զանա-
զան թիւրք փաշաների հետ: Դրանք հայ ազգի
մեծամեծներն էին համարւում:

Այդ հարուստ ամիրաները, ի շարք գործ դնելով
իրանց ունեցած դիրքն ու կապերը, երկար ժամանակ

իրանց ձեռքում խաղայիք էին դարձրել թէ պատ-
րիարքներին և թէ բոլոր ազգային և եկեղեցական
գործերը: Այդ բանը ահագին խռովութիւններ է ա-
ռաջացնում ժողովրդի ստորին խաւերում, գլխաւո-
րաբար արհեստաւորների մէջ: Երկար մտառումից
յետոյ, այս վերջիններին յաջողում է, վերջապէս,
ազգային գործերի վարչութիւնն ամիրաների ձեռքից
խլել ու ժողովրդից ընտրւած մարդկանց յանձնել:

Կառավարութեան թոյլաւութեամբ հաստատուում
է 140 անձերից բաղկացած մի ժողով (1860 թ.),
որը կոչւում է Ազգային ժողով և որը վարում էր
թիւրքահայերի բոլոր եկեղեցական և ազգային գոր-
ծերը:

Ազգային ժողովն իր միջից ընտրում էր երկու
վարչական մարմիններ, Կրօնական և Բարոյական ժո-
ղովները:

Կրօնական ժողովը վարում էր թիւրքահայերի
կրօնական գործերը, իսկ քաղաքական ժողովի ան-
բնութեան էին վերապահւած՝ կրթական, անտեսա-
կան, բարեգործական ու դատաստանական գործերը:
Այդ երեք ժողովների էլ նախագահը պատրիարքն էր:

Սահմանադրութեան համաձայն, նոյն ձևով ազ-
գային երեսփոխանական ժողովներ գոյութիւն ունէին
նոյնպէս և գաւառներում, որոնց նախագահում էին
թեմական առաջնորդները:

ՊԱՐՄԿԱԼԱՅՔ

Պարսկահայերը ընդհանուր հայութեան փոքր
մասն են կազմում: Լիւսիսային Պարսկաստանի, կամ

Ասրպատականի հայ բնակչութիւնը, որ զիստօրաբար կհրարնացած է Քարիզ քաղաքում և Սալմաստ, Խոյ, Ղարաղաղ, Մակու և Ուրմի գաւառներում, բնիկներ են այն հին ժամանակներից ի վեր, երբ այդ երկիրը բնդարձակ Հայաստանի մի մասն էր կազմում։ Հարաւային Պարսկաստանի հայութիւնն է, որ շահ Արասի որով գաղթեցել է Արաքսի միւս կողմից։ Սրանց վերաբնակեցրել էին զիստօրարար Սպանանի շրջանում։ Նոր Ջուղա քաղաքում և իր շրջակայ գիւղերում։ Յետագայում այս հայութիւնը տարածել է հարաւային Պարսկաստանի համարեա թէ բոլոր քաղաքներում։ Թէհրան, Կազին, Համազան, Ռեշտ և այլն։

Ձը նայելով շահ Արասի ու իր յետնորդ համարեա թէ բոլոր շահերի խիստ քարեացակամ վերաբերմունքին զէպի իրանց հպատակ հայերը ու նրանց աւած մի շարք առեւտրական և այլ արտօնութիւններին, պարսկահայերն այնուամենայնիւ անկարող են եղել քաղաքակրթական թռիչքներ գործել իրանց երկրում։ Պարսկաստանի վերջին ձայր յետամնացութիւնը, կենտրոնական կառավարութեան անկազմակերպ վիճակը, աւատական խաների ու քիւրդ բէկերի կամայական հարստահարութիւններն ու բռնութիւնները, կանոնաւոր ճանապարհների կատարեալ բացակայութիւնը և պարսիկ ժողովրդի շափազանց տղէտ մուկանդութիւնը ստիպել են պարսկահայերին շարունակ, իրանց հայրենիքը թողած, ուրիշ երկրներ գաղթել։

Թէև այնօրեան Պարսկաստանում ծաղկած վաճառականութեան ու արհեստների մեծագոյն մասը — գերձակութիւն, կոշիկակարութիւն, հիւանդութիւն, պայտառութիւն, փականակազործութիւն, սկիւրչութիւն,

ժամագործութիւնն և այլն — հայերի միջոցով է զագրացիլ ու տարածուել, բայց և այնպէս ապէտ ու ժողովեանց պարսիկ ժողովրդի աչքում հայը միշտ պարզ գեամուրք է համարուել: Հային թոյլ չէ տրուել ոչ մի ուսելիք վաճառելու կամ արդիւնագործելու: Հայը չէ կարող հացավաճառ, մսավաճառ, նպարավաճառ, կաթնասանահա և այլ լինել: Հայի պատրաստած օճառն ու կաշին անգամ շուկայում չեն գնուում, որպէս սլիղծ ապրանք:

Պարսկահայերը դաղթել են երեք ուղղութեամբ: Հիւսիսային Պարսկաստանից դաղթողները գնացիլ են գլխաւորաբար Կովկաս և հաստատուել մեծ մասամբ Երևանի և Նփոխիջևանի շրջաններում: Հարաւային Պարսկաստանից դաղթողները գնացիլ են գլխաւորաբար Հնդկաստան և ասիական կղզիները: Բոմբէյի, Կալկատայի, Մինգապուրի և այլ ասիական մեծ քաղաքների այօրայ հալ բնակչութիւնը համարեա թէ լացառապէս Նոր Զուղայի շրջանից դաղթած հայերի սերունդներն են: Պարսկահայերի մի փոքր մասն էլ Թէհրանի ու Թեշտի շրջանից գնացիլ Բագու է հաստատուել:

Պարսիկները մինչև վերջին ժամանակները ոչ միայն համալսարան կամ միջնակարգ դպրոց, այլ և ամենատարրական քաղաքացիական ուսումնարաններ էլ չուէին, որոնցից հայերն էլ կարողանային օգտուել: Այդ կողմից հայերն աւելի բարձր են եղել տիրող ժողովրդից: Նւաճք համարեա թէ բոլոր հայաշատ քաղաքներում Թաւրիզ, Թեհրան, Նոր Զուղա և այլն — վաղուց ի վեր բարեկարգ ազգային դպրոցներ ունեն երկու սեռի համար էլ, որոնք թէև երկար ժամանակ դեռ հեռու էին միջնակարգ դպրոց լինելուց:

բայց և այնպէս բուսականին նպաստում էին հայ ժողովրդի մէջ ուսում և կրթութիւն տարածելուն: Այս դպրոցների աւարտողները գնում էին իրանց ուսումը շարունակելու կամ Հնդկաստանի անգլիական ուսումնարաններում և կամ Քիֆլիտի ներսիսեան դրպոցում ու էջմիածնի Գէորգեան ճեմարանում: Մօտ 20 տարուց ի վեր, սակայն, թէ Քաւրիզում և թէ Նոր Զուղայում թեմական միջնակարգ դպրոցներ կան արդէն, որտեղից աւարտածները կարողանում են եւրոպական համասարանները մտնել: Այդ նոյն ժամանակաշրջանում բազմաթիւ տարրական դպրոցներ են բացւել նաև Ատրպատականի և Նոր Զուղայի համարեա թէ բոլոր հայաշատ գիւղերում: Պարսականայիբի մէջ զբազիտութիւն տարածելուն շատ նպաստում են նաև Ամերիկեան և Թրանսսական միսիոնարական ուսումնարանները, որոնք մօտաւերապէս 40 տարւայ անցեալ ունեն:

Պարսկահայերի մէջ զբաղանութիւնն ու մամուլը համարեա թէ բոլորովին չեն զարգացել. նրանք իրաց մտաւոր անունդն ստանում են բուսական և պոլսական գրականութիւնից:

Պարսկահայերը շատ հին ժամանակից ի վեր կրթոնի կատարեալ ազատութիւն են վայելում. հայ ժողովրդին է վերապահւած իրանց կրօնական, դպրոցական ու միջնակարգ դատական գործերի անօրինութիւնը:

Պարսկահայերի ամբողջ վիճակը երկու թեմի է բաժանւած, որոնց թեմական տաղնորդները մինչև ներկայ դարի սկիզբները նշանակւում էին ամհնայն հայոց կաթողիկոսից և յիսգօր էին ինքնազուխ վարելու բոլոր գործերը: Այս դարի սկզբներից, սակայն,

Ատրպատականի թեմի առաջնորդ Աղիշէ Մուրադեան վարդապետը միաք է յղանում մի թեմական խորհուրդ ստեղծել Ատրպատականում: Կանոնագրութիւն է մըշակում և ուղարկում Խրիմեան Մկրտիչ կաթողիկոսին հաստատելու: Կաթողիկոսը հաստատում է, և այն ժամանակից ի վեր թեմական խորհուրդն է, որ թեմակալ առաջնորդների նախագահութեամբ վարում է Ատրպատականի բոլոր կրօնական, գաղութական և այլ ներքին գործերը: Շատ ժամանակ շանցած, Ատրպատականի օրինակով, Նոր-Ջուղայի թեմումն էլ է թեմական խորհուրդ կազմւում:

Թեմական խորհուրդների անդամները ընտրւում են թեմական պատգամաւորների ժողովի կողմից, որ տեղի է ունենում 4 տարին մի անգամ: Թեմական խորհրդի անդամների թիւն է Ատրպատականում 8, իսկ Նոր-Ջուղայում 9, որոնցից երկուսը - թեմական առաջնորդն ու իր տեղապահը ի պաշտօնէ են, իսկ 6-ը և 7-ը ընտրւածներ:

Նոյն թեմական ժողովներն են, որ լիազօրութիւն ունեն ընտրելու և հրաժարեցնելու թեմ. առաջնորդին որ յետոյ կաթողիկոսի հաստատութեանն է ներկայացւում:

1908 թւականին Պարսկաստանի մի քանի քաղաքներում ժողովրդական ապստամբութիւն պայթեց տիրող աւատական կարգերի դէմ: Քաղաքացիական կռիւները ապստամբ ժողովրդի ու կառավարական զօրքերի միջև մի քանի տարի տևեցին: Ապստամբներին ղեկավարողների թւում կային նաև մի քանի յիզափոխական հայեր, որոնցից մէկը նամանաւանդ՝ Սփրեմ Ալիբէկեանը մեծ քաջութիւն և հատութիւն ցոյց աւեց այդ կռիւներում: Սփրեմը կովկասցի էր, Կու-

կունեանի յարտնի ասպատակային խմբի անդամներէց: Թուս կառավարութեան կողմից նա, ինչպէս և Կու- կունեանի բռնած ամբողջ խումբը աքսոր էր ուղարկել Սախալին կղզին: Այդտեղից Եփրեմը մի քանի ընկերներով փախել և Պարսկաստան էր ասպատանել: Պարսկական ապստամբութիւնը սկսելուն պէս, նա կամաւորական մի խումբ է կազմակերպում հայերից և կուրի նեաւում:

Եփրեմն էր, որ ամենաուժեղ և զխաւոր հարածը հասցրեց Մանսեղ-Ալի շահի զօրքերին, և շահը արտասահման փախաւ: Իր ղրկւորական ու վարչական ընդունակութիւններէ շնորհիւ, նա կառավարչական բարձր դիրք ստացաւ, և ընդ. ստեղծանապետի պաշտօն յանձնեց նրան Պարսից մայրաքաղաքում: Եփրեմը սակայն, հրկար չը վայելից իր բարձր դիրքը. տաք կռիւներից մէկում, ճակատից գնդակ ստանալով, ըսպանեց նա (1911 թ.):

Կուրները վերջացան ապստամբների յաղթութեամբ: Մանսեղ-Ալի շահը զահրնկեց յայտարարեց և փոխարէնը՝ շահ յայտարարեց նրա որդին՝ Ամեղ-Միրզան, բայց ոչ նախկին շահերի ինքնակալ իրաւունքներով: Պարսկաստանը սահմանադրական երկիր յայտարարեց, որի գերագոյն իշխանութիւնը ժողովրդի քննիչով ընտրւած պատգամաւորական օրէնսդիր ժողովն է — Մեջլիսը. որ բաղկացած է 136 պատգամաւորներից:

Արանք ընտրոււմ են երկու տարւնը մի անգամ: Մեջլիսում երկու տեղ է լատկացւած հայ պատգամաւորներին, որոնցից մէկը ընտրոււմ է Ատրպատականի, իսկ միւսը՝ Նոր Զուղայի թեմերից:


Սահմանադրական կարգեր հաստատուելուց յետոյ, Պարսկաստանը քաղաքակրթական ուղիի վրայ ոտք

դրեց և սկսեց հեռագհեռէ բարեկարգել ու առաջադի-
մել: Այժմ այդ երկրում բուսականին մեծ թւով բու-
սորին ու միջնակարգ քաղաք-ցիական ուսումնարան-
ներ են բացուել ու դեռ շարունակուում են բացուել, որ-
տեղ եւ բուսական ոխտեղում գիտութիւններ են ա-
ւանդուում: Թէ՛հրանում կայ համալսարան և զինւո-
րական դպրոց: Առաջադիմական մեծ զարկ են ստա-
ցել պարբերական ու ոչ պարբերական մամուլն ու
գրականութիւնը: Ստեղծուած է լաւ մարզուած զօրք,
լաւ կրթուած սպաներով: Այդ իսկ զօրքի շնորհով կենտ-
րոնական իշխանութիւնը գորեղացուած է և աւտա-
կան խաների բոլոր նախկին կամայտականութիւններին
վերջ են տրուած, երկիրը միանգամայն մաքրուած է
աւազակներից: Ճանապարհները կարգի են բերուում
և նորերը շինելու, ինչպէս և հանքային հարստութիւն-
ները շահագործելու ծրագիրներ են կազմուում:

1925 թ. վերջերին մի-համարեա թէ անարիւն-
յեղաշրջում էլ տեղի ունեցաւ Պարսկաստանում: Վա-
ղուց այտուեում և միշտ պահպանողական-աւատա-
կան կարգերի կողմնակից կաշարների թագաւորական
տոհմը գահընկեց յայտարարուեց ընդ միշտ, և սահ-
մանադիր ժողով գումարուեց 1926 թ. փետրվարին,
որը Իբրանի նոր շահ յայտարարեց Ռիզա խան Պահ-
լեին:

Ռիզա խանը 1908 թ. յեղափոխութեան շրջա-
նում, Սփրեմի զօրագունդի մէջ ամենապարզ և քաջ
զինւորներից էր եղել: Յեղափոխութիւնից յետոյ,
շնորհիւ իր ընածին հանճարեղ զինւորական ու վար-
չական ընդունակութիւնների, Ռիզա խանը հեռագհեռէ
բարձրացել և զինւորական ու պետական ամենա-
բարձր՝—զինւորական մինիստրի և ապա մինիստրա-

կան նախագահի ու գիկատուորի — պաշտօններին էր հասել: Նա միևնույն ժամանակ Գարուհատանի ազատակիր ու առաջադիմական կուսակցութեան պարագլուխներից էր, և այդ կուսակցութեան ջանքերով ու ժողովրդի բուն խանդավառութեամբ է, որ Իրանի շահ դարձաւ և 1926 թ. Ապրիլի 25-ին հանդիսաւոր կերպով բազմեց Գարսից Կիրոսի ու Իսրէ՛հ Կիշտասպի գահի վրայ, կոչւելով Ռիզա շահ Գահերի:



ՆՈՐԱԳՈՅՆ ԱՆՅՔԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Միայն հայերը չէին, որ տառապում էին Օսմանեան բռնապետութիւնից: Նոյն վիճակի մէջ էին նաև Րայկանեան թերակղզու վրայ տարոյ յոյները, բոսնիացիք, հերցոգովինացիք, բալգարները, սերբերը և սրբիշներ:

Զբ կարողանալով տանել ճնշող լուծը, 19-րդ դարի սկզբներին (1821 թ.) յոյները ապստամբութեան դրօշակ բարձրացրին: Մի քանի տարի տևեց անհաւասար կռիւր, մինչև որ եւրոպական մեծ պետութիւնները—Ռուսիա, Անգլիա և Ֆրանսիա-միջամտեցին և ղէնքի ուժով ստիպեցին թիւրք կառավարութեանը՝ հրաժարուել Յունաստանի վրայ ունեցած իր իրաւունքներից (1825 թ.):

55 տարի լիտոյ, յոյների օրինակին հետևեցին բոսնիացիք, հերցոգովինացիք, սերբերը, բալգարները և Մոնտէ-Նեկրացիք (1676 թ.): Կռիւր դարձեալ կատաղի էր: Այս անգամ Ռուսիան միայնակ միջամտեց ի նպաստ իր ցեղակից ճնշող սլաւոն ազգերի: Ծնշւած սլաւոն ազգերն այժմ մի յարմար պա-

արևակ էին Ռուսաստանի համար, Միջերկրական ծովին մօտենալու՝ իր վաղեմի իղձն իրազործելու :

Նա պատերազմ յայտարարեց թիւրքիսին, յանուն այդ երկրում տառապող քրիստոնեաների (1877 թ.) :

Պատերազմը 10 ամիս տևեց և վերջացաւ թիւրքիսի կատարեալ պարտութեամբ : Ռուսական յաղթական զօրքը Կ. Պօլսին էր մօտեցել և սպանուում էր զբաւել նրան : Թիւրքերը շտապեցին հաշտութիւն խնդրել, որը կայացաւ Սան-Ստեֆանօյում :

Այն ժամանակէս Կ. Պօլսի հայոց պատրիարք Ներսէս Վարժապետեանը և մի քանի բարձր դիրք ունեցող հայ հասարակական գործիչներ, մտածելով, որ այդ ուս-թիւրքական դաշնագրով պիտի թիւրքահպատակ քրիստոնեա ազգերի վիճակը տնօրինուէր, որոշում են՝ ուսական բարձր իշխանութեանը դիմել : Նրանք խնդրում են, որ հաշտութեան պայմանագրով չը մոռանան թիթեացնել և հայ ազգի վիճակը, որը միւս քրիստոնեաներից պակաս չէր տառապում օսմանեան լուծի տակ :

Ռուսները թիւրքիսի հայկական նահանգները զրաւելու առիթը շափուզանց յարմար համարելով, հաշտութեան պայմանների 16 թղ յօդուածը այդ նահանգներին նւիրեցին : Այդ յօդուածով թիւրք կառավարութիւնը պարտաւորում էր՝ տեղական պայմանների համաձայն՝ վարչական բարենորոգումներ մտցնել հայկական վիլայեթներում և ապահովել հայ ժողովրդին քիւրդերի ու չերքեզների յարձակումներից ու կեղեքումներից : Ռուսական զօրաբանակն էլ չլ պիտի հեռանար այդ վիլայեթներից, մինչև որ թիւրք կառավարութիւնը չի բազմուէր իր վրայ վերցրած պարտականութիւնները :

Անդրիան և միւս մեծ պետութիւնները, շատ լաւ հասկանալով, որ Ռուսաստանը կամենում է տէր դառնալ հայկական նահանգներին, թոյլ չը տուցին վերջնական համարել Սան-Ստեֆանօյի դաշնագրութիւնը: Բայր մեծ պետութիւնների վեհաժողով զուգարեց Բերլինում (1878 թ.), ուստիւրկական դաշնագրութիւնը վերաքննելու նպատակով:

Բերլինի դաշնագրով Բուլղարիան, Սերբիան և Մոնտենեգրոն մի-մի անկախ իշխանութիւններ յայտարարեցին: Բոսնիան ու Հերցեգովինան Աւստրո Հունգարիայի հովանաւորութեան տակ գրեցին: Ինչ վերաբերում էր հայկական վեց վիլայեթներին նրանց մասին դաշնագրի 61-րդ յօդուածում կրկնուի էր այն, ինչոր առած էր Սան-Ստեֆանօյի դաշնագրի 16-րդ յօդուածում: Տարբերութիւնը այն էր, սակայն, որ Հայաստանում կատարելիք թիւրք կառավարութեան բարենորոգումները հսկողութիւնը, ոչ թէ միւսիայն Ռուսիային էր թողնուած, այլ նրոպախան բոլոր 6 պետութիւններին:

Դաշնագրի 61-րդ յօդուածի զօրութեամբ, ուստական զօրաբանակն այլեւ իրաւունք չունէր Հայաստանում մնալու, և թիւրքիան էլ ոչնչով չէր պարտաւորոււմ խոտացած բարենորոգումները անպայման կատարելու:

Կ. Պոլսի պատրիարքի կողմից, մի պատգամաւորութիւն էր գնացել Բերլինի վեհաժողովում հայկական գառը պաշտպանելու: Բայց ոչ այդ պատգամաւորութիւնն էր ընդունուել և ոչ էլ նրա ներկայացրած գրաւոր զեկուցումները կարգացուել:

Ձր նայելով այդ հանդամանքին և չը նայելով Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի շախազանց անորոշ ու ոչինչ գրական չը պարունակող բովանդա-

կութեանը, այնուամենայնիւ ամբողջ հայութիւնը մեծ ցնծութեան մէջ էր, ՅՂ-րդ յօդուածի լուրն ըստանալով: Մեծ պիտութիւններէ վիճամոզովը զբաղւել էր հայկական հարցով, կը նշանակէ եւրոպական զիպլոմատիայի կողմից պաշտօնապէս ճանաչել էր հայկական հարցը, հեռեւեղէս նա լուծումն պիտի ստանար մի օր, երբ յարմար ժամանակը ներկայանար:

ՀԱՅ ՅԵՂԱՓ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Անգլիայի ու Ռուսաստանի հակամարտը հայկական նահանգների վերաբերեալ մի կատարեալ իրախուսանք էր թիւրք կառավարութեան համար: Սա ոչ միայն բարենորոգումներ չէր մտցնում Հայաստանում, այլ և ընդհակառակը՝ աւելի մեծ համարձակութեամբ էր ճնշում ու հալածում հայերին: Սուլթան Համիդը, փոխանակ զսպիւռ քիւրդերի կամայականութիւնները, որանց չեղապահաներին կ. Պօլիս հրաւիրեց ու իր անսունով-Համիդիէ - մի առանձին քիւրդական զօրաբանակ կազմեց, որոնք այլևս ազատ էին իրանց ուղածն անելու հղատակ հայերի վերաբերեալ:

Ձը նայելով այս բոլորին, հայ հասարակական գործիչների ու ղեկավար մարմինների մէջ այն խորը համոզումն էր գոյացել, թէ Անգլիայի հակամարտ լինելն Ռուսաստանին շատ օգտակար է հայկական գառին: Անգլիան չի թող աայ Ռուսաստանին՝ հայկական նահանգները զրաւելու, բայց հրքէք հակառակ չը պիտի լինի, եթէ ազատ Հայաստան ստեղծուի, նրման Բողաքիայի Հայերի այս համոզումը մանաւանդ

ոյժ էր ստանում անգլիական մի քանի քաղաքական գործիչների՝ ղեկի հայերը համակրութիւն, իսկ ղեկի թիւրք կառավարութիւնը պարսաւանք արտալայտող՝ ճատերի շնորհով:

Այս սրբէս հետեանք այդ համագուման, հետզհետէ այն խորը հատան առաջ եկաւ. թէ Ռոյզսթրայի նման ազատ Հայաստան ստեղծելու համար, անհրաժեշտ է, որ հայերն էլ, բոլորն էլ օրինակով, ապստամբական շարժումներ սկսեն թիւրքիայում: Կարծում էր, հայերի ապստամբական շարժումները տեսնելուն պէս, Անգլիան պիտի միջամտէր և ստիպէր թիւրքիային՝ ազատութիւն տալ հայերին:

Այս ահա սկսում են զազանի ընկերութիւններ կազմակերպել Հայաստանի դանազան կողմերում: Էրզրում, Նրեան, Կ. Պոլիս և այլն: Ծիշա այդ ժամանակ է, որ հրատարակ են ներսում ջրանաստեղծ Գամաս-Փաթիպան, իր սցեհունչ հայրենասիրական ստանաւորներով և վիպասան Բաֆֆին իր՝ յեղափոխական գործունէութեան ծրագրները պարունակող՝ վէպերով:

Թէ թիւրքահայ, թէ ռուսահայ եթէ պարսկահայ երիտասարդութեան յեղափոխական տրամադրութիւնը զնալով բարձրանում է, Ռուսահայերի յեղափոխական արամասարութեանը խիստ զարկ են տալիս մանաւանդ սուս կառավարութեան երեան բերած բռնութիւնները հայոց ս. ս. մարանների ու այլ կոյլասրական հաստատութիւնների ղեկ մի կողմից, և ռուս յեղափոխականների բուն գործունէութիւնը միւս կողմից: Այս հենց այդ ռուս յեղափոխականների գործունէութեան ու ծրագրի՝ օրինակով է, որ Ժընէվի համալսարանում սովորող մի խումբ ռուսահայ սւսանողներ, 1887 թ., հիմք են դնում առաջին՝ պարզ ու սրտ ծրագրի սկսնցող՝ հայ

յիղափ-խտկան կազմակերպութեան: Այդ կազմակերպութիւնը իր հրատարակած „Շնչակ“ թերթի անունով յետագայում կոչուեց Շնչակեան կուսակցութիւն: „Շնչակի“ հրատարակումից երկու տարի առաջ, 1885 թ. հայերէն մի ազատամտութեան թերթ էր սկսել լոյս տեսնել Մարտէլլում, „Արմենիա“ անունով: Սրա հետեողներն էլ Վանում մի առանձին գաղտնի բնակութիւն էին հիմնել. որոնք կոչուած էին Արմենականներ:

Շնչակեան կուսակցութիւնը իր գործունէութիւնն սկսում է թիւրքիայում 1890 թւականին, որտեղ մի շարք կազմակերպութիւն են հիմնուած Տիրասպրոնում, էրզրումում, Կ. Պոլսում և այլ քաղաքներում: Այդ կուսակցութեան՝ մեծ նշանակութիւն ունեցող՝ առաջին գործը համարուած է Կ. Պոլսում տեղի ունեցած ժողովրդական մեծ ցոյցը 1890 թ, յուլիսի 15-ին, որ յայտնի է Կում Գաիուի ցոյց անունով. որովհետև սկսել էր Կում Գաիու թաղի պատրիարքարանի եկեղեցուց:

Յատուկ ջանքերով եկեղեցի հաւաքած ահադին ժողովրդային բազմութեան գլուխն անցած, ցոյցի ղեկավարները ստիպուած են պատրիարքին՝ գնալ իրանց հետ Սուլթանի պալատը և այնտեղ, բողոքելով չարաստանում կատարուող կասկածարարական բռնութիւնների դէմ, նրան յանձնել՝ նախօրոք խմբազրւած՝ հայ ժողովրդի նւազագոյն պահանջները:

Ժողովրդական թափուրը, սակայն, դեռ պայտաջը հասաց, որտեղ այդ օրը մահակազականների Ղուրբան Բայրամի սօճն էին կատարուած ամբողջ գործի ներկայութեան, ոստիկանութիւնն ու գործը վրայ են հասնում ու, փոքր ընդհարումից յետոյ, ցրւում են ցուցարարներին:

Յոյցի գլխաւոր նպատակը՝ եւրոպական պետութիւնների միջամտութիւնը հրաւիրել ու լուծել տալ շուտով հայկական հարցը, չէ իրականանում: Սակայն նա այն մեծ նշանակութիւնն է ստանում, որ, որպէս մի անակնկալ, ցնցում է ամբողջ հայութիւնը և մեծ զարկ տայիս հայ յեղափոխական կազմակերպչական գործին ամենուրեք:

Կուս Գափուի ցոյցի ցնցիչ ազդեցութեան տակ կովկասում հայդուկային խմբեր են կազմակերպում (1890 թ.), Թիւրքիա անցնելու նպատակով, որոնցից ամենարդամարզը կուկուսեանի ղեկավարութեամբ Տէնց սահմանադիրում կուի է բռնում և ձերբակալում ուսս սահմանապահ գորքի կողմից:

Նոյն 1890 թ. աշնանը Թիֆլիսում կազմակերպւում է Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւն անունով կուսակցութիւնը, որը երկրորդ բազմանդամ ու գորաւոր կազմակերպութիւնը հանդիսացաւ հայկեանքում:

Այս կազմակերպութեան հիմնելու շրջանում, փորձ է լինում սիութիւն հաստատել Հնչակեան կուսակցութեան հետ և մէկ գրոշակի տակ գործել, բայց չի յաջողում, և այդ երկու կուսակցութիւնները անջատ են գործում մինչև վերջ:

Հայ յեղափոխական կեանքի առաջին շրջանում, աւելի մեծ թափով գործում էր Հնչակեան կուսակցութիւնը: Սրա ամենանշանաւոր գործերն են եղել — Սասունի ապստամբութիւնը 1894 թ. Կ. Պոլսի երկրորդ՝ Բար-Ալիի՝ ժողովրդական ցոյցը 1895 թ. և Զլյթունի ապստամբութիւնը նոյն 1895 թ. վերջերին:

Հնչակեանների այս և շատ ուրիշ հերոսական

բոլոր գործերը միանգամայն ապարդիւն անցան: Մարտական պետութիւնների կողմից և ոչ մի գործնական միջամտութիւն չեղաւ: Ընդհակառակը՝ հայկական բոլոր շարժումները վերջանում էին թիւրք կառավարութեան կողմակերպած մասսայական կոտորածներով հայաշատ բոլոր քաղաքներում ու գիւղերում: Արդու չամիզ սուլթանը աշխատում էր կոտորածների միջոցով այն աստիճան նւագեցնել հայերի թիւը իր հրկրի սահմաններում, որ այլևս հայկական հարցի մասին ոչ մի խօսք չը լինի պետութիւնների կողմից:

Յեղափոխական բոլոր ձեռնարկութիւնների այսպիսի ապարդիւն ելքն ու հայ ժողովրդի մասսայական կոտորածները խիստ մեծ հրասթափութիւն ու լքումն են առաջ բերում հնչակեան շարկերում: Դրա նեանանքով ներքին պառակտումներ են սկսում այդ կուսակցութիւնը, որոնք վերջումն են նրանով, որ կուսակցութիւնը հրկու մասի է բաժանուում (1896 թ.) և սաստիկ թուլանում է:

Ճիշտ այդ մասնակ ուժից թափով հրապարակ է նետուում Հ. Յ. Դաշնակցութիւն կուսակցութիւնը: Սա իր կազմակերպման առաջին շրջանում նոյնպէս ներքին պառակտումներ էր ունեցել և թուլացել: Բայց նորից կազմակերպել ու հրապարակ էր եկել: Այժմ այդ կազմակերպութիւնը կոչուում էր Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն, որի պաշտօնական թերթն էր «Դիտալ»:

Հ. Յ. Դաշնակցութեան ամենանշանաւոր գործերն են եղել Մանասորի արշաւանքը (1896 թ.), թիւրք Շարաֆ Բէկի դէմ, Պարսկաստանի սահմանագլխում: Կ. Պոլսի Օսումանեան բանկի հերոսական

գրաւուժք (1896 թ.), Սասունի երկրորդ ապստամբութիւնը (1904 թ.) լայտի հայդուկ Անդրանիկի ղեկավարութեամբ, և սուլթան Աբդուլ Համիդի կեանքի դէմ կատարած անյաշող մահափորձը:

Այս բոլոր, մէկը միւսին գերազանցող հերոսական ձեռնարկութիւնները նոյն հեռանքն են ունենում, ինչ նախորդները. մաստայական անվերջ կոտորածներ բոլոր հայաբնակ գաւառներում:

ՕՍՄԱՆԵԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Հայկական շարժումներն ու նրանց հեռանք՝ մաստայական կոտորածները ոչ մի արդիւնք չը տալով ի նպաստ հայկական դատի, մեծ արդիւնքներ էին տալիս եւրոպական մեծ պետութիւններին: Սրանցից իւրաքանչիւրը, ամեն մի հայկական շարժումից կամ կոտորածից յետոյ, հրապարակ էր նետուում, իբր թէ հայկական հարցը պաշտպանելու, և այդ սպառնալիքի տակ մի որ և է առետրական կամ այլ արտօնութիւն կորզում օսմանեան կառավարութիւնից:

Հայկական հարցի հետ միաժամանակ Եւրոպայից լուծում էին սպասում նաև մի քանի այլ թիւրքահպատակ քրիստոնեա ցեղերի ազատագրութեան հարցերը: Այդ ցեղերն էին՝ մակեդոնացիք, ալբանացիք և կրէտացիք, որոնք Նսիւպէս պակաս անհանգիստ չէին անում թիւրք կառավարութեանը: Այդպիսով մեծ պետութիւնները բաղմամբիւ ասիմիներ ունէին, թիւրքահային շարունակական սպառնալիքի տակ պահելու:

Թիւրքիան դառել էր մի հիւանդ մարդ, որի մա-

նը ոչ ոք չէր ցանկանում, բայց և բոլորն էլ աշխատում էին հիւանդ գրութեան մէջ պահել, որպէսզի աւելի լաւ կողոպտեն նրան:

Թիւրքախայի այս ընկած վիճակը շատ զգալի է դառնում Թիւրք բանիմաց երիտասարդութեանը, մանւանդ զինւորական դասին, որը Թիւրք ժողովրդի ամենանայրենասէր ու զտրգացած խաւն էր կազմում: Սկսում են յեղափոխական գաղանի ընկերութիւններ կազմակերպել, նպատակ ունենալով՝ գահընկեց անել սուլթան Համիդին և սահմանադրութիւն յայտարարել Թիւրքիայում: Թիւրք յեղափոխականները մասժում էին՝ սահմանադրութեան միջոցով վերջ դնել հպատակ քրիստոնեաների անվերջ դիմումներին եւ քրտական պետութիւններին, որպէսզի սրանք այլևս չբմիջամտեն Թիւրքիայի ներքին գործերին:

1908 թ. յունիսին «Երիտասարդ Թիւրքեր»-ի կուսակցութիւնը ապստամբութեան գրոշակ բարձրացրեց կառավարութեան դէմ, որը հանկարծակիի գալով, ոչ մի դիմադրութիւն ցոյց չը աւելց: Նեղն ընկած Սուլթան Համիդը կեղծաւորաբար «Երիտասարդ Թիւրքերի» կուսակցութեան անդամ յայտարարեց իրան: Նա վերահաստատեց Թիւրքական հին սահմանադրութիւնը, որ ինքը ոչնչացրել էր 1876 թ. գահ բարձրանալուց անմիջապէս յետոյ:

Բոլոր յեղափոխական բանաւարկեալներին ու աքոսրականներին ներում չնորհեց. ամեն տեղ բանաբրի դռները բացեցին և ամեն ազգի յեղափոխականները իրանց տները վերադարձան: Մնծազին Կ. Պօլիս վերադարձան նաև Եւրոպայում ապաստանած Թիւրք և հայ յեղափոխականները:

Այս անարիւն յեղափոխութիւնից հազիւ մի

քանի ամիս անցած, ադալտարարոյ սուլթան Համիդը մի ընդարձակ դաւադրութիւն է կազմակերպում, նըպատակ ունենալով՝ բնաջինջ անել թէ ,,Երիտասարդ թիւրքերին՝ և թէ վերահաստատուած սահմանադրութիւնը: Դաւադրութիւնը բացուում է: Քաղաքացիական կատաղի պատերազմ է սկսուում սուլթանի կողմնակից և հակառակ զօրքերի միջև: Յաղթութիւնը տանում են յեղափոխականները: Սուլթան Համիդը զահընկեց է արւում ու նրա տեղ զահ է բարձրանում Մեհմեդ-Քիշազը և սահմանադրութիւնը նորից հաստատուում:

Սահմանադրական թիւրքիայի առաջին շրջանում այնպէս էր թւում, թէ իրականացել են հայ յեղափոխական կուսակցութիւնների բոլոր ձգտումները: Հաստատուել էր Օրէնսդիր ժողով, հաւասարապէս ընտրուած բոլոր ազգութիւններից: Հիմեւ էին նոր դատարաններ, որոնք տարբերութիւն չէին գնելու մահմեդականի ու քրիստոնեայի միջև: Յայտարարւել էր կատարեալ ազատութիւն մամուլի, խղճի, խօսքի, հաւաքումների և այլն: Մակայն շուտով պարզւեց, որ այդ բոլորը խարուսիկ երևոյթներ էին միայն: ,,Երիտասարդ թիւրքերը՝ երբէք չէին էլ մտածել հպատակ հայ ժողովրդին ցանկացած ազատութիւնները սալ: Դրան սպացոյց՝ Ատանայում տեղի ունեցած հայերի ջարդը, սահմանադրութեան հէնց աստջին շրջանում:

,,Երիտասարդ թիւրքերը՝ բաւարարութիւն չը սալով հանդերձ հայ ժողովրդի ձգտումներին, հայ յեղափոխականներից պահանջում էին՝ այլևս դիմումներ չանել մեծ պետութիւններին և չը հրաւիրել սրանց միջամտութիւնը թիւրքիայի ներքին գործերին: Եւ այդ հողի վրայ ուժեղ պայքար էր սկսւել ,,Երիտա-

սարդ թիւրքերի՝ և հայ յեղափոխական կուսակցու-
թիւնների միջե, որը անեց մինչև համաշխարհային
պատերազմի սկսելը:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Համաշխարհային հսկայական ու մինչ այդ ժա-
մանակ չը տեսնուած պատերազմի գլխաւոր պատճառը
հետեւեալն էր. — Գերմանիայի խոշոր արդիւնազոր-
ծութիւնն ու առևտուրը Անգլիայից ու Ֆրանսիայից
շատ աւելի ուշ էր սկսել զարգանալ: Այն ժամանակ,
երբ Անգլիան ու Ֆրանսիան ահագին երկրներ էին
գրաւում յետաձայն Ասիայում. Աւստրալիայում ու
Աֆրիկայում և գաղութներ ստեղծում այնտեղ, թէ
իրանց գործարանական ապրանքները սպառելու և թէ
այնտեղից հում նիւթեր ստանալու համար, Գերմա-
նիան զեռ ևս իր ներքին շուկայով էր բաւականանում:
19-րդ դարի երկրորդ կիսից միայն Գերմանիայի խո-
շոր արդիւնազործութիւնը սկսեց մեծ թափով զարգա-
նալ: Այդ ժամանակից էլ նա մրցութեան է մտնում ան-
գլիական ու ֆրանսիական ապրանքների հետ և սկսում
զայլթափայրեր ու շուկաներ որոնել: Բայց նա բաւա-
կան ուշացել էր. լարմարա-գոյն երկրամասերը բռնուած
էին արդէն: Մտածելով, որ միմիայն զէնքի ու ժող-
պէսը է ընդարձակ ասպարէզներ նւաճել իր անթիւ-
արտադրութիւնները սպառելու համար, Գերմանիան,
տարիներից ի վեր սկսել էր պատերազմի պատրաստուել:
Պատերազմը սկսեց 1914 թ. յուլիսին: Գեր-
մանիային միացան Աւստրո-Հունգարիան, Բուլղա-
րիան և Թիւրքիան: Իսկ Ֆրանսիային զինակցում էին

Ռուսիան, Անգլիան, Սերբիան, Մոնտէնեգրօն, Բել-
գիան յետագայում՝ Իտալիան, Ռուսիոնաւն ամենա-
վերջում՝ Ամերիկեան Միացեալ Նահանգները:

Քիւրքիայի գաշնակցելը Գերմանիայի հետ մեծ
գրգիռ է առաջացնում հակառակ կողմի բոլոր երկիր-
ներում, ամեն կողմից սպառնալիք է բարձրանում,
թէ պատերազմից յետոյ իսպառ վերջ պիտի գրւի
Օսմանեան տիրապետութեանը, բաժան-բաժան պիտի
արւի այդ տէրութիւնը և պիտի ազատութիւն տրւեն
նրա հպատակ բոլոր ազգերին:

Հայերի համար այլեւ ոչ մի կասկած չէր մնում,
որ հասել է այն վաղուց բղձալի ժամը, երբ ազատ
Հայաստան պիտի ստեղծւի Քիւրքիայի տերակների
վրայ: Նամանականդ որ այդ մասին կիսապաշտօնա-
կան խոստումն էլ էր եղել ուստի կառավարութեան
կողմից:

Չառ յոյսերով թե առած, կովկասի ամբողջ
հայութիւնը, որպէս մէկ մարդ, հրապարակ է գալիս
աջակցութիւն ցոյց տալու ուսաց զօրաբանակին
օսմանեան ճակատի վրայ: Այդ նպատակով Քիֆլի-
սում Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավարութեամբ կազ-
մւում է Ազգային Բիւրօ, որը ձեռնամուխ է լինում
առանձին հայ կամաւորական ռազմիկ գնդեր կազմե-
լու անանի հայդուկային խմբապետների հրամանա-
տարութեամբ: Կազմւում են 7 խմբեր, իրաքանչիւրը
մի քանի հարիւր կուռղներից բաղկացած: Բաւակա-
նին մեծ թւով հայեր էլ Ամերիկայից ու այլ վայրե-
րից, որպէս կամաւորներ, մտնում են Ֆրանսիական
ու անգլիական բանակների մէջ, Կիլիկիայի ու Սիրի-
այի ճակատներում կռւելու:

Մինչ Քիւրքիայի սահմաններից դուրս գտնւած

հայութիւնը իր ամբողջ ճիգն էր գործ դնում վերջին հարածը հասցնելու Թիւրքիային, այս վերջինի կառավարութիւնն էլ հայերին իսպառ բնաջինջ անելու գծով հային միացն էր յղանում։ Այդ եղանակով Թիւրքերը մտածում են մի անդամից ընդ միշտ վերջ դնել հայկական հարցին։ Գերմանական հրամանատարութեան բարեհաճ հաւանութեամբ, «Սրիտասարդ Թիւրքերը» պատրւակ բռնելով, թէ կամենում են սպանով դարձնել իրանց զորահակատի թիկունքը անվստահելի հայերից, հրաման են արձակում բնաջնջումի ենթարկել Թիւրքիայի ամբողջ հայութիւնը։ Մի ժամին կոտորում են անմիջական կերպով, իսկ մեծ մասին էլ թշում, տանում են դէպի Միջագետքի տնտապարը, այնպիսի դժոխային պայմանների մէջ դրնելով նրանց ճանապարհին, որ շատ քչերն են կենդանի մնում։ Տարագիրները մեծագոյն մասը կոտորւում է քաղցից, ծարաւից ու հիւանդութիւններից։ Ոչ ոք չէր խնայւել այդ ընդհանուր կոտորածից, խընայւածներին էլ — կանայք և երեխաներ — տարել Թրքացրել էին։ Սրիտասարդ Թիւրքերը չեն խնայում նոյնիսկ իրանց երեկւայ աջակից հայ յեղափոխական մտաւորականներին, թէ դաշնակցական և թէ հնչակեան, ականաւոր գործիչները ձերբակալւում և կոտորւում են Կ. Պոլսում (ապրիլի 24-ին)։

Այս ընդհանուր կոտորածից գերծ են մնում միայն Վանի և իր ձօտակայ Շատախի, Խիզանի և Հայոց Զորի հայութիւնը։ Եւ այդ՝ շնորհիւ վանեցիկների խիզախ ինքնապաշտպանութեան, որ կազմակերպել էին Հ. Յ. Դաշնակցութեան և Ռամկավարական կուսակցութեան ղեկավարները։ Ինքնապաշտպանութիւնը շարունակւում է մօտ մէկ ամիս, մինչև որ յաղթա-

կան ուսւ զօրքը, հայ կամաւոր խմբերի առաջնորդութեամբ Վան են մտնում:

Տաճկական սրից ազատւած Վանի ժողովրդն էլ սակայն բուսականին մեծ կորուստներ ունեցաւ ուսաց բռնակի՝ երբեմն շատ անտեղի՝ նահանջների պատճառով: Շատ շատերը նրանցից կոտորւեցին նահանջի արձաւիւրքներից ու տարափոխիկ հիւանդութիւններից:

Ռուսաց զօրքի նահանջներից շատ ֆրասուց նաև Պարսկական Ատրպատականի հայութիւնը. Ուրմիայի, Խոյի, Մակուի, Ղարաղաղի և Թաւրիզ քաղաքի ամբողջ հայ բնակչութիւնը տեղահան է լինում և կովկաս փախչում: Այստեղ մի քանի ամիս դեղերիւց յետոյ, երբ պատրւած թիւրք զօրքը հեռանում է, այդ ժողովուրդը կրկին իր կիսաւէր ու քարուքանդ հայրենիքն է վերադառնում:

Տաճկական սպանակատում ուսաց զօրքի գերագոյն յաղթութիւնների ժամանակ, երբ նրա աջ թևեր Տրապիզոնն ու Սերգնկան էր զբաւել, իսկ ձախը մինչև Միջագետքի Ռեանդուզ քաղաքը հասել. Ռուսաստանի մեծ յեղափոխութիւնն է սկսւում:

ՌՈՒՍՍՍՏԱՆԻ ՄԵԾ ԵՆՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Ռուսաստանը, որպէս չափազանց յետաճաց ու աղքատ երկիր, անկարող հանդիսացաւ մինչև վերջը դիմանալու պատերազմի արձաւիւրքներին: Զունենալով բուսկանաչափ երկաթուղիներ, հեռաւոր վայրերից մթերքներ տեղափոխելու համար, չունենալով բուսկանաչափ զարգացած արդիւնագործութիւն,

անտեսապէս նա շատ շուտ քայքայեց ու ընդհանուր
 փլզումի ենթարկեց: Թէև դաշնակից Ֆրանսիան ու
 Անգլիան օգնում էին Ռուսաստանին թէ գէնքով, թէ
 սազմամթերքով և թէ փողով, բայց և այնպէս այդ
 չէր բաւականացնում ռուսական աւելի քան 5 միլիո-
 նից բազկացած զօրաբանակին բաւարարելու:

Տնտեսական այդ փլզումը գուցէ կարգաւորէր
 ու տանելի դառնար, եթէ կառավարութեան
 գլուխ կանգնած լինէին աւելի կարող և հմուտ մար-
 դիկ: Բայց Նիկոլա II կայսրը իրան շրջապատել էր
 միանգամայն անընդունակ ու անձեռնհաս մարդ-
 կանցով: Պետական Իււման շատ անգամներ էր պա-
 հանջել, որ պատասխանատու միներսորութիւն հաս-
 տատուի, բայց բոլոր պահանջները մնացել էին անհե-
 տեանք: Ընդհակառակը՝ քանի գնում, աւելի ու աւելի
 աննշան և անընդունակ մարդկանց էր միներսորական
 պաշտօնների կոչում կայսրը:

Միներսորների անպատասխանատուութեան շարիք-
 ները մանաւանդ զգալի դարձան պատերազմի շր-
 շանում, երբ ընդհանուր փլզումի ժամանակ միմեանց
 յետեից նաև երևան եկան մի շարք զեղծութեան, պե-
 տական գումարների գողութիւն, մթերքների կողո-
 պուտ, դաւաճանութիւն և այլն:

Դժգոհութիւնը, գնալով, ընդհանուր դարձաւ:
 Պահին ամենահաւատարիմ կուսակցութիւններն ան-
 գամ երես դարձրին կայսրից: Ընդհանուր այս դժգո-
 հութիւնը անդրադարձաւ և զօրքին, որտեղ կառավար-
 ութեան թերութիւնները նոյպէս շատ զգալի էին
 դառել: Դանակը ոսկորին հասած, Պետական Իււման,
 նախօրոք զօրաբանակների գլխաւոր հրամանատար-
 ների հետ բանակցելուց յետոյ, ստիպում է Նիկոլա II-ին

հրաժարելի գահից (1917 թ. փետր. արի 25-ին)
և ժամանակաւոր կառավարութիւն է հաստա-
տում:

Անկարագրելի էր ժողովրդական ցնծութիւնը
համայն Ռուսաստանում: Ամենուրեք բացւում են
բանտերի դռները և հազարաւոր քաղաքական յանցա-
ւորներ ազատ արձակւում: Ազատ են արձակւում և
աքսորականները, որոնք վառ յոյսերով հայրենիք են
վերադառնում: Վերադառնում են և տարագիրները,
որոնք տասնեակ տարիներից ի վեր Սւրոպայի գա-
նազան երկրներում էին ապաստանել: Վերացան բոռ-
նապետական ճնշումներն ու հալածանքը: Ժամանա-
կաւոր կառավարութեան կողմից յայտարարւած էր
մամուլի, խօսքի, հաւաքոյթների և այլ ազատութիւն-
ներ: Ամեն մի քայլափոխում հրապարակային մեծ
ժողովներ էին գումարում, որտեղ զանազան կու-
սակցութիւնների հոեաորները կատարւած յիշափո-
խութեան ու նրանից սպասելիք բարիքներն էին բա-
ցատրում: Միևնոյն ժամանակ կազմակերպութիւններ
են սկսւում ժողովրդական բոլոր խաւերում, մանա-
ւանդ բանւո ների, զօրքի և գիւղացիութեան մէջ:

Թւում էր, թէ անարիւն և շատ խաղաղ կերպով
էր կատարելի յիշափոխութիւնը, ժամանակաւոր կա-
ռավարութիւնը պիտի Սահմանադիր ժողով գումարէր
համայն Ռուսաստանի ժողովուրդների ներկայացու-
ցիչներից, որը, որպէս ամբողջ երկրի կամքը արտա-
յայտող գերագոյն մարմին, պիտի հիմնական օրէնք-
ներ մշակէր և որոշէր, թէ ինչ տեսակի կառավարչա-
կան ձև պիտի հաստատել միապետութիւնից ազատ-
ւած Ռուսաստանում: Սակայն, այնքան էլ հեշտ բան
չէր շուտով Սահմանադիր ժողով գումարելը Ռուսաս-

տանի նման ընդարձակ երկրում, և այն էլ պատե-
րազմի ու ընդհանուր փլզումի ժամանակ:

Միապետութեան անկումից յետոյ մի շարք՝
պետական մեծ նշանակութիւն ունեցող խնդիրներ
էին առաջացել, որոնք շուտափոյթ լուծուեալն էին
պահանջում: Այդ խնդիրներն էին՝ պատերազմը շա-
րունակելու թէ՛ դադարեցնելու հարցը, կալածատէր
ազնւականների հողերը գիւղացիներին բաժանելու
հարցը, հպատակ օտար ազգերի իրաւունքների որո-
շելը և այլն:

Եաներով միմեանց բուրոսովին հակառակ դասա-
կարգերի ներկայացուցիչներից կազմւած ժամանա-
կաւոր կառավարութիւնը ոչ մի կերպ չէր կարողա-
նում ընդհանուր համաձայնութեան գալ լուծելի խն-
դիրների շուրջը: Մինիստրները փոխւում էին մի-
մեանց յետից, ժամանակն անցնում էր, բայց ոչ
Սահմանադիր Ժողովն էր զուժարւում, ոչ խնդիրնե-
րը լուծւում և ոչ էլ փլզումի առաջն անւում:

Այդ երեքուն ու տարտամ դրութիւնից մեծ
հետաւթեամբ օգտւում է Ռուսաստանի Սոցեալ-Դե-
մոկրատ Բանասրահան կուսակցութեան այն հատւածը,
որը յայտնի էր Բոլշեւիկ (մեծամասնական) անու-
նով*) և որը պատերազմի հէնց սկզբում, անշատե-

*) Ռ. Ս. Դ. Բ. կուսակցութեան կազմակերպման գեո-
տառքին շրջանում տեղի ունեցած ընդհանուր ժողովներից
մէկում, կազմակերպչական և տարախճական մի-երկու հար-
ցերի քւէարկութեան ժամանակ, կուսակցութիւնը երկու
հատւածների էր բաժանւել. Մեծամասնականներ, որ նշանա-
կում է ձայների մեծամասնութիւն շահողներ, և Փոքրամաս-
նականներու Առաջինները, իրանց զեկավար Լենինի անունով.
կոչւում էին նաև Լենինականներ:

1917 թ. 7 ր. 11
ժողովը
1 սեպտեմբեր
1917 թ.

լով Ռ. Ս. Դ. Բ. կուսակցութիւնից, իրան անւանում էր կոմունիստական կուսակցութիւն: Այս կուսակցութեան զեկաւար Լենինը, որ մի շատ հանճարեղ յեղափոխական էր, պատերազմի հէնց սկզբից, իր ուսս և Ն. Բրոսպայի գաղափարակիցներէ հետ միասին շատ էին աշխատել, որ պատերազմող երկրներէ բանւորները զինադուլ յայտարարեն ու թոյլ չը տան կործանարար պատերազմին: Բայց նրանց բոլոր ցանքերը ի դերս էին անցել:

Ռուսական միապետութիւնը տապալուելուց անմիջապէս յետոյ, Լենինը իր տարագիր կուսակիցներէ հետ միասին Պետրոգրադ վերադառնալով, կատարել պայքար են սկսում պատերազմի դէմ: Թէ մամուլի միջոցով և թէ կենդանի խօսքով նրանք քարոզում էին զօրքին՝ չը կուսել, այլ եղբայրանալ թշնամու զօրքերէ հետ և իրանց աները վերադառնալ: Բոյլշևիկները հաւատացած էին, թէ ուսական զօրքի խաղաղասիրական օրինակին հետեւելով, գերմանական և այլ պատերազմող զօրքերն էլ կը դադարեն կուսելուց և ընդհանուր սոցիալիստական յեղափոխութիւն կը բռնկի ամբողջ Ն. Բրոսպայում: Իրանց պրոպագանդի հետ միասին, Բոյլշևիկները մեծ հռանդով կազմակերպութիւններ էին ստեղծում բանւորների, զօրքի և գիւղացիութեան մէջ: Նրանք խոստանում էին ժողովրդին՝ վերացումն զասակարգերի միջև եղած բոլոր անհաւասարութիւններին, խաղաղ կեանք, առատ հաց և առատ հող: Ամենուրէք կազմակերպուել էին բանւորական, զինւորական և գիւղացիական խորհուրդներ, որոնք կարճ ժամանակի մէջ ահագին ազդեցութիւն էին ձեռք բերել կառավարչական գործերի վերաբերեալ:

Բոյլշեիկեան պրոպագանդի ազդեցութեան տակ, բոլոր զօրաճակատներում զինւորական կարգապահութիւնը խանգարուած է, և զօրքը հարիւրներով ու հազարներով, թողնելով ճակատը սկսում է տուն վերադառնալ:

Իրանց յաջողութիւններից սիրտ առած Բոյլշեիկեները սոցիալիստական յեղափոխութեան դրօշակ են քարձրացնում (1917 թ. հոկտեմբերի 25-ին), միանգամայն վստահ, թէ նոյնը շուտով յինելու է նաև եւրոպական երկրներում: Սկսում է պատմութեան մէջ չը տեսնուած մի շատ ահեկի ու արիւնահեղ քաղաքացիական պատերազմ: Մ. րոպացիք, սակայն, ոչ միայն չեն վարակւում Բոյլշեիկեների օլիխակով, այլ և ընդհակառակը՝ ուսական զօրաճակատների քայքայումից ու ներքին խռովութիւններից օգտւելով, ըսկսում են բոլոր ճակատներում էլ թափով առաջ շարժւել: Յանկարձակիի եկած բոյլշեիկեները իրանց սկսած յեղափոխութիւնը փրկելու համար, շտապում են հաշտութիւն խնդրել Գերմանիայից ու նրա զինակիցներից: Հաշտութիւնը կայանում է Բրեստ-Լիտովսկ ջազաքում, Ռուսաստանի համար չափազանց նւառատացուցիչ պայմաններով: Բայց յեղափոխութիւնը փրկւում է, և բոյլշեիկեները շարունակում են քաղաքացիական պատերազմը, որ տեսում է ամբողջ 3 սարի և վերջանում բոյլշեիկեների կատարեալ յաղթութեամբ:

ԱՆԴՐԿՈՎԿՈՍԵԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Միապետութեան տապալումից հազիւ 2 ամիս անցած, ժամանակաւոր կառավարութիւնը, 4 հոգուց բաղկացած, մի յատուկ կոմիտէ (մասնախումբ) է ուղարկում Թիֆլիս, Անդրկովկասի գործերը առանձինն անօրինելու համար: Անդրկովկասի երեք գլխաւոր ազգութիւններն ի նկատի ունելով, կոմիտէի անդամներ նշանակուել էին՝ մի հայ, մի վրացի և մի թաթար, իսկ չորրորդը ռուս էր նշանակուած, որպէս կոմիտէի նախագահ: Թէև մեծ խանդավառութեամբ ընդունուեց այդ կոմիտէն Անդրկովկասում, բայց նա գործ չը կարողացաւ կատարել: Անդրկովկասի երեք ազգութիւնների՝ իրարու դէմ ունեցած՝ հակամարտութիւններն ու հակակրօթիւնը, որ մինչ միապետութեան անկումը զսպւած էին կենտրոնական իշխանութեան կողմից, հրապարակ էին եկել ու գնալով, սուր կերպարանք էին ընդունւի:

Յստուկ կոմիտէի սլոճերից վեր էր ծաղած ազգային հակամարտութիւնները կարգաւորելու: Կոմիտէից շատ աւելի ներգործական դեր էին սկսել խաղալ հայ, վրացի և թաթար Ազգային Խորհուրդները: Այդպիսի խորհուրդներ ստեղծելու պահանջը զգալի էր դառել բոլլշեիկեան պրոպագանդի ազդեցութեան տակ: Բոլլշեիկները նշանաբաններից մէկն էլ ազգային ին նորոշման գաղափարն էր, որի գորութեամբ Ռուսաստանի բազմացեղ բնակչութիւնը սկսել էր ազգային խմբակցութիւնների բաժանուել, իւրաքանչիւրն աշխատելով առանձինն անօրինել իր սեփական գործերը:

Հայոց Ազգային կենտրոնական խորհուրդը ընտրել էր հայոց ազգային համագումարի կողմից, որ տեղի ունեցաւ 1917 թ. հոկտեմբերի սկիզբներին Թիֆլիսում: Նոյնպիսի ազգային խորհուրդներ ստեղծել էին վրացիներն ու թաթարները: Այս խորհուրդների գլխաւոր գործը եղաւ ազգային զորաբանակներ կազմակերպել, որոնք պիտի օսմանեան զօրաճակատը պաշտպանէին, տուն վերադարձող ռուս զօրքերի փութարէն:

Անդրկովկասի ընդհանուր պետական գործերը փարելու համար, Յատուկ Կոմիտէի փութարէն, կազմոււմ է Անդրկովկասեան Կոմիսարիատ (1917 թ. նոյեմբերին), որի մէջ հաւասար թւով մտնում են հայեր, վրացիք և թաթարներ: Կոմիսարիատը յայտարարում է, որ ինքը Ռուսաստանի մի անբաժան մասն է նկատում Անդրկովկասը; բայց չէ ընդունում Պետրոգրադում հաստատուած բոյլշևիկեան իշխանութիւնը: Այն յոյսով, թէ այս վերջինը շուտով կարող է ընկնել և Ռուսաստանում նոր կառավարութիւն կը հաստատուի, Կոմիսարիատը առժամապէս անկախ է գործում: Շուտով հաստատոււմ է և Անդրկովկասեան օրէնսդիր ժողովը՝ Սէյմը, և Անդրկովկասեան միացեալ զօրաբանակն է ստեղծոււմ:

Անդրկովկասեան կառավարութեան ամենամեծ և դժւարին գործը ատճակական զօրաճակատի պաշտպանութիւնն է դառնում: Շատ շուտով պարզոււմ է, որ կառավարութիւնը կազմող երեք ազգութիւնների ներկայացուցիչներն էլ միևնոյն կարծիքն ու ձգտումները չունեն այդ զօրաճակատի վերաբերեալ: Մինչ հայերը ցանկանում էին՝ Թիւրքիայից դրաւված նահանգներից ազատ Հայաստան ստեղծել, թաթարներ-

բը ընդհակառակը՝ կամենում էին այդ նահանգները թիւրքիային վերադարձնել: Իսկ վրացիք այդ հարցի վերաբերեալ անտարբեր էին: Տաճկական զորաճակատը պաշտպանելու ամբողջ ծանրութիւնն այդպիսով հայերի վրայ էր ընկնում:

1918 թ. յունիսարին տաճիկները, նկատելով ռուսաց զորաճակատի քայքայւելն ու թուլանալը, ըսկաում են առաջ շարժւել: Ազգային խորհուրդը իզուր է աշխատում զօրք հասցնել ճակատը պաշտպանելու: Ոչ միայն Սէյմի թաթար ներկայացուցիչներն են խոչնդոտներ յարուցանում, այլ և Անդրկովկասի թաթար բնակչութիւնն էլ: Թաթար ազգային կուսակցութիւնների զբոսմով, զինւած յարձակումներ են տեղի ունենում դէպի զորաճակատը զօրք տանող դնացքների վրայ. կամուրջները պայթեցւում են, ըէյլաները հանւում: Թաթարների կատաղութիւնը հետզհետէ այն աստիճանի է հասնում, որ տուն վերադարձող ռուս զորամասերի վրայ էլ են յարձակւում, նրանց զէնքերը խլում և հարիւրներով կոտորում:

Տաճկական արշաւող բանակի ճնշման տակ հայերը աստիճանաբար դատարկւում են թիւրքիայից զբաւլած շրջանները: Ազգային խորհուրդը մեծ յոյս ունէր, թէ կը կարողանան գտնէ Էրզրումը պահել, սրա ընական ու արհեստական ամբութիւնների շնորհով: Բայց հայ զօրքը, որ նոյնպէս վարակւած էր ճակատը լքելու և տուն վերադառնալու ցաւով, շուրջեց պաշտպանել անառիկ Էրզրումը: Համարեա թէ ասանց մի գնդակ արձակելու, այդ քաղաքը թշնամուն յանձնւեց: Թաղմաճակատը մօտենում էր ռուս տանկական 1914 թ. սահմանին:

Ճիշտ այդ ժամանակ Ռուս-Փերմանական հաշտութեան ժողովք էր գումարուում Բրեստ-Լիտովսկում, որին մասնակցում են և թիւրքերը: Սրանք առաջարկում են Անդրկովկասեան կառավարութեանը՝ նոյնպէս պատւիրակներ ուղարկել Բրեստ-Լիտովսկ: Բայց Սէյմը, չր կամենալով Անդրկովկասի ճակատագիրը բոյլշեիկեան Ռուսաստանի հետ կապել, մերժում է թիւրքերի առաջարկը: Նա գերազատում է թիւրքիայի հետ առանձին հաշտութեան պայմաններ կնքել: Եւ այս հաշտութիւնը կնքելու վայր որոշուում է Տրապիզոնը, որն այդ ժամանակ դեռ ռուսների ձեռքումն էր: Իսկ մինչ պատւիրակութիւնը տեղ է հասնում, այդ քաղաքն արդէն գրաված է լինում թիւրքերի կողմից:

Հաշտութեան բանակցութիւնների ժամանակ, թիւրքերը Բրեստ-Լիտովսկիի դաշնագիրն են ուզում հիմք ընդունել, որի զօրութեամբ թիւրքիային էր զիջւել Կարսը, Բաթումը և Արդահանը: Իսկ Անդրկովկասի պատւիրակութիւնը, չը ճանաչելով բոյլշեիկեան իշխանութիւնը, չի ուզում ճանաչել և նրանց կնքած դաշնագիրը: Այդ ժամանակ թիւրքերը պատասխանում են, որ Ռուսաստանում ուրիշ իշխանութիւն չը կայ, հետևապէս բոյլշեիկեան իշխանութիւնը չը ճանաչող մի երկրամաս չի կարող Ռուսաստանի անբաժան մասը համարուել: Նրանք պահանջում են՝ Ռուսաստանից տնջատուած յայտարարել Անդրկովկասը և ապա առանձին բանակցութիւններ սկսել թիւրքիայի հետ:

Մինչ այս բանակցութիւններն էին տեղի ունենում Տրապիզոնում, թիւրքական զօրքերը շարունակում էին իրանց արշաւանքը կովկասեան ճակատում:

Նրանք գրաւում են Սարաղամիշն ու Բաթումի նահանգի մի մասը: Այս դէպքերի հետեանքով բանակցութիւնները դադարում են, և անդրկովկասեան պատերակները վերադառնում են Քիֆլիս: Մինչ պատերակները Բաթում կը հասնէին, այս փառաքն էլ են գրաւում թիւրքերը, առանց վրացիների կողմից մի որ և է զիմագրութեան: Պատերակները ստիպուած են Փոթի նաւանդատով վերադառնալ:

Բաթումի գրաւելով չեն բաւականանում թիւրքերը. նրանք իսկական Վրաստանի սահմանն են մտնում և գրաւում են Օդուրգեան ու Աբասթումանը: Միևնոյն ժամանակ թիւրքերը առաջ են շարժուած և Սարաղամիշի ուղղութեամբ, կարսին տիրանալու նըպատակով: Շատ են աշխատում հայերը այդ ճակատը պահել, բայց ի զուր, Իսկ վրացիք պատերազմը շարունակելու ոչ մի տրամադրութիւն չեն ցոյց տալի: Նրանք այժմ խորհում են՝ դերմանացիների միջնորդութեամբ փրկել իրանց երկիրը օսմանեան գրոհից: Ինչ վերաբերում է թաթարներին՝ նրանք ուրախանում էին օսմանցիների մօտենալուն: Նրանց մէջ համայն թրքութիւնը միացնելու և մի ընդարձակ թրքական պետութիւն կազմելու՝ գաղափարն է սկսում զարգանալ:

Սէյմը, յոյս չունենալով, թէ կարող է պատերազմը յաջողութեամբ շարունակել, որոշում է, օսմանցիների պահանջի համաձայն, Անդրկովկասը անջատած լայտարարել Ռուսաստանից և հաշտութեան նոր բանակցութիւններ սկսել Քիւրքիայի հետ: Անջատումը լայտարարուած է 1918 թ, ապրիլի 9-ին և իսկոյն հաղորդուած թիւրք կառավարութեան: Համաձայնութիւն է կայանում բանակցութիւնները վեր-

սկսելու ժամին: Մինչ այդ սակայն, Կարան էլ են գր-
բաւում թիւքերը:

Հաշուութեան երկրորդ բանակցութիւնները տե-
ղի են ունենում Բաթումում (մայիս 10-25), Այս
անգամ Անդրկովկասի պատերազմութիւնն է կամե-
նում հաշուութեան հիմք ընդունել Բրեստ-Լիտովսկիի
դաշնագիրը, որ Տրապիզոնում պահանջում էին թիւք
քերը: Բայց այժմ թիւքքերն այլևս չեն գտնանում
այդ դաշնագրով: Ի նկատի առնելով, որ Տրապիզոնի
բանակցութիւններից յետոյ, պատերազմական գոր-
ծողութիւններ են տեղի ունեցել, նրանք այժմ նոր
պայմաններ են առաջարկում: Այս անգամ նրանք
պահանջում են վրացիներից Ախլցխայի գաւառի մի
կարևոր մասը, իսկ հայերից՝ բացի Կարսի ամբողջ
նահանգից, նաև Ալեքսանդրապոլը, Սուրմալուի գաւա-
ռը և երկաթուղագիծը՝ դէպի Բաքու և Պարսկաստան
գորքեր տեղափոխելու համար:

Անդրկովկասի պատերազմանութիւնը անհանդուր-
ժելի դանելով թիւքքերի պահանջները, ձգձգում է
բանակցութիւնները: Թիւքքերը, նկատելով այդ, վեր-
ջնագիր են տալի Անդրկովկասի պատերազման,
երեք օր ժամանակամիջոց տալով նրանց, վճռական
պատասխան յայտնելու:

Անդրկովկասի պատերազման վրացի անգամ-
ները, նկատելով, որ թիւքքերի պահանջները զլխա-
ւորաբար և ըստ մեծի ժամին հայկական հողամասե-
րին է վերաբերում, որոշում են՝ այլևս չը կապել
իրանց ժողովրդի ճակատագիրը հայերի հետ: Նրանք
Գերմանիայի հովանաւորութիւնը ձեռք բերելով,
վճռում են՝ անկախ յայտարարել Վրաստանը և առան-
ձին հաշուութեան բանակցութիւններ վարել թիւքքերի

էկու:

Մայիսի 26-ին պատուիրակութիւնը Քիֆլիս է վերադառնում, և հէնց նոյն դիշերը Անդրկովկասի Սէյմը իրան լուծած է յայտարարում, որով վերջ է դրում Անդրկովկասի անկախ հանրապետութեանը: Իրանից անմիջապէս յետոյ Վրաստանի անկախութիւնն է յայտարարում: Հետեւեալ օրը Բագում Ադրբեջանի անկախութիւնն է յայտարարում: Իսկ մայիսի 28-ին հայոց Ազգային Սորհուլդը, որ Քիֆլիսում էր շարունակ գտնուում, իրան հայկական գաւառների լիազօր իշխանութիւն յայտարարելով, Հայաստանն է անկախ հռչակում և իսկոյնեւթ՝ երեք հոգուց բաղկացած՝ պատուիրակութիւն ուղարկում Բաթում, թիւրքերի հետ հաշտութիւն կնքելու: Մինչ պատուիրակութեան գնալը սակայն, երկու խիստ նշանաւոր դէպքեր էին տեղի ունեցել Հայաստանում:

Օսմանեան զօրքերը գրոհ էին տւել թէ Իզմիրի և թէ Ալեքսանդրոպօլի վրայով: Նրանք գրաւել էին այդ երկու քաղաքները և մի կողմից սպառնում էին Երևանին, իսկ միւս կողմից սրնթաց դէպի Բաքու էին գնում: Այս երկու ճակատում էլ հայերը ծառայում են նրանց տաղ և կատաղի կռիւներ են սկսում, համարեա թէ միաժամանակ Սարգարաբաղում (մայիս 24—29) և Ղարաքիլիսէյում (մայիս 25—29): Այս երկու ճակատամարտներում էլ հայ զօրքերը այնպիսի քաջութիւն ու հմտութիւն են ցոյց տալիս, որ մինչևիսկ թշնամի զօրահրամանատարների հրացմունքն են շարժում: Այս ճակատամարտները ոչ միայն Երևանն են փրկում թիւրքերի գրոհից, այլ և հայութիւնը նոր բնաջնջումից:

Հայ—թիւրքական հաշտութիւնը կնքում է յու-

նիսի 4-ին, հայերի համար շատ նւաստացուցիչ պայմաններով: Երբ պատերազմութիւնը թիֆլիսէ վերադառնում, հայոց Ազգային Խորհուրդը ձեռնամուխ է լինում առաջին հայկական մինիստրութիւն կազմելուն: Թիֆլիսում կազմւած Հայաստանի առաջին կառավարութիւնը մայրաքաղաք Երևանն է հասնում յուլիսի 23-ին: Երևան է գնում և Ազգային Խորհուրդը, որն իր կազմը փոփոխութեան ենթարկելով ու աւելի բազմամարդ դարձնելով, Հայաստանի անդրանիկ Օրէնսդիր Ժողովն է դառնում: Սրա հանդիսաւոր բացումը, մի քանի օտար պետութիւնների և խուսն ժողովրդի ներկայութեան տեղի է ունենում 1818 թ. օգոստոսի 1-ին, որից յետոյ կառավարութիւնը իր ձեռքն է առնում Հանրապետական Հայաստանի իշխանութիւնը:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Շատ դժնդակ ու դժւարին պայմանների մէջ էր իր ձեռքն առնում՝ աւերակների, ծուխի ու մոխրի միջից ծնւած՝ Հայաստանի անդրանիկ իշխանութիւնը երկրի կառավարութեան գործը: Ընդամենը 11,000 քառակուսի վերստ տարածութիւն ունեցող Հայաստանը աւերակների մի րնդարձակ կոյտ էր իրանից ներկայացնում, ի՞ յատուկ խնամքի կարոտ՝ տառնեակ հազարաւոր դաղթականներով ու որբերով: Բաթումի դաշնագրի զօրութեամբ Հայաստանի բոլոր ճանապարհները բռնւած էին թիրբերով, որոնք շտապով զօրք էին ուղարկում դէպի Պարսկաստան, անգլիացիների առաջը բռնելու, և դէպի՝ արդէն

գրաւժած Բաբու՝ պանթիւքական իրանց ծրագիրն իրագործելու: Երեսնն այդպիսով կարւած էր ոչ մի-
այն դրսի աշխարհից, այլև նոյնիսկ իր գաւառներէից:

Այս անելանելի կացութիւնը շարունակուած է մինչև 1918 աշունը, երբ Գերմանիան, վերջապէս իրան պարտուած է զգուս և հաշուութիւն խնդրուած ֆրանս-անգլո-ամերիկեան զինակցութիւնից: Պարտուած էր և թիւրքիան: Զինադադարի զօրութեամբ, թիւրքերը, ինչպէս և գերմանացիք իսկոյն թողնուած են կովկասի այն բոլոր վայրերը, որ նրանք գրաւել էին: Պարպուս է նաև կարսի նահանգը՝ մինչև 1914 թ. սուսական սահմանագիծը, որ գրաւուած են հայերը և որով Հայաստանի տարածութիւնը դառնում է 29,000 քառակուսի վերստ:

Թիւրքերի հեռանալով և երկրի սահմանների ընդարձակելով, թւում էր, թէ Հայաստանի կառավարութիւնը, կաշկանդիչ դժւարութիւններից ազատելով, պիտի կարողանար շինարարական խաղաղ աշխատանքի գիւմել: Սակայն, թիւրքերը հազիւ հեռացած, նոր ու նոր բարդութիւններ ու դժւարութիւններ սկսեցին առաջ գալ միմեանց յետեից, որոնք Հայաստանի Հանրապետութեան ամբողջ էներգիան էին կլանում և ոյժերը ջլատում: Իս սահմանային անվերջ վէճերն ու կռիւներն էին նորակազմ Ադրբեյջանի ու Վրաստանի հետ:

Ազգայնական ձգտու մներով ղեկավարւող այս հանրապետութիւններից իւրաքանչիւրը աշխատում էր Հայաստանի հաշիւն ընդարձակել իր երկրի սահմանները: Հայերին նեղը զնելու համար, վրացիք Բաթումի ճանապարհն էին փակում Հայաստան ներսուծւող ու արտահանւող ապրանքների առաջ, իսկ

Ազրբեջանը նաֆթ չէր բաց թողնում Հայաստանին
և շարունակ գրգռում էր Հայաստանի թաթար բնակ-
չութեանը՝ ըմբոստանալ ու չր հանաչել հայկական
կառավարութիւնը:

Նորահազմ այդ երեք հանրապետութիւնների
միջև ծագած կոիւնքն ու միմեանց ֆուսելը շարու-
նակեց, մինչև որ Ռուսաստանի Թորհրդային իշխա-
նութիւնը, ներքին բոլոր թշնամիներին յաղթահարե-
լուց և լաւ ամրանալուց յետոյ, սկսեց իր սահման-
ներն ընդարձակելու և անջատւած Անդրկովկասը նո-
րից իր սահմանների մէջ առնելու մասին հոգ տանել:

Թորհրդային Ռուսաստանի 11-րդ կարմիր բա-
նակը, թաթար, հայ և վրացի բոյլշևիկների աջակցու-
թեամբ, Անդրկովկաս է մտնում (1920-1921 թ.), և
միմեանց յետևից նւաճելով նորահազմ հանրապետու-
թիւնները, ամեն տեղ Խորհրդային կարգեր են
հաստատուում:

Մինչև բոյլշևիկների Հայաստան գալը, սակայն,
թիւրքերն էին նորից գրոհ աւել ու գրաւել Կարսի
ամբողջ նահանգը, Ալեքսանդրապոլն ու Սուրմալուի
գաւառը (1920 թ. աշնանը): Լարկ էր եղել նրանց
հետ հաշտութեան նոր գաշն կնքել, որի գորութեամբ
նրանք թողել էին Ալեքսանդրապոլը, բայց պահել
Կարսն ու Սուրմալուն: Այդպիսով Հայաստանի տա-
րածութիւնը նորից կրճատուեց և 11,000 քառակուսի
վերստ գարձաւ:

Թորհրդային կարգեր հաստատուելուց յետոյ, վերջ
են գտնում Անդրկովկասի ազգամիջեան անվերջ կոի-
նքը, և Ազրբեջանը, Վրաստանն ու Հայաստանը, թէ
միմեանց և թէ Ռուսաստանի հետ գաշնակցեակամ մի
ընդարձակ Թորհրդային պետութիւն կազմելով, անձ-
նատուր են լինում շինարարական խաղաղ աշխատանքի:

հիշում եմ հարցի 90-ի
Վասիլ Է

Հայոց պատմութիւն դասաւանդող ընկեր ուսուցիչներին:

Ճեղնարկելով Հայաստանի պատմութեան այս հրատարակութիւնը, մտադիր էինք սկզբում նոյնութեամբ հրատարակել Գ. Վարդանեանի առիասակցութեամբ յոյս ընծայած մեր նախկին „Հայաստանի Պատմութեան գաղափարակէսերը“ սր ծառայում էր, որպէս դասագիրք առաջին դասարաններում միայն: Սակայն յետոյ, ի նկատի առնելով մեր միւս՝ երկրորդ եւ երրորդ՝ դասարաններում էլ դասագրքի չափազանց մեծ կարիքը եւ ընդառաջ գնայով մի հսնի ընկեր ուսուցիչների առաջարկներին, մենք ձեռնարկեցինք ներկայ առիաստութիւնը:

Հաւակնութիւն չունեննք անբերի համարելու մեր այս առիաստութիւնը, մտնաւանդ որ նա կատարել է փոքրինչ հապենդ կերպով: Բայց եւ այնպէս նա կարող է բաւականին մեծ ծառայութիւն մատուցանել ընկեր ուսուցիչներին թեկուզ որպէս մի յիւ ու ամփոփ *կոնսպեկտ* հայոց ամբողջ պատմութեան՝ սկիզբից մինչեւ մեր օրերը:

Շատ զոն պիտի լինենք, եթէ հայոց պատմութեան փորձած դասաստները, տարւայ ընթացում դասագրքիս մեջ նկատած բերութիւնները գրի առնենք եւ տարւայ վերջին մեզ հաղորդենք, յաջորդ հրատարակութեան ժամանակ ի նկատի առնելու համար:

Ի. Խան-Ազատ

16 օգոստոս 1926 թ.

Քաւրիք



(599)

68

ՀԱՆ ՔԻՄՆԱԴՐԱՊ ԳԻՒՆ ԳՐԱԿՆ.



FL0539455

2341

